10899

3214

491.99-8
L-44

096 - 10/5138

491.99-8
Ա-44

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

757

ՈՒՍՈՒՄՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶԻԻ

ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔ

36225 ιωφ 33/14



ՏԱՄՆԸՄԷԿԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՓԼԻՍ
Տպարան «Կուլտուրա» Միքայէլեան փող. 102.
1915

10899

ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА СССР им. А. Мясникяна

Г 902

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Գրքիս բովանդակութիւնը՝ իր յօդուածների ճոխութիւնով՝ կարող է լի ու լի բաւականանալ Հայոց լեզւից ամենաշատ դաս ունեցող դպրոցներում մի դպրոցական տարւայ ընթացքում։ Իսկ քիչ դաս եղած տեղերում ուսուցիչը ազատ է իր ուզած յօդուածներն ընտրել, ի նկատի ունենալով իր սանների զարգացման աստիճանը և ունեցած շաբաթական դասերի թիւը։

Ոչ իբրև պատւէր, այլ որպէս խորհուրդ, կասէի նաև, որ՝ 1. Ոտանաւորներ անգիր անել չըտալ, բայց պահանջել, որ գրի վրայ լաւ առոգանութեամբ և վարժ կարդան։ 2. Պատւիրել՝ որ երկար թւացող պատմւածքները տանը կարդան ինքնուրոյն և ազատ, միայն ստուգել, որ կարդացել են։ 3. Քերականական վարժութիւնները, եթէ կարելի չէ իսպառ վերացնել, գոնէ շատ թեթևացնել. աւելի ուշ դարձնել լաւ կարդալուն, որով բաւական կըհեշտացնի և ուղիղ գրելը, մանաւանդ եթէ դասերի արտագրելը պարտաւորական լինի։

Ղ. Ա.

ՆԻ
B6668-42
414-95

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ

Ընտանեկան կեանքից առած յօդուածներ՝ արձակ և բանաստեղծական, դիւրըմբռնելի և բարոյակրթական։

ՀՐԱՒԷՐ

Աքլորը կանչեց, օրը լուսացաւ,
Արևն էլ վառ-վառ ելաւ, բարձրացաւ,
Մարդ և անասուն, գազան և թռչուն,
Ամենքն էլ իրանց գործին են գնում։
Մրջիւնը բեռնով իր կերն է տանում,
Մեղուն ծաղկներից հիւթեր է ծըծում,
Դաշտը գոյնզգոյն ծաղկով է զուգւել,
Մարգագետինը կանաչ հագնւել։
Անտառը ձմեռւայ քնից արթնացած,
Իր տերևները շարժում է կամաց։
Ձկնորսներն իրանց ուռկանն են քաշում,
Հօտաղներն իրանց եղները քշում։
Դուք էլ, մանուկներ, շուտ հագնւեցէք,
Ձեր գրքերն առէք, դպրոց գնացէք։
Դպրոցում կառնէք ուսում, կրթութիւն,
Դպրոցը կըտայ ձեզ բարօրութիւն։

ՋԱՆԱՍԷՐ ՄԱՆՈՒԿԸ

Մի ջանասէր մանուկ լուսամուտի մօտ նստած պատրաստում էր դասերը. փայլուն արևի շողքն ընկնելով գըրքի վրայ, դուրս է հրաւիրում մանուկին, ասելով.

—Սիրուն մանկիկ, բաւական չէ՞, քիչ կարդա, դուրս արի քիչ էլ խաղա։

Մանուկը պատասխանում է.

—Ո՛չ, պայծառ արևիկ, ոչ, ես հիմա խաղալու

չեմ, պէտք է դասերս վերջացնեմ։ Մանուկը շարունակում է իր գործը։

Մէկ էլ մի սիրուն թռչնակ թռթռալով գալիս է իջնում պատուհանի վրայ և ծլւըլալով ասում։

—Սիրուն մանկիկ, բաւական չէ՞ ինչքան կարդացիր, դուրս արի երգիր, խաղա, զբաղճացիր։

—Ո՛չ սիրուն թռչնակ, ոչ, ես դեռ չեմ կարող խաղալ ու երգել, քանի որ դասերս դեռ չեմ պատրաստել։

Մանուկը շարունակ գրում է ու կարդում, բայց հիմա էլ կարմիր կեռասն է երևում նրա աչքին և փսփսում ականջին, թէ՝ բաւական չէ՞ ինչքան գրեցիր, արի իմ ծառիս վրայ բարձրացիր, հասած կեռասներս կեր ու կշտացիր։ Իսկ մանուկը պատասխանում է.—Շնորհակալ եմ, այժմ գործ ունիմ, ախորժակ չունիմ։

Վերջապէս մանուկն իր գործն աւարտեց, ոչ ոքի խօսքից չընաբուեց, իր դասերը լաւ պատրաստեց, յետոյ դէպի այգին վազեց և համարձակ ձայնով կանչեց.

—Այն ո՞վ էր, որ ինձ հրաւիրում էր. եկէք, այժմ ես պատրաստ եմ ամենիդ առաջարկութիւնը կատարելու։

Այնուհետև նրա երեսին ժպտաց արեգակը, իր քաղցրիկ տաղերը երգեց թռչնակը, կեռասն էլ դէմ արաւ իր կարմիր թշիկ, որ տղայից առնէ համբոյր քնքուշիկ։

ԺՐԱՋԱՆ ՏՂԱՅ

Տղան սիրում է ձեզ շատ, արեգակ,
Դաշտ ու պարտէզում ճռւըրող թռչնակ,
Ճիւղերից կախ-կախ պտուղները հասուն,
Բայց ձեզնից աւել պիտ սիրէ ուսում։
Ուրեմն թողէք նա դպրոց երթայ,
Ընկերների հետ դասերը կարդայ,
Եւ երբ որ իր սուրբ պարտքը կատարէ,
Որքան որ ուզէ, թող նա ձեզ սիրէ։
Այնուհետև ցոլա պայծառ արեգակ,
Այնուհետև երգէ դու, նախշուն թռչնակ,
Եւ անուշ համը հասուն պտուղին
Թող լինի վարձը ժրաջան տղին։

ՀՐԱՇԱԼԻ ԽՈՏ

Երկու աղջիկ, Աննան ու Կատարինէն, քաղաք էին գնում։ Նրանցից ամեն մէկը մի կողով խնձոր էր տանում։ Աննան շարունակ տրտնջում էր ու հառաչում, իսկ Կատարինէն ծիծաղում ու կատակներ անում։

—Ասա խնդրեմ, ի՞նչ է պատճառը, որ դու այդպէս ուրախ-ուրախ ծիծաղում ես,—հարցրեց վերջապէս Աննան.—չէ՞ որ քո կողովն էլ իմիս պէս ծանր է և դու էլ ինձանից ուժեղ չես։

Ճշմարիտ ես ասում,—պատասխանեց Կատարինէն.—բայց ես իմ կողովումս մի այնպիսի խոտ եմ դրել, որից ամեն բեռ թեթևանում է։

—Մ՛թթէ... այդ ի՞նչպիսի խոտ է և ո՞րտեղից ես ճարել,—հարցրեց Աննան զարմացած։

—Թէ որտեղից եմ ճարել, այդ ես էլ չգիտեմ,—պատասխանեց Կատարինէն,—միայն անունը կարող եմ ասել. դա կոչւում է «համբերութիւն», որից դու զուրկ ես, սիրելի Աննա։

ՆԱՄՈՒՍ ՈՒ ՂԷՅՐԱԹ*

Դեռ թոթովախօս մի մանուկ էի,
Եօթը տարեկան անգամ չկայի,
Երբ ինձ աւանդեց հայրս իմ անուս՝

*) Նամուս=պատուապահութիւն. ղէյրաթ=ժրաջանութիւն։

Մի սրբազան խօսք—և դա էր՝ «նամուս»։
Դպրոցի շէմքին դեռ ոտք չըդրած,
Դեռ նոր էի ես գիրք ձեռքս առած,
Երբ մօրըս համբոյր թըրջեց իմ ճակատ
Ու պատուիրեց ինձ՝ անել միշտ «ղէյրաթ»։
Բայց կարճ մնացի ուսումնարանում,
Աղքատի բախտը դէ ինչ է լինում...
Հօրըս պատուէրով սովրեցի արհեստ։
Սիրեցի նըրա վաստակը համեստ։
Եւ այն օրից յետ,
Երբ ընկերացայ մուրճ ու սալի հետ,
Քրտինքը դէմքէս ծորում է կաթ կաթ
Ու ինձ յիշեցնում նամուս ու ղէյրաթ։

ՀԱՅՐԸ ԵՒ ՈՐԴԻՔԸ

Մի մարդ երկու որդի ունէր. մեծը տասներկու տարեկան էր, իսկ փոքրը՝ տասը։ Մի անգամ հարևաններն ասացին, թէ նրա որդիքը ծիծաղել են մի պառաւ կնոջ վրայ։ Հայրը խիստ յանդիմանեց նրանց և երեխաները խոստացան ուղղել։ Բայց մի քանի ժամանակից յետոյ մանուկները մոռացան իրանց խոստումը և մի ծերունու պատահելով, սկսեցին ծաղրել նրան։ Այս բանը հօր ականջը հասաւ։

Միւս օրը հօր տօնն էր։ Որդիքը եկան շնորհաւորելու և առողջութիւն ու երկար կեանք մաղթեցին նրան։

—Զաւակներս,— ասեց հայրը,—ես չեմ ցանկանում երկար ապրել. վախենում եմ, որ երբ ծերանամ, չար մանուկները ծիծաղեն ինձ վրայ։

Երեխաները հասկացան, թէ ինչ է ուզում ասել հայրը և սաստիկ ամօթից չըգիտէին ինչ անեն։ Այն օրից նրանք այլևս չէին ծիծաղում ծերունիների վրայ։

Կ Ա Ր Դ Ա

Կարդա, ա՛յ իմ խելօք մանուկ,
Կարդա, գրի՛ր տարին բոլոր.
Կարդացողի խելքն է կարուկ,
Միտքը պայծառ ու լուսաւոր։
Գիր կարդալով, դու գրքերում
Շա՜տ նորանոր բան կիմանաս,
Շա՜տ շատերից շատ բաներում
Մըտքով հեռո՛ւ կըսըլանաս։
Գիր կարդալով, դու աշխարհիս
Կըճանաչես չարն ու բարին.
Ո՛վ է խնդում, ո՛վ է լալիս,
Ո՛վ է զրկում խեղճ թշւառին։
Գիր կարդալով, դու քո սրտում
Առատ անբաւ գանձ կըդիզես,
Այնպիսի՛ գանձ, որ աշխարհում
Ամեն հարուստ գլուխ կըտայ քեզ։
Կեանքում ծածուկ էլ քեզ համար
Բան չի՛ մնալ, որ չիմանաս.
Քո մէջ կապրի արար-աշխարհ,
Հոգով այնքա՜ն կզօրանաս։
Դու կիմանաս, թէ ինչո՛ւ մենք
Լուզորդի պէս կեանքի ծովում
Գիշեր-ցերեկ հա լողում ենք,
Ո՞րտեղ է ափն, ո՞ւր ենք լողում։
Դու կիմանաս, ինչո՛ւ մարդիկ
Պէտք է ապրեն իրար համար,
Ի՞նչ է մարդկանց ցաւն ու կարիք,
Ի՞նչ է լոյսը, ինչ է խաւար։
Կարդա, որդի՛ս, որ հօրըդ պէս
Դու էլ անուս, խեղճ չըմնաս,
Որ ամենքին վիզ չըծռես,
Եւ միշտ ազա՜տ առաջ գնաս...
Անբախտ հայրըդ գիր չըգիտէր,
Հողագործ էր, կարօտ ուսման,

Գիւղի անգութ վաշխառուները
Քաղցած, ծառաւ թողին նըրան։
Հազար ու մի թուղթ գըրելով,
Քո հօր տեղակ ստորագրեցին,
Յետոյ մէկ էլ օր-ցերեկով
Ձեր ողջ տունը կողոպտեցին.
Շատ թափառեց նա դէս ու դէն,
Դատարանի շէմքը մաշեց,
Բայց անգրագէտ, անուս, անզէն—
Վերջին շունչը հողում քաշեց...
Կարդա՛, ա՛յ իմ խելօք մանուկ,
Կարդա՛, գըրի՛ր տարին բոլոր.
Կարդացողի խելքն է կտրուկ,
Միտքը պայծառ ու լուսաւոր։

ՊԱՊԸ ԵՒ ԹՈՌՆԻԿԸ

Պապը սաստիկ ծերացել էր։ Նրա աչքերը լաւ չէին տեսնում, ականջները ծանրացել էին, նրա ձեռներն ու ոտները ծերութիւնից դողդողում էին, այնպէս որ՝ գդալը բերանը տանելիս՝ կերակուրը կաթկըթեցնում էր։

Այս բանը դուր չէր գալիս նրա որդուն ու հարսին։ Ծերին իրանց հետ հացի չէին նստեցնում, այլ մի անկիւնում առանձին տեղ էին տալիս հաց ուտելու։

Մի անգամ, ճաշի, ժամանակ, ծերի ձեռները դողդողացին, կաւէ ամանը վայր ընկաւ և կոտրուեց։ Աւելի ևս բարկացան հարսն ու որդին խեղճ ծերի վրայ և դրանից յետոյ փայտէ ամանով էին կերակուր տալիս նրան։

Ծերունին մի թոռնիկ ունէր։ Մի օր մանուկը, յատակի վրայ նստած, տաշեղներից ինչ-որ բան էր շինում։

—Այդ ի՞նչ ես շինում, որդի,—հարցրեց նրան մայրը։

—Փայտէ աման եմ շինում, մայրիկ, որ երբ

դու և հայրիկս ծերանաք, նրանով կերակուր տամ ձեզ,—պատասխանեց մանուկը։

Հայրն ու մայրը իրար նայեցին և ամօթից կարմրեցին։ Նրանք այնուհետև սկսեցին ծերին շատ պատուով պահել։

Մ Ա Ն Կ Ա Ն Ը

Ուրախութի՛ւն քեզ անպակաս,
Ո՛վ դու մանուկ սիրելի,
Ծլիս ծաղկիս ու ծերանաս
Տալով պտուղ արժանի։
Որպէս ծաղի՛կ, մանուկ, քաղցր ես,
Եւ շնորհագեղ, որպէս օր.
Մանո՛ւկ, մանո՛ւկ, ինձ չըխաբես,
Միշտ կաց այդպէս լուսաւոր։
Նայիր վերև, տես ինչ սիրուն
Այնտեղ փայլում են աստղեր,
Եւ անթի՛ւ են, և շողշողուն,
Որպէս երկու քո աչեր։
Այնտեղ, հոգեակ, բնակւում է
Մեր սուրբ Հայրը երկնքի,
Նա է, որ մեզ ուղարկում է
Եւ կեանք, և սէր, և հոգի։

ՄԵԾՆ ՈՒ ՓՈՔՐԸ

Գարեգինը պատուհանի առաջ կանգնած, նայում էր դէպի փողոց, որտեղ նստած էր նրանց գամփռը՝ Բօղարը և տաքանում էր արեգակի տակ։

Յանկարծ Բօղարին մօտեցաւ մի փոքրիկ քօթօթ և սկսեց սաստիկ անհանգստացնել նրան. յարձակւում էր վրան, հաչում էր կծոտում նրա ահագին թաթերն ու դունչը։

—Սպասիր,—ասեց Գարեգինը,—նա քեզ խրատ կըտայ։

Քոթոթը շարունակում էր իր չարութիւնները, իսկ Բօղարն ամենևին չէր բարկանում նրա վրայ և տեղից չէր շարժւում։

—Տեսնո՞ւմ ես,- ասեց հայրը Գարեգինին.— Բօղարը քեզանից բարեսիրտ է, նա իրանից փոքրին չի դիպչում։ Իսկ երբ քո փոքր եղբայրներն սկսեն քեզ հետ խաղալ, այն ժամանակ անշուշտ ձեր խաղը կըվերջանայ նրանով, որ դու նրանցից մէկին կամ միւսին մի զրկանք կըհասցնես։

ԵՂԲԱՅՐՍԻՐՈՒԹԻՒՆ

Երուսաղէմ քաղաքի տեղը երբեմն մի մշակուած դաշտ էր և տաճարի տեղը պատկանում էր երկու եղբօր, որոնցից մէկն ամուսնացած էր, միւսը՝ ամուրի։ Հնձի ժամանակ նրանք իրանց խուրձերը կապեցին և երկու հաւասար բաժին անելով՝ սկսեցին տուն կրել։

Գիշերն ամուրի եղբայրը մտածում է.

—Եղբայրս կնոջ ու որդոց տէր է և նրանց պէտք է կերակրէ. իրաւացի չի լինիլ, որ նրա և իմ ունեցածը հաւասար լինին։ Գնամ, իմ բաժնից մի քանի խուրձ վեր առնեմ և ծածուկ աւելացնեմ նրա բաժնին. եղբայրս չի տեսնիլ և չի ընդդիմանալ ինձ։

Այս ասելով՝ նա գնաց և իր մտածածը կատարեց.

Նոյն գիշերը միւս եղբայրը արթնանալով՝ իր կնոջն ասեց.

—Եղբայրս ինձնից փոքր է և ամուսնացած չըլինելով՝ ոչ ոք չունի, որ իրան օգնէ ու մխիթարէ. ուստի իրաւացի չի լինիլ, որ նրա և իմ ունեցածը հաւասար լինին։ Գնամ իմ բաժնից մի քանի խուրձ վեր առնեմ և ծածուկ աւելացնեմ նրա բաժնին. եղբայրս չի տեսնիլ և չի ընդդիմանալ ինձ։

Այս ասելով՝ նա էլ գնաց իր մտածածը կատարեց։

Հետևեալ առաւօտը եղբայրները դաշտ գնացին և շատ զարմացան. երկու բաժինն էլ հաւասար էր և անփոփոխ։ Նրանցից ոչ մէկը չըկարողացաւ իմանալ այս հրաշքի պատճառը։

Հետևեալ գիշերը դարձեալ նոյնպէս արին։ Եւ այսպիսով նրանց դէզերը, ինչքան էլ որ տուն էին կրում, չէին պակասում, այլ շարունակ աճում էին։

Վերջապէս մի գիշեր, երբ խուրձերը շալակած տանում էին միմեանց դէզի վրայ դնելու, յանկարծ իրար տեսան և հասկացան խուրձերի աճելու պատճառը։

Մարդիկ օրհնեցին այդ երկու եղբայրների արտը և Աստծոյ տաճառը այնտեղ շինեցին։

ԵՐԿՐԻ ՄՇԱԿՆԵՐ

Օ՛, ծանր հոգսերի խեղճուկ զաւակներ,
Որքան համբերող, քաջ է ձեր հոգին.
Տանջւում էք անվերջ, օրեր, տարիներ,
Կարծես, տանջանքն է միայն ձեր բաժին...

Մանուկ օրերից ձեր մէջ ապրելով,
Վկայ եմ եղել ձեր շատ ցաւերին.
Տեսել եմ, ինչպէս տանջանքի գնով
Դուք հաց էք տալիս հայրենի երկրին։

Տեսել եմ, ինչպէս յուսալից, զբաղթ,
Դուք մշակում էք անմշակ դաշտեր.
Ինչպէս տանջանքում անլաց, անվրհատ
Դուք երգ էք երգում—վաստակի երգեր։

Տեսել եմ, ինչպէս ամառուայ շոգին,
Երբ կրակ է թափում արևառ երկինք,
Ոսկեշող արտում, մանգաղը ձեռքին,
Դուք մէջք խոնարհած՝ թափում էք քրտինք։

Տեսել եմ, ինչպէս գունաթափ աշնան
Հայրենի երկրի կուրծքը պատռելով,
Այնտեղ թաղում էք, գանձերի նման,
Ոսկի հատիկներ, ոսկի յոյսերով...
Տեսել եմ գարնան սիրուն օրերին,
Պայծառ արևը դեռ նոր ծագելիս,
Կանաչ, ալեծուփ արտերի մօտին
Ձեզ ծունկ խոնարհած՝ ջերմ աղօթելիս։
Տեսել եմ, ինչպէս և ցուրտ, տաղտակալի
Ձմրան գիշերներ նստած խրճիթում,
Յոգնած ձեռքներիդ դադար չէք տալի—
Ծուխն էք նորոգում, մանգաղը սրում...
Եւ այդպէս ապնիւ գործին անձնուէր,
Ապրում, տանջւում էք անբաւ հոգսերում։
Եւ ձեր տանջանքում, հերոս մշակներ,
Արդար վաստակն է ձեզ ոգևորում։
Օ՛, հայրենիքիս քրտնաջան որդիք,
Որքան համբերող, քաջ է ձեր հոգին.
Ձեզնով է միայն կանգուն հայրենիք.
Համբոյր ու օրհնանք ձեր սուրբ վաստակին։

ԲԱՐԵԽՂՃՈՒԹԻՒՆ

Մի հնդկացի խափչիկ (նեգր) ծխախոտ խնդրեց հարևանից։ Հարևանը ժլատ մարդ չէր, ձեռքը գրպանը տարաւ և դուրս հանեց մի բուռն ծխախոտ։ Միւս առաւօտը հնդկացին դարձեալ եկաւ հարևանի մօտ և տւաւ նրան մի հատ արծաթի դրամ, որ գտել էր ծխախոտի մէջ։

«Ինչո՞ւ չըպահեցիր այդ դրամը քեզ մօտ,— ասեց այնտեղ պատահող սպիտակադէմ մարդը.— քեզ ծխախոտ ուղղը դրամն էլ է տւել»։

Խափշիկը ձեռքը դնելով սրտի վրայ՝ ասեց.

—Այս տեղումս երկու մարդ կայ, մինը բարի, միւսը չար։ Բարի մարդն ինձ ասեց. «Այդ փողը

քոնը չէ, ուրեմն տար տիրոջը տուր». Իսկ չար մարդն ասեց. «Երբ տւել են քեզ այդ փողը, ուրեմն նա քոնն է»։ Բարին վրայ բերաւ. «Չէ, միայն ծխախոտն է քոնը և ոչ փողը»։ Չարը նորից ասեց. «Իզուր ես նեղուիր քաշում. գնա դրանով արաղ առ խմիր»։ Ես չգիտէի, թէ ինչ անեմ և պառկեցի քնելու. բայց բարի և չար մարդիքն ամբողջ գիշեր գադար չէին տալիս ինձ և կռւում էին։ Առաւօտը ես զարթեցի և յետ բերի փողը։

ԱՆԼՈՅՍ ԽԱՒԱՐԸ

Անլոյս խաւարը՝ չարութեան ոգին
Տիրել էր աշխարհ, և վաղուց մարդիկ
Ապառաժ սրտով կործանել էին
Խանդավառ զգացման պատկեր գեղեցիկ.
Անցան օրերի մաքուր պարզութիւն
Ապականութեան ասպարէզ դարձած,
Էլ չէր կարմրում նենգամտութիւն,
Առաքինութեան փառքըն էր շիջած...
Բայց հասաւ օրը մի նորոգ կեանքի,
Եւ Բէթղեհէմից նոր արև ծագեց։
Այրից առաջին ճիչը Մանուկի
Փրկութեան ժամը մարդկանց աւետեց.
Նըրա ժպիտն էր, որ անհուն սիրով
Սրտերի սառուցը պիտի հալեցներ,
Եւ մարդկութիւնը նըրա շրթունքով
Ճշմարտութիւնը պիտի ուսանէր։

ՎԵՀԱՆՁՆՈՒԹԻՒՆ

Մի շատ հարուստ մարդ ծերութեան օրերում ցանկացաւ իր ունեցած կայքը բաժանել երեք որդոց մէջ։ Իւրաքանչիւրին իր մասը տալուց յետոյ՝ նա

ասեց. «Մընում է էլի մի շատ թանգագին գոհար. ես այն կըտամ ձեզանից նրան, ով մի վեհանձնութիւն կանէ։ Իսկ դրա համար ես ձեզ երեք ամիս ժամանակ եմ տալիս»։

Շուտով որդիքը ցրւեցին. նրանք ման եկան զանազան քաղաքներ և երբ հօր ուզածը կատարեցին, կրկին վերադարձան տուն։ Նրանք սկսեցին պատմել հօրը իրանց արած վեհանձնութիւնները։

Անդրանիկ որդին ասեց.

—Իմ ճանապարհորդութեան ժամանակ մի օտարական յանձնեց ինձ իր բոլոր հարստութիւնը. թէպէտ նա ինձանից ոչինչ ստացական չառաւ, բայց ես կրկին հաւատարմութեամբ վերադարձրի նրան իր գոյքը։

—Որդեակ,—պատասխանեց հայրը,—դու արել ես այն՝ ինչ որ պէտք է անէիր, և այն մարդը, որ ուրիշ տեսակ կվարուէր, խաբեբայ կըլինէր. ազնիւ լինելը մարդուս համար մի պարտականութիւն է։ Ձո արածի մէջ վեհանձնութիւն չկայ։

Յետոյ խօսեց միջնակ որդին.

—Իմ ճանապարհորդութեան միջոցին մէկ օր ես անց էի կենում մի լճի եզերքով. մի փոքրիկ երեխայ ջուրն ընկաւ։ Ես իսկոյն օգնութեան հասայ և չբննայելով իմ կեանքը՝ ազատեցի նրան։

—Շնորհաւորում եմ,—ասեց հայրը.—բայց դարձեալ այդ գործի մէջ վեհանձնութիւն չկայ։ Ձո արածը կարեկցութիւն է, բարեգործութիւն է, բայց ոչ վեհանձնութիւն։

Ամենից վերջը խօսեց կրտսեր որդին։

—Մի օր ես իմ թշնամուն տեսայ խոր քնած մի անդունդի ծայրին։ Ամենաթեթև շարժողութիւնն անգամ կարող էր նրան անդունդը գլորել. բայց ես նրան զարթեցրի մեղմաբար և ազատեցի վտանգից։

—Ո՜հ, զաւակս,—աղաղակեց բարի ծերունին,—

գոհարը քոնն է։ Ո՛րպիսի վեհանձնութիւն՝ լաւութիւն անել թշնամուն, մահից ազատել թշնամուն։

ՔԱՄԻՆ ԵՒ ԱՐԵՒԸ

Մի անգամ արեգակն ու հիւսիսային սաստիկ քամին վէճ բաց արին, թէ նրանցից ո՛րն է ուժեղ։ Երկար վիճեցին նրանք, վերջապէս վճռեցին իրանց ուժը փորձել այն ճանապարհորդի վրայ, որ նոյն ժամին մօտից անցնում էր։ «Նայիր, թէ ինչպէս կընկնեմ նրա վրայ—ասեց քամին,—և մի ակնթարթում կըխլեմ նրա վերարկուն»։ Այս որ ասեց, սկսեց փչել՝ ինչքան ոյժը կորում էր. բայց որքան շատ էր աշխատում քամին, այնքան աւելի պինդ էր փաթաթւում ճանապարհորդը վերարկուի մէջ. նա, ի հարկէ, դժգոհում էր վատ եղանակից, բայց միևնոյն ժամանակ աւելի շտապում էր առաջ գնալ։ Քամին բարկացաւ, կատաղեց և թափեց իեղճ ճանապարհորդի վրա անձրև ու ձիւն։ Նզովելով քամուն՝ ճանապարհորդը վերարկուի թևերը հագաւ, վերևից էլ գօտին կապեց։ Հիմա հասկացաւ քամին, որ էլ չի կարող նրա վերարկուն խլել։ Արեգակը տեսնելով իր հակառակորդի անզօրութիւնը, ժպտաց, դուրս նայեց ամպերի յետևից, ջերմացրեց, ցամաքեցրեց երկիրը, դրա հետ միասին և խեղճուկ սառած ճանապարհորդին։ Արեգակի ճառագայթներովը տաքացած, նա քաջալերւեց, օրհնեց արեգակը, հանեց վերարկուն, ծալեց ու կապեց թամբին։ «Տեսնո՞ւմ ես,—ասեց այն ժամանակ հեզիկ արևը բարկացկոտ քամուն.—քաղցրութեամբ ու բարութեամբ աւելի բան կարելի է անել քան թէ բարկութեամբ»։

ԿԱՆԱՉ ՏԵՐԵՒՈՎ

Կանաչ տերևով ծառը ծածկըւեց
Եւ կոկոններով քընքոյշ հագնըւեց.
Կենսատու ցօղով մարգարտանման
Ուռճանում էր նա շընչովը գարնան։
Բայց նըրա զալար շիւղերին մօտիկ
Թաքնըւեց դաժան ծեր-սառնամանիք։
—Է՛յ տուր ինձ, ասեց, մանուկ կոկոններ.
Ձես տալ, տես, զօռով ինքըս կըխլեմ...։
«Ա՜խ, թող տուր հանգիստ դու իմ բողբոջներ,
Գոնէ բացւէին նըրա ծաղիկները...»,
Սառնամանիքին ծառը շըշնջաց։
Եւ ողջ էութեամբ արմատից դողաց։
Եւ ահա կամաց-կամաց բացւեցան
Անուշ բուրմունքով քընքոյշ կոկոններ,
Եւ արեգակից ջերմ փայփայեցան.
Իսկ թռչունների անհոգ երամներ
Հնչեցին ուրախ անուշիկ երգեր։
Յանկարծ ծառի մօտ թրռաւ չար քամին.
—Է՛յ, տուր ինձ, ասեց, սիրուն ծաղիկները,
Կըյափշտակեմ, թէ չէ, այս ժամին։
«Ա՜խ, խնայիր ինձ և մի արգելիր
Իմ ծաղիկներին պտղաւոր լինել».
Կատաղի քամուն ծառը շըշնջաց
Եւ սարսափելով վախից դողդողաց։
Բայց ահա մատաղ պտուղներին խակ
Ջերմութիւն տըւաւ ամրան արեգակ.
Եւ ծառը զուգւեց հասուն մըրգերով։
Մօտեցաւ նըրան յուշիկ քայլերով
Մատղաշ պատանին՝ տապիցը նեղւած.
—Ա՜խ, տուր ինձ, ասեց անուշիկ մըրգեր
Ջօռով չեմ խըլիլ երեխայըիքներ...
«Առ քեզ, պատանի, ահա իմ ճըղներ
Քեզ են սպասում վաղուց անհամբեր,

Որ գաս, հեշտացնես նըրանց անուշ բեռ...»։
Եւ ծառը սիրով նըրան ողջունեց
Ու խոնարհելով, ճղները կախեց։

Ա Գ Ա Հ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Երեք մարդ միասին ճանապարհորդելիս գանձ գտան և բաժանեցին իրանց մէջ։ Նրանք պէտք է շարունակէին ճանապարհը, բայց որովհետև ուտելու պաշարը վերջացրել էին, վճռեցին որ իրանցից մինը գնայ քաղաք կերակուր բերելու, և այդ գործը յանձնեցին աւելի փոքրահասակ ընկերին։ Սա գնաց և ճանապարհին սկսեց այսպէս մտածել. «Ես այժմ հարուստ եմ, բայց աւելի հարուստ կըլինեմ, եթէ կարողանամ ընկերներիս բաժինն էլ ձեռք գցել։ Եւ այս շատ դժւար չէ. կըթունաւորեմ այն ուտելիքը, որ պիտի գնեմ, իսկ իմ մասին կասեմ, թէ ճաշել եմ արդէն. ընկերներս առանց կասկածելու կուտեն ու կըմեռնեն»։

Միւս ընկերներն էլ այսպէս էին խօսում.

«Ինչո՞ւ պէտք է մենք անպատճառ բաժին տանք այս պատանի մարդուն. մի՞թէ չենք կարող գործ դնել մեր սուր դանակները, որ մեր հարստութիւնն աւելի կատարեալ լինի. ուրեմն պայ թէ չէ՝ սպանենք խակոյն»։

Պատանին բերաւ թունաւորւած կերակուրը. ընկերները շտապով սպանեցին նրան, իսկ իրանք մեռան թոյնի ներգործութիւնից։ Գանձը մնաց անտէր։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ... Ա. Մոսինյանի ... ՊԱՏՄԱԿԱՆ ՄՈՒԶԵՈՒՄ

ԲԱԺԱՆՈՒԹԻՒՆ

Քանի մի վարպետ վաճառականներ
Սիրով միմեանց հետ գործ էին բռնել.
Լաւ աշխատեցին, քրտինք թափեցին,
Լաւ էլ շահեցին, մեծ փող դիզեցին։
Ժամը հասաւ. պէտք է հաշիւ տեսնէին,
Եղած վաստակն իրանց մէջը բաժնէին։
Բայց ՚ուր գտնեմ ես ընկերներ այնպիսի,
Որ բաժանէին առանց կռւի, վիճմունքի.
Այս պարոններն էլ մեծ վէճ յարուցին,
Որ ծայր-վերջ չունէր, կանչն էր ահագին։
Եւ ահա դրսէն ձայներ կըլսեն.
«Կըրակ կայ, կըրակ. մարդիկ, դո՛ւրս եկէք,
Շո՛ւտ արէք՝ փախէք, թէ չէ՝ կորած էք»։
Ընկերներից մէկը կանչեց.
Դուրս գանք, տեսնենք ինչ պատահեց»։
Միւսն այն կողմից աղաղակեց.
«Հազար ոսկի՛ս... առաջ իմ պարտքս տըւէք»։
—Երկու հազար է առնելիքս,—միւսն ասեց.—
Մինչև փողս ես լիուլի չըստանամ,
Այստեղից ՚ուր պիտի գնամ։
Միւս կողմն երրորդն էր գորգոռում.
«Հաշիւն այդպէս չէ. ի՞նչ կասես, եղբայր»։
Զորրորդը դարձեալ իր պահանջն անում,
Թէ իրան բաժին պիտ տան հաւասար.
Խեղճ մարդիկ մոռացել էին,
Որ բոցերի մէջ բըռնուել էին։
Այսպէս իրանց կռւով էին զբաղւած,
Որ մուխն եկաւ խեղդեց ամենքին յանկարծ.
Իսկոյն կըրակն էլ հասաւ պաշարեց,
Ապրանքն ու տէրերին այրեց տոչորեց։
Այս առակը դու չըկարդաս առանց խրատ առնելու.
Շատ մեծամեծ գործերի մէջ ինչո՞ւ ենչի՞ցնէ գոյանում
Երբ փոխանակ հասարակաց փորձանքին դէմ դընելու,
Ամեն մարդ իր օգտին հին ու նոր վէճն է բաց անում։

ՄԱՅՐԱՍԷՐ ՈՐԴԻ

Մի երեխայ փողոցի մէջով վազելիս ընկաւ կառքի տակ. անիւն անցաւ նրա ոտի վրայով և ջարդեց։ Խեղճ երեխային վերցրին և տուն տարան։ Նրա մայրը տանը հիւանդ պառկած էր, և հէնց որ լսեց որդու լացուկոծը, վախից ուշաթափւեց։

Երեխան իսկոյն կտրեց ձայնը, և մինչդեռ ուղղում ու կապում էին ոտը, նա ամենևին ձայն չը հանեց։

—Մի՞թէ դու ցաւ չես զգում,—հարցրեց նրան բժիշկը։

—Օճ, սաստի՛կ,—հառաչեց մանուկը,—բայց ես չեմ ուզում, որ մայրիկս իմանայ այդ, նա շատ կըվշտանայ։

ԿԵԱՆՔԸ ՍԻՐՈՅ ՄԷՋ Է

Ի՛ուրսը փչում է բքաշունչ քամի.
Ձմեռւայ մի ցուրտ գիշեր է խաւար.
Նստած սենեակումս մենակ ու տխուր,
Տալիս եմ կեանքիս հարցեր անհամար։
Վառարանիս մէջ այրւող կրակը
Կարծես ասում է իր վառվռոցով.—
«Ի՞նչ ես մտածում. ինչպէս ծուխս ու բոց՝
Քո կեանքն էլ կանցնի, կըմարի շուտով։
«Երևի, ուրեմն, կեանքը տըւած է
Մեզ իբրև պատիժ, որ միայն վիշտ, ցաւ
Կրելով, տանջւինք մեռնելու համար...»
Հէնց էն էր՝ մտքովս այս բանը անցաւ,
Յանկարծ բացւում է սենեակիս դուռը,
Փոքրիկ Հրաժինս՝ տիկինը գրկած՝
Վազեց, ինձ փարւեց և հրեշտակային
Անմեղ ժպիտով՝ «Հայրիկ ջան», ասաց,

«Տես, ինչ գեղեցիկ շապիկ եմ կարել
Տիկինիս համար. երբ լինիմ այս չափ»,
Ձեռքը բարձրացրեց, «քեզ էլ կըկարեմ».
Քեզ շատ եմ սիրում, շա՛տ, շա՛տ, ամպի՛ չափ...»։
Մոայլ մտքերս ցրուեցին խսկոյն,
Ես ինձ զգացի զըւարթ ու թեթև.
Կեանքի խորհուրդը պարզուեց ինձ համար.—
Նա մեզ պատիժ չէ, այլ անգին պարգև։

Մ Ա Ն Ո Ւ Կ Ի Ն

Տեսնո՛ւմ ես, մանուկ, երկնքի վերան
Ինչպէս այն ամպը լողում է հանդարտ,
Անծանօթ է նա բնաւ սորկուբեան,
Զբօսնում է օդում ազատ ու անդարդ...
Բայց, աւա՛ղ, ամպը չէ այն երջանիկ,
Թէպէտ ազատ է նա օդի միջին.
Ամպը չէ կարող, իմ խելօք մանկիկ,
Քեզ պէս մըտածել ու սիրել մէկին։
Ապա՛ մէկ նայիր աստղերի խմբին...
Տե՛ս, որքա՛ն նըրանք փայլում են պայծառ,
Կասես, թէ ոսկու կտորներ լինին
Երկնից կամարին կըպցրած շարէշար...
Բայց արևելքից կելնէ արեգակ,
Կըհանգչին մէկ մէկ աստղերն շտապով...
Ու կըմնան այդպէս անդորը շարունակ,
Երբէք չըզգալով, չըմտածելով...
Տեսնո՛ւմ ես այնտեղ՝ կանաչ դաշտերում
Գոյնըզգոյն ծաղկունք խոտերի միջում—
Վաղ-առաւօտեան ցօղի տակ ծածկւած—
Տատանո՛ւմ են մեզմ զեփիւռի առաջ...
Բայց շուտով կըգայ ձըմեռ ահալից,
Ու ծաղկունք անշուշտ կըմեռնին ցրտից.
Անբախտ են նոքա, որ զուրկ են սիրուց,
Որ զուրկ են իսպառ զգալու շնորհից...

Եւ դու, իմ մանկիկ, նըման ես ամպին
Քո այդ թըռթըռուն, սպիտակ ձեռքերով...
Դու գեղեցիկ ես, նըման աստղերին—
Քո պայծառ, անհոգ, ժպտող աչքերով...
Բայց դու աւելի բախտաւոր կըլինես,
Քան ամպը աստղը և այն ծաղիկները.
Դու կեանք կըմտնես, դու կը համոզւես,
Որ պէտք է «սիրել», պէտք է «մտածել»...

Ա Ր Ց Ո Ւ Ն Ք

Շատ ու շատ դարեր սրանից առաջ ապրում էր մի թագաւոր։ Նա այնքան բարի և ողորմած էր, որ ժողովուրդը նըրան հօր պէս սիրում ու պաշտում էր և ամեն րոպէ պատրաստ էր նրա համար իր կեանքը զոհել։ Պակաս չէր և թագաւորի սէրը դէպի իր ժողովուրդը։ Նա էլ ժողովուրդին էր իր որդու պէս սիրում և գիշեր ցերեկ նրա մասին խորհում ու մտածում։ Նրա որևէ պակասութիւնը, կարիքը տեսնելիս՝ կամ մի վշտալի խօսք, մի տխուր պատմութիւն նրա մասին լսելիս՝ թագաւորի սիրտը ճմլւում էր, հոգին տակնուվրայ էր լինում... Եւ ահա նա մի օր ուզեց այնպէս անել, որ իր հպատակներից ոչ մինը իրան դժբախտ չըհամարի, և հաստատապէս վճռեց վերջ տալ իր տէրութեան մէջ գտնուող բոլոր դատապարտեալների արցունքներին։ Նա պատւիրեց իր գլխաւոր դեսպանին շրջել տէրութեան մէջ գտնուող բոլոր երկիրները, որոնել անբախտ մարդկանց և նրանց արցունքները ժողովել մի ոսկէ սափորի մէջ։

Թագաւորական պաշտօնեան, առանց մի րոպէ դանդաղելու, ճանապարհ ընկաւ իր պետի հրամանը կատարելու։

Նա երկար, երկար թափառեց դէս ու դէն և ապտիկ յոգնեց, բոլորովին նըւաղեց, ուժից ընկաւ։

Նա մի քանի անգամ վերադառնում էր այս կամ այն երկիրը, նորից ու նորից ուշիուշով որոնում էր տարաբախտներին, երկիւղ կրելով թէ մի գուցէ մոռացութեան տւած կամ աչքից թողած լինի մի որևիցէ անկիւն, ուր կարող էր ծածկւած լինել մի մարդ, որ տառապում էր վշտից ու հոգսերից։

Նա շրջում էր սարերի ու ճանապարհների վրայ մութ-մութ ձորերում ու ճախճախուտ ճահիճներում, անցնում էր նեղ ու խուլ շաւիղներով, մինչև անգամ մտնում էր ամայի, չոր ու ցամաք անապատները, սակայն այնտեղ էլ յայտնւում էին անբախտ, արտասուք թափող մարդիկ։ Թագաւորի դեսպանը մխիթարում, սիրտ էր տալիս նրանց բարւոք ու երջանիկ ապագայի յուսով և նրանց արցունքները ժողովելով ոսկէ սափորի մէջ՝ առաջ էր գնում։ Սակայն ուր էլ որ գնում էր, ամեն տեղ, ամեն անկիւնում, տարաբախտաբար, առատութեամբ էր գտնում այն ինչ որ ինքը որոնում էր։

Մէկ տեղ մայրն էր ողբում իր սիրասուն որդոց մահը, միւս տեղ թոյլ ու արտամաղ ձայնով որդիքն էին աղաչում, պաղատում հօրը, որ նա մի կտոր հաց տայ իրանց ուտելու, իսկ խեղճ հայրը վշտակոծ և աղիողորմ լալիս էր, որովհետև հաց չկար, ինքը հիւանդ էր, գործելու ոյժ չունէր։ Մի այլ տեղ մանկահասակ և շնորհագեղ կոյսը կանգնած մեծ ճանապարհի վրայ, որտեղով պէտք է պատերազմից վերադառնար նրա անգին և կարօտեալ եղբայրը, անհամբեր և արտասրոփ սպասում էր իր հոգու հատորին և արտասւալից աչքով նայում էր հեռուն։ Այստեղ որդին էր ողբում իր հօր մահը, այնտեղ մայրն էր հեծկլտում, աղի արցունք էր թափում իր դառը գերեզմանի վրայ... Մի խօսքով՝ ուր էլ որ գնում էր թագաւորական պաշտօնեան, ամեն տեղ լաց ու արտասուք էր տեսնում, ամեն տեղ ախ ու վախ լսում...

Բայց ահա յանկարծ մի տեղ բոլորովին նոր տեսարան բացւեց նրա աչքի առջև։

Անշուք, բայց մաքուր խրճիթի խորքում, մահճան անկողնի մէջ պառկած էր մի պատկառելի ծերունի և հանգիստ ու անխռով վերջին հրաժարականն էր տալիս իր երկրաւոր կեանքին։ Մթագնած աչքերով նայում էր նա իր կնոջն ու որդոցը, որոնք նրա ոտների մօտ կանգնած՝ դառն արցունք էին թափում։ Բայց ահա նա իր երեսը շրջեց դէպի պատը, որի վրայ կախւած էին նրա սուրն ու նիզակը։ Նա մի խոր հայեացք ձգեց այդ զէնքերի վրայ, որոնք այնքան յաղթութիւններ էին տարել, և մի ակնթարթում նրա աչքերը պայծառացան, դէմքը վառւեց որպէս ճաճանչափայլ արև։ Ծերունին հաւաքելով իր վերջին ոյժը, գլուխը մի փոքր վեր բարձրացրեց և մեղմ ձայնով արտասանեց.

—Ես մեռնում եմ հանգիստ և խաղաղ սրտով, որովհետև պատւաւոր կերպով ապրեցի։ Ինձ հետ դագաղ դրէք և իմ զէնքերը, որովհետև ես չունիմ ոչ ոք, որին կարողանամ կտակել իմ այդ փառքն ու պատիւը։ Անարգ որդիս յաւիտեանս արատաւորեց իմ անունը։ Նա արժանի չէ այդ զէնքերը կրելու։

Այս ասելով, աղի արցունքները հեղեղի նման թափւեցին ծերունու աչքերից և թրջեցին նրա ձիւնի պէս սպիտակ մօրուքը։ Անշուք խրճիթում մեռելային լռութիւն տիրեց և ծերունու կրծքից դուրս թռաւ մի խորին հառաչանք...

Նրա մաքուր հոգին վերացաւ աւելի գեղեցիկ, աւելի չքնաղ աշխարհ...

Թագաւորական դեսպանը մեծ հոգատարութեամբ ժողովեց վշտահար ծերունու արցունքները և խրճիթից դուրս գալով շարունակեց առաջ գնալ։

Նրա սափորը հետզհետէ լցւում էր։

Նրա մէջ կային և՛ վշտի, և՛ տառապանքի, և ուրախութեան արցունքներ։ Ոսկի սափորը փակ էր

միայն պատերազմեան և վրէժխնդրութեան արցունքների համար։

Մի քանի տարի անցնելուց յետոյ, թագաւորական դեսպանը վերադարձաւ իր պետի մօտ. արցունքներով լի սափորը դրաւ նրա առջև և սկսեց պատմել իր տեսածն ու լսածը. թագաւորը խորին կարեկցութեամբ լսում էր դեսպանի պատմածները. բայց երբ դեսպանը վերջացրեց իր պատմութիւնը, թագաւորը տխուր ու տրտում նայեց իր առջև դրւած սափորի մէջ և ապշած մնաց։ Դժբախտների ամեն մի կաթիլ արցունքը ամենայատակ և զուտ մարգարտի էր փոխւել, միմիայն անարդ որդու վրայ թափած ապաբախտ հօր արցունքները մի ահագին և ծանր քար էին դարձել։

—Այժմ պարզ տեսնում եմ,—ասեց թագաւորը,—որ ես կարող եմ լիովին վարձատրել բոլոր տարապետներին նրանց կրած կորուստների և թափած արցունքների համար—միայն հայրական արցունքներն են, որոնց հնար չը կայ ոչ վարձատրելու և ոչ էլ աշխարհիս անհուն գանձով ու հարստութեամբ որևէ հատուցում տալու։

—Այո՛, այո՛,—շարունակեց թագաւորը,—անպատւած ծնողների արցունքները ծանր քար դարձած՝ ճնշում են իրանց տակ անարդ զաւակներին և յաւիտեան անփրկելի պատասխանատու են դարձնում նրանց թէ մարդկանց և թէ Աստծու առջև...

Մ Ա Ն Ո Ւ Կ Ի Ն

Ինչքա՜ն այդպէս ամբողջ օրը
Զարշաբաւում ես անչափ տանջւում,
Մի՛թէ քեզ էլ մթնոլորտը
Ծանր է գալիս, ծանր է ազդում։
Դու մանուկ ես, դեռ քեզ շատ օր
Խոստանում է քո արևը,

Դու դեռ ժպտա՛, խաղա՛ անհոգ
Եւ հեզ ընկիր մօրդ գիրկը։
Ու թոթովիր մի երգ սիրուն
Քո մանկական անուշ ձայնով,
Ու միշտ յիշիր դու այն անուն,
Որ պաշտում է քեզ իր սիրով։
Մայրդ է, որ օր ու գիշեր
Անթարթ աչքով քեզ է հսկում
Եւ կարդալով շատ աղօթքներ՝
Երկար օրեր է միշտ խնդրում։
Խաղա՛, մանուկ, թըրթըռալով,
Քնիր, զարթիր սիրահեղիկ.
Մայրդ կերգէ քեզ փարելով,
Որ շատ ապրես դու երջանիկ։

ՈՒՍՈՒՄՆԱՍԱՐԱՒ ՄԱՆՈՒԿ

Մեր գիւղաւեն ուսումնարան չըկար. ով որ ուսում առնել էր ուզում, պէտք է գնար Ախալքալաք, որ մեր գիւղից հեռու չէր։ Ես շատ նախանձում էի մեր քահանայի որդուն, Սարգսին, երբ նա շաբաթ երեկոներին «Լոյս զւարթ» էր երգում։ Նա շատ յաջողակ ձայն ունէր, և երբ եկեղեցում կատում էր «Լոյս զւարթը»՝ բոլոր ժամւորները զարմացած նրան էին մտիկ տալիս։ Եկեղեցուց դուրս գալուց յետոյ գաւթում խումբ-խումբ հաւաքւում էին գիւղացիք, և չէին դադարում նրան գանազան գովեստներ տալուց։ Նրան գիւղացիների կողմից տւած անվերջ գովեստներն ինձ տեղիք էին տալիս անդադար խընդրել իմ մօրից, որ մի՛ջնորդէր իմ հօրս մօտ՝ ինձ Ախալքալաք ուղարկել կարդալու համար, բայց խնդիրներս միշտ անկատար էին մնում, և ես շարունակում էի հօտաղութիւնս։

Մի անգամ, Ծննդեան տօնի ճրագալոյցի երեկոյին եկեղեցում ասեղ գցելու տեղ չըկար։ Երբ

սովորական աղօթքներն ասում էին ու տիրացուները շատ գրքեր էին կարդում, յանկարծ տեսնեմ սեղանի վարագուրի մի կողմը բացւեց և Սարգիսը դեղին մետաքսէ շապիկ հագած՝ երկու փոքր տղաների հետ, որոնք վարած մոմեր ունէին բռնած ձեռքներին, սեղանից դուրս եկաւ և վարագուրի այս կողմում կանգնելով՝ սկսեց «Դանիէլի գիրքն» անգիր կարդալ։ Նրա կարդացած ժամանակ աղօթողների գովասանքի ձայներն արդէն հասնում էին ականջիս, և ես դասից շատ լաւ տեսնում էի, թէ ինչպէս հանից կանայք իրանց գլուխները վեր էին բարձրացնում տիրացու Սարգսին տեսնելու։ Եւ այդ բանները նկատելով, իմ նախանձը հետզհետէ զրգռւում էր, և ես ուզում էի անպատճառ Ախալքալաք գնալ, այնտեղի ուսումնարանում սովորել և Սարգսի նման «Լոյս զւարթ» երգել և «Դանիէլի գիրքը» կարդալ։ Իմ մէջ այդ ցանկութիւնը առաւել շատացաւ հէնց միևնոյն ճրագալուցի երեկոյին, երբ մի քանի դրացի մանուկների հետ տներումը «Աւետիս» ման եկած ժամանակ տեսնում էի, որ այդ երեկոյին ամեն մինի խօսակցութեան նիւթը տիրացու Սարգիսն էր։ Այդ բանները լսելուց և աւելի ու աւելի բորբոքւելուց յետոյ ես որոշեցի— Ծննդեան կիրակինները վերջանալուց յետոյ—ծնողներից ծածուկ գնալ Ախալքալաք և այնտեղի ուսումնարանումը սովորել։ Վերջապէս մի երեկոյ տրեխներս թրջեցի, խոտեցի, սրիմները* քաշեցի և պատրաստւեցի։ Ոչ մի երեկոյ այնպէս չերմեռանդութեամբ Աստծուն աղօթք չէի արել անկողին մտած ժամանակս, ինչպէս այդ երեկոյին։ Երեք անգամ կրկնեցի իմ սովորական երեկոյեան աղօթքը, որ մի ընդհանուր աղօթք էր՝ ինչպէս մեր ընտանիքի, նոյնպէս և բոլոր գիւղացիների համար։ Տիրացու Սարգսի «Լոյս զւարթով», նրա կարդա-

* Սրիմ=տրեխաթել.

ցած «Դանիէլի գրքով», նրա դեղին «գանւուզի շապիկով» յափշտակւած, Ախալքալաքի ուսումնարանով ոգեւորւած՝ ես անկողնիս մէջ անդադար երեսս խաչակնքում էի և լուռ ու մունջ կրկնում.

Կրակը մարեցաւ,
Ձարը խափանաւ.
Քրիստոս քօղն երեսին,
Հրեշտակները չորս դին,
Երկնքէն իջաւ,
Ծաչապաշտից տները մտաւ։
—Տէր իմ, ո՛ւր, կերթաս։
—Հուր ունիմ հրեղէն,
Բուրվար ունիմ բոցեղէն,
Ամեն թեւս է լուսեղէն,
Գնացի հասնեմ պատարագիս».
—Կէս գիշերին դուրս ելայ,
Մեծաւորիս խաչը տեսայ,
Աղաչեցի՝ Տէր, դու ո՛վ ես.
—Յիսուս Քրիստոսն եմ ես։

Առաւօտեան արշալոյսի ծէգը բացւելուն պէս՝ մայրս, ըստ սովորութեան, ինձ ձայն տւաւ վեր կենալու և հորթերը ջրել տանելու։ Առաւօտեան աղօթքս անելուց յետոյ հորթերը քշեցի առաջս՝ քայլերս դէպի ձորի ճանապարհը ուղղելով. բայց հազիւ ձորի գլխին էի հասել և մօրս տեսութիւնից ծածկւել, թողի իսկոյն հորթերը ձորի գլխին՝ ճանապարհի վրայ և գիւղի ետևի կողմով ընկայ Ախալքալաքի ճանապարհը։

Շարունակ վազ տալով և անդադար ձիւնի մէջ խրւելով, վերջապէս ընկայ ուղիղ ճանապարհի մէջ։ Տեսայ Սարգիսն էլ է գալիս ձիով Ախալքալաքի ճանապարհով։

—«Սաքօ ինչ կայի ինձի գաւակդ առնես», այս եղաւ իմ առաջին խօսքը Սարգսին։—«Տօ, Ովակ, ո՛ւր»։—Ախըրքէլէկ, կարդալու։—«Հարըդ ու մարդ գիտե՞ն»։—Չէ, Սաքօ չան, Սաքօ, ինչ կայի ինձի

գաւակդ առնես։—« Իմ ձիս խրտան է»։—Դէ քիչմ կամաց գընը, ես հետդ կուգամ, ճամբան մենակ չիտեմ։—«Ծօ, դու ձիուն հետ չես կրնա գայ, աշէ, ճամբան կըմնաս, գալիրը կուգան քեզի կուտեն»։

—Սաքօ ջան, Սաքօ... Դեռ չէի վերջացրել իմ խօսքերը, երբ տեսայ,որ Սարգիսը իր ձիու գլուխը դարձըրեց դէպի գիւղ և մի քանի մտրակ խփելով թռաւ։ Ես հասկացայ, որ նա գնում է հօրս իմ փախուստն իմաց անելու, ուստի ուղիղ Ախալքալաքի ճանապարհը բռնելով ոյժ տւի իմ ոտքերին և սկսեցի վազել, անդադար կրկնելով գիտեցածս «գալ-կապի» աղօթքը.

Գալը կապիմ երկու բթով,
Աստւածածնայ քաղցր կաթով,
Սուրբ Սարգսայ ձիան ձարով,
Տէր Մովսէսին գաւազանով,
Լուսաւորչայ սուրբ հաւատով.
Լեզուն կապւի, ակռան թափի,
Եկած ճամբան գայ մոլորի,
Իմ տիրոջս խաչը տեսնի,
Դիւանի պէս թող սասանի...

Բայց ահա տեսնում եմ եռևիցս ձիերով գալիս են հայրս և Սարգիսը։ Նրանք շուտով հասան ինձ. հայրս վրաս յարձակւեց. ես ճանապարհից շեղւեցի, ընկայ ձիւների մէջ, բայց իմ գլխիս ու կողքերիս եղած հարւածներից հազիւ ազատեց ինձ մայրս, որ գիւղի ծայրում ինձ վայր իջեցրեց գաւակից և գուրգուրելով ձեռքերիցս բռնած, տուն տարաւ։ Այսպիսով իմ Ախալքալաք գնալս չը յաջողւեց։

Ա Ն Գ Ր Ա Գ Է Տ

Երբէք մէկին չեմ նախանձում ես աշխարհի երեսին,
Միայն, գրագէտ դուք պարոններ, նախանձում եմ ձեր բա
Ա՛խ, գթացէք գեղջուկ որբիս, մի լաւութիւն միայն արէք
Տրւէք մի թերթ ինձ ձերմակ թուղթ, մի հասարակ գրիչ
Եւ ինձ գրել սովորցրէք, սովորցրէք լաւ, շուտով,
Որ գրիչս կայծակից էլ արագ թուչի գրելով.
Որ պատմելով թղթի վրայ ես ձեզ ցոյց տամ ամեն բան՝
Մեր աշխատանք, մեր չարչարանքն ու մեր խաչը վկայու
կը յայտնէի՝ ինչ ցնորքներ, ինչ մտքեր կան իմ գլխում,
Մի ողջ աշխարհ ցոյց կըտայի ես անմման պատկերում...
Բայց այժմ անհետ չըքանում են բոլոր իմ քաղցր երազն
Ես անգրագէտ, ես անուս եմ... Սովորցրէք, պարոններ։
Կըգրէի ես առաջուց՝ ինչ եմ տեսնում երազում.
Այս երազներն այնպէս չքնաղ, հրաշալի են... Եւ դաշտու
Ահա գեղջուկ մատաղ աղջիկն հունձ է անում եռանդով,
Նրան հրեշտակն երկնքիցը ժպտում է վառ աչքերով...
Երևի թէ կարեկցում է նա հնձւորին... Եւ նրան
Արտուտիկը կամի սփոփել իր երգովը քաղցրաձայն...
Կըգրէի՝ ինչպէս ամառն արշալոյսն է փայլփլում.
Եւ քարերին զարնըւելով կայտառ ջուրն է կարկաչում.
Ինչպէս արտում ցորենի հետ զրոյց է անում մեղմ քամի
Եւ աղօթքի հրաւիրում է փոքրիկ զանգը մեր ժամին։
Ես աղօթել կամենում եմ, բայց չըգիտեմ աղօթքներ.
Ես անգրագէտ, ես անուս եմ... Սովորցրէք, պարոններ։

Աղնիւ գործ է, թէ մարդ գրել իր խօսքերը կարենայ,
Բոլորն՝ ինչ որ մտածում է, բոլորն՝ ինչ որ գլուխը գայ.
Գրչով պատմէ այն ամենը, ինչ դիզւել է իր սրտում,
Ճշմարտութիւն միշտ քարոզէ, բարի գործի մեծութիւն.
Լաւ է նոյնպէս, թէ կարող է գրչով կծու խօսքերին
Պատասխանէ—սուսերի պէս կըհարւածէ չարերին։
Ես շատ անգամ ծաղր եմ լսում, բայց իմ ուսեալ թշնամ
Սիրտս այրւում է, պատասխանի չունիմ ոչինչ զօրութիւ
Եւ միմիայն թղթի վրայ անմիտ կերպով խազխզում.

ծաղրում են և ամօթու կարմըրում են իմ այտեր...
նգրագէտ, ես անուսում... Սովորցըրէք, պարոններ։
լաւ բան է գիր իմանալ։ Գըրագէտ է վաշխառուն,
ւգէտ են դատարանի ծառայողներն անկշտում.
ւղով էլ նրանք գրում են, նրանցն է դրախտն աշխարհի.
այդ գրելն ինչ փոյթ, որ խեղճ մարդու հոգին պիտ հանի։
ւով, շուտով գըրիչ տըւէք սովորցըրէք գործածել
ւմ գըրել ազգի համար, նըրա համար աշխատել։

ԿՈՅՐԸ ԵՒ ԿԱԹԸ

Կոյր ծնւած մի մարդ հարցրեց մէկին.
—Ի՞նչ գոյն ունի կաթը։
—Կաթը թղթի պէս սպիտակ է,—պատասխանեց միւսը։
—Ուրեմն թղթի պէս ձեռքումը ծալւո՞ւմ է,—հարցրեց կոյրը։
—Ո՛չ,—պատասխանեց նա,—կաթը բամբակի պէս սպիտակ է։
—Ուրեմն կաթն էլ բամբակի պէս փափուկ ու թեթե՞ւ է։
—Ո՛չ, եղբայր, կաթի սպիտակութիւնը թէ ուզում ես հասկանալ, քեզ օրինակ սպիտակ հաւկիթը։
—Նշանակում է՝ կաթն էլ հաւկիթի պէս շո՞ւտ է կոտրւում։
—Ո՛չ, ո՛չ, կաթը ոչ կոտրւող է, ոչ էլ պատռւող, այլ ձիւնի պէս սպիտակ է։
—Է՛, հասկացայ,—ասեց կոյրը.—ուրեմն կաթն էլ ձիւնի պէս սառն է։
Այսպէս, կաթի սպիտակութիւնը կոյրի համար անհասկանալի մնաց։

ԿՈՅՐ ԵՐԻ ԿՈՒԻԸ

Մի քանի կոյր մարդ ճանապարհ ընկած՝
Այնպէս էին գնում, ինչպէս մոլորւած,
Ոտք էին փոխում, սայթաքում ընկնում,
Կամ գլխի վրայ ցից ցանակ լինում։
Անցորդի մէկը այս որ նկատեց,
Մէկ փայտ վեր առաւ և նրանց տըւեց,
Որ էլ վայր չընկնին և ոչ սայթաքեն,
Փայտը գէմ տալով գնան տեղ հասնեն։
Կոյրերի մէկը, գլուխը պատռած,
Փայտը ձեռքն առաւ և առաջ ընկաւ.

Ողջ հօտը քաշւեց, իրարից բռնած։
Առաջւայ նման թէպէտ վայր չընկան,
Լօք-լօք անելով՝ մի քիչ հեռացան,
Բայց յանկարծ մէկ թռունդ կռիւ բաց արին.
Առջևից գնալն ամենքն ուզեցին։
Եւ այս կռիւը դեռ չվերջացած՝
Մէջներից մէկը բղղաւեց յանկարծ,
—Տղէք, լսեցէք, ձեզ բան եմ ասում,
Այս փայտն ինչի՞ է, ո՞վ էք իմանում.—
—Ես լաւ կիմանամ, տուր մէկ շօշափեմ.
Դրա անունը ես խոզոյն կասեմ,—
Մէկն ասեց, առաւ, շօշափեց,
Հոտ քաշեց, տնտղեց,
Գլուխը շարժեց, խելքին զօռ տրւեց
Եւ յետոյ վճռեց, թէ՝ սա բոխի է։
—Ոչ թէ բոխի է, այլ լաւ ջոխի է,—
Ասում է միւսը և ձեռքիցն առնում,
Նոյնպէս շօշափում և ձեռնահարում,
—Հը՛մ, ես լաւ գըտայ,—ասում է յանկարծ.
Այս ջոխին կաղնի ծառից է կտրած։
—Ինչ ես դուրս տալիս, դա սերկևիլ է։
—Իսկ ես կասեմ ձեզ որ դա գըկոի է։
—Բա ես խելք չունիմ, ես էլ լաւ գիտեմ,
Ամենքիցդ լաւ ես կը ճանաչեմ,
Դա ձեր ասածից և ոչ մէկը չէ.
Ես հաստատ գիտեմ, որ դա սղնի է։
Այսպէս ամէն մէկն իր զուռնան փչեց,
Փայտն առաւ ձեռքը և մատնահարեց.
Ձեռքով ուզեցան այն բանը գտնել,
Որ երազումն էլ կոյրը չի տեսնել։
Եւ դրա վրայ այնքան վիճեցին,
Որ գործն իսկական կռւի հասցրին,
Գլուխ էր՝ որ ճղւեց, ատամ՝ որ չարդւեց,
Որն էլ շնչասպառ գետնին տարածւեց.
Օգտաւէտ փայտից ոչ թէ շահւեցին,
Այլ նրանով միմեանց գլուխ չարդեցին...

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Մէկ չքաւոր երիտասարդ հանդիպեց իր նախկին ուսուցչին և սկսեց գանգատւել իր անբախտութեան վրայ։

Նա ուսումնարանում եղած ժամանակը ամենալաւ աշակերտն էր։ Իրանից թոյլ ուսանողներն արդէն լաւ անուան ու հարստութեան տէր էին դառել, իսկ ինքը մնացել էր աղքատ ու թշւառ։

—Մի թէ ասածիդ չափ աղքատ ես դու,—ասեց ուսուցիչը և բռնելով նրա ձեռքը՝ շարունակեց.—այս ձեռքը ուժեղ է և կարող է գործել. եթէ քեզ հարիւր մանէթ տան, թոյլ կըտաս, որ կարեն։

—Ի՞նչ էք հրամայում, վարժապետ,—պատասխանեց երիտասարդը.—Աստւած հեռու տանէ. ոչ տասը հազարով թոյլ կըտամ կարելու։

—Հապա քո վառվռուն աչքերը, որ տեսնում են լոյս աշխարհը, քո սուր ականջները, քո արագաշարժ ոտները. կարծեմ դու չես փոխել դրանց մի ամբողջ թագաւորութեան հետ։

—Իհարկէ, չեմ փոխել։

—Եթէ այդպէս է, եթէ այդչափ հարստութեան տէր ես, ուրեմն էլ ինչո՞ւ ես դանգատւում քո աղքատութեան վրայ։

ԱՐՈՒԹԻՒՆԻ ԱՂՕԹՔԸ

Ո՛վ Աստւած իմ, Աստւած, Դու բարի ես,
Դու միշտ ողորմած.
Շատ ժամանակ է, որ քո գթութիւնդ
Երբէք չեմ յիշած։
Ներիր ինձ, ներիր, Արարիչ երկնի,
Ես մեղաւոր եմ.

Դու ինձ շնորհել ես ուժ ու զօրութիւն,
Ես մոռացել եմ.
Դու հրամայել ես լինել գործունեայ,
Ես նոր եմ յիշում։
Այժմից կըսիրեմ գործունէութիւն
Իմ բոլոր կեանքում.
Գործունէութեամբ իմ մէջ կըգտնեմ
Ես ինձ բարերար,
Գործունէութեան դէմ չկայ ոչինչ
Անհաս և դժւար։
Թող այս բազուկներս, որ այժմ զօրաւոր՝
Պարապին գործով.
Թող այս ճակատը, որ այժմ լայնացած՝
Մտածէ ուշքով։
Թող այս ոտները, որ այժմ ամրացած՝
Ուղղապէս քայլին.
Թող այս աչքերը, որ այժմ փայլուն
Շըրջնըկատ լինին։
Ցօժար եմ, յօժար հոգով և մտքով
Գործունեայ լինել,
Հաստատուն յուսով, անվեհեր սրտով
Դէպ առաջ դիմել՝
Դէպի նպատակ՝ դէպի կատարեալն
Ու դէպի բարին,
Որ անհրաժեշտ լցուցանելու
Պարտք է մարդկային։
Դու մի ամրապինդ, ով իմ Ստեղծող,
Կամք տուր ինձ միայն,
Իսկ ջեզ վայել է և փառք, և պատիւ
Այժմ և յաւիտեան։

ՈՒՇԿԱԼ ԾԱՌԱՅ

Մէկ պարոն մի անփորձ ծառայ ունէր։ Մէկ օր պարոնը քնելիս ծառային պատւիրեց որ զգոյշ կենայ և նայէ որ աղմուկ չըլինի։

Մի փոքր ժամանակ որ անցաւ, ծառան լսեց, որ չախկ-չուխկ՝ մի ձայն է գալիս սենեակից։

«Այս ո՞վ է, տէր Աստուած, այս ի՞նչ է»,—մըռմռաց ծառան ինքն իրան և ման եկաւ որ գոնի պարոնին անհանգիստ անողին։ Նա տեսաւ, որ այդ աղմուկն անողը սենեակի պատից կախ առած ժամացոյցն է։

«Է՛յ, ձէնըդ»,—հրամայեց ծառան ժամացոյցին կամաց ձայնով. բայց ժամացոյցը չըլսեց նրան։

«Ձէնըդ կտրի՛ր ասում եմ, էյ»,—բարկացաւ ծառան։ Բայց ժամացոյցը շարունակեց չախկ ու չուխկը։

Զայրացաւ ուշկալ սպասաւորը, պատից վայր բերաւ ժամացոյցը, մի քար վեր առաւ և տո՛ւր թէ կըտաս, չարդ ու փշուր արաւ։

Այս անգամ ժամացոյցը ձայնը կտրեց, իսկ ծառան ուրախանալով՝ ասեց.

«Ահա այդպէս կըհանեմ հոգիդ ու սուս կըկացնեմ հա... դէ գնա հիմա, որտեղ քոնն ասես, իմն էլ այնտեղ ասա»։

ԷՇ ԵՒ ՍՈԽԱԿ

Իշուկը մէկ Սոխակ տեսաւ.
—Մէկ ինձ նայիր,—նրան ասաւ.—
Ասում են՝ դու լաւ ես երգում,
Բայց չըգիտեմ՝ ճի՞շդ են ասում.
Ես ականջներ ունիմ լայն-լայն,
Լաւ եմ լսում ամեն մի ձայն,

Բայց քո երգը ես չեմ լսած,
Թէև լսել շատ եմ ուզած.
Այս լաւ եղաւ, որ քեզ գըտայ.
Դէ, մէկ երգիր, մէկ բըլբլայ,
Տեսնեմ ուղիղ լա՞ւ ես երգում,
Թէ՞ իզուր են այնքան գովում։
Անմեղ Սոխակը նազ չարաւ.
Սիրուն կտուցը բաց արաւ,
Ուզեց ցոյց տալ աւանակին,
Որ սուտ չեն գովում Սոխակին։
Ձայնը լարեց և սկսեց...
Սոխակի ձա՞յն... ինչէ՞ր չասեց.
Մէկ խօսում էր ու մէկ երգում,
Հազար խազով խաղացընում.
Մէկ դայլայլում, դըլդըլացընում,
Մէկ գեղգեղում, կըլկըլացընում,
Այնպէս ըրւում սրնգում էր,
Որ սար ու ձոր գըլգըլում էր,
Լեռ քարերն էլ դարձրին ուշ,
Այնքան քաղցր էր, այնքան անուշ.
Ամեն մի շունչ և արարած
Լսում էր լուռ, ապուշ կտրած.
Քամին կարեց իր վազոցը,
Աղբիւրն իրա քըչքըչոցը.
Ոչ մի տերև չէր սըլսըլում,
Ոչ մի թռչուն չէր ծըլւըլում.
Տաւարներն էլ չարածեցին.
Այլ նստեցին ականջ դրին.
Տաւարածն էլ շունչը քաշած՝
Սոխակին էր լսում ապշած,
Անմեղ ժըպիտը բերանին,
Զեռքով էր անում ընկերին։
Վերջապէս Սոխակը լռեց,
Իշի վճռին ականջ դրեց։
—Է՛հ,—էշն ասեց,—վատ չես երգում,
Լաւ ես ծըւում ու ծըւծւում.

Բայց ես շատ եմ ափսոսում քեզ,
Որ չես երգում աքլորի պէս.
Եթէ մեր աքլորին տեսնես,
Նրա երգին ականջ դնես,
Այնուհետև նրա նման
Դու էլ կերգես շատ աննման։
Այս վճիռը որ լսեցաւ,
Մեր սոխակը նոր աչք բացաւ.
Նա նոր տեսաւ, որ իր դիմաց
Մի անճաշակ էշ է կանգնած.
Թևին խփեց, թռաւ, գնաց
Դէպի աշխարհն երանելեաց...

✓ ԿԻՐԱԿՈՍՆ ՈՒ ՎԱՐԺԱՊԵՏԸ

Մէկ անգամ գիւղի վարժապետը Կիրակոսին ասեց.

—Կիրակոս, փափախդ շատ է մեծ, մի քիչ փոքրացնել տուր։

—Չեմ կարող, գլուխս կըմրսի,—պատասխանեց Կիրակոսը։

—Կիրակոս, ինչո՞ւ կօշիկ չես հագնում, մի՞թէ նա տրխից լաւ չէ։

—Չեմ կարող, ոտներս եարա կըդառնան։

—Կիրակոս, ինչո՞ւ մի քանի փոխնորդ չես պահում, որ մի՞ջատներից ազատուիս։

—Ինչի՞, նրանք Աստծու ստեղծածներ չե՞ն...

—Մ՛յ Կիրակոս, տունդ խոնաւ է, ոսկրացաւ կընկնիս, երեխէդ կըկոտրուին։

—Որ տունս չոր լինի, մահից կըպրծնե՞մ։

—Կիրակոս, պարապ մի նստիր, ափսոս է ժամանակը, գուր ինչո՞ւ ես կորցնում, գնա մէկ օրավար էլ ցանիր։

—Էհ, բանըդ կորուել է։ Աստուած որ տայ, մի ակօսիցն էլ կըտայ։

Կիրակոսին ինչ որ ասում էր վարժապետը, նա իսկոյն մի սուր պատասխան էր տալիս, որ ցոյց տայ, թէ ինքը վարժապետից պակաս խելօք չէ։

Ճշմարիտ որ Կիրակոսը յիմար մարդ չէր, ինքն էլ էր իմանում, որ իր ասածը ճշմարիտ չէր, բայց ծոյլ էր և իր ծուլութիւնը աշխատում էր սրա-խօսութիւնով ծածկել։

Վարժապետը նրա պատասխաններն առաջուց գիտէր. ուզում էր միայն խօսեցնել և կոտրել նրա յամառութիւնը։

—Կիրակոս, դու էլ ես իմանում որ այդպէս չէ—շարունակեց վարժապետը. դու էլ ես իմանում որ Աստուած աշխատողին կըտայ, որ նա շատից շատ կըտայ, քըչից՝ քիչ։

—Իհարկէ, այդպէս է, բայց...

—Էլ ի՞նչ բայց... երբ որ գիտես, թէ այդպէս է, էլ ո՞ր օրւան համար ես պահում քո խելքն ու հասկացողութիւնը։

—Պարոն վարժապետ, գիտե՞ս ինչ կայ.—դու ուզում ես որ ինձ շակես, բայց ես շակուղ պատուղ չեմ. մի անգամ ծուռել եմ, այսպէս էլ պիտի մնամ. շատ որ զօռ անես, կըկոտրես, բայց չես շակիլ։ Մենք մեծերս ինչ կանք՝ կանք. երևի մեր բախտն էլ այսպէս է։ Բայց ահա քո այդ փոքր աշակերտները որ կան, փափուկ մոմի պէս բաներ են. դրանք հիմա մի-մի պատրուք են. կուզես՝ կը վառես, կուզես՝ կըհանգցնես։ Դրանց լուսաւորիր, թող դրանք անեն էն, ինչ որ մեզանից պահանջում ես։

Վարժապետը շատ ուրախացաւ, որ Կիրակոսից այս խելօք խօսքերը լսեց։ Տեսաւ որ, ճըշմարիտ, նրա չափ հասակն առած մարդիկը չեն կարող փոխուիլ, այնուհետև իր բոլոր ուշադրութիւնը դարձրեց փոքր մանուկների վրայ։

ԱՆՎՆԱՍ ՀԱԳՈՒՍՏ

Իմ գլխիս պէտք է մի թեթև գլխարկ.
Որ ինձ պահպանէ ցրտից, արևից,
Թէկուզ ճակատը աննշան լինի,
Այդ վնաս չունի։
Մի բաճկոն է պէտք պինդ շալից կարած,
Որ ինձ պահպանէ ցրտից, արևից,
Թէկուզ կոճակը ոսկորից լինի,
Այդ վնաս չունի։
Ոտքերիս համար պէտք են կօշիկներ,
Որ ինձ պահպանեն ցրտից, արևից,
Թէկուզ հասարակ, անխթան լինի,
Այդ վնաս չունի։
Որքան խեղճեր կան մերկ, ոտաբոբիկ.
Զունին հագնելիք և ոչ ուտելիք.
Ինձ հարկաւոր է հասարակ հագնել
Եւ նրանց օգնել։

ԵՐԿՈՒ ԽՈՓ

Երկաթավաճառը երկու հատ խոփ ուներ, երկուսն էլ մի մեծութեան և մի վարպետի ձեռքով շինուած։

Մի երկրագործ դրանցից մինը գնեց և գործ ածեց, իսկ միւսը երկար ժամանակ մնաց խանութումն ընկած։

Պատահեց որ մի քանի ժամանակից յետոյ այդ երկու ընկեր խոփերը հանդիպեցին իրար։

Գործածուած խոփը արծաթի պէս պսպղում էր և աւելի էր գեղեցկացել, քան թէ նոր շինած ժամանակն էր. իսկ խանութում անգործ մնացածը ժանգոտուել ու սևացել էր։

—Այդ ինչքա՞ն է, որ դու այդքան գեղեցկացել ես,—հարցրեց սևացած խոփը իր ընկերին։

—Աշխատելուցն է, բարեկամ, աշխատասիրությունն է ինձ գեղեցկացրել,—պատասխանեց ընկերը։

—Ա՜խ, ինչքան բախտաւոր ես դու, որ ընկար երկրագործի ձեռքը։ Ես այստեղ մնացել եմ բանտարկված և, ինչպես տեսնում ես, անգործությունից փտել ու սևացել եմ։

ԴՈՒ ՔԵԶ ՀԱՒԱՏԱ

Ջրհաւատաս դու, եթէ քեզ ասեն՝
Հանգիստ դու նստիր և յուսով եղիր.
Օրերը, տարինեը անհոգ թող անցնեն,
Քեզ համար գործը կըգայ ինքն իրեն։
Դու մի հաւատար, թէ որ քեզ ասեն՝
Ջեռքդ մի շարժիր՝ նստիր ինչպէս կուա.
Արծիւն ու առիւծ ոսկի կըբերեն,
Քեզ համար օտարք անդուլ կըգործեն։
Դու մի հաւատար այլոց խօսքերին,
Աչքդ մի ձգիր այլոց ձեռքերին.
Միայն հաւատա՛ քո իսկ ուժերին
Եւ քո խելացի առողջ մտքերին։

ԱՆԲԱԽՏ ՆԱՋԻԿԸ

1.

Շատ դարեր առաջ Բայազէդ քաղաքը բարբարոսների արշաւանքներից ազատ պահելու համար նոյն տեղի իշխանը կամեցաւ շրջապատել նրան հաստ և ամուր պարսպով. բերել տւաւ ուրիշ երկիրներից երևելի ճարտարապետներ և ամբողջ Բայազէդի գաւառի բնակիչներին հրամայն գրեց, որ իւրաքանչիւր տնից մէկ մարդ գայ պարսպի կառուցմանն օգնելու։

Այսպէս ահագին բազմութեամբ մշակներ և վարպետներ սկսեցին եռանդով աշխատել։ Սակայն իզուր եղաւ բոլոր աշխատանքը, որովհետև երբ մի փոքր բարձրացնում էին պարիսպը՝ յանկարծ տակից քանդւում էր։

Այսպէս շատ չարչարւեցին, բայց ոչինչ չըկարողացան շինել։ Իշխանը սաստիկ բարկացաւ. հրամայեց կոտորել բոլոր ճարտարապետներին և նրբանց տեղ բերել տւաւ մի նոր խումբ։ Սրանք էլ ոչինչ չըկարողացան շինել. մինչև երեկոյ շարուն էին, բայց գիշերը դարձեալ քանդւում էր։ Ժողովուրդն այս բանը վերաբերում էր չար ոգիներին, որոնք գոհ էին պահանջում։

Իշխանն այս բանի վրայ տխրած՝ մէկ օր տրտում շրջում էր իր պարտիզում. մտածում էր թէ ինչ հնարք գտնի այս չարիքի առաջն առնելու. այս միջոցին եկաւ նրա մօտ մի դերվիշ և ասեց, որ ինքը կարող է այդ բանի հնարը գտնել։ Իշխանն ասեց. «Թէ մի այդպիսի բան կարողանաս անել, քո կշռովդ—մէկ ոսկի կըստանաս, իսկ եթէ ոչ, պատիժ կընդունես. յօժա՞ր ես»։

—Իշխանն ապրած կենայ, յօժար եմ, եթէ միայն իմ ասածը կըկատարէք։

—Շատ բարի, ասա, տեսնեմ ինչ ես ուզում։

—Ոչինչ, միայն մի աղջիկ պիտի դնես պարսպի մէջ և շարես, այն ժամանակ չի քանդուիլ։

Միւս օրը իշխանը յայտարարեց, թէ ով որ մի աղջիկ կըտայ, փոխարէնը մի կարաս ոսկի կըստանայ իմ գանձարանից։

2.

Այդ ժամանակ Բայազէդում ապրում էր մի որբ աղջիկ մի մօրաքրոջ մօտ՝ Նազիկ անունով։ Մօտ տասնըվեց տարեկան էր Նազիկը։ Շատ սիրուն և համեստ աղջիկ էր. նա սիրելի էր իր բոլոր հարևաններին, ամենքը նրա գլխովին էին պատրաստ։

Երբ իշխանի մարդկանց ձայնը լսեց մօրաքոյրը, որ մի ագահ և չար կին էր, շտապեց նրանց մօտ և առաջարկեց՝ Նազիկին տանել։ Իշխանի մարդիկը խեղճ աղջկանը տարան պարսպի մօտ։

Նրա հետից գնում էր իր մօրաքոյրը և բոլոր հարևանները. ամենքը լաց էին լինում, բացի անգութ մօրաքրոջից, որի սիրտը լեռ քար էր դառել և մի կաթիլ արտասուք անգամ չէր կաթում աչքերից։

Իշխանի մարդիկը Նազիկին կանգնեցրին պարսպի հիմքի վրայ և սկսեցին քարերը շարել, ականջ չդնելով խեղճ աղջկայ դառն հառաչանքներին և աղի արտասուքին։ Նազիկն օգնութիւն էր կանչում, բայց ո՞վ կարող էր օգնել նրան. մէկ որ՝ իշխանի հրամանն էր, մէկ էլ որ՝ Նազիկը ծախւած էր։

Նա դիմեց մօրաքրոջը. աղաչում, պաղատում էր, բայց նա ոչինչ չէր անում, այլ քարի նման պապանձւել էր և ծպտուն անգամ չէր հանում, և երբ վարպետները արդէն շարել էին մինչև Նազիկի ծնկները, Նազիկը սկսեց հեկեկալով կանչել.

Շարեցէ՛ն, մօրքուր, շարեցէ՛ն,
Մինչև ծնկներս քարեցէ՛ն,
Ազատիր, մօրքուր, ազատի՛ր,
Մատաղ կեանքիս խնայի՛ր։

Անգութ մօրաքոյրը փոխանակ կարեկցելու խեղճ աղջկանը՝ սկսեց խաբել նրան, մինչև վարպետները իրանց գործը վերջացնէին, և զանազան խաբէական խոստմունքներ անելով պատասխանեց.

Թող շարեն, բալա-ջան, թող շարեն,
Մինչև սրունքներըդ թող քարեն։
Համբերիր չարըդ տանեմ, համբերիր.
Դու կազատւիս, հոգիս, սիրտըդ պինդ պահիր։

Այս միջոցին վարպետները արդէն սկսել էին շարել մինչև սրունքները. ծանր քարերը կոտրտեցին նրա ոտքի ոսկորները, և այդ անտանելի ցաւից ճնշւած՝ անօգնական Նազիկը դառն արտասուքով դիմեց կրկին իր մօրաքրոջը, գութ և օգնութիւն խնդրելու.

Շարեցէ՛ն, մօրքուր, շարեցէ՛ն,
Մինչև սրունքներս քարեցէ՛ն.
Մօրքուր, ճար ունիս, ճարըդ տես,
Փրկէ ինձ, թէ Աստւած կըսիրես։

Այս դառը աղերսանքից ժողովրդի գութը շարժւեց և լաց էին լինում. սկսեցին աղաչանք, պաղատանք անել իշխանի մարդկանցը, որպէս զի խնայեն խեղճ աղջկան, բայց լսող չկար, որովհետև Նազիկը ծախւած էր։ Ամեն կողմից դիմեցին քարասիրտ մօրաքրոջը, որ ազատի. բայց անգութը փոխանակ ազատելու՝ շարունակեց իր խաբէութիւնները, ասելով.

Թող շարեն, բալա-ջան, թող շարեն,
Մինչև կուրծքըդ թող քարեն.
Ցաւըդ առնեմ, փոքր էլ սպասիր,
Հրէս իշխանից կըբերեմ մի գէր։

Մինչև նա ասում էր, ծանր քարերն ու ցեխը արդէն ծածկեցին թշւառ աղջկայ կուրծքը։ Ահռելւած ժողովուրդը ականատես էր այս զարհուրելի տեսարանին. ամենքը լաց էին լինում, զգում էին թշւառի դրութիւնը. բայց այս տեսարանը չէր շարժում քարասիրտ մօրաքրոջ գութը։ Անտանելի ցաւից,

ճնշուած, ձայնը փորը գցած՝ Նազիկը նորից դիմեց իր մօրաքրոջը.

Շարեցէ՛ն, մօրքուր, շարեցէ՛ն,
Մինչև կուրծքս էլ քարեցէ՛ն.
Բաշխիր մօրս գերեզմանին,
Մօրքուր-ջան, հասակս անգին.

Մօրքուրը իր սատանայական խաբէութիւններն առաջ տարաւ.

Թող շարեն, բալա-ջան, թող շարեն.
Մինչև շլինքդ թող քարեն.
Իշխանը ձեռք քաշեց քո թղթին,
Նա անխիղճ չէ, կազատէ որբին։

3.

Վարպետները շարեցին մինչև շլինքը. ծանր ճնշումից ոչ մի ոյժ չէր մնացել, որ լաց լինէր. աչքերն էլ արդէն ուռել էին և նրանցից վազող արտասուքը թրջում էր կոպիտ բանուորների ոտքերը, որ խեղճ աղջկայ գլուխը կոխ տալով՝ շարունակում էին իրանց գործը։ Շունչը կտրած՝ գլուխը թեքեց դէպի մօրաքոյրը, բայց այս անգամ ձայնը դուրս չէր գալիս. եթէ դուրս էլ գար՝ ոչ ոք չէր լսիլ, թէ ինչ էր կամենում ասել. միայն նկատելի էր, որ արտասւաթոր աչքերը շուռ ու մուռ էին գալիս, երբեմն մօրաքրոջ երեսին էր ձգում, երբեմն ամբոխի։ Այս տեսնում էր ամբոխը և ականատես էր մօրաքոյրը, բայց նրա խիղճը մեռել էր, իշխանի տւած ոսկիները նրա աչքերը կուրացրել էին։ Ցեխն ու քարը շարունակ դիզւում էր Նազիկի վրայ և մի փոքր էր մնացել, որ բերանն էլ ծածկւէր. երբ նա իր վերջին շունչը հաւաքելով՝ նւազ ձայնով կանչեց.

Շարեցէ՛ն, մօրքուր, շարեցէ՛ն,
Մինչև գլուխս էլ քարեցէ՛ն.
Սիրտդ քար է, անխիղճ մօրքուր,
Հոգիդ ընկնի գեհենի հուր։

Անաստւած, դու ինձ ծախեցիր,
Ջահել ումբրըս մաշեցիր։
Մօրքուր, մխիթար չունենաս,
Քեզ տեսնեմ՝ սև ագռաւ դառնաս,
Բովանդակ երկիրը ման գաս,
Տեղ չգտած՝ պարսպիս վրայ
Նստես, ղրռղրռաս...

Շունչը կտրւեց, քարերը ծածկեցին բերանը, անյայտացաւ գլուխը։ Այդ միջոցին ապշած ժողովուրդը նկատեց, որ չար մօրաքոյրը սև ագռաւ դառաւ, թռաւ թէպի վեր։ Այդ օրից սկսած ամենայն օր գալիս էր ագռաւը, նստում պարսպի վրայ, ղռում, դռում էր և կտուցը երկարացնելով դէպի Նազիկի թաղած տեղը՝ անմխիթար թռչում էր։ Այդ ժամանակից է, որ ագռաւների մէջ սովորութիւն է մնացել, որ իրանց ղռալու ժամանակ շլինքները երկարացնում են, որպէս զի յիշեցնեն մարդկանց Նազիկի տխուր անցքը։



ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԵՍԱՐԻՑ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԱԿԱԻՈՐ

ՄԵՐ ԴՈՒՐՍՈՒՆԸ

(Մանկական յիշողութիւններից)

Ա.

Մենք գոմէշներ շատ ունէինք՝ մինը քանըզ միւսը գեղեցիկ և վայելչակազմ, բայց ամենին գերազանցում էր Դուրսունը՝ ոչ միայն իր գեղեցկութիւնովը, այլ և իր ուժովը, իր խելքովն ու ճարպիկութիւնովը։

Բնաւորութեան կողմանէ մարդկանց պէս անասուններն էլ են տարբերւում միմեանցից. Ներանցում էլ մէկն աւելի աշխոյժ է լինում, միւսը սրամիտ։ Մեր Դուրսունը գոմէշների բոլոր լաւ յատկութիւններն ունէր։

Դուրսունը գեղեցիկ էր իրրև գոմէշ և շատ գեղեցիկ։ Նրա հայեացքի մէջ ամեն ինչ արտայայտւում էր. երբեմն ուրախութիւն և հաճոյք, երբեմն զարմանք և տխրութիւն, երբեմն զայրոյթ

և բարկութիւն, երբեմն խելք և ուշիմութիւն։ Երբ նա կանգնում էր իրրև մի առիւծ, պոչը շրջրտում գցում մէջքի վրա, վիզը թեքում և նայում երեսիս, ես մնում էի հիացած, թէև անգիտակցաբար։

Նա ամեն բան հասկանում էր, ամեն ասած խօսք լաւ ըմբռնում էր. կանչում էին՝ պատասխան էր տալիս. ափսոս միայն, որ իր միտքն ու զգացմունքը յայտնելու համար միայն չորս ու հինգ բառաձայն ունէր, այն էլ այնպէս դժւար արտասանելի, որ տառերով չեն գրւում։

—Դուրսուն, հասկանո՞ւմ ես, ինչ եմ ասում,— հարցնում էի շատ անգամ։

—Վույլ՛,—պատասխանում էր Դուրսունս և պոչկում։ Ինչքան քաղցր էր նրա պոչկալը։

—Դուրսուն, արի՛ այստեղ։

Դուրսունը հասկանում էր միտքս։ Գալիս էր մօտս, ցածրացնում էր գլուխը, ես երկու ոտքով կանգնում էի վրան և նա բարձրացնում էր դնում մէջքին։

Բայց ինչո՞ւ Դուրսուն էր անունը, գուցէ կհարցնէք, որ մի քաղցրահնչիւն անուն էլ չէ և ոչ իսկ հայերէն։ Ես այդ բառը կրբացատրեմ ձեզ, եթէ չէք ձանձրանալ։

Մեզանում վաղուց սովորութիւն էր դառել կենդանիներին թուրքերէն անուն դնելը. շատ սակաւ դնում էին և հայերէն անուններ։ Բայց թէ թուրքերէնը և թէ հայերէնը ըստ մեծի մասին կենդանու արտաքին յատկութիւնից են վերցնում Աննշան սև գոմշին ասում են Ղարա (սևուկ). եթէ ճակատը ղաշղայ է, սպիտակ նշան ունի, ասում են՝ Թափալ. (ղաշղայ, նշանով, բաշօ). եթէ կրծքին կամ վզին շէկ կամար ունի,—Հէքեալ, և այլն։ Գոմշակովերին չոկ անուն են տալիս, և այն աւելի քնքոյշ, ինչպէս՝ Մարջան (բուստ), Թելլի (հուստուր), Շէկիկ, Թուխծամ, և այլն։ Եզներին ու կո-

վերին էլ ուրիշ ուրիշ անուններ են տալիս։ Այս անունների ընդհանուր կանոնից դուրս է Դուբսունն անունը, թէև բացառութիւն չէ։ Դուբսունը թուրքերէնի մէջ նոյնն է, ինչ որ մեզանում «մնացական» բառը։ Մնացական են անւանում այն երեխաներին, որոնք իրանց ծնողաց միակն են լինում, որոնցից առաջ ծնւածները ապրած չեն լինում։ Այս տեսակ պատճառից է առաջ եկել և մեր Դուբսուն—մնացական անունը։

Բ.

Դուբսունը իբրև բեռնակիր։ Ամեն անգամ սար գնալիս և այնտեղից վերադառնալիս իմ ձին Դուբսունն էր։ Մեծ թաղիքը (ալաչուխի քեչան) ծալում, գցում էինք վրան, երկու չբւալ էլ ամանչամանով լցնում, բարձում, ես էլ միջին նստում էի և ճանապարհ էինք ընկնում դէպի սար։ Նա ինձանից աւելի լաւ էր իմանում ճանապարհը և լաւ էլ հասկանում էր, թէ ուր են ուղարկում։ Շատ գոմէշներ առուների ու ցեխոտ լճակների մօտով անցնելիս, արևի շոգից և ճանճ ու բոռից նեղանալով ընկնում էին գետերի մէջ և ցեխի մէջ թաւալելով բեռներն ապականում էին ու միջի ամանները կոտրատում։ Դուբսունս նրանց օրինակին չէր հետևում. նայում էր նրանց և գլուխը շարժում, որով պախարակում էր նրանց արարմունքը։ Անտառ մտած ժամանակն էլ՝ շատ գոմէշներ ծառերին էին քսւում, ցածրացած ճղների տակովն էին անցնում, որ իրանց բեռներից ազատւին. բայց Դուբսունը այդպէս բան չէր անում, թէև խորամանկութեան գալով նա կարող էր ամենին դաս տալ։ Երևի նրանք մի ոխ ունէին իրանց տէրերի դէմ, բայց մեր Դուբսունը այդպիսի պատճառ չունէր, քանի որ նա մեր ամենիս սիրելին էր և ամենքիցս փայփայւած։ Հայրս նրան ճանապարհ ձգելով ասում էր. «Տէս, Դուբսուն, քեզ եմ պահ

տալիս այս բեռն էլ, այս երեխէն էլ. պիտի անվտանգ տեղ հասցնես»։—Վուչ, պատասխանում էր Դուբսունը և իր խոստումը կատարում ամենայն հաւատարմութիւնով։ Նա գլուխը քաշ գցած՝ բոլոր ձիաւորների առջևն էր գընում, այնքան արագաքայլ էր, թէև մասամբ էլ նրանից էր այդ, որ ինքը մեզանից շատ էր ցանկանում ժամ առաջ հով ու զով սարերն ընկնել և ազատւել ճանճ ու մժեղից։

Գ.

Դուբսունը իբրև պահապան։

Գոմէշներն առհասարակ գայլերից երկիւղ չունին։ Գայլերը գիտեն, որ գոմէշներն իրանց ժանիքի բանը չեն, այդ պատճառով նրանց մօտենալ չեն յանդգնում։ Այդ բանը գիտեն և տաւարները. այս պատճառով գոմէշների մօտ իրանց միշտ ապահով են զգում։ Դուբսունը իբրև պահապան և պաշտպան տաւարների՝ շատ գոմէշների գերազանցում էր իր ասպետական քաջագործութիւնով։ Գայլերի յարձակմունքներից նա ոչ միայն այն ժամանակն էր պաշտպանում տաւարներին՝ երբ որ նրանց մօտն էր լինում, այլ հեռու եղած ժամանակն էլ։ Երբ որ ականջն էր հասնում յայտնի վտանգաւոր գոռոցը, նա մի ակնթարթի մէջ կատաղի վագրի պէս վազում էր և օգնութիւն հասցնում սարսափած նախիրին։ Նա շատ անգամ յարձակւում էր սովից յանդգնացած գայլերի վրայ ու նրանց եղջերահար և ոտնահար անում։ Նրա օրինակին էին հետևում և միւս գոմէշները, և այսպէս յաղթութիւնը միշտ իրանց կողմն էր մնում։ Այսպիսի յաղթութիւններից յետոյ տաւարները միշտ մօտենում էին Դուբսունին և հոտոտում նրանից. դրանով նրանք յայտնում էին իրանց շնորհակալութիւնը։

Դ.

Դուբսունը իբրև ըմբիշ։ Գոմէշների մենամարտութիւնը մի զարհուրելի տեսարան է։ Մենամարտութեան ժամանակ մեր Դուբսունը խելքը կորցնում էր. ոչ խօսքով, ոչ ծեծով ուշքի չէր բերւում, այլ աւելի էլ տաքանում էր և դառնում մի կատաղի գազան։ Իր ծանօթ գոմէշներից ոչ մէկը նրա հետ չէր մենամարտում. փորձով գիտէին, թէ ինչ գազանի հետ գործ ունէին. բայց եթէ հանդիպում էր նրան մի անծանօթ և իր ուժի վրայ մեծ համարում ունեցող ամբարտաւան գոմէշ, նրան խրատում էր Դուբսունը և շատ անգամ ճանապարհ ձգում ուղղակի դէպի միւս աշխարհը։

Մէկ անգամ մի օտար, անծանօթ գոմէշ հեռուից նկատելով Դուբսունին՝ իր քայլերն ուղղեց դէպի նա, բայց այնպիսի մի ձևով՝ որ կարծես գետինը պիտը դողդողայ ոտների տակ։ Այդ ձևը շատ յարմար էր գալիս նրա հսկայամարմին հասակին։ Նրա եղջիւրներն երկարումէկ ձգւել էին վզի ուղղութիւնով և հասել մինչև էրաթաթերը։ Ամբողջ ճակատը բաց ու դուրս պրծած էր, ինչպէս մի ահագին թումբ։ Սրա հակառակ՝ Դուբսունի եղջիւրները դէպի առաջ էին թեքւած և կեռացած, որ հարկաւոր դէպքում վահանաձև գլխի երկու կողմից նիզակների պաշտօն կատարեն։

Անծանօթ գոմէշը քիչ-քիչ մօտենալով՝ կանգ առաւ, վիզն սկսեց ծաղրական ձևով ծռծռել, գլուխը թեքեց դէպի վեր և բարձրից մի արհամարհական հայեացք ձգեց Դուբսունի վրայ։ Դուբսունը անշարժ նայում էր անծանօթի վրայ, բայց այնպէս որ կարծես ասում լինէր իր մէջ.—Այս յիմարն ինչ է ուզում ինձանից։ Անծանօթը շարունակելով ծամածռութիւնները, սկսեց մօտենալ։—Վդդ՛,—ասեց Դուբսունը, իբր՝ հասկացայ քո միտքը, համեցէք, ես պատրաստ եմ, և գլուխն սկսեց աւելի

ևս բարձրացնել և խեթ-խեթ նայելով՝ դիմաւորել անծանօթին կողմնակի ճանապարհով։ Գոմէշներն սկսեցին իրար նայելով՝ մի ձրւաձև պտոյտ անել և շրջանը քիչ-քիչ փոքրացնելով գլուխ գլխի զարկեցին։

Սովորաբար մի բոպէի մէջ գոմէշներն իրար հասկանում են։ Եթէ կռւողներից մինը միւսից թոյլ է լինում, նա առանց կատաղեցնելու հակառակորդին, իսկոյն հեռանում է, իսկ եթէ ուժ-ուժի է հանդիպում՝ կռիւը շարունակւում է և հետզհետէ այնպէս է թնդւում, որ էլ բաժանել չի լինում, և տևում է շարունակ մի քանի ժամ։ Դուբսունը, թէև զօրաւոր հակառակորդի էր հանդիպել, բայց փախուստ տւողներից չէր։ Նա իր կեռ-կեռ պոզերով հակառակորդի ականջատակերին ու քթին խփելով ու վիրաւորելով՝ աւելի շուտ զայրացրեց և կռիւը շատ շուտով թնդացրեց։ Հակառակորդը մի քանի անգամ չոքեց, բարձրացաւ, տեսաւ որ բանը վատ է գնում, բայց ուշ էր, էլ յետ դառնալ չէր կարող, անճարացած՝ մինչև վերջը պիտի տանէր Դուբսունի հարւածները։ Վախենում էր յետ քաշւելի, որովհետև կատաղած թշնամին օգուտ քաղելով այդ հանգամանքից՝ կարող էր նրան մահացու հարւած հասցնել։ Գլուխը մի տեսակ վահան է, որով գոմէշը թէ կռւում և թէ պաշտպանում է իրան. գլուխը հեռացնելուց յետոյ՝ նա զինաթափ է լինում ու մնում է անպաշտպան թշնամու յարձակմունքից։ Եթէ փախչելու էլ լինի, պէտք է այնպէս շուտ և արագ կատարէ այդ բանը՝ որ թշնամին չկարողանայ եռևիցը հասնել։ Այս անգամ մեր օտարական գոմէշը լաւ երազ չէր տեսել։ Նա երկար ընդդիմանալուց յետոյ փախչելու փորձ արաւ, բայց կատաղած Դուբսունը հասաւ նրա եռևից և իրան յատուկ գոմշային ուժով այնպէս խփեց նրա փորին, որ խեղճը գլորւեց տակառի նման և ձորա-

բաշից ցած ընկնելով՝ չարդուփշուր եղաւ։ Գոմէշի տէրը որ մի խեղճ գիւղացի էր, շատ ուշ վրայ հասաւ։ Բայց մեր գիւղացիք նրան չըթողեցին շինքը ծուռ. իսկոյն իրանց մէջ փող ժողովեցին և նրա համար մի գոմէշ առան։ Այս բանում իմ հայրը աւելի օգնեց, որովհետև մեղապարտը մեր Դուբսունն էր։

Դուբսունը լինելով քաջ ըմբիշ՝ միևնոյն ժամանակ և ուժեղ լծկան էր։ Հարկաւոր էր արդեօք դժւար տեղից մի հսկայական գերան դուրս քաշել, ցեխում և ձոռիվայրի տակ մնացած ծանր սայլը վերև հանել, կարճ «առաւել» ունեցող հողի ակօսը մի լծով տեղ հասցնել,—ահա այդպիսի նեղ ու դժւար տեղերում Դուբսունի օգնութիւնը անհրաժեշտ էր։ Այդպիսի ծանր ուժ հարկաւոր եղած տեղերում Դուբսունի կողմի լծակաբաժինը միշտ կարճացնում էին, որ ասել է՝ ծանրութեան երկու բաժինը միշտ նրան էին տալիս, որ ընկերը կարողանայ հետը քաշել։ Նա դալը չէր, դժւարութիւնից փախս տալու համար շատերի պէս սամիք չէր կոտրատում։ Նրա ժամանակ գիւղումն էլ տուն չըմնաց, որ Դուբսուն անունով մի շիշակ չունենար։ Ամենքն էլ անտեղի կերպով իրանց գոմշաձագերի անունը Դուբսուն էին դնում, որ նրա պէս քաջ, նրա պէս խելօք և ուժեղ լինի։

Ե.

Դուբսունի վարքը։ Լաւ վարք ու բարք ունենալը շատ օգտակար է։

Գողութեան սովոր շունը պահող չի ունենալ. դալը եզը շուտով սպանդանոց կուղարկւի։ Մեր Դուբսունը իր կեանքի վերջին օրերում, աւելի խելահաս ժամանակը մի տարօրինակ բնաւորութիւն ստացաւ։ Նա սկսեց գողութիւն անել և այն էլ ոչ թէ գոմշավարի, այլ մարդավարի, հասկա-

նալով, որ արածը մի արգելած բան է։ Շատ անգամ կէս գիշերին վեր էինք կենում և տեսնում որ Դուբսունը տաւարի մէջը չէ։ Երկիւղ չունենալով ոչ գայլից և ոչ գողից, էլ չէինք որոնում, յուսալով, որ ցերեկով կերևայ։ Բայց ընդհակառակը, Դուբսունի կորուստը մինչև ցերեկ չէր տևում. նա դեռ լոյսը չբացած էլի գալիս էր տեղը նստում, որպէս թէ ոչ մի տեղ գնացած չըլինի։ Սրա վրայ հայրս ասաց, որ Դուբսունը գնում է գողութեան, բայց դա վտանգաւոր բան է, կարող են սպանել. հարկաւոր է գիշերները կապել։ Հօրըս նախազգուշութիւնը երբեմն կատարում էինք, երբեմն մոռանում, բայց լաւ ստուգեցինք, որ յիրաւի մեր Դուբսունը ամեն անգամ կէս գիշերին վեր է կենում սուսուփուս, կամաց-կամաց, առանց շիլթուն հանելու, բոլորովին գողավարի, և գնում հարևան թուրքերի կորեկները մտնում, լաւ արածում և գալիս էլ ետ իր տեղը նստում։

Մի գեղեցիկ լուսնեակ գիշեր ձի հեծայ, գնացի Դուբսունիս գտայ կորեկի մէջ։ Նա այնպէս էր արածում, ինչպէս մի վայրենի. մի փունջ հախուռելիս՝ գլուխը բարձրացրում, այս ու այն կողմն էր նայում, որ ապահով լինի, թէ իրան տեսնող չըկայ։ Ինձ իսկոյն նկատեց և այնպէս դուրս ընկաւ արտից, ինչպէս մի եղջերու, մինչև տուն մի շնչում վազեց։

Կորեկները հնձելուց յետոյ նա սովորութիւն արաւ մտնել այգիքը։ Այգի մտնելիս՝ չափարը չէր ճմռռում, որ ձայնը չըլսւի, այլ գնում էր ցածր տեղ և կապիկի ճարպիկութիւնով ոստնում վրայից։ Սրա վրայ շատ չանցաւ, մեր Դուբսունը գողութեան պատիժն ստացաւ, ըստ որում ասած է՝ «Ծատն ամեն օր գաթա չի ուտիլ»։

Մի առաւօտ՝ տաւարը հանդ տանելու ժամանակ Դուբսունիս գտայ արիւնի մէջ շաղախւած։ Սկսեցի բղաւել. վա՛յ, ամի, ա՛յլ...Ամիս ու ազիս եկան

և գնելով տեսան, որ Դուբսունի ետևի ալ օմքին այնպես են խփել կացնով, որ մինչև քունիը ներս է գնացել։ Յայտնի էր, որ մի որևիցե բաղում է պատահել այդ չարագործությունը, բայց ո՛վ կասէր թէ ինքն է արել։ Սկսեցինք դեղուդուղ անել, և վէրքը, շատ ուշ լաւացաւ։ Այնուհետև մեր Դուբսունը այլ ևս գողութեան չըգնաց և իր խփողին էլ վերջ ի վերջոյ ինքը գտաւ։

Մէկ անգամ տաւարը տանում էի դէպի առուն ջուր տալու։ Երբ որ հասայ առուի ափը, մի կնիկարմատ նոր լցրել էր կուժը, ուզում էր վերադառնալ։ Բոլոր տաւարները վրայ ընկան ջրին, իսկ Դուբսունը այդ կնկանը տեսաւ թէ չէ, իսկոյն դուրս ընկաւ տաւարի մէջից և մի քիչ տեղ փախչելով՝ յետ դառաւ և սկսեց աչքերը պըճացնել կնկայ վրայ։ Կնիկն այնպէս վախեց, որ կարծեց թէ հիմի ուր որ է Դուբսունը պիտի նրան ոտնատակ տայ։—Ա՛ զոմէշ, ինչի՞ ես էդպէս մտիկ տալիս. ես խօմ չեմ խփել քեզ,—ասեց կնիկարմատը։ Ես այդ կնկանից Դուբսունի չափ վախեցի, ըստ որում նրանից ամեն բան սպասելի էր։ Վերադառնալով տուն այս անցքը պատմեցի մօրս։ Վերջն սատուգեց, որ Դուբսունին կացնով խփողը յիշեալ կնիկարմատն էր եղել։

Զ.

Դ ու բ ս ո ւ ն ի մ ա հ ը։ Մեր Դուբսունը դեռ առոյգ հասակի մէջն էր, որ մի սարսափելի ցաւ եկաւ և անխնայ կոտորեց բոլոր տաւարները։ Ահա այդ ցաւին զոհ գնաց և մեր Դուբսունը։ Մեր պիտացած բոլոր հնարները գործ դրինք՝ թէ արիւն առնել էր, թէ սառը ջուր ածել վրան, թէ սուրբի չորս կողմը պտրտացնել, թէ սուրբ հող և օրհնած աղ ուտեցնել, թէ մատաղ անել և ճրագ վառել, բայց բոլորը զուր անցաւ. Դուբսունը չըփրկւեց. Ես յիշում եմ նրա հիւանդութիւնը, նրա քաշած

չարչարանքը, նրա աղիողորմ նայւածքը։ Այդ տարին քառասուն գլուխ տաւար կոտորւեց մեր տնից, բայց մենք ամենքս լաց եղանք միայն Դուբսունի վրայ, այնքան սիրելի էր նա։ Հայրս նրա գլուխը չըթաղեց մարմնի հետ, այլ կաշուից ու մսից մաքրելով, չոր գագաթը ցցեց ցանկապատի ցցի վրայ։

Լաւ կենդանի է զոմէշը և շատ օգտակար, բայց մենք մեր ունեցած բանների արժէքը ճանաչել չըպիտենք։ Ռելօք եւրոպացիների մօտ յիմար անասուններն էլ խելօք են լինում, իսկ մեզ մօտ մեր իմաստուն անասուններն էլ են յիմարանում, որովհետև մենք չըգիտենք նրանց գրաւել, կրթել և խնամել։

Խ Ո Զ Ն Ո Ւ .Ե Զ Ը

Խոզն ինչ գլուխ ունի, որ ինչ գրոյց տայ,
Բայց մէկ օր սկսեց Եզին խրատ տալ նա.
Խոզը խրատ կըտա՞յ,
Ո՞վ կըհաւատայ։
—Լսիր, սիրելի, նահլաթ սատանին,
Մ'իթէ խոզի պէս մարդիկ քիչ կըլինին։
—«Զուր չեն քեզ մարդիկ եզուկ անւանում,
Ու ծանր լուծը շինքիդ դնում.
Քեզ այնքան ընկճել խեղճացրել են,
Որ ոչ միայն լծում, այլ բարձում էլ են։
Ու քեզ, որ այդքան գործ ես կատարում,
Դըրա փոխարէն ինչպէս են պահում.
Մի բուռ խոտն ինչ է, այն էլ չեն տալիս,
Դուննդ էլ կապում կալը կասելիս,
Որ դու քո կասած զարմանից չուտես,
Կրած հասկերիդ համը չըտեսնես։
Ինձ որ ուտելու ոչինչ չեն տալիս,
Դըրանց հախից շատ լաւ եմ գալիս։

Էլ ոչ հաւին եմ խնայում, ոչ ճըւին,
Ինչքա՞ս է պէտքը, քարն իրանց գլխին,
Ինչ-որ գտնում եմ, փորս եմ ածում,
Ինչ կուզի լինի, ես չեմ ջոկըլկում.
Օրէնը հազար տուն էլ որ քանդես,
Դեռ էլի քիչ է, որ լաւ մտածես։
Այսպէս եմ արել չաղացել այսպէս,
Որ ճրագուս եկել լցւել է աչքերս.
Իսկ դու չորացել, կմախք ես դառել,
Մէջքդ բարակել, շլինքդ ծռւել։
Ու ե՞րբ է եղել որ մէկին ասի քեզ,
Թէ դու լաւ եղն ես, շատ ապրիս, կեցցես,
Կամ ինձ բանտարկել և յանդիմանել,
Թէ դու ինչո՞ւ ես այդքան չաղացել։
—«Ծողն իր խոզուքիւնը ձեռքից չի թողնիլ,—
Մեր եղն սկսեց լեզուն բաց անիլ,—
Ցեխն է քո տեղը՝ գնաս թաւալ տաս,
Լաւութիւն անելն ինչ կըհասկանաս։
Ի՞նչ օգուտ ունի այն քաղցր արեգակը,
Կամ այն գեղեցիկ պայծառ լուսնեակը,
Որ լոյս են տալիս, իրանք մայր մանում,
Մեզնից մի անուշ խօսք էլ չեն լսում։
Անձրևը գալիս, արևը բացւում,
Սար ու ձոր այնպէս ցնծում ու ծաղկում.
Մեղուն անդադար մեղր պատրաստում,
Աղքատ, հարստի բերան քաղցրացնում,
Վարդն էլ իր հոտը չի պակսացնում,
Ծառն իր պտուղը ինքը չի ուտում,
Հողը ծառին է նիւթ տալիս, պահում,
Ծառն էլ նրան է շըւաք անում, սիրում.
Երկինքն անձրև է տալիս մեր երկրին,
Երկիրն էլ ծովից բարձրացնում ամպին։
Ինչո՞ւ ուրեմն ես էլ չաշխատեմ,
Հազար խեղճ, որբի կարիք չըլցնեմ։
Էլ երկրի խոտը ինչ սրտով ուտեմ,
Էլ աղբրի ջուրը ես ինչպէս խմեմ,

Որ աշխարումս բանի պէտք չըզամ,
Իմ գլխիս նայեմ, իմ ցաւը հոգամ։
Ես իմ բախտիցս էլ չեմ գանգատւում,
Իմ սիրոջ տանը ես լաւ եմ ապրում.
Ինձ շատ սիրում են և շատ էլ պատւում,
Քաղցած չեն թողնում և լաւ են պահում.
Ով էլ մէկ մուրաց ունի իր սրտում,
Ինձ է Աստծուն մատաղ խոստանում.
Բայց քեզ ամենքն էլ սրտով ատում են,
Թուրք ու հրեայ խօմ իսպառ զզւում են.
Քրիստոնեան էլ որ տուն է թողնում,
Թուրք ու հրեայի չգրուս է անում.
Ով մէկին մէկ վատ անուն է դնում,
Ծոզ է ասում նրան կամ գոճի կանչում։
Դու քո խրատը քեզ համար պահիր,
Իմ մաքուր սիրտը դու չես պղտորիլ։
Միշտ աշխատել եմ, էլի կաշխատեմ
Ու իմ արածով կըմխիթարւեմ»։

ԷՇԸ ԵՒՐՈՊԱՑՈՒՄ ԵՒ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Ա.

Սիրելի մանուկներ, գուցէ դուք կարծում էք որ ես մտադիր եմ ձեզ անբան անասուններուի արտաքին տեսքը նկարագրել, որ իմանաք թէ քանի ոտք ունի ամեն մէկը, քանի աչք, քանի ականջ, քանի քիթ. պոչը կարճ է թէ երկար, մազոտ թէ անմազ, միսը կաշին, ոսկորները բանի պէտք են գալիս թէ ոչ, կամ աւելի խորը գնանք—քանի աստամ ունի, որկորը նեղ է թէ լայն, ստամոքսը քանի պարկ ունի. սիրտ, թոքեր, աղիք-մաղիք ինչպէս են դասաւորւած և այլն և այլն։ Ոչ, ամենևին. միայն ես կուզենամ ձեզ ծանօթացնել թէ ինչ հանգամանքներում է ապրում Եւրոպայի և Կովկասի անբան անասունը, որ իմանաք թէ որ-

չափ իրաւացի են Աղայեանցի ասած խօսքերը, թէ՝ «խելօք եւրոպացիների մօտ յիմար անասուններն էլ խելօք են, իսկ մեզ մօտ խելօք անասուններն էլ են յիմարանում»։

Ես չեմ երկարացնիլ խօսքս ու կսկսեմ էշից։

Ձեմ կարծում որ էշ տեսած չըլինիք, այն կենդանին, որին երկայնականջ էլ են ասում մեղանում և մեծ թէ փոքր համոզւած են, որ նրա պէս յիմար արարած չըկայ աշխարհումս։ Յիրաւի, կանգնիը էշի դիմացը, մի լաւ նայիր նրա քիթ ու մռութին, դղումի պէս կախ ընկած կարկաժ գլխին, լատան-լատան ականջներին, խոշոր ու թըմբրած աչքերին, տգեղ կերպարանքին ու շարժւածքին և կըտեսնես որ «էշ» անունը շատ սազ է գալիս նրան։

Շուռ տուր աչքերդ նաև միւս էշերի վրայ, սև լինին նրանք թէ մոխրագոյն, մեծ լինին թէ փոքր, գիւղում լինին ապրում, թէ քաղաքում, դարձեալ նոյն յիմար, նոյն թմրած, կեանքից ձանձրացած էշերն են։ Բայց ինչո՞ւ այդպէս են, գուցէ կըհարցնէք ինձ, երևի Աստւած դրանց էլ թմրած է ստեղծել։ Ամենևին, կըպատասխանեմ ես, և կըհամոզւիք ասածիս, եթէ տեսել էք և կամ կըտեսնէք փոքրիկ էշերին—իշուկներին։

Մեղանում իշուկը, քանի որ մէջքին փալան չի դրւել ու կողքերին ճիպոտ չի դիպել, մի շատ ուրախ ու կայտառ կենդանի է. նա մարդից չի քաշւում, ում ասես՝ մօտենում է, հոտոտում, ականջները խլրշում, լոբ-լոբ անում, աջ ու ձախ թռչկոտում, կապկութիւններ անում, մի խօսքով՝ նա շատ գրաւիչ է իր խաղերով, բայց ոչ մեծերն են ուշադրութիւն դարձնում նրան և ոչ փոքրերը. մի՞թէ արժէ իշուկը այդ պատւին...Մեր իշուկի տարին դեռ չըլրացած, տեսնում ես խեղճի մէջքին մի ծանր փալան դրին, փորքաշով պինդ կապեցին ու մի քանի փութ ծանրութիւն բեռնեցին, գիւղ

կամ քաղաք տանելու։ Մեր իշուկի ուժը չի պատում այդ բեռանը. նա ճըկըռ-ճըկըռ է անում, մէջքից երկտակւում է, ոտքերը դողդողում են, ուզում է ճխլւել բեռի տակ, մէկ էլ յանկարծ տիրոջ ճիպոտը գաւակին այնպէս է շրըմփում որ զարմանքից թէ սարսափից երկու գազ առաջ է թրռչում։ Էլ կըհամարձակւի՞ մեր իշուկը տեղը կանգնել կամ ճըկռիլ. ճիպոտը միշտ ճրմճրմում է եաևից. ինչքան ուզում է թող մէջքը կոտրւի, ո՞վ է նրան հարցնողը...

Գնում է անքալով մեր իշուկը, քրտինքը ջրի պէս վազում է նրանից, բերանը փրփուր է կապում, աչքերը մթնանում են, ու ծուռում է ճանապարհից. ճիպոտն ուզղում է նրա ծուռ քայլը. ուշքը գլուխն է գալիս, տեսնում է, որ իր երազած երջանիկ աշխարհը չէ սա, ուր միշտ կարելի է տրտինգներ տալով ապրել. մի րոպէ մտածում է փախչել, տիրոջից, սրում է ականջները, խրւզում դէս ու դէն. բայց մի կողմից բեռն է ճնշում, միւս կողմից՝ «չո՛ւ, թօշ, թօշ», լսում է տիրոջ սպառնալի ձայնը...

Շարունակում է լուռ ու մունջ իշուկը իր ճանապարհը, ահա յանկարծ տեսնում է քթի տակին գլխները բարձրացրած փափուկ ու գիլ-գիլ խոտեր, բանջարներ. ախորժակը բացւում է, գլուխը ծռում է դէպի բոյսը, բերանը լայն բաց անում ու հէնց որ ուզում է հափ—կծել, տիրոջ դագանակը՝ թրը՛խկ՝ դիպչում է չոր գլխին. աչքերը կրակ են անում ու դառարկ ծնօտները իրար չըխկչըխկում...

Գալիս է մի առու, գլգլգլգլ, քշնքշում է ջուրը. մեր իշուկը տաքից խաշւում է, նրա լեզուն պապակում է՝ վրայ ընկնել, մի լաւ խմել, բայց դեռ մտքից չի անցել տիրոջ դագանակի զօրութիւնը, դեռ ևս մրմնջում է խփած տեղը, այս անգամ թողնում, անցնում է։ Գալիս է երկրորդ առուն, երրորդը, մէկը միւսից աւելի պարզ, աւելի

վճիտ. ծարաւը աւելի ևս տանջում է, ճար չկայ, որ մեռնի, պիտի խմէ այս անգամ, և ահա վիզը երկարացնում է, գլուխը կախում է կամաց-կամաց ու դեռ խեղճը հասա շրթունքները ջրի երեսին չհղիպցրած՝ շրջ՛մի, էլի դագանակը հասնում է գնչին...

Աչքերը ճպճպալով ու ներքևի շրթունքը կախ գցած, տխուր հեռանում է առուից. ահա նրան պատահում են իր ծանօթներից ու ազգականներից շատերը. որը իր նման բեռնաւած է, որը անբեռ. նկատում է նրանց մէջ և իր հին ընկեր Զալէշին, կուրծքը զանգակներով գարդարւած. մի րոպէ մոռանում է իշուկը իր վիշտը. հեռւից զռիկ,զռիկ անելով նրան բարևում է, քայլերը արագացնում է, որ մի րոպէ շուտ բարեկամի տեսութեանն արժանանայ: Զալէշն էլ պակաս կարօտ չէ նրան, և ահա երկու հին բարեկամները զէմուզէմ են գալիս, քիթ-քթի գնում, մէկմէկու հոտոտելով բարևում, և դեռ իրարու ցաւը չհարցրած, իրարու կարօտը չառած՝ փայտը՝ թրմկել դիպչում է երկուսի քթին ու բաժանում...

Վերջապէս հասնում է մեր իշուկը տուն բոլորովին թուլացած, բոլորովին յուսահատ, բեռը վեր են առնում մէջքից, մի քիչ դարման կամ չոր խոտ թափում առաջը որ ուտի: Ագահութիւնով մի երկու բերան հախտում է կերակուրից ու յետ կանգնում խռոված երեխի պէս. դարմանը խոնաւ կամ փշոտ է լինում, խոտը ժանգալներով, կածուկներով լիքը, այնպէս որ ուտելիս տաշում է բերանը: Մի երկու ժամից նրան ջուր են տալիս. նոյն ագահութիւնով խմում, լցնում է դատարկ փորը. այժմ ախորժակը աւելի ևս բացւում է, բայց էլի նոյն կերակուրն է առաջին, ուզի չուզի՝ պիտի ուտէ...

Այսպէս նա մի կերպ փորի հոգսը վերջացնում է թէ չէ, այժմ նրան անհանգիստ են անում մի

կողմից իշաճանճերը, միւս կողմից ականջներումը հաւաքւած լըւանները, փորին ու ոտներին կպած տիղերն ու ցեխի փշուրատնքը, փալանի հարած տեղերը. մի խօսքով նրա ամբողջ մարմինը քոր է գալիս. ի՞նչ անէ. լեզու չէզիտէ, որ իր դրութիւնը մարդկանց հասկացնէ, ձեռներ չունի, որ ինքն իրան քորէ. շատ շատ՝ առաւօտներով կարողանում է միայն առջևի ոտերն ու գլուխը ղրփել ու գուդուլ պոչը տատանելով՝ ճանճերին փախցնել, բայց փոքրը, մէջքը. նա զուռմ է մի քանի անգամ, բայց չէ, տէրը դաշևը չի բերում. ճարահատեալ նա չոքում է, թոմփ՝ ընկնում կողքի վրայ, ոտները օդի մէջ բարձրացնում, պարան-պարան գալիս ու թաւալ տալիս. վայ նրան, եթէ տէրը այդպիսի դրութեան մէջ տեսաւ, դարձեալ անիծած դագանակը փշրւում է գլխին... բայց շատ անգամ էլ պատահում է, որ մեր մոխրաթաւալը տեղից բարձրանալիս, այ քեզ բան, փալանը շուռ է գալիս, ընկնում փորի տակը, փորքաշը կտրում մէջքի տեղը. ամբողջ ժամերով նա անշարժ մնում է այսպէս և անիծում իր թաւալ տալու ժամը...

Բոլորում է իշուկը չարչարանքի երեք տարին, այժմ նրա հետ հանաք անել չի լինիլ. նա թողել է իր առաջւան խնդիկ-խնդիկ անելը, թռչկոտալը, ուրախ-ուրախ զըռզըռոցը, լաւ քէֆի ժամանակ շանը, կատւին ու չար երեխաներին մի-մի աքացի խփելը. ճիպոտից էլ չի վախենում. ինչքան ուզում ես՝ հասցրու, նրա համար ողջ մէկ է. կեր ու խումի մէջ էլ նազ ու սազ չկայ, ինչ որ տալիս են, ինչքան բեռնումեն,ուր տանում են,նա անտրտունջ հպատակւում է, մի խօսքով՝ նա կատարեալ էշ է դարձել...

Եւ ահա մենք այդ էշին տեսնում ենք ինչպէս գլուխը քաշ, տնքալով, չորս հինգ փութ մէջքին, շատ անգամ էլ տէրն էլ վրան նստած, ոտները գետնին քսքսելով, գիւղը կամ քաղաքն է մտնում. նրան տեսնում ենք և մեր հրապարակներում, ուր

անձրևի, ցեխի կամ ձիւնի մէջ, փայտի, փշի, քարի հողի, ածուխի կամ մրգեղէնի բեռան տակ, սուած, ծարաւ, վեց եօթը ժամ շարունակ մնում է ականջները կախ կանգնած և մեծ թէ փոքր արհամարանքով նայում են նրան, թօշ-թօշ ասում ու անցնում...

Տարիները անցնում են, և մեր էշը պառաւում է ու առաջւայ ունեցած յարգանքն էլ կորցնում. նրան այժմ օրերով չեն քորում, գարի չեն տալիս. առանց դրան էլ նա կարող է ապրել, մտածում է տէրը. բայց թէ փալանը և թէ ծանր բեռը նրանից չի հեռանում. ինչ միաս թէ ծերացել է: Մի բան, որ էշի կեանքում փոխւել է՝ այդ ծեծի եղանակն է. նրա կաշին ծնւած օրից սկսած դագանակի հարւածների տակ այնպէս թմրել անզգայ է դարձել, որ էլ թակը նրան չի նեղոցրծում. այժմ հնարագէտ տէրը բզած փայտ է բանեցնում, որ դղդղդալով ծակում է խեղճի կաշին ու աչքերից ջրեր թափեցընում. վայ, նրան, որ մի քիչ դանդաղ գնաց ու հազար վայ, երբ պառաւ էշը ցեխի մէջ մնայ կամ սառուցի վրայ գնալուց սահի ընկնի ու չըկարողանայ տեղից շարժւել. էլ ոտ, քիթ, բերան, գլուխ, ողջ տեղ չի մնալ, ջարդուփշուր կըլինի: Նա ամենայն ուրախութիւնով իր շունչը կըփչէր ընկած տեղը, եթէ մարդիք պոչից, ոտից, գլխից բռնած՝ ծեծելով չըբարձրացնէին ու բզբզելով էլի առաջ չըքշէին...

Այսպիսի դառն օրերի մէջ անց է կացնում մեզ մօտ էշը իր կեանքը և տասը-տասնհինգ տարին դեռ չըհասած, մի օր բեռան տակ ընկնում, ոտքերը մի քանի անգամ գետնին խփում ու յաւիտեանս աչքերը փակում:

Ծեղջ անասունի սատկելուց յետոյ էլ հանգիստ չի թողնում տէրը. ագցանով հանում է սմբակներից մեխերն ու պայտը, կաշին մաշկում տրեխների համար, իսկ դիակը՝ մի թոկ կապելով, քաշ տալիս դէպի ձոր... Այնտեղ միայն ազատւում է նա իր փալանից ու տիրոջ դագանակից...

Բ.

Բայց բոլորովին ուրիշ կեանք է Կովկասի էշերի այն ազգակիցների կեանքը, որոնք բախտի բերմամբ ընկել են Եւրոպայի հողի վրայ:

Ես չեմ խօսիլ մարզւած էշերի մասին, որոնք յայտնի են կրկէսներում իրանց խաղերով, և ոչ էլ այն ուշիմ, կաթ բաժանող էշերի մասին. այլ վեր կառնեմ Ֆրանսիայի գիւղացու բեռնակիր էշը, որ նոյն չորքոտանի երկայնականջ արարածն է, ինչ որ մեզանում, միայն այն տարբերութիւնով, որ տէրը կովկասցի չէ, այլ եւրոպացի:

Ես կըսկսեմ էլի իշուկից:

Իշուկին սիրում են ամենքը. նրան տեսնելիս թէ մարդ, թէ կին, թէ գիւղացի, թէ քաղաքացի, թէ հարուստ և թէ աղքատ փաղաքշում է. «ահ, ինչ ազնիւ է, ինչպէս խելօք է», ասում են փոքրիկները, շփում նրա թաւ ճակատը, ճպուռ աչքերը, քիթ-պռունգը. ով մի քաղցր բան ունի, իշուկին է համեցէք անում. նա էլ խունջիկ-մունջիկ մօտենում է ամենքին, առնում համեղ պարգեւները, հոտոտում, լիզում նրանց ձեռքն ու երեսն ու փունգալով թրոչկոտում է նրանց շուրջը:

Քանի մեծանում է իշուկը, տիրոջ խնամքն էլ շատանում է. նրան ամեն օր թիմարում է, տարին մի քանի անգամ լողացնում, միշտ լաւ խոտ ու դարման, աղած գարի ուտեցնում, անմաս չի թողնում և քաղցր ճակընդեղից, կաղամբի ու սիմինդրի (եգիպտացորենի) տերևներից, ուտեցնում է և տանը մնացած հացի աւելցուկը, այնպէս որ իշուկի աչքը միշտ կուշտ է մնում. նրա գոմը և կարգին է, տաք, մաքուր, յատակը խոզանով ծածկած. չուլ ու փալասը եղանակի համեմատ փոխւում է. մի խօսքով իշուկը գոհ է մնում իր վիճակից...

Գալիս է բեռ քաշելու ժամանակը. տէրը գիտէ, որ նա դեռ թոյլ է, ոսկորները չեն ամրապնդել,

նրա ուժի համեմատ մի թեթև սայլակ է կապում եւ ինքից, մի փոքր բան դնում մէջը և ճանապարհ ընկնում ուզած տեղը։ Իշուկը թռչկոտում է, սայլակի չըխչըխկոցը նրան զարճուրթիւն է պատճառում. տէրը դագանակի փոխանակ նրան գուրգուրում, աշխոյժ է տալիս ամեն քայլափոխում, ճանապարհին պատահած խոտից կտրում, բերանն է կոխում և նա տուփ-տուփ անելով՝ միշտ սլանում է։

Հասնում է տուն իշուկը. նրան արձակում են սայլակից, իսկոյն շփում նրա աչքերը, ականջները կերակուրը առատ թափում նրա առջևը. եթէ եղանակը ցուրտ է, լաւ ծածկում մէջքը, փորը, որ չըմրսի, ժամանակին ջուր տալիս. փոքրիկները մօտենում են նրան, դարձեալ սկսում է առաջւան փաղաքշանքը երկու կողմից։

Նա մեծ էշ է դառնում, ուժը կրկնապատկւել է. նրան լծում են աւելի մեծ սայլակում, այժմ աւելի մեծ բեռ է քաշում, բայց երբէք չես լսիլ նրա տնքոցը, տիրոջ սպառնալի ձայնը. նա միշտ նոյն աշխոյժ էշն է, ինչ որ առաջ. նրա մէջքը դեռ մտրակի հարւած չի տեսել ու ծեծի մասին գաղափար չունի։ Մօտեցիր նրան ուր որ էլ լինի, ազատ թէ բեռան տակ, նա գլուխը կըծռի դէպի քեզ, կըհոտոտայ, ականջներն ու պոչը ուրախութիւնից կըշարժի ու կըփռնգայ (կըհազայ)։

Այդպիսի հարիւրաւոր էշեր ամեն օր կըպատահեն քեզ ճանապարհում, շատ անգամ առանց տիրոջ, ահագին սայլը քաշելիս, և կամ չորս-հինգ կնիկ նստած, սանձը բերանում գիւղը գնալիս։

Ծերացաւ էշը, պատիւն էլ շատացաւ. նրա բեռը թեթևանում է, աշխատութիւնը քչանում. նա շատ ազատ ժամեր ունի դաշտում արածելու, իր ցանկացած խոտն ուտելու, իր ուզած ջուրը խմելու. ոչ ոք նրան չի արգելում, ոչ ոք նրան բեղամաղ չի անում. առաջւան պէս ամենքը սիրում են նրան, ինքն էլ նրանց է սիրում. սէրը՝ սիրոյ փոխարէն...

Մեռնում է Եւրոպայի էշը ոչ թէ բեռան տակ, ոսկը ու կաշին մնացած, այլ հանգստութեան մէջ, խոր ծերութեան հասած. նրա վրայ ցաւում է տէրը, մանրիկները արտասւում են սև էշի վրայ ու յարգանքով թաղում գիւղից մօտիկ մի փոսի մէջ։

Սահում են տարիները. փոքրիկ գիւղացին մեծանալով՝ երբ անցնում է այնտեղից, յիշում է հօր սև էշը, նրա առած ծառայութիւնները. մի րոպէ կանգնում է տխրադէմ ու հառաչելով անցնում դէպի առաջ...

Ահա այսպէս են վարւում եւրոպացիք, որոնց մօտ յիմար անասուններն էլ խելօք են, իսկ մեզ մօտ մեր խելօքներն էլ յիմարանում են, որովհետև մենք չըգիտենք նըրանց գրաւել, կրթել, խնամել։

ԷՇՆ ՈՒ ԳԻՒՂԱՑԻՆ

Գիւղացու մէկը մի պարտէզ ունէր։
Զրգիտէր ինչպէս պահէր պահպանէր
Անիրաւ ագռաւներից
Ու սրիկայ ճրնճղուկներից։
Մի էշ բըռնեց,
Վարձը կտրեց,
Դըրաւ նրան պահապան իր աղքատիկ պարտէզին։
Շիտակ, աղնիւ անունը տալիս էին իշուկին.
Մի բան ուտել, գողանալ, զըրկել դուռ ու դրացի՝
Քաւ լիցի։
Տիրոջը մէկ տերևի չափ խոպան վընաս չէր տըւել,
Թռչուններին բան ուտեցնել երբէք նա չէր յօժարել։
Բայց արի տես, որ գիւղացին
Իր պարտէզից շահ չունեցաւ այն տարին։
Գիտէք ինչու.—բարի էշը՝
Ջիմանալով գործի լաւն ու գէշը՝

Թռչունների եռակից վազվզելով անդադար՝
Կոխոտել էր պարտէզի ամեն բանը իշաբար,
Այնպէս որ չէր մընացել ամենևին բոյս դալար,
Ոչ կաղամբ և ոչ բանջար։
Մարդը տեսաւ, որ զուրկ մընաց բոլոր արդիւնքից՝
Փայտը առաւ, ոխը հանեց տրխմար իշի կրունակից։
Դրացիները որ տեսան՝ «հախն է»— ամենքն ասացին
«Արժանի է իշուկը կերած ծեծին ու պատժին.
Ընդա խելքի բանն էր այդպիսի մեծ պաշտօնը.
Բեռ կըրել տիրոջ տունը՝ այդ է նըրա փէշակը»։
Բայց ես՝ գիտէք ինչ կասեմ,
Ես չը կարծէք, որ իշուկի պաշտպան եմ.
Էշը յանցաւոր էր, խօսք չըկայ։
Ուստի պատիժն էլ առաւ,
Բայց կարծեմ թէ յանցաւոր էր նաև նա՝
Որ պարտէզի պահապան մի էշ ըդրաւ։

ՎԱՆԱՅ ԿԱՏՈՒՆ

Շատերն են լսել Վանայ կատուի մասին, բայց քչերն են տեսել և շատ քչերն են ուսումնասիրել նրան։ Այդ կատուն սիրուն է, բրդոտ, գեղեցիկ, կլոր գլխով ու փայլուն սիրուն աչքերով. նրա բուրդը փուռում է մինչև ոտները և մարդուս ախորժանքով է շոյում այդ խիտ, մեռաքսանման մազերը։ Իմ հօրաքոյրս մի այդպիսի կատու ունէր և այդ կատուն մի օր երկու ձագ բերաւ։

Մենք նրան գոանք պատկած և ձագերը գրկի մէջ ամփոփած։ Շատ սիրուն էին այդ ձագերը, բայց այդ օրը նրանք չէին շարժուում և մայրը լիզում էր նրանց։ Ես կամեցայ խաղալ նրանց հետ, հեռացրի մօրը և ձեռքս առայ միայն երկու խեղդած կատու ձագեր... Որքան ցաւեցինք...։ Մայրը մօտեցաւ ձագերին, լիզեց, շարժեց նըրանց և երբ տեսաւ, որ չէին շարժուում, մի քայլ հեռու գնաց,

մեզ նայեց։ Մենք շոյեցինք նրան. նա կրկին մօտեցաւ, լիզեց ձագերին և ես նկատեցի կատու աչքերում արտասուքի կաթիլները... Խեղճ ձագուկները. արու կատուն էր խեղդել նրանց։ Մայրը հանդարտութիւնով նայեց մեզ և դուրս գալով անհետացաւ։

Հօրաքրոջս մանուկները մի փոս փորեցին և ձագուկները թաղեցին։

Այդ օրը կատուն չերևաց այլևս. ես շատ փընտրեցի, բայց չըգտայ։ Միւս օրը առաւօտեան նըկատեցի, որ մի մոխրագոյն, գղգղած կատու կանգնել է այնտեղ, որտեղ թաղեցին խեղդւած ձագուկներին։ Ջա՛ր, անգո՛ւթ կատու։— Դա ձագուկների խեղդողն էր։ Աչքս դարձրի և մի քանի քայլ հեռու ծառի տակ կծկւած տեսայ ձագերի մօրը, որ սարսափելի աչքերով արիւն էր նայում։ Արուն նկատեց այդ, երկու ոտիւն գործեց և յետ փախաւ։ Էգը վազեց նրա եռակից և երկուսն էլ անհետացան։ Ես յետ դարձայ, բայց լսելով կատուների մլաւոցը, բարձր նայեցի և տեսայ, որ արուն ու էգը միմեանց դէմ կանգնած՝ մլաւում էին—խօսում էին։ Նրանք առաջ մեղմօրէն էին մլաւում. երևի էգը հաշիւ էր պահանջում արիւից նրա սրած անգթութեան համար։ Արուն արդարանալ աշխատեց։ «Ո՛չ» գոռաց էգը կատաղի մլաւիւնով։ «Դու անգո՛ւթ ես» ասում էր այդ մլաւոցը։ «Էլ չեմ անիլ», գոչում էր արուն յանցաւորի ձայնով և պոչը շարժելով... Էգը մեղմացաւ, մլաւիւններն էլ մեղմացան և երկուսն էլ ցած իջնելով՝ բաժանւեցին։

Շատ տխուր էր փիսօն իր ձագուկներից զըրկւելու համար և երբէք հաց չէր ուտում։ Ես խընդրեցի մեր դրացուն և նա տւաւ ինձ իր կատւի ձագերից մէկը, որին ես դրի մեր կատւի առջևը։ Նա նայեց ձագուկին տխուր աչքերով, մի քանի րոպէ մտածեց և յետոյ, գրեթէ ակամայ, բերանով վերցրեց նրան և տանելով բնակարանը՝ սկսեց թոյլ-

թոյլ լիզել նրան. նա թէև հասկացել էր, որ իր ձագուկը չէ այդ, բայց որդեգրեց նրան։

Մեր փիսօի կաթը կտրւել էր, և մենք ձագուկին ոչխարի կաթն էինք տալիս։

Հօրաքրոջս մօտ նստած՝ մի կիրակի օր խօսում էինք, երբ նրա որդին իմաց տւաւ, որ արուն կրկին ձագուկին խեղդել է։ Մենք դուրս վազեցինք և մտանք կատւի մօտ... Փիսօն այս անգամ լաց էր լինում. նա կատաղի աչքերով չորս կողմը նայեց և դուրս թռաւ սենեակից։ Այս անգամ անգութ արուն ուղղակի ձագուկի գլուխը բաժանել էր մարմնից։ Մենք դուրս գնացինք սենեակից և այնտեղ մի սարսափելի տեսարան ներկայացաւ մեր աչքին։ Մեր փիսօն բռնել էր արւի կոկորդից և խփում էր նրան պատէպատ, խռպոտ մռընչիւն արձակելով... մի կատաղեալ փոքրիկ առիւծ էր դարձել... Զար արուն ոտներով աշխատում էր վիրաւորել մեր փիսօին, բայց նա սաստիկ արագութիւնով նրան պատէպատ խփեց, մինչև որ արուն շունչը փչեց, յետոյ էգը թող տւաւ նրան, մի բաւականութիւն արտայայտող աչքերով մեզ նայեց և սուր ճանկերը կրկին մխեց արւի կոկորդի մէջ, ապա յետ քաշւելով կանգնեց և սկսեց նայել, թէ ինչպէս արուն կրում էր իր արժանի պատիժը...

ԱՐԻԾՆ ՈՒ ՄՈԾԱԿԸ

Ծեղճի վրայ մի ծիծաղիր,
Անճարին մի վիրաւորիր.
Ծեղճ մարդն էլ շատ անգամ քեզ այնպէս
Կրխայթէ, որ կրնաս սւերես։
Քո գլխին շատ էլ մի հաւատար,
Լսիր այս առակը, ականջդ առ։
Այնպէս պատահեց, որ Առիւծը հզօր

Մոծակի սիրտը խիտ խոցեց մէկ օր։
Մոծակն այդ բանից շատ վիրաւորւեց,
Առիւծ արքային պատերազմ յայտնեց։
Կռւողն էլ ինքն էր, փողհարն էլ ինքը,
Վերան էր բոլոր զրահն ու զէնքը։
Բղղալով ընկաւ թշնամու վրայ,
Որ մէկ հարւածով մահացու վէրք տայ.
Առիւծն սկզբում մի հանաք կարծեց,
Բայց մեր Մոծակը նրան մէկ լաւ խայթեց։
Տեղից վեր թռաւ մեր Առիւծ արքան,
Սկսեց զարկել պոչովն ինքն իրան։
Բայց քաջ Մոծակը արնի համն առած,
Սիրտն էլ նեղացած, ինքը բարկացած,
Զոռ արաւ, թռաւ, ճակատին նստեց,
Տզրուկի նման արիւնը ծծեց։

Անկար Առիւծը շատ էլ զօռ արեց,
Բաշը թափ արաւ, գլուխն օրօրեց,
Բայց, դու ոչ մեռնիս, Մոծակն իր քեփին՝
Մէկ քնթին էր զարկում ու մէկ ականջին։
Առիւծի ճարը հէնց որ կտրւեց,
Տեսաւ որ Մոծակն իր հոգին հանեց,
Ընկաւ գետնի վրայ և այնպէս գոռաց.
Որ նրա ձայնից սար ու ձոր դողաց.
Մէկ ժանիքներն էր ղրճըտեցնում
Ու մէկ գետինը ճանկրտում, պոկում։
Ամբողջ անտառում էլ շունչ չըմնաց,
Նըրա գոռոցից փախան սարսափած.
Կարծես սար ու ձոր կրակ էր ընկել
Կամ կարկուտ եկել, ջրհեղեղ արել։
Ու այսքան շփոթ, այսքան աղմուկը
Հնարել կարաց փոքրիկ Մոծակը։
Երբոր Առիւծը ետպատ թռւացաւ,
Գետնի վրայ չոքեց ու մեղայ եկաւ.
Խնդրեց Մոծակից, որ իրան ների
Ու այնուհետև էլ կռիւ չանի։
Մոծակն էլ իրան վրէժը հանած,
Թշնամուն այսպէս քարովը տրւած՝
Մեր փադիշահի յանցանքը ներեց
Ու լաւ պայմանով նրա հետ հաշտւեց։

ՍՈԽԱԿ

Գարնան գեղեցիկ երեկոյին մէկ փոքրիկ տղայ իր վարպետի հետ պտտում էր անտառի շուրջը։ Խիտ ծառերի միջից լսւում էր սոխակի հրապուրիչ ձայնը։ «Ի՜նչ գեղեցիկ ներդաշնակութիւն,—ասեց տղան, երկար ժամանակ հիացած ականջ դնելուց յետոյ.—սաստիկ ցանկանում եմ այդ գեղեցիկ երգը մօտիկից լսել. մի քիչ առաջ գնանք, վարպետ, որտեղից ձայնն է գալիս»։

—Գոյշ կաց,—ասեց վարպետը. սոխակը վայրենի թռչուն է և անչափ կասկածոտ. եթէ փոքր ինչ մօտենանք, կըխրտնի և կըդադարեցնի երգելը։

«Բայց ինչի՞ համար,—ասեց տղան.—ինչի՞ այդ թռչունը, որ իր երգի ճոխութեամբ ուրիշներինը խափանում է, վայրենի միայնութիւն է սիրում. ինչի՞ իր քաղցր ձայնը մարդկային բնակութիւնից հեռու է հնչեցնում, մինչդեռ մեր պարտիզի փոքրիկ ծառերն անգամ մանրիկ թռչունների ձանձրացուցիչ ճռւողիւններով լիքն են»։

—Ստոյգ արժանաւորութիւնը,—պատասխանեց վարպետը,—համեստ է լինում և սիրում է առանձնութիւն. նրան պէտք է մեծ յարգանքով մօտենանք, և եթէ չի կարելի ձեռք ձգել, պէտք է բաւականանանք հեռւից նրա արդիւնքը վայելելով։

ՍՈԽԱԿՆԵՐ

Մի ճարպիկ թռչնորս գարնան օրերում
Անտառների մէջ սոխակ էր որսում.
Խեղճ սոխակները վանդակում փակւած՝
Ճռւողում էին, ճարնները կտրած.
Թէև, ի հարկէ, նրանք կուզէին,

Որ անտառներում ազատ ման գային.
Բանտում փակւածներն ինչ սիրտ կունենան,
Որ դեռ երգեն էլ կամ զըւարճանան.
Բայց էլ ի՞նչ անէին՝
Որ գոնէ չերգէին
Եւ իրանց սև օրը
Միասին չողբային։
Նրանցից միայն մէկը չէր երգում.
Նա իր սիրելու կարօտն էր քաշում.
Արտասւաթոր աչքերով
Նա դաշտերին էր նայում,
Գիշեր ցերեկ տանջւելով,
Ընկերուհուն էր յիշում։
Իր ընկերուհուց խեղճն անջատւած՝
Հալւում մաշւում էր վանդակում փակւած։
Անբախտ սոխակը վերջը մտածեց.
«Այսպէս չի լինիլ» ինքն իրան ասեց,
«Անխելք մարդիկն են շարունակ տխրում,
Իսկ խելօքները հնար են փնտրում,
Որ դժբախտութիւան
Մի կերպով վերջ տան.
Կարծեմ ես ինքս էլ եթէ աշխատեմ,
Իմ թշւառութեան մի ճար կրգտնեմ։
Մեզ հո չեն բռնել, որ մեր միսն ուտեն,
Այլ որ մենք երգենք, իրանք էլ լսեն։
Մեր այս պարոնը, ինչպէս կերևի,
Երգեր լսելու սաստիկ սեր ունի.
Եթէ իմ ձայնով ես զուր գամ նրան,
Վերջ կըտայ, անշուշտ, իմ ստրկութեան»։
Եւ ոգևորւեց,
Երգել սկսեց.
Անուշիկ ձայնով,
Սիրուն երգերով
Նա իր պարոնին զմայլեցրեց։
Պարոնն էլ միայն նրան հաւանեց
Եւ լաւ խնամեց.

Իսկ միւսներին,
Վատ երգողներին
Իսկոյն արձակեց։
Եւ այնուհետև մեր լաւ երգողին
Աւելի ամուր և պինդ փակեցին։

ՀԱՒԱՏԱՐԻՄ ՇՈՒՆԸ

Մի վաճառական ձիով ճանապարհորդելու դուրս եկաւ։ Նրա ետևից վազում էր իր հաւատարիմ շունը։ Վաճառականը գնում էր մի մեծ գումար ստանալու։ Փողերն ստացաւ, լիքը քսակը կապեց թամբի ետև և վերադարձաւ, դէպի տուն։ Ճանապարհին քսակը կորաւեց, վայր ընկաւ, իսկ վաճառականն այդ չը նկատեց։ Սրատես շունը տեսաւ այդ բանը և փորձեց վեռ առնել ատամներով, բայց երբ զգաց, որ ուժերը վեր է, թողեց պարկը, վազեց հասաւ տիրոջը և կամենալով նրան մի կերպ իմաց տալ՝ սկսեց ձիու առաջը կտրել, յարձակւիլ վրան և յամառութեամբ ու կատաղութեամբ հաչելով՝ աշխատում էր նրան կանգնեցնել։ Ջիմանալով պատճառը՝ վաճառականը բարկանում էր շան վրայ, նախատում էր նրան, խփում էր մտրակով, բայց ոչինչ չէր օգնում։ Հաւատարիմ կենդանին շարունակում էր ձիու վրայ յարձակւիլ այնպիսի կատաղութեամբ, որ կամենում էր տիրոջը վայր քաշել։ Տեսնելով որ ոչինչ չի օգնում և որ վաճառականն աւելի ու աւելի հեռանում է, շունն սկսեց կծոտել ձիու ոտները, որ գոնէ

այդպիսով կանգնեցնէ և յետ դարձնէ տիրոջը։ Վաճառականը վախեց. նա մտածեց՝ մի գուցէ շունը կատաղել է, և գիտենալով թէ որքան վտանգաւոր են կատաղած շները, վճռեց սպանել իր հաւատարիմ ծառային։ Սակայն դեռ երկար ժամանակ աշխատում էր նա հեռացնել շանը մերթ փայփայանքներով, մերթ սպառնալիքներով և մերթ մտրակի հարուածներով։ Վերջապէս՝ տեսնելով որ ոչինչ չի օգնում, հանեց ատրճանակը և սրտամորմոք արձակեց հաւատարիմ կենդանու վրայ։ Շունը վայր ընկաւ, բայց մի րոպէից յետոյ դարձեալ վեր կացաւ և ցաւալի ճչիւնով ու արիւնաթաթախ սկսեց հետևել տիրոջը։ Վաճառականը շատ էր սիրում շանը, ծանր էր տեսնել նրա չարչարանքը, այդ պատճառով շարժեց ասպանդակները և առաջ գնաց։ Մի փոքր հեռանալով՝ նա կամեցաւ տեսնել, թէ ինչ եղաւ խեղճ կենդանին, և այստեղ ահա, յետ նայելիս, նկատեց, որ փողի քսակը չկայ։ Այն ժամանակ միայն հասկացաւ վաճառականը իր շան արարքը, և նա շան վրայ աւելի ցաւեց, քան կորցրած փողի վրայ։ Ճանապարհորդն իսկոյն ձիու բերանը յետ դարձրեց, բայց շանը նոյն տեղը չը գտաւ, ուր թողել էր։ Արիւնի հետքը ցոյց էր տալիս, որ կենդանին յետ է դարձել։ Ո՛րքան ցաւեց բարի վաճառականը, երբ արիւնը բռնած գնալով՝ նա գտաւ հաւատարիմ կենդանուն վայր ընկած փողի քսակի մօտ։ Գիտակցաբար նայեց շունը իր տիրոջը և սկսեց փաղաքշանքով լիզել նրա ձեռները... խեղճ կենդանին յայտնապէս գոհ էր, որ տէրը վերադարձաւ և գտաւ կորուստը։ Մի քանի րոպէից յետոյ շունը մեռաւ. վաճառականը տխուր ու սրտում վերադարձաւ տուն։

ԱՐԾԻՒՆ ՈՒ ՀԱՒԸ

Մի անգամ գիշատիչ կենդանին ընկել էր երկաթեայ վանդակի մէջ. տխուր ու մունջ էր նա և կատաղաբար չորս կողմը նայելով՝ չէր մօտենում առաջն ածած մսի կտորներին։ Վանդակը դրած էր դուրսը և մօտովը մարդ էին գալիս հաւերը, որոնք սկզբում բաւականին հեռու էին շրջում արծուից՝ դող ի դող մարիկ տալով ահարկու թռչունին, բայց յետոյ, հասկանալով որ նա չի կարող միւս տալ վանդակի միջից, փոքր սիրտ առան, սկսեցին պտրտել վանդակին շատ մօտ, վերջապէս մինչև անգամ սկսեցին խօսել արծուի հետ։

«Ինչո՞ւ չես ուտում,—ասեց նրան մի բարեսիրտ հաւ.—մի՞թէ չես տեսնում առջևդ թափած քո սիրելի կերակուրը։ Տես՝ ինչպէս ախորժակով ուտում ենք մենք գարու հատիկները։ Կեր, մեր տէրն էլի կըտայ քեզ։ Որ չուտես՝ կըմեռնես։ Հոգս մի անիր, անազատ կեանքն այնքան վատ չէ, ինչպէս դու կարծում ես. վանդակդ էլ բաւականին ընդարձակ է»։

—Այո՛, այդպէս է՝ միայն հաւերի և ոչ արծիւների համար,—ձայն տուաւ վերջապէս տխուր կանաւորը, հաւի բոլոր դատարկախօսութիւնը զզւանքով լսելուց յետոյ։—Վաղը,—աւելացրեց նա—ձեզ շամփրի կանցկացնեն կամ կըձգեն կրակի մէջ, իսկ դուք այնքան տխմար էք, որ չէք հասկանում ձեր թշուառ դրութիւնը և այնչափ կուրացած էք սորկութեամբ, որ չէք կարողանում սիրել ազատութիւնը, ինչպէս ես եմ սիրում նրան։ Դուք փոխել էք նրան չնչին հատիկների հետ, որ ձրի թափւած են դաշտերում, իսկ ինձ համար անազատ կեանքը ոչինչ գին չունի։

ԱՐԾԻՒՆ ՈՒ ՃԻՃՈՒՆ

Հսկայ թևերը լայն-լայն տարածած՝
Հզօր արծիւը ուղղեց իր թռիչք
Դէպի բարձրաբերձ լեռներ սեպացած,
Դէպի անսահման կապուտակ երկինք։
Երկար սաւառնեց նա խիտ ամպերում,
Քանի ոյժ ունէր զօրեղ թևերում,
Ու վերջ ի վերջոյ՝ յոգնած ու դադրած՝
Նա նստեց հսկայ մի լեռան կրծքին,
Որի գագաթը մինչ երկինք հասած՝
Սարսափ էր ազդում վերև նայողին։
Նստեց նա հանգիստ, անվախ, անվրդով
Եւ շուրջը զոռոզ հայեացք ձգելով,
Իր արքայական ձայնովը ահեղ
Որոտաց ուժգին. «Մենակ եմ այստեղ,
Մենակ ու ազատ այս լեռան վրայ,
Որպէս քաջայաղթ լիազօր արքայ.
Իմ գահն է անհուն այս երկնակամար,
Որտ ու ամպեր—ոտքիս պատուանդան.
Ո՛վ կայ աշխարհում փառքիս հաւասար,
Ո՞վ կարէ հասնել գահիս բարձրութեան»։
—Ե՛ս...
Լսեցաւ յանկարծ մի ձայն թոյլ, բարակ,
Մեծապանծ թըռչնի հէնց ոտների տակ.
—Ես՝ անձրևային ճիճուս անշան։
—«Ի՞նչպէս, դու այստեղ, իմ դէմ յանդիման։
Աւա՜ ինձ շուտով, ճիճո՛ւ անպատկառ,
Որտեղի՞ց դու այս ամպերին հասար»...։
—Այն նեխուած ճահճից, արծիւ ինքնագով,
Ուր դու ծնւած ես քո այդ վեհ փառքով.
Այն նեխւած ճահճից, որտեղ այժմ դու
Ձրդւում ես անգամ հայեացք ձգելու։
—«Բայց ի՞նչ հնարքով դու, միջա՛տ չնչին,
Հասար իմ անհաս ամպագարդ գահին.
Աւա՜, պատմի՛ր ինձ, ի՞նչպէս, ի՞նչ կերպով»։
—Ինչպէ՞ս.—սողալո՛վ, արծիւ, սողալո՛վ։

ԱՐԾԻՒՆ ՈՒ ԿԱՂՆԻՆ

(Հին զրոյց)

Եղաւ՝ մի անգամ Արծիւն ու Կաղնին
Մի անտառի մէջ վէճի բռնուեցին,
Թէ ո՛րն իրանցից շատ տարի կապրի,
Ո՛րն է դիմացկուն ու պինդ աւելի,
Արծիւն ասեց՝ ես, Կաղնին էլ թէ՝ ես։
Երկուսն էլ յամառ ու հրպարտ այսպէս
Մեծ-մեծ պարծեցան, սաստիկ վիճեցին,
Վերջը մի այսպէս պայման կապեցին.—
Ժամանակ դըրին հինգ հարիւր տարի,
Աըքան հաւքերի, արքան անտառի,
Որ թէ որոշած այն օրին հասնին,
Այն օրը դարձեալ մէկ-մէկու տեսնին։
Ու արծիւն իսկոյն կաղնուցն հեռացաւ,
Հըզօր թևերը շարժեց, վերացաւ
Դէպի ամպերը, դէպի ժայռերը,
Ուր անց է կացնում իր լաւ օրերը։
Կաղնին էլ փռեց ճիւղերն երկաթի,
Ծո՛ր ու խոր մըխեց ճանկերն արմատի
Ու այնպէս հուժկու կանգնեց անտառում,
Որ վայր չընկնի էլ հինգ հարիւր տարում։
Դարեր անցկացան։
Եւ ահա մի օր
Արծիւը եկաւ ծերացած, անզօր.
Ծըւոցը կտրած, տըկար, հևալով,
Թոյլ-թոյլ թևերը հազիւ քարշ տալով,
Տեղ հասաւ մի կերպ, նայեց դէս ու դէն,
Տեսաւ որ Կաղնին ընկել էր արդէն.
Ընկել էր ահեղ փոթորկի առաջ,
Ճիւղերը թէև դեռ թարմ ու կանաչ։
— Հէյ,—կանչեց,—զոռոզ, պարծենկոտ Կաղնի,
Դէ լաւ ճանաչիր ինձ ու քեզ հիմի.
Հինգ հարիւր տարուց մի ժամ էլ դեռ կայ,

Ընկել ես արդէն, անկոտրում հըսկայ...
— Հինգ հարիւր տարի ապրել եմ կանգնած,
Այդքան էլ կապրեմ այսպէս թեք ընկած,
Մինչև լրանայ մի հազար տարին,—
Պատասխան տըւաւ ընկած վիթխարին։

ՃՆՃՂՈՒԿ

Որսորդութիւնից վերադառնալիս՝ ես անցնում էի պարտէզների միջով։ Շունս վազում էր իմ առջևից։ Յանկարծ նա իր քայլերը փոքրացրեց և կամաց ու զգուշութեամբ սկսեց առաջ գնալ, կարծես թէ որսի հոտ էր առել։

Ես նայեցի փոքր ինչ հեռուն, ճանապարհի վրայ, և տեսայ մի փոքրիկ ճնճղուկ, որի կուրծքը շուրջը դեռ դեղին էր, իսկ գլուխը աղւամազով ծածկւած։ Նա ցած էր ընկել բնից (քամին սաստիկ շարժում էր ճանապարհի երկու կողմից ծառերը) և անշարժ պառկել էր միայնակ և անօգնական, փռած ուներնալով դեռ հազիւ դուրս եկած փոքրիկ թևերը։

Երբ իմ շունը ծանրաքայլ մօտենում էր նրան, յանկարծ մօտակայ ծառի վրայից մի պառաւ, սև կրծքով ճնճղուկ, քարի պէս նետւելով, ընկաւ ուղղակի նրա առաջը և յուսահատ ու սաստիկ ճըւոցով մի երկու անգամ թռաւ ուղղակի դէպի շան դունչը։ Նա յարձակւեց, որ փրկէ, պահպանէ իր ձագը։ Բայց նրա փոքրիկ մարմինը դողում էր երկիւղից։ Նրա ձայնը կտտաղի էր. նա ուժից ընկնում էր. նա զոհւում էր։ Ինչպիսի ահագին հրէշ պիտի երևար նրան շունը. բայց այնուամենայնիւ նա չըկարողացաւ հանգիստ նստել բարձր ու անվտանգ ճիւղերի վրայ. նրա ուժը աւելի

թոյլ լինելով քան իր կամքը, վայր ձգեց իրան այնտեղից։

Շունը կանգ առաւ, յետ քաշուեց... Երևի նա էլ ճանաչեց այդ ուժը։

Ես շտապեցի շփոթւած շանս յետ կանչել և հեռացայ՝ զգալով իմ մէջ յարգանք դէպի այդ փոքրիկ թռչունը։

Այո, մի ծիծաղէք, ես յարգում էի այն փոքրիկ հերոս թռչունին, նրա սիրոյ ուժգնութիւնը։— Սէրը, մտածում էի ես, մահից ու մահւան երկիւղից աւելի զօրեղ է. միայն սիրով է պահպանւում ու շարժւում կեանքը։

Թ Ռ Չ Ո Ւ Ն

Մի ձմռան օր էր. փչում էր քամին,
Ձիւնի քուլէքը ամեն տեղ ծածկում.
Մարդ և անասուն ցրտի երեսից
Փախչում էր, մտնում, տան մէջը պահւում։
Իմ պատուհանին, որ պինդ փակած էր,
Յանկարծ մօտեցաւ մի փոքրիկ թռչուն.
Նա դողդողում էր, թևերը շարժում
Եւ իր կտուցով խփում ապակուն։
Տեսնելով թռչնի դառն վիճակը,
Յուզւեցաւ սիրտս, գթացի վըրան,
Չըթողի երկար սառնչւիլ այն ցրտում.
Իսկոյն սենեակս տարայ ես նրան։
Դադարեց ձիւնը, հանդարտւեց քամին,
Իմ սիրուն թռչնակը նորից ուժ առաւ,
Ուղղեց թևերը, սաւառնեց օդում
Ու մի քաղցր երգ երգել սկսաւ.
Անուշ էր երգը, մեղմ ու գրաւիչ.
Նա շարժեց սիրտս, ազդեց իմ հոգուն.
Բռնեցի նորից, դրի վանդակում,
Որ զոհ չըգնայ կատաղի քամուն։

Բայց մի ժամ չանցած՝ նա տխուր, տրտում
Գլուխը կախեց, ալմակեց մի ճիչ.
Մօտեցայ նրան,—նա յետ-յետ քաշւեց,
Կասես ես նրան լինէի դահիճ։
«Այո, դժւար է,—ասացի նրան,—
Վարել քեզ այդպէս բանտարկեալի կեանք՝
Ընկերից զատւած, բնիցդ հեռու,
Անմահ երգիչ, սիրելի թռչնակ։
Ահա կըբանամ քո բանտի դուռը,
Թըռիր դէպի դաշտ և կամ խոր անտառ,
Գտիր ընկերիդ, սիրէ՛ քո բունը,
Մահ ու գերութիւն մի է քեզ համար»։

Ա Ղ Ա Ի Ն Ի Ն Ե Ր

Ես կանգնած էի սեպացած բլուրի վրայ, իսկ իմ առջև սփռւած էր հաճարի հասունացած արտը. նա երբեմն ծածանւում էր ոսկեայ գոյնով, երբեմն տարածւում էր արծաթեայ ծովի նման և պսպղին էր տալիս։

Բայց ալիքները բնաւ չէին օրօրւում այդ ծովի վրայ. խեղդող օդի անշարժութիւնը գուշակում էր մի մեծ փոթորիկ։

Իմ շուրջը արեգակը դեռ ևս լուսաւորում էր իր ջերմ և ազօտ լուսով. իսկ այնտեղ, հաճարի արտի միւս կողմում, ոչ այնքան հեռու, մուքկապտագոյն մառախուղը ահագին կուտակութեամբ բռնել էր երկնակամարի ամբողջ կէսը։

Ամեն ինչ լռութեան մէջ էր... ամեն ինչ հառաչում էր արեգակի վերջին ճառագայթների փայլման ներքոյ։ Չէր լսւում, չէր երևում ոչ մի թըռչուն. թաքնւած էին մինչև անգամ ճնճղուկները։ Միայն մի ինչ-որ տեղ մերձակայքում մենաւոր ջրածաղկի խոշոր տերևները յամառ կերպով շշնջում էին, և թափահարում։

Ինչպէս սաստիկ բուրում էին դաշտերի խոտաբոյսերը։ Ես նայում էի կապտագոյն ամպակոյտի վրայ... մռայլը տիրում էր իմ սրտում։ Դէ, շուտով, շուտով,—մտածում էի ես,—փայլատակիր, ոսկեղէն օձ, դղրդդա, որոտա, շարժւիր, գլորւիր, ահ չար մառախուղ, վերջ տուր այդ տխուր հեծութեանը։

Բայց մարախուղը անշարժ էր։ Նա առաջւայ նման ճնշում էր անմռունչ երկիրը... միայն կարծես թէ աւելի ուռչում էր և մթնում։

Եւ ահա նրա միագոյն կապուտակութեան վրայ նըշմարւեց մի ինչ-որ բան, որ սլանում էր հարթ-հաւասար կերպով, կարծես թէ իսկ և իսկ մի սպիտակ թաշկինակ լինէր կամ ձիւնի պատառ։ Դա մի սպիտակ աղաւնի էր, որ թռչում էր գիւղի կողմից։ Թռչում էր, թռչում էր, միշտ միևնոյն ուղիղ գծով... և խորասուզւեց անտառի եռւում։

Անցաւ մի քանի վայրկեան.—դեռ տիրում էր միևնոյն խիստ լռութիւնը։ Բայց նայիր։ Այժմ նշմարւում են երկու թաշկինակներ. ձիւնի երկու պատառներ յետ են սլանում։ Դրանք երկու սպիտակ աղաւնիներ են, որ թռչում են դէպի տուն հաւասար թռիչքով.

Եւ ահա վերջապէս պայթեց փոթորիկը և ըսկըսւեց բնութեան կատաղի խաղը։

Ես հազիւ կարողացայ փախչել մինչև տուն։— Քամին մռնչում էր, սոսկալի կերպով պտտւում էր։ Պատառ-պատառ եղած շիկագոյն ամպերը ներքևից առաջ էին մղւում։ Ամեն ինչ տակն ու վրայ էր լինում, խառնաշփոթութեան մէջ էր, դղրդում էր։ Անձրևի սարսափելի տարափը ջրային սիւների նման ցած էր թափւում։ Կայծակների հրեղէնականաչագոյն փայլատակումը աչք էր կուրացնում։ Որոտի բոմբիւնը կարծես թէ թնդանօթներից էր արձակւում։ Փչում էր ծծմբային հոտ...

Բայց կտուրի ծածկի տակ, երդիկի կողքին միմեանց մօտ նստած էին երկու սպիտակ աղաւնիները—և այն որ թռչում էր իր վարուժանի եռևից, և այն՝ որին բերաւ նա և կարելի է ազատեց նրան։

Երկուսն էլ գուրգուրում էին միմեանց, և իւրաքանչիւրը շօշափում էր իր թևիկով դրացու թևը...

Երջանիկ էին նրանք։ Եւ ես ինձ երջանիկ էի զգում, նրանց վրայ նայելով...

Ն Ե Ն Գ Ա Գ Ռ Ա Խ

(ժողովրդական զրոյց)

Վախկոտ նապաստակը յուսահատւած գիշատիչ թռչունների ձեռից՝ ընկերացաւ, բարեկամացաւ ագռաւի հետ։ Ամեն օր միասին դաշտը որսի էին գնում, լիքը պաշարով յետ դառնում՝ մինը ընկուզենու վրայ բարձրանում ճուտերին կերակրում, միւսը ծառի բնի մօտ՝ տանձենու տակ իր ձագերին կաթ տալիս ու ննջում։

Մի առժամանակ սիրով, կուշտ-կուշտ, սուրբ-սուրբ, մաքուր-մաքուր ապրեցին և երջանկութիւն վայելեցին։ Յետոյ բախտը կապւեց. քանի-քանի անգամ սար ու դաշտ ելան, թուփ ու ծառ փընտրեցին, բայց դարուդարդակ յետ դառան. մի օր, երկու օր որ այսպէս շարունակւեց, ալապաստրակները սկսեցին քաղցից վսեմալ, վըզվըզալ, իսկ ագռաւի ճուտերը «ղռ-ղռա» անել և մօրն օղիկ-մօղիկ բերել.

Նրա էգսը, երբ գնացել էին որսի և դարձեալ լըւացած ձեռներով պիտի սոված զայլին, ագռաւը միտքը փոխեց։ Մի անգամ թևին արաւ, հասաւ

ալապաստրակի մինը վերկալաւ, տւաւ ճուտերին ուտելու, իսկ ինքը տխրադէմ հարևան պարտէզում նապաստակին տեսնելով ասեց.

—Սանամէր, չար բախտը որ գալու լինի՝ կըգայ. բա ինչ կասես, ալապաստրակիդ մինը չրկայ. անիրաւ կաչաղակներն իրանց ոխը հանեցին. նրանք թշնամացել էին ինձ հետ, որ քեզ պահապան ու պաշտպան կանգնեցի։ Շատ ականեցին, մինչև օրս ոչինչ անել չըկարացին. տեսել են, որ հէնց մենք հեռացել ենք, եկել են խեղճ անմեղ ձագըդ տարել. ախ, արիւնարբու կաչաղակներ...

Միամիտ նապաստակը հասաւ միւսներին, լալով, արտասուքով գըգւեց, համբուրեց և նրանց հետ դադրած, քաղցած՝ անուշ քուն մտաւ։

Առաւօտը վաղ-վաղ ագռաւը չամաչեց, իջաւ բնից, բարի լոյս ասեց և սանամօրը վերցրած՝ գնացին որսի։ Ձափեցին, չափչփեցին բան չըգտան. նապաստակն իսկի նիւթ չունէր, ոտները թուլացել էին, ականջները կախ ընկել։ «Վայ իմ խեղճ ալապաստրակներս, չան իմ քաղցր ալապաստրակներս, արդեօք ձեր անուշ արևի՞վ պիտի մեծանաք, թէ՞ մէկիդ աղէսը կըխեղդի, միւսիդ շունը»։ Այսպէս լալիս էր նապաստակը, և ագռաւը թաքուն լսում էր, որ յանկարծ չան հաչոցը խեղճին գցեց դէպի անտառ, անտառից ձոր, ձորից զարիվայր, իսկ ագռաւը ծլկեց տուն։ Այդ իսկ րոպէին ալապաստրակները քաղցը մոռացած՝ բնին մօտիկ ծուլ-ծուլ էին լինում, միմեանց ականջներից քաշքշելով խաղում։ Ագռաւի «ղա՛ը» լսելուն պէս՝ փախել էին, բնում կուչուր արել, որ ագռաւը նեռի պէս թեքւեց, բամփեց ալապաստրակի գլխին և առանց նրա լացին ուշ դնելու՝ քրքրեց, տւաւ ճուտերին։ Նայեց տեսաւ ագռաւը, որ նապաստակը հեռու դաշտում շանից պրծած՝ կրակի պէս գալիս է. բարեխօս գնաց առաջ։ «Սանամէր, բաս չե՞ս ասիլ, գնացի տեսայ խորամանկ աղէսը ձագերիդ մինը

բերանում փախցնում է, «ղա՛ւ-ղաւ» արի, իսկի ըռնիս չնայեց, առաւ ագին ցից գնաց»։

Նապաստակը կրկին լաց էլաւ. «Վա՛յ իմ ալապաստրակ ջան, իմ ձագուկս», և թուլացաւ ինաց։ Ագռաւը մխիթարեց նրան և բերաւ հասցրեց բոյնը, բարձրացաւ իր գահը. այնտեղից լսում էր խուլ ականջով նապաստակի դառն մղկիթը և չէր խղճահարւում...

Նապաստակի սիրտը կասկած էր մտել։

Երրորդ անգամ որսի ելնելով, երբ ոչինչ չըգտան, ագռաւը խաբէութիւնով ջոկւեց, որպէս զի քանի սանամէրը դաշտումն է, ինքն իր բանը տեսնի. նապաստակը գլխի ընկաւ և կրակը չանն առած՝ առանց քար, փուշ հարցնելու, վազրկոթած՝ մի շնչում եկաւ տեսաւ, որ վերջին ձագուկն ագռաւի ճանկերում, բերանը բացուխուփ անելով, կլափին է տալիս։

—Այս ինչ եմ տեսնում, կուրանամ ես,—լալով բացականչեց նապաստակը, ահագին ոստիւն անելով։

—Ղը՛ը՛ը՛... շփոթւեց ագռաւը, նապաստակին անկընկալ իր առջև տեսնելով.—ղը՛ը՛ը... այդ ես չեմ, ճագարն էր, ճագարը. ուզում էր ուտել արիւնարբուն...

—Ճագարը, Աստւած սիրող, միս չի ուտում, բացի հունդից. նա իմ ձագը ինձ կուտի, ինձ կըհաւատայ...

Նապաստակը հազիւ իրան թրևելով հասաւ բնին և դառնագին լալիս էր իր սևակոլոլ ձագերը, իր չարաբաստիկ օրն ու կեանքը։ Նա կասկածում էր ագռաւին, բայց հաստատ չըգիտէր, որ նա է յափշտակողը...

Օրը մթնել, կէս գիշեր էր դառել, դեռ նապաստակը տխուր-տրտում իր դառը վիճակն էր անիծում։

Շատ լալէն, մղկըտալէն յոգնած՝ նապաստակն

ուզում էր քնի, որ առաւօտը կանուխ նենգ բա-
րեկամից հեռանայ.—ահա ծառի վրայից խօսւածք
լսեց։ Ագռաւը հաւատի լինելով, որ նապաստակը
վաղուց շնթըռկած կըլինի, ինքն իր հետ թռնթռ-
րալով, կէս մաս էլ նապաստակին սպառնալով,
խօսում էր.

—Ցիմար անասուն, խօսքիս չի էլ հաւատում,
որ ասում եմ՝ ճագարի ձեռքից խլեցի։ Տես, ուզում
է հիմիկ ինձ աշխարհիս առաջ սուտ բռնի, ինձ, որ
բովանդակ աշխարհս չի կարողանում ասել՝—
աչքիդ վերև սև ունք կայ։ Լաւ, քնիր, քնիր, աչքերդ
հանեմ, այն ժամանակ ես գիտեմ քո «ի վերին
Երուսաղէմ»ը ինչ ձայնով կասեմ։

Այսպէս խօսելով, ագռաւը իջաւ ծառից, գնաց
նապաստակի բնին սուսուփուս մօտեցաւ, կտուցը
մեկնեց դէպի աչքը՝ սարսափով նկատեց որ ճար-
թուն է, ուստի կեղծաւորւելով հարցրեց.

—Սանամէր, արդէն գիշերը կէս է. ինչո՞ւ չես
քնում, հերիք լաս։

—Դու ասում էիր՝ «քնիր, քնիր, աչքերդ հա-
նեմ». էլ դրա լսողի քունը կըտանի՞։ Լաւ է, շնոր-
հակալ եմ քո բարեկամութեան և սրտացաւութեան
համար։ Հեռացիր, գնա. դու քեզ համար, ես ինձ
համար։

Այդ օրից ագռաւը նապաստակի կատաղի թըշ-
նամին դարձաւ և ամեն կերպ աշխատում է քնած
պատահեցնել, որ աչքերը հանելով՝ նրան ուտի.
նապաստակն էլ իր կողմից զգոյշ է կենում և քնե-
լիս անգամ աչքերը բաց է պահում, որ թշնամուն
իսկոյն նկատէ։

ԾԻԾԵՌՆԱԿՆԵՐԻ ՎՐԷԺԸ

Մի անգամ ճնճղուկը կամեցաւ զօռով տիրել
ծիծեռնակի բնին և այնտեղ բնակել։ Բնից արտա-
քսւած ծիծեռնակը աղաղակ բարձրացրեց, որի վրայ
իսկոյն հաւաքւեցին նրա ընկերները և սկսեցին յետ
ու առաջ անել բնի մօտ. նրանք մտիկ էին տալիս
ներսը, աղաղակում էին, կարծես այդպիսով կամե-
նում էին թշնամուն դուրս անել բնից։ Բայց. կա-
մակոր ճնճղուկը ներս էր քաշւել բնի խորքը և
դուրս գալու միտք էլ չունէր։ Վերջապէս տես-
նելով որ ոչինչ չի օգնում, ծիծեռնակները բոլորը
միասին յանկարծ անհետացան։ Նրանք թռան-գնա-
ցին մօտիկ ճահիճը, կտուցներով մի-մի փոքրիկ
կտոր ցեխ առան և եկան, մի քանի րոպէի մէջ
ծածկեցին բնի մուտքը։ Այսպէս մեր յանդուգն
ճնճղուկը բնի մէջ փակւած մնաց և սովամահ եղաւ։

ԹՌՉՆԻԿՆԵՐ

Շատ էի սիրում մանուկ հասակում
Ես թռչունների սիրուն ձագերին,
Ես որսում էի նրանց մեր այգում
Կանաչ, ցօղապատ թըփերի մէջին։
Ես հիւսում էի անխոնջ եռանդով
Փափուկ մամուռից քընքուշիկ բըներ,
Հոգս էի տանում կարեկից սրտով
Մերկ ճուտիկներին ցերեկ ու գիշեր։
Բայց ահա նրանք թևաւորւեցան
Ու ազատ օդում ճախրել են ուզում.
Ես բաց եմ անում դուռն ու պատուհան,
Որ ուրախ թըռչեն, վըխտան թըփերում։
Թըռչում են նրանք, երգում, ճըլւլում.
Անհուն ցնծութեամբ լցւում է հոգիս,
Ու նորից նրանց ես յետ եմ կանչում.
Նրանք գալիս են—ունկընդիր խօսքիս։

ԹՈՒԹԱԿՆ ՈՒ ՍՈԽԱԿԸ

Մի թութակ տան մէջ այնքան ճըղղաց, շըշըաց, որ տանտէրը նրան դուրս անել տւաւ։

Թութակի ինքնասիրութեանը դիպաւ այս բանը և նա սկսեց գանգատւել սոխակին, որ եկել էր նրան տեսնելու.

—Աչքիս լոյս,—ասեց թութակը սոխակին,—ես լսել եմ որ դու լաւ վարպետ ես երաժշտութեան մէջ. խնդրեմ լսես իմ երգերը և ասես թէ ինչ պակասութիւն կայ նրանց մէջ, որ իմ տիրոջը դուր չեն գալիս։

—Շատ լաւ,—ասեց սոխակը. երգիր, տեսնեմ՝ ինչպէս ես երգում։ Ես ուրախութեամբ կլսեմ քեզ պէս սիրուն թռչունի երգը։

Թութակն սկսեց իր բոլոր ճարտարութիւնը թափել. հաւի պէս կըչկըչաց, շան պէս հաչեց, կատւի պէս մլաւեց, մի խօսքով՝ կրկնեց իր բերան արած բոլոր բառերն ու երգերը։

—Այժմ, սիրելիս,—ասեց նա սոխակին,—խընդրեմ ասես, դու լսած կա՞ս մի այդպիսի բան երբևիցէ։

—Սիրուն թութակ,—պատասխանեց սոխակը,—դու ինձ կըներ՞ես, եթէ ես քեզ մի նկատողութիւն անեմ։ Դու երգում ես ուրիշների ձայնով, ուրիշների երգեր ես երգում։ Եթէ ունենաս քո սեփական երգը, էլ քեզ տանից դուրս չեն անիլ։

ԳԵՐԻ ԹՈՒԹԱԿ

Իմ տիկինը կերակրում է
Ինձ նշերով, շաքարով,
Իմ վանդակը զարդարում է
Իր քնքուշիկ ձեռներով։

Բայց գէթ մի ժամ ուրախ լինիլ
Ես չեմ կարող իմ կեանքում,
Երբ յիշում եմ, թէ գերի եմ
Այս նեղ, փակւած վանդակում,

ԹՈՒԽՍԿԱՆ

Ամառն էր։ Փոքրիկ Անահիտը կալուածն էր։ Նա դէզի ստւերում շինել էր մի փոքրիկ տուն և տիկիններին մէջը հաւաքած՝ խաղում էր։ Մայրն ուղարկել էր նրան, որ դէզը պահպանէ հաւերի քշրջելուց։ Անահտից մօտիկ կրկըռում էր նրանց թուխսկանը։ Նա փախցրել էր մի հասկ, կոցահարում էր և թափւող դեղին ցորենի հատիկները բաժանում էր իր ձագուկներին։

Թուխսկանը յանկարծ մի սարսափելի ճիչ արձակեց և թևերը լայն բացեց։ Անահիտը ոչինչ չէր հասկանում. բայց փոքրիկ ձագուկները մօր արածը շատ լաւ հասկացան, որովհետև լսելով մօր ձայնը՝ մի փոքր հեռու եղողները հաւաքւեցին և մտան մօր բացած թևերի տակ։ Անահիտն ուշադրութեամբ նայում էր, առանց մի բան հասկանալու։

Բայց Անահիտը շուտով հասկացաւ, թէ թուխսկանն ինչու հաւաքեց իր ձագուկներին թևի տակ։ Ահա պրտտում է նրա գլխին մի ուրուր։ Նա յարձակւեց հաւի վրայ, կամենում է նրա ձագուկները յափշտակել. մայրը չի թողնում։ Հաւը կռւում է ուրուրի հետ իր թոյլ կտցով։ Բայց նա դադարել է երկար կռւելուց։

Անահիտն էլ երկար չընայեց, վազեց թուխսկանին օգնութեան։ Ուրուրը տեսնելով Անահիտին, իսկոյն փախաւ, և մայրն ու ձագուկներն ազատւեցին ուրուրի ճանկերից։

Անահիտը աքլաբակուխ շատ էր տեսած, բայց երբէք չէր տեսած, որ մի հաւ կռւէր մի ուրիշ թռչնի հետ, մի վախկոտ հաւ կռւէր մի զօրեղ ուրուրի հետ։

Անահիտն իսկոյն վազեց տուն և մօրը պատմեց իր տեսածը։

—Հապա ինչո՞ւ ես ասում ինձ «վախկոտ հաւ ես», մայրիկ,—ասեց Անահիտը.—հաւը մի՞թէ վախկոտ է. ես տեսայ ինչպէս քաջութեամբ կռւում էր մեր թուխսկանը ուրուրի հետ։

—Հաւերը վախկոտ են,—պատասխանեց նրան մայրը, -բայց ոչ այն ժամանակ, երբ նրանք թուխս են լինում նստած։ Թուխսկանը մայր է, իսկ մայրը վախ չըգիտէ։ Աստւած նրան ձագեր է տւել, նրանց բաժին սէրն ու զօրութիւնն էլ հետն է տւել մօրը, որ իրանց սիրէ, պահէ և մեծացնէ։ Մէկ մայր որքան որդի որ ունի, այնքան անգամ էլ աւելի է նրա սէրն ու զօրութիւնը։ Մեր թուխսկանը տասներկու ձագիկ ունի։ Նրա ոյժն ու սէրն էլ տասներկու հաւի ուժի ու սիրոյ չափ է։

ԱՆԲԱԽՏ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ

Մի օր Զղջիկն ու Ճայն եկան,
Թէ՝ եկ դառնանք վաճառական,
Ասին ու խելք խելքի տըւին,
Հաւան կացան, պայման դրին.
Բայց արի տես, որ փող չունեն.
Շատ միտք արին, թէ ինչ անեն.
Վերջը եկան Փըշի մօտը.
Ընկան նրա ձեռն ու ոտը
Ու մուրհակով,
Շահով, կարգով

Փող վեր առան բաւականին,
Ինչքան պէտք էր իրանց բանին։
Զիղջը ճնաց, տընպահ գառաւ,
Ճայը բոլոր փողերն առաւ,
Առաւ նստեց գեամու միջին,
Հասաւ Մըսըր, Զինումաչին,
Ֆարս, Հնդստան,
Արաբստան...
Էլ Թանգագին քիրմանի շալ,
Էլ մարգարիտ, զըմրուխտ ու լալ,
Հընդու խուրմա, վրստա-բադամ,
Էլ... ո՞ր մէկի անունը տամ.
Ինչ որ տեսաւ, աչքը սիրեց,
Բօլ-բօլ առաւ, գեամին լըցրեց,
Գեամին լըցրեց հազար բարով,
Ու ետ եկած ճանապարհով
Ուրախ-ուրախ տուն էր գալի,
Ճանպին ծովում սարսափելի
Բուք վեր կացաւ, քամի առաւ,
Գեամին մինչև երկինք տարաւ,
Հանեց վերև, բերաւ ներքև,
Բացւեց, գոռաց անդունդը սև,
Բոլոր ապրանքն, անգին ակը,
Ողջ կըլանեց մութ անտակը.
Լոկ սովդաքեար խեղճ Ճայն էր որ՝
Ազատւեցաւ մերկ ու տրկլոր։
Ազատւեցաւ—փառք իր Աստծուն,
Բայց ի՞նչ սըրտով խեղճը գայ տուն.
Գայ—ի՞նչ ասի պարտատէրին,
Ո՞նց երեայ իր ընկերին...
Ընկերն էնտեղ՝ դուռը կըտրած,
Աչքը ճանպին, վիզը ծռած,
Համրում է օրն օրի վրայ,
Թէ՝ մեր Ճայը երբ պիտի գայ...
Երկար նայեց,
Ճանպէն պահեց,

Շատ լաւ ու վատ երազ տեսաւ,
Մինչև պարտքի օրը հասաւ,
Ու՝ մուրհակի թուղթը ձեռին՝
Փուշը տընկուեց կըտրի ծէրին։
—Է՛յ, բարեկամ, ինչ բանի էք,
Էլ չէք ասում թէ պարտ ունէք.
Գործ բըռնեցիք—հօրս ողորմի,
Ետ տըւէք դէ փողըս հիմի։
Թուղթ էք տըւել—վախտ իմացէք,
Ամօթ, աբուռ, ահ ունեցէք...
Թալան հօ չի՛... մեղք եմ ես էլ...
Ախպէր, էսպէս բան էք տեսել.
Ոսկի տայ մարդ իրան ձեռով—
Զըկարենայ առնել զօռով...
Սրանից յետոյ դէ արի դու
Ու ձեռ մեկնիր աղքատ մարդու...
Գորգոռում էր ողջ թաղակում,
Հայհոյում էր, խայտառակում.
Ամեն մարդ էլ, ով որ լըսում,
Հէնց մի բերան էն էր ասում.
—«Այ ամօթ ձեզ, Զըղջիկ ու Ճայ.
Ինչ ենք լսում, վայ—վայ,—վայ—վայ.
Անուններըդ վաճառական
Ու էս տեսակ խայտառակ բան...
Վայ—վայ, վայ—վայ,
Զըղջիկ ու Ճայ...»։
Ախեղճ Զըղջիկը միշտ լսելիս՝
Սիրտը բերնով դուրս էր գալիս.
Բարկանում էր իրան մըթքում,
Անիծում էր, չըքում, թըքում.
—Ա՛յ քու տունը քանդուի, ա Ճայ,
Ա՛յ դու դառնաս գըրողի փայ,
Էս ինչ բան էր, որ դու արիր,
Գլուխս էս ինչ փորձանք բերիր...

Ու խնդրում էր ամեն անգամ.
—«Մի նեղանար, փուշ բարեկամ,
Շատ ես կացել,
Կաց մի քիչ էլ.
Թուղթ ստացայ երեկ Ճայից,
Թէ դուրս եկայ Արաբիայից.
Որտեղ որ է՝ շուտով կըգայ,
Դեռ մի բան էլ աւել կըտայ...»։
—Ես չեմ ուզում աւելն ախպէր,
Կանխիկ համրած իմ փողը բեր.
Շահ էք գըրել,—
Վախտ էք դըրել,—
Ինչ գրած ա՝ էն եմ ասում,
Ձեղնից աւել բան չեմ ուզում։
—Ձէ, աղա Փուշ,
Թէ վաղ, թէ ուշ,
Փողն իր կարգին, շահն իր կարգին,
Իսկ պատիւըդ... ես իմ հոգին...
Ես յոյս ունիմ... ասենք պարտ ենք...
Բայց չէ՞, ախըր, մենք էլ մարդ ենք...
Ձէ, քու արածն ով մոռանայ,
Իր Աստուածն էլ նա կուրանայ...
Ախեղճը էսպէս լեզու ածաւ,
Շատ յոյս տըւաւ, շատ խոստացաւ,
Շատ սուտ ասաւ պարտատէրին,
Շատ ըսպասեց իր ընկերին,
Բայց ընկերը չըկայ, չըկայ.
«Էս ինչ ցաւ էր, Աստուած վըկայ,
Ինչ իմ բանն էր՝ մըտայ մէջը,
Որ խայտառակ լինիմ վերջը...
Ինչպէս պըրծնեմ էս կըրակից,
Էս ահագին պարտքի տակից.
Էլ ի՞նչ ասեմ,
Ո՞նց ըսպասեմ.
Նա ՛ք՛րը կըգայ, ի՞նչ իմանամ,
Ո՞ր չուրն ընկնիմ... ՞ւմ մօտ գընամ...»։

Շատ միտք արաւ,
Դէս-դէն թըռաւ,
Ինչ որ ունէր տանը, հազին,
Ողջ հաւաքեց տըւաւ պարտքին,
Ցիվի մերկացաւ,
Էլ չըպըրծաւ։
Վերջը տեսաւ, որ ճար չեղաւ,
Թևեր առաւ, ինքն էլ փախաւ.
Փախաւ, կորաւ, որ էլ էնպէս
Դատարկ, սընանկ ու սևերես
Ոչ պատահի պարտատէրին,
Ոչ երևայ լոյս աշխարհին։

Այնուհետև իր նամուսից
Զըղջիկը մերկ, փախած լուսից՝
Ցերեկները դէս-դէն թաքչում,
Գիշերն է միշտ մըթնում, թըռչում,
Որ չերևայ իր թայ-թուշին,
Ոչ պարտքատէր աղա Փուշին։
Ճայն էլ ծուվում
Ճըչում, ճըռում,
Ջուրն է մըտնում,
Դուրս է պըրծնում,
Թևին տալիս,
Ման է գալիս,
Թէ մի գուցէ բախտը բանի,
Կորուստն էլ ետ ջրից հանի։
Իսկ Փուշն արդէն յոյսը հատած՝
Ճանկ ու ատամ սուր պատրաստած՝
Կողքովն ով որ անց է կենում,
Քաշում է փէշն ու հարցընում,
Թէ չե՞ն տեսել մէկն ու մէկին—
Էն լիրբ ճային կամ Զըղջիկին։
Ու էն օրից մինչև օրս էլ
Մէկը մի՛սին դեռ չեն տեսել։

Ա Ն Ճ Ո Ր Ն Ի Բ Ա Դ Ի Կ Ը

(Հէքիաթ)

Ամառւայ ամենաթունդ ժամանակն էր։ Որքան հրաշալի էին այդ ժամանակ քաղաքից դուրս եղած տեղերը։ Ցորենի արտերը դեղնին էին տալիս, հաճարինը՝ կանաչին. ծաղկաւէտ չայիրների խոտն արդէն հաւաքել էին, դէզեր դըրել. կռունկն էլ զբօսնում էր այդտեղ իր երկայն ու սիրուն ոտներով և բըլբըլում եգիպտերէն, որովհետև այդ լեզուն էր սովորել իր մայրիկից։

Արտերի ու չայիրների չորս կողմից ձգւած էին մեծամեծ անտառներ, իսկ անտառների մէջ կային խոր-խոր լճեր։ Աւելի ամենաշատ այրող տեղը մի հին դաստակերտ կար, չորս կողմը պատած բաւական խոր առուով։ Աւելի և շինութեան մէջ տեղը եղած տարածութիւնը բոլորովին ամայի էր։ Այդտեղ տեսակ-տեսակ փշաթուփեր և ժանգալներ իրար խառնւած՝ մի այնպիսի ղալեն կուտ էին շինել, որ մարդ չէր կարող միջովն անցնել։ Այդտեղ ահա պատսպարւել էր մի չահել բադ և թուխս նստել մի քանի ձըւանների վրայ։ Ջեղճը ձանձրացել էր շատ նստելուց և սպասում էր անհամբեր, թէ երբ պիտի դուրս գան իր ճուտիկները։ Հազիւ էր պատահում, որ իր ծանօթ բադերից հիւր գային մօտը. նրանք աւելի լաւ էին համարում առւի մէջ նրա հետ զրոյց անել։

Վերջապէս ձըւանները մինը միւսի ետևից ճեղքճըղըւեցին. բադիկները նրանց միջից հանեցին գլխիկները և դուրս պրծնելով՝ զարմացած նայեցին իրանց չորս կողմը։ Մայրը չէր խանգարում, որ նրանք նայեն կանաչ խոտ ու թուփերին, որովհետև կանաչ գոյնը առողջարար է նըրանց աչքերի համար։

—Ո՜ւհ ինչքա՜ն մեծ է այս աշխարքը,—ասեցին ձըւից նոր դուրս եկած բադիկները։

Իրաւ որ հիմա աւելի մեծ տեղ ունէին, քան թէ՝ երբ կուչ էին եկած իրանց ձըւերումը։

—Դուք կարծում էք հէնց ա՞յս է մեր բոլոր աշխարհքը. ոչ, ձեր տեսածից աւելի մեծ է,—ասեց մայրը,—այնքան մեծ է, որ տարածւում է, է՜, մինչև պարտէզի միւս կողմը և հասնում է, հրէ՛ն, մինչև այն տափը, որ այտեղի տէրտէրինն է։ Ես դեռ ոչ մէկ անգամ այնտեղ չեմ եղած, շատ է հեռու, է՜, որտեղ է հա... Այստե՞ղ էք արդեօք ամենքդ էլ,— հարցրեց մայրը և ուզեց տեղից վերկենալ, մէկ էլ տեսաւ, որ մեծ ձուն դեռ չի բացւել, կրկին նստեց քրթմնջալով.—Ա՛խ, բա ե՞րբ պիտի վերջանայ. ես յոգնեցի բոլորովին, զահլէս գնաց, էլ սիրտ չըկայ։

Այս միջոցին նրան այցելութեան եկաւ մի պառաւ բադ և հարցրեց.

—Չը՛, ի՞նչպէս է առողջութիւնդ, լաւ բօլ նստեցիր, Աստւած ապաշխարանք համարի։

—Է՜հ, ի՞նչ առողջութիւն, մօքիր, կրակն եմ ընկել մի ձըւի ձեռքից. ի՞նչքան ժամանակ է նստած եմ վրէն՝ յամառել է, չի ուզում դուրս գալ։ Բայց նայիր արդէն դուրս եկած երեխոցս, տես ինչքա՜ն սիրուն են. ես դրանց նման սիրուն բադիկներ չեմ տեսած, ամենքն էլ իրանց հօրն են քաշել, ասես թէ նրա հետ մի խնձոր ըլին կէս արած։ Բայց էս-էս-էս անիրաւը ցաւ է դառել գլխիս, չի դուրս գալիս։

—Աբա մէկ թող տեսնեմ այդ ինչ ձու է, որ չի ուզում բացւիլ, ասեց պառաւը և երբ որ տեսաւ՝ բացականչեց.

—Վա՛յ իմ աչքին, էս խօմ հընդուհաւի ձո՛ւ է։ Մէկ անգամ ինձ էլ է պատահել էսպէս բան։ Դուրս գալուց յետոյ աւելի պիտի տանջւիս։ Ախըր էդ անպիտանները ջրից վախենում են. որ սպանես՝

ջուրը չեն մտնիլ։ Չէ, հոգիս, աւելի լաւ կանես, որ հէնց հիմիկուանից ձեռք վերցնես դրանից և միւսներին տանես ջուրը, լոզ տալ սովորեցնես։

—Չէ, մօքիր, մեղք է. այսքան ժամանակ նըստել եմ, էլի կընստեմ մի քանի օր. ո՛վ գիտէ, կըրելի է քո ասածը չէ։

—Ինչպէս կամենաս,—ասեց պառաւ բադը և գնաց։

Վերջապէս մեծ ձուն ճեղքւեց և մէջիցը դուրս եկաւ մի բադիկ, բայց միւսներից մեծ ու տափակ։ Մայրը նայեց վրան և բացականչեց.

—Ո՜հ, ամմա մեծ է, հա՜... Եւ իմ երեխոցս ոչ մէկի նման չէ. չըլինի՞ թէ ըղորդ հնդուհաւի ճուտ է։ Ա՛յ, ես հիմա կըտեսնեմ. հիմա կըտանեմ ջուրը. թէկուզ սատկի, ես նրան կընկղմեմ ջրի մէջ։

Միւս օրը եղանակը շատ լաւ էր։ Մայրը հաւաքեց բոլոր ձագերին և նրանց հետ ուղևորւեց դէպի առուն։ Ինքը ցատկեց ընկաւ ջուրը և այնտեղից կանչեց ձագերին, որ իրան հետևեն։ Ձագերը մօրն սպասել չըտուին, իրար ետևից ընկղմւեցին ջրի մէջ։ Նրանց գլխները թրջւեց ջրումը, բայց շուտով դուրս հանեցին և ջրից բարձր պահելով՝ սկսեցին լոզ տալ իրանց մօր նման։ Վերջնածին խոշոր բադիկը նրանցից յետ չըմնաց. նա լոզ տւաւ միւսներից աւելի լաւ։

—Չէ, սա հնդուհաւի ճուտ չէ,—ասեց մայրը.—տես ինչպէս լաւ է բանեցնում ոտները, ինչպէս ուղիղ է բռնում իրան։ Չէ, սա թէպէտ մի քիչ աւելի է երկար, բայց ինչ կուզի լինի՝ իմ հարազատ զաւակն է։ Չէ, ո՛վ կարող է ասել, որ սա անճոռնի է. ընդհակառակը, մինչև անգամ գեղեցիկ էլ է. պէտք է միայն լաւ նայել վրան։ Այսպէս ինքն իրան սիրտ տւաւ մայրը և միամտւեց, որ իր ձագուկն անճոռնի չէ։

—Դէ հիմա հետս եկէք, երեխէք, ես ձեզ կըտանեմ միւս բադերի մօտ, կըծանօթանանք ամենի

հետ։ Միայն կշտից չընեռանաք, միշտ մօտս կացէք որ ոտքի տակ չընկնիք. մէկ էլ՝ գոյշ կացէք կառուներից։ Նրանք սուր-սուր ճանկեր ունին և սուր ատամներ, երկայն պոչ, պլատրան աչքեր։

Այսպէս մայր ու ձագեր լընգլընգալով՝ մտան հաւանոցի բակը։ Այստեղ մեծ աղմուկ կար. երկու գերդաստան մէկ տեղ հաւաքւած՝ կռիւ էին սկսել իրար հետ և կռացահարում էին միմեանց մի օձաձուկի գլխի համար, որ խլում էին իրար կոցից. վերջը կառուն վրայ հասաւ և նրանց կռւից օգուտ քաղելով՝ խլեց ու փախցրեց։

--Տեսնո՞ւմ էք, այսպէս են ապրում ահա աշխարհքումս,—ասեց մայրը բադիկներին և սկսեց կառուցը սրել, գետնին քսելով, որ եթէ մի բան գրտընւի՝ պատրաստ լինի կռացելու։—Է՛, եկէք ետևիցս, և երբ կըմօտենաք ահա այն պառաւ բադին՝ ցած-բացրէք գլուխները և բարև տւէք։ Դա ամենից ազնըւատոհմն է այստեղի բադերի մէջ. դա սպանիական ցեղից է, էնդուր էլ այնպէս հաստ է։ Տեսնո՞ւմ էք, նրա ոտին կարմիր չիթ կած կապած. դա ամենից մեծ զարդն է և ամենամեծ նշանը, որպի սին կարող է ստանալ բադը։ Այդ նշան ունեցողը չի կորչիլ. ամենքն էլ նրան կըճանաչեն և կըզանազանեն միւսներից։ Դէհ, եկէք, ոտքերնիդ մէկ մէկով մի գցէք, փոխեցէք լայն-լայն, մէկը միւսից հեռու, ինձ պէս ահա, տեսէք... Դէ, գլուխ տւէք, ասեցէք՝ ռաֆֆ.

Բադիկները կատարեցին մօր հրամանը։ Միւս բադերը նայեցին նրանց վրայ և ասեցին բարձրաձայն։

—Սրանք էլ ո՞րտեղից լոյս ընկան.. իբր թէ մենք քիչ էինք, նոր ուտողներ աւելացան։ Եւ ինչքան անճոռնի է այն մէկը. նայեցէք, նայեցէք, ֆի՛ ինչի՛ նման է. մենք դրան չենք ընդունիլ մեր մէջ։

Եւ մէկը նրանցից մօտեցաւ տգեղ բադիկին ու նրա վզիցը մէկ պինդ կծեց։

Ի՞նչ ես ուզում դրանից,—բարկացաւ մայրը.—քեզ հո մի բան չարաւ այդ խեղճը։

—Շատ լաւ եմ անում,—ասեց կծողը.—բա ինչո՞ւ դա էլ մեզ նման չէ. դրան պէտք է մի լաւ քոթկել...

Աւելի քաղաքաւարի էր ոտնանշան ունեցող պառաւ բադը. նա մտիկ տւաւ ամենքին էլ և ասեց.

—Շատ սիրուն են երեխէքդ, բացի ահա այս մէկից. սա անյայտող է դուրս եկել. սրան պէտք է շտկել։

Ո՛չ,հարկաւոր չէ,ձեռդ պայծառաւիայլութիւն,—ասեց մայրը.—իրաւ է, մի քիչ տգեղ է երևում, բայց շատ բարի է, շատ հնազանդ, իսկ ջրումը լող է տալիս ամենքից էլ լաւ։ Ես հաւատացած եմ, որ տարիքի հետ կըգեղեցկանայ և կըփոքրանայ, այդ մեծութիւնը չի ունենալ։ Դա շատ երկար ճնաց ձըւի մէջ, էնդուր էլ այդպէս դուրս եկաւ։

Այս ասելով, մայրիկն սկսեց անճոռնի թըւացող ձագուկի վիզը քորել, փետուրները ողորկել։—Մէկ նայեցէք, սրա ինչն է պակաս, մանաւանդ որ սա հարիկ է (արու), և ոչ մարիկ (մարի, էգ), ուրեմն շատ էլ հարկաւոր չէ, որ գեղեցիկ լինի։ Ժամանակով շատ ուժեղ կըլինի, հիմիկւանից ցոյց է տալիս իր շնորհքը։

—Է՛հ, ճնաս չունի,—ասեց պառաւը,—միւս երեխէքդ գեղեցիկ են։ Դէ հիմա պըրտեցէք այստեղ, տունը ձերն է. եթէ օձաձուկի գլուխ գտնէք՝ ինձ իմաց տըւէք...

Ամենքի համար լաւ էր այստեղ, բայց ոչ անճոռնի բադիկի համար. նրան տանջում էին շաբունակ ոչ միայն բնդերը, այլ և հաւերը։ Ո՛րը կծում էր խեղճին, որը կոցահարում, որը չանգըռտում. ամենքն էլ իրանց չարութիւնը նրա վրայ էին թափում։ «Այսպէս զուրկ ճուտ կըլինի. սա որ

տաբլիքն առնի՝ մեզ ամենքիս կուտի», ասում էին ամենքը։ Իսկ Կալկաթայի որձակը (հնդուհաւ), որ ահագին խթաններ ունէր ոտների վրայ և սրա համար ինքն իրան սուլթան էր համարում, սկսեց ուռչիլ՝ ինչպէս մի փչած ռումբի, և ձայնի բոլոր ուժովը որոտաց՝ «կրակլի-կրուկլօ»..., որով ուզեց ասել՝ «այս հրէշը ո՞րտեղից է լոյս ընկել»։

Այսպէս անցաւ առաջին օրը, իսկ միւս օրն աւելի վատ եղաւ նրա համար։ Ամենքն էլ սկսեցին հալածել խեղճ բադիկին. իր քոյրերն անգամ բարկանում էին վրան և անիծում՝ ասելով.

—Կատաւ ճանկն ընկնիս դու, հրէշ, քեզ պէս եղբայր չունենանք...

Մայրը չը կարողանալով նրան պաշտպանել ամենի յարձակմունքից՝ ինքն էլ սկսեց յարձակուիլ նրա վրայ՝ ասելով. «Հեռացիր մեզանից, գնա մի ինչ տեղ մարը, որ քեզ չըտեսնեն»։ Բադերը շարունակում էին կծոտել, հաւերը ծեծում էին, Թուչունների համար կուտ բերող աղջիկն էլ չէր հաւանում նրան և ամեն կուտ տալիս՝ ոտքով մի կողմ էր հրում նրան։

Այսպէս շատ որ նեղացրին խեղճ բադիկին՝ նա հեռացաւ մի ւանկապատի մէջ կողմը։ Այնտեղ փոքրիկ թուչուններ կային. նրանք բադիկին որ տեսան, այնպէս վախեցան՝ որ թռան իսկոյն։ Բադիկն այդ նկատեց և ասեց ինքն իրան. «Ինչքան անճոռնի եմ, որ ամենքն էլ ղզուում են ինձանից և փախչում». և նա շատ տխրեց, բայց էլի շարունակեց գնալ, մինչև հասաւ մի մեծ ճահճի, ուր վայրենի բադեր էին կենում։ Այստեղ նա մնաց մի ամբողջ գիշեր, որովհետև շատ էր յոգնել։

Առաւօտը վայրենի բադերը զարթնեցին և իրանց մօտ տեսան մի նոր ընկեր։ «Դու ի՞նչ թըռչուն ես», հարցրին նրանք։ Բադիկը շուռ ու մուռ եկաւ դէպի ամեն կողմ և խոր գլուխ տըւաւ ամենքին։ «Դու շատ անճոռնի ես,—ասեցին վայ-

քենի բադերը.—բայց մի՛ւնոյն է մեզ համար. մենք քեզ կըպահենք այն պայմանով միայն, որ դու մեզանից աղջիկ չուզես»։

Խեղճ բադիկի մտքովն անգամ չէր անցնում աղջիկ ուզելը. նա ուզում էր միայն, որ իրան թոյլ տան բնակելու եղեգնուտի մէջ և խմել ճահճի ջրից։ Երկու օրից յետոյ մեր բադիկի մօտ եկան երկու վայրենի սագեր, որոնք իր նման դեռ նոր էին ձըւերից դուրս եկել։

—Լսիր մեզ ընկեր,—ասեցին նրանք բադիկին.—դու այնքան ոչինչ բան ես, որ մեզ չես կարող մի ջնաս տալ։ Կուզե՞ս մեզ հետ թռչիլ և դառնալ չըւող թռչուն։ Այստեղից մօտիկ մի ուրիշ ճահիճ կայ, որտեղ կենում են շատ սիրուն սագուհիկներ. նրանցից մէկը կառնես և կըբախտաւորես, չընայած որ դու այդպէս անճոռնի ես։

Սագիկները դեռ իրանց ղրոյցը չէին վերջացըրել, որ մէկ էլ յանկարծ՝ պա՜ֆ, պո՜ւֆ—հրացաններ արձակուեցին, և խեղճերը թրպրտացին գընդակահար եղած։ Պա՜ֆ, պո՜ւֆ—նորից արձակուեցին հրացաններ, և ամբողջ երամներով սագեր բարձրացան եղեգնուտից։ Որսորդներ էին եկել ահագին թուով և շրջապատել ճահիճը։ Շներ էլ ունէին հետները, որոնք վազվզում էին դէս ու դէն և սպանած սագերը տանում էին որսորդներին տալիս։

Այս միջոցին մեր անճոռնի բադիկը սաստիկ վախեցած՝ չըգիտէր ո՛րտեղ թաքցնէ գլուխը. կուչ էր եկել կիսաշունչ եղած և հէնց ուզում էր, որ գլուխը կոխի թևի տակը՝ յանկարծ վրան կանգնեց մի ահագին շուն. լեզուն բոլոր երկարութեամբ հանած, աչքերը կարմրատակած՝ բռեխը բաց առաւ և սարսափելի ժանիքները ցոյց տալով՝ ուզեց հարձակուել տգեղիկած բադիկին, մէկ էլ՝ հաֆ-հաֆ անելով՝ ետ քաշուեց ու վախաւ, կարծես բադիկից վախեցած։

—Ո՜ւֆ, ինչ լաւ պրծայ,—ասեց բադիկը և ազատ շունչ քաշեց.—այնքան անճոռնի եմ, որ շունն էլ է վախենում ինձանից ու փախչում։

Բադիկը այլ ևս տեղից չշարժւեց. նա թաք կացաւ տեղն ու տեղը և այնպէս մնաց կուչ եկած մինչև երեկոյ։ Երեկոյին, երբ դադարեցին հրացանների ճայթիւնները և գնդակների սուլոցները՝ բադիկը վեր կացաւ և սուս ու փուս փախաւ այդ վտանգաւոր տեղից։ Ճանապարհին էլ մի այնպիսի փոթորիկ բարձրացաւ, որ խեղճ բադիկը չէր կարողանում ոտները շարժել։ Ինչպէս եղաւ՝ մինչև մութն ընկնելը հասաւ մի աղքատիկ խրճիթի և նրա պատի տակին կուչ գալով՝ինքն իրան պատսպարեց փոթորիկից։ Այստեղ փոքր ինչ շունչ առնելուց յետոյ նկատեց խրճիթի կիսաբաց դուռը և ուղղակի ներս մտաւ։

Խրճիթում կենում էր մի պառաւ կին. նա ունէր մի հաւ և մի կատու։ Պառաւն անզաւակ էր և այդ երկու արարածներին նա իր զաւակներն էր համարում։ Կատուն մլաւում էր զանազան եղանակով, նայած թէ ինչ էր ուզածը, ճլըմկոտում ու կոտրաւուում էր տեսակ-տեսակ. նա մինչև անգամ իրանից կայծեր էր արձակում, երբ շփում էին մազերը քըծիվեր։ Հաւը շատ լաւ ձըւան էր ածում։ Նրա ոտները շատ մանր էին և կարճիկ։ Սրա համար էլ պառաւը նրան անւանում էր «հաւիկ կարճոտնիկ», և սիրում էր նրան ինչպէս իր հարազատ աղջկանը։

Առաւօտը որ լուսացաւ, նոր նկատեցին բադիկին։ Կատուն սկսեց մլաւել, իսկ հաւը կրուկրուաց։

Այս ինչ է նշանակում, ինչ են իմացել զաւակները,—հարցրեց ինքն իրան պառաւը և սկսեց չորս կողմը նայել. որովհետև պուշ էր (կարճատես), բադիկին որ տեսաւ՝ գէր բադի տեղ ընդունեց նրան։ —Ա՛յ թանգագին գիւտ,—բացականչեց պառաւը։—

Ես հիմա կունենամ բադի ձըւաններ, միայն թէ սա մարի լինի։ Պէտք է փորձել։

Բադիկին փորձելու համար՝ պառաւը նրան պահեց մինչև երեք շաբաթ, բայց ձու չերևաց։

Կատուն իրան տան տէր էր համարում, իսկ հաւը՝ տանտիկին. ասում էլ էին. «Մենք ենք որ կանք աշխարհքումս»։ Բադիկը համարձակւում էր ուրիշ կարծիք յայտնել, բայց հաւը չէր հաւանում և ասում էր.

—Դու կարող ես ձու ածել.

—Ո՛չ։

—Ուրեմն նեղութիւն քաշիր լռել։

Իսկ կատուն հարցնում էր.

—Դու կարող ես ճըկճըկւել, մլաւել ու կայծեր արձակել,

—Ո՛չ։

—Ուրեմն էլ ինչո՞ւ ես մէջ ընկնում, երբ խօսում են խելօքները։

Եւ այսպէս խեղճ բադիկը նստել էր մի անկիւնում տխուր ու տրտում։

Մէկ անգամ արևի ճառագայթներն ընկան խրճիթը և փչեց թարմ օդ։ Բադիկի սիրտն այնպէս ուզեց ջրում լողալ, որ նա չըկարողացաւ իր ցանկութիւնը չըյայտնել հաւիկին։

—Պարապութիւնից յիմար բաներ ես մտածում.—ասեց հաւիկը։—Քու ածա կամ քթիդ տակ մի բան մռմռա, ինչպէս մեր կատուն է անում, այնուհետև էլ այդպէս անմիտ բաներ չես անցկացնիլ մտքովդ։

—Բայց որ իմանաս՝ ինչքան լաւ է ջրում լողալը, ինչքան դուրեկան է։ Պէտք է գլուխդ թաղես ջրումը, մէկ էլ երեան ընկնիս՝ որ իմանաս թէ ինչքան սքանչելի բան է, ինչքան զըւարճալի...

—Այո՛, ինչպէս չէ, մեծ, շատ մեծ բաւականութիւն է,—ծաղրեց հաւիկը։—Դու կարծեմ բոլորովին ցնորւած ես։ Մեր կատուին նման խելօք արա-

բած չըկայ աշխարհքումս. մէկ հարցրու նրան, տես նա էլ սիրո՞ւմ է լողալ ջրումը։ Իմ մասին ես դեռ ոչինչ չեմ ասում։ Հարցրու թէկուզ մեր պառաւ տիրուհուն, որի պէս իմաստուն ոչ ոք չըկայ, տես նա կըհաւանի՞ քո ասածին։

—Դուք ինձ չէք կարող հասկանալ.—ասեց բադիկը։

—Մենք չենք կարող հասկանալ քեզ։ Ուրեմն դու աւելի խելօք ես, քան թէ մեր կատուն է և տիրուհին։ Իմ մասին ես ոչինչ չեմ ասում, բայց եթէ խելք ունիս՝ ինձ կըլսես և զանազան յիմարութիւններ չես մտածիլ։ Գոհ եղիր այն բարիքի համար, որ դու գտնում ես այստեղ։ Մի մոռանար, որ դու տաք սենեակում ես գտնւում և խելօք հասարակութեան մէջ, ուր դու կարող ես շատ բան սովորել։ Աշխատիր միայն ձու ածել, սովորիր մլաւել և կայծեր արձակել։

—Ո՛չ, ես այստեղ մնալ չեմ կարող, կերթամ ուրիշ տեղ, ուրիշ աշխարհք։

—Գնա, գնա, ուրիշ տեղ վեր ածած է, գնա հաւաքիր. հէնց իմանում ես, թէ ամեն տեղ էլ քեզ կուտ կըտան կըպահեն...

Բադիկը դուրս եկաւ խրճիթից և ճանապարհ ընկաւ։ Նա գնաց ընկաւ ջրերը, լողացաւ իր ուզածի չափ, բայց ոչ մի կենդանի նրան չընկերացաւ. ամենքն էլ խորշում էին նրանից, ամենքն էլ նրան անճոռնի էին համարում։

Աշունքը վրայ հասաւ. անտառում տերևները դեղնեցին և սևացան. քամին ճանկ էր գցում նրանց և օդի մէջ բարձրացնում։ Հետզհետէ սկսեց ցրտել։ Երկրի վրայ կաթ ընկան ծանրացած կարկտաքերը և ձիւնաքեր ամպեր։ Ագռաւը մրսելուց կռաւում էր ցանկապատի վրայ։ Բադիկի օրերը դառնացան։ Մէկ անգամ իրիկնապահին, երբ արեգակը մայր էր մտնում շատ փառաւոր կերպով, անտառից դուրս թռան երամով խոշոր թռչուններ՝ ձիւնի պէս սպի-

տակ, երկայն ու ճկուն վզերով. դրանք կարապներ էին։ Դուրս թռչելիս նրանք արձակեցին մի բոլորովին ուրիշ տեսակ ձայն, փռեցին իրանց հիանալի թևերը և թռան ցուրտ տեղերից դէպի տաք երկիրները։ Նրանք թռան վեր ու վեր, մինչև հասան ահագին բարձրութեան։ Այդ տեսնելիս՝ մի տեսակ թախծութիւն և տխրութիւն եկաւ բադիկի վրայ։ Նա պտրտեց ջրի երեսին՝ ինչպէս անիւ, երկարացրեց վիզը՝ ինչքան կարող էր՝ դէպի թռչող կարապները և վերջապէս ճըչաց այնպէս ամուր և հրաշալի ձայնով, որ ինքն էլ վախեց իր ճըչալուց։ Ինչը չէր կարողանում մոռանալ այդ հրաշագեղ և բախտաւոր թռչուններին, և երբ նրանք ծածկուեցին արդէն ամպերում՝ նա սուզուեց ջրի մէջ մինչև յատակը և երբ մէկ էլ երեսն ընկաւ, նա խելագարւածի նման էր։ Նա չգիտէր, թէ ինչ էր այն թռչունների անունը և ոչ էլ գիտէր, թէ ուր էին թռչում նրանք։ Նա տեսաւ միայն, որ նրանք շատ երջանիկ են ապրում աշխարհիս վրայ։ Բադիկը չէր նախանձում նրանց. նրա մտքով չէր կարող անց կենալ, որ ինքն էլ կարող էր լինել նրանց պէս բախտաւոր. խեղճը նրանով էլ գոհ կըլինէր, եթէ գոնէ բադերը չըհալածէին նրան իրանց միջից։

Վրայ հասաւ ձմեռը։ Այնպէս ցուրտ էր, որի նմանը չէր եղած։ Ջուրը սառչում էր. բադիկն անընդհատ լողում էր, որ թոյլ չըտար բոլորովին սառչելու, բայց ամեն գիշեր այն բացւածքը, ուր նա լողում էր՝ փոքրանում, հուպ էր գալիս։ Բադիկը բոլոր ուժովը բանեցնում էր ոտները, որ դրա առաջն առնի, բայց չըկարաց, այլ շատ դադրելուց թուլացաւ և ինքն էլ սառաւ ջրի հետ։

Առաւօտը վաղ մի գիւղացի եկաւ և տեսնելով սառուցի մէջ մնացած բադիկին՝ իր փայտէ կօշիկներով կոտրտեց սառուցը և բադիկին վերցրեց տարաւ կնոջը տւաւ։ Հէնց որ մտաւ տաք խրճիթը, այստեղ բադիկը կենդանացաւ։ Երեխէքն ուրախա-

ցան և ուզեցին հետը խաղալ, բայց բադիկը վախեց, վեր թռաւ, ընկաւ կաթով լիքը դոյլի մէջ և վեր ածեց կաթը։ Տանտիկինը քր՛շ արաւ, որից աւելի շշկլեց բադիկը և թռաւ ընկաւ իւղով լիքը չանի մէջ, այնտեղից էլ ալիւրի արկղի մէջ։ Կարող էք երևակայել, թէ ինչի նման կըլինէր այդ ժամանակ ալրաթաթախ բադիկը։ Տանտիկինը մաշան ձեռքն առած՝ բղաւում էր և վազում եանիից, որ բռնէ. երեխէքը նոյնպէս վազում էին միմեանց առաջ կտրելով, ծիծաղելով ճչալով, որ բռնեն բադիկին։ Դուռը բաց էր. բադիկը դուրս թռաւ և վայր ընկաւ նորեկ ձիւնի վրայ՝ բոլորովին ուժից ընկած։

Շատ տխրալի կըլինի, եթէ մի առ մի պատմենք բոլոր այն զրկանքները ու տանջանքները, որոնց ենթարկուեց բադիկը այդ խիստ ձմեռը... Նա ընկած էր ճահճի ափին, եղեգնուտի մէջ՝ երբ արևը նորից սկսեց տաքացնել երկիրը, երբ սարեակները սկսեցին երգել. վրայ հասաւ հրաշագեղ գարունը.

Այն ժամանակ ահա բադիկը կարողացաւ կրկին բաց անել թևերը, որոնք այժմ բաւական ուժեղացել էին և նրան թռցնում էին շատ արագ և շատ հեռու։ Շուտով նա ընկաւ մի մեծ այգու մէջ, ուր արդէն ծաղկել էին խնձորենիքը, անուշ հոտ էին բարձրացրել թանթրւենիքը և իրանց կանաչ գլուխները կուացրել օձապտոյտ առուի վրայ։ Այստեղ մեր բադիկի ուրախութեանն էլ չափ չըկար՝ այնքան լաւ էր նրա համար։ Եւ ահա խիտ ծառերի մէջ եղևեցան երեք սպիտակ ու գեղեցիկ կարապներ։ Նրանք փոփոացնում էին իրանց թևերը և ապա սահում ջրի երեսին՝ ինչպէս սառուցի վրայ։ Բադիկն արդէն ճանաչում էր այդ հրաշագեղ թըռչուններին. և հիմա էլ որ դրանց տեսաւ, մի տեսակ տխրութիւն զգաց։

—Ես կըմօտենամ դրանց,—մտածեց բադիկը.—կըմօտենամ այդ արքայական թռչուններին։ Եւ

դրանք կըսպանեն ինձ այն յանդգնութեանս համար, որ իմ հրէշ տեղովս համարձակել եմ մօտենալ իրանց։ Է՛հ, միևնոյն է, ինչ կուզի՝ թող լինի։ Աւելի լաւ է, որ կարապներն սպանեն ինձ, քան թէ բադերը կտցահարեն, հաւերը ծեծեն և թռչնապահները վռնդեն, ձմեռն էլ դրկւել ամեն բանից և ջրումը սառչիլ։

Եւ բադիկը բոլոր ուժը հաւաքելով՝ ընկաւ ջրի վրայ և լողալով դիմաւորեց նրանց։ Կարապները նկատեցին բադիկին և շեշտակի նետուեցին դէպի նա։

—Սպանեցէք, սպանեցէք ինձ,—շըշնջաց բադիկը գլուխը քաշ գցած՝ սպասեց իր մահին։ Բայց փոխանակ մահուան՝ նա ինչ տեսաւ այդ ժամանակ։ Ջրի վճիտ և անապակ հայելու մէջ նա տեսաւ ինքն իրան. տեսաւ որ ինքը մի անճոռնի և զզւելի բադիկ չէ, այլ մի հրաշագեղ կարապ, բոլորովին նման իր մօտ եղած կարապներին...

Բադերի մէջ ծնւելը մի դժբախտութիւն չէ, եթէ մինչև ծնւելդ պատկած ես եղել կարապի ձւի մէջ...

Նա շատ ուրախացաւ իր կրած տանջանքների համար։ Միայն հիմա հասկացաւ իր բախտաւորութիւնը և իրան շրջապատող փառաւորութիւնը։ Մեծ կարապները լողում էին նրա չորս կողմումը համբուրում նրան իրանց կտուցներով։

Այգու մէջ մտան մի քանի մանուկներ. նրանք ջրի մէջ ձգում էին հացի կտորներ և հունդեր։ Մանուկներից մէկը գոչեց՝ «Ահա մի նոր կարապ»։ Միւս մանուկներն ուրախանալով կրկնեցին՝ «Այո, նոր է, նոր է»։ Նրանք ուրախութիւնից ծափ զարկեցին և ոստոստալով վազեցին իրանց ծնողաց մօտ։ Նրանք շուտով վերադարձան և ջրի մէջ ածեցին զանազան ուտելիքներ, մինչև անգամ քաղցր կարկանդակներ։ Նրանց շատ էր դուր գալիս նոր կարապը։ Ասում էին՝ «նոր կարապն ամենից գեղեցիկ է, և շատ չահել է, և շատ հրաշագեղ»։

Ծերունի կարապները գլուխները խոնարհեցրին նրա առաջ։ Նա շատ ամաչեց և գլուխը թաքցրեց թևի տակ։ Խեղճը չէր իմանում ինչ անէր. նա չափից դուրս էր բախտաւոր, բայց դրանով քնաւ չէր հպարտանում, որովհետև բարի սրտումը հպարտութիւն չի լինի։ Փափուացրեց նա իր թևերը, վեր քաշեց վայելչակազմ պարանոցը և ուրախալից սրտով ասեց. «Այս բախտաւորութիւնը երազումս անգամ չէի կարող տեսնել այն ժամանակ, երբ ես դեռ ևս մի անճոռնի Բադիկ էի և հազար ու մէկ նեղութիւնների ենթարկւած...»։



ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆ

ՏԱՐԻԱՑ ԶՈՐՍ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ ԵՒ ԳԱՐԱԳՄՈՒՆՔ

Ա Ծ Ո Ւ Ն Ք

Ամառն իր բոլոր պտուղները հասցնելով պահ է տալիս աշունքին, որ ինքը հանգստանայ և միւս տարի էլ նոյնքան պտուղ տայ։

Շարունակ երկար աշխատութիւնը երկար էլ հանգստութիւն է պահանջում։

Գալիս է աշունք՝ ոչ այնպէս ուրախ, ինչպէս գարունքը կամ ամառը, և ոչ այնպէս տխուր, ինչպէս ձմեռը։ Նա լուրջ, խոհեմ կերպով, փորձառու և խելօք մարդու նման հաշիւ է պահանջում իր կրակոտ երիտասարդ եղբօրից—Ամառից, ներում է նրա թերութիւնները և ինչ որ նա պակաս է լինում թողած, ինքն է լրացնում, որ երբ Ձմեռ պապը գայ, նրանից յանդիմանութիւն չլսի, թէ այս չկայ, այն պակաս է, այս-ինչ գործը դեռ չի լրացած։

Աշունքը երբոր տեսնում է, թէ պակաս բաները դեռ կան, փչում է իր փողը և ամենքին նոր գործի է հրաւիրում։ Ինքն էլ պարապ չի մնում։ Իր փողի ձայնի հետ նա փչում է ցրտաւուն քամին։ Այդ քամին որ դիպչում է ծառերին, նրանց վրայ մնացած պտուղները բոլորը թափւում են և յատակները փռւում, դիզւում։ Տերևները այդ քամուց դեղնում, սիրթնում են երկիւղից և դողդողալով թափւում, գետնին կուչ գալիս։

Թռչունները շուտով իրանց շահացրած ձագերը ժողովում են, իրար իմաց են տալիս և մեծ-մեծ կարաւաններով—խումբ-խումբ, երամ-երամ, շարան-շարան, բոյլ-բոյլ, կռկռալով, ծրւծրւալով, կչկչալով թռչում, հեռանում դէպի աւելի տաք երկիրները...

Այգեպանն շտապում է իր խաղողը քաղել, գինի քամել, տեղաւորել, պահունկի մրգերից կախաններ շինել, դեղապէտի համար պահել։

Պարտիզպանն էլ իր պարտէզի ու բուրաստանի ճնացած բերքերն է ժողովում, ինչպէս կարտօֆիլը, կաղամբը, սոխը, բողկը, տակը (ճակնդեղ), գազարը (ստեպղին) և միւս արմտիքը։

Երկրագործն էլ իր ցելերն է կեռաւար անում, հազար աղօթքով ու մաղթանքով սերմը հողին պահ տալիս, ցանում, ցաքանում կամ սերմավար անում։ Այնուհետև սկսում է փայտ կրել, եթէ փայտ է վառում և ոչ աթար, իր խոտի ու յարդի քանակութեանն է նայում, որ եթէ քիչ է՝ վաղօրօք մի կերպ պատրաստութիւն տեսնէ կամ թէ չէ՝ տաւարն ուրիշին պահ տայ։

Գազաններն էլ իրանց բների, որջերի պատրաստութիւնն են տեսնում։ Որը հին որջն է նորոգում, որը նորն է փորում կամ մի յարմար ծառի խոռոչ ու քարայր որոնում։

Մի կողմից աշունքը շարունակում է իր փողը փչել՝ օրէցօր աւելի սաստիկ, աւելի ցուրտ։ Դաշտերում եղեամն է դնում, սարերի գլխին՝ ձիւն, որ մարդիկ ձմեռւան պատկերը տեսնեն և աւելի շտապեն։ Առաջ յորդ անձրևներ են գալիս, գետերը վարարում, յետոյ գալիս են մանրամասղ անձրևներ, որոնք ծրծւում են ամեն բանի մէջ և մինչև ներքին խաւերն են անցնում։ Այդ տեսակ անձրևներից թէպէտ կաթում են հողածածկ տները, բայց դրանք շատ օգտակար են նոր ցանած սերմերին։

Աշնանային օրերը քանի գնում՝ կարճանում և

ցրտում են—գարնանային օրերի հակառակ, որոնք քանի գնում՝ երկարանում և տաքանում են—մինչև հասնում է ձմեռը և սար ու ձոր ձիւնով ծածկում։

Աշնանային ամիսներն են—սեպտեմբերը, հոկտեմբերը և նոյեմբերը։

ՁՐՀՆՁԱԾ ԱՐՏ

Աշուն է խորին. ծիծառը թռաւ.
Անտառն է դատարկ. դաշտը մերկացաւ.
Միայն դաշտումը անհունձ մնացած
Տխուր ու տրտում մի արտ կայ կանգնած։
Կարծես հասկերը ասում են միմեանց.
—«Ի՞նչպէս մրսում ենք մենք այս ցրտի տակ
«Շատ տխրալի է գետնին խոնարհել
«Եւ ատօք պտուղդ հողում թաթախել։
«Ամենայն գիշեր մեզ մօտ իջնում են
«Անցնող թռչուններն ու մեզ ուտում են,
«Գազանը տրորում, քամին մեզ ծեծում։
«Ո՞ւր է մեր տէրը, ինչ է սպասում»։
Քամին տալիս է նրանց վատ համբաւ.
«Ձեր տէրը երկրից երկինք վերացաւ»...

ՍԵՐՄՆԱՑԱՆ

Ահա եկան աշունքւայ թուխպ օրերը,
Մաղմղոում է մանրահատիկ անձրևը.
Ծառերն իրանց տերևներից մերկացան,
Կռունկները շարան-շարան անց կացան։
Սևացել է դաշտը անթիւ ցելերով,
Բայց մի կողմից դեռ վարում են կեռերով.

Սերմնացանը՝ գոգնոցն ածած սերմացուն,
Սերմ է ձգում, աղաչելով Աստրծուն.
«Ո՛վ Տէր Աստուած, Դու իմ ցանքը պահպանես
Առատ անձրև, կարմիր արև չխնայես.
Մէկ բուռն ահա ես տալիս եմ մկներին,
Այս մէկ բուռն էլ ագռաւներին, ծառերին.
Բայց մորեխը գոհ չի մնալ մէկ բռնով,
Երկու կըտամ, թող կըշտանայ ղըրանով։
Մէկ բան էլ կայ, որ անունը չեմ տալիս,
Այդ դու գիտես... վերևից է նա գալիս...
Դու ղրանից արտս պահես անվնաս,
Ես տէրտէրից չեմ խնայիլ կալամաս։
Վանականները, գործակալները ինչքան գան,
Բոլորեքեան առատ բաժին կատանան։
Կերթամ Մարտս խունկ ու մոմով, մատաղով,
Միայն արտս Դու պահպանիր ապահով։
Էլ ինչ ասեմ, Աստուած, Ինքդ լաւ գիտես,
Թէ ինչ պարտքի, պատուհասի մէջ եմ ես.
Գող, աւազակ մի կողմից են կողոպտում,
Պարտքատէրը միւս կողմից է ինձ խեղդում.
Դրանց ձեռքից եթէ մի բան է մնում,
Այն էլ գայլի կամ ցաւի է գոհ դառնում...
Մի տուն լիքը երեխէքս մերկ, քաղցած,
Տարին առատ, բայց ես չունիմ կորեկ հաց։
Յոյսս ահա ոտքիդ տակին փռած է,
Քո Սուրբ Աչը սրա վրայ տարածէ...

Ս Ե Ր Մ Ն Ա Ց Ա Ն

Փառք և երանի՛ քեզ, քա՛ջ սերմնացան,
Որ դաշտն հայրենի չես թողնում խոպան,
Որ ջերմ յոյսերով դու նրա գրկում
Ապրում ես սիրով և սիրով տանջւում։
Փառք քեզ, որ հզօր, անվհատ հոգով
Թափում ես, մշակ, դու առատ քրտինք.

Քո սուրբ քրտինքով բազմում—բիւրաւոր
Ապրում են մարդիկ խաղաղ, երջանիկ։
Անխոնջ, ժրաջան դու մեղւի նման՝
Չանգիստ չըգիտես հայրենի երկրում,
Վիշտ, ցաւ ես կըրում դու նրա կըրծքին,
Միշտ ուրախերես, միշտ զըւարթագին։

Դու երգ ես երգում վաստակի ժամին,
Ոգելից երգեր, սրտառուչ երգեր,
Եւ քամին նրանց առնում է, տանում
Սարեր ու ձորեր, անտառի խորքեր...
Ծիծաղ ու հրճւանք, կեանքի վայելքներ,
Լաց ու տառապանք, դառըն զրկանքներ,
Օրհնանք ու աղօթք, գայրոյթ ու բողոք,
Բոլորն էլ երգով, վառ զգացմունքով
Պատմում ես միայն դու մայր բնութեան...
Եւ նա ձայնակից, ո՛վ ժիր սերմնացան,
Սրտաբուղխ երգիդ, քո ջերմ զգացման,
Իր սրտի խորքից տալիս է քեզ միշտ
Քաղցր արձագանք, սիրող մօր նման։

Վաղ առաւօտեան, վառ արշալուսին,
Օրը բացւելիս, արևը գարնան
Քեզ է առաջին ողջոյնը տալիս.
Իրիկնադէմին երկրի երեսին
Երբ մութ է իջնում, քեզ է նա նորից
Լեռան եռևից «Մնա՛ս բարև» ասում.
Քեզ է համբուրում, քո գէմքը շոյում
Իր հեզիկ շնչով զեփիւռն հովասուն,
Քեզ է կախարդում, քո ուշքը խլում
Անուշ կարկաչով անհանգիստ առուն.
Գետակը ձորում, թռչունը օդում—
Բոլորն էլ սիրով քեզ են ողջունում։
Քո վաստակն օրհնում ներդաշնակ ձայնով...

Քո սէրն է երգում, անխոնջ սերմնացան,
Եւ իմ հեզ մուսան իր անկեղծ երգով.
Քեզ եմ կեանք հայցում, քեզ կեանք բարեվից
Գրքոտ երկնքից սրտիս աղօթքով.
Ես աղօթում եմ, որ միշտ լի սիրով
Քեզ ժպտայ երկինք քո վսեմ գործում,
Որ միշտ երկնատաք արև—անձրևով
Ծաղկի քո վաստակ հայրենի երկրում...
Փառք և երանի՛ քեզ, քա՛ջ սերմնացան,
Որ դաշտան հայրենի չես թողնում խոպան,
Որ վառ յոյսերով դու նրա գրկում
Ապրում ես սիրով և սիրով տանջւում...

Ա Յ Գ Ե Ք Ա Ղ

Օուրբ Խաչի պասից մէկ կամ երկու շաբաթ էր անցել։ Լաւ չէ միտս, որովհետև ես այդ ժամանակ դեռ երեխայ էի։

Մի երեկոյ հայրս եկաւ այգուցը՝ խաղողով ու դեղձով լիքը մի քաղլակ ձեռին, տըւաւ մօրս, թէ տուր երեխաներին, յետոյ աւելացրեց.

—Խաղողը ձեռքից գնում է. չորս կողմի այգիքը քաղել են, միայն մերն է մնացել մէջտեղ լիքը։ Ով ասես՝ ներս է մտնում։ Այգեպանն էլ դողցնում է. խեղճը չի կարողանում գողերի հախիցը գալ։ Անցեալ գիշերը թուրքի չորանները մտել են, ինչքան պոկել տարել են, տասն այնքան էլ կոտրտել, փըչացրել են։ Կարմիր խնձորենին որ տեսնես, կասես արջեր են վրան կռիւ տըւել, այնպէս են կոտրտել բոլոր ճղները։ Իծապակի շարքումը էլ մի ճուտ խաղող չես գտնիլ, այնպէս են սրբել տարել։

—Մ՛ոյ կոտրըվին դրանք, կուրանա՛յ դրանց աչքերը,—բացականչեց մայրս.—տեսնում ես դու՝ այդ անիծածներին ինչ են անում։

—Հիմա ինչ եղել է, եղել է,—շարունակեց հայրս։—Ես ասում էի՝ քիչ էլ մնայ, աւելի լաւ հասնի, որ գինին թթու չըլինի, բայց որ չեն թողնում, ինչ արած... Գողին ինչ դատաստան. մէկին բռնել ես տալիս, տեղը քսանն է լոյս ընկնում. թէ որ առաջ խաղողդ էին գողացել, յետոյ գալիս են տաւարդ տանում, գոմէշներդ քշում։ Դրանց պատիժն Աստուած պիտի տայ, մարդ ինչ կարող է։ Ինչ որ է, դու էգուց հաց թխիր, մեր բարեկամներին իմաց տուր, միւս օրն սկսենք քաղելը, թէ չէ՝ այս տարի ոչ թէ ծախելու, այլ մեր խմելու գինի էլ չենք ունենալ։

—Դէ որ այդպէս է,—ասեց մայրս,—էգուց մարդ ուղարկիր, երեխէքս գան։ Կուրանամ ես... առանց նրանց ինչպէս քաղենք բաղը։

«Երեխէք» ասելով՝ մայրս ակնարկում էր քոյրերիս, որոնք մարդու էին տըւած զանազան գիւղերում, բայց իրարից այնքան մօտիկ-մօտիկ էին, որ մէկ օրուայ կարելի էր ամենքին էլ իմաց տալ։ Միայն մէկը քաղաքումն էր, նրան էլ վաղուց էին ապսպրել որ գայ։

Երբոր քոյրերս եկան, յետոյ մայրս ինձ ուղարկեց իմ պապոնց տուն, որ նրանց էլ իմաց տամ։ Նրանց տանն էլ այնքան հարսներ ու երեխէք կային, որ մի սուրուճ ոչխարից շատ։ Այնտեղից ուղարկեցին մօրաքրոջս մօտ, յետոյ մեր սանամայրերի, որ չգիտեմ տասն էին—մեղայ քեզ Աստուած—թէ քսանը։ Յետոյ գնացի մեր կնքաւորենց տուն, այնտեղից էլ հանդիպեցի Գիւլնազ տատին ու ասեցի. «Տատի-մայրս ասեց՝ էգուց դու էլ, քո հարսներն ու թոռներն էլ համեցէք մեր բաղը. էգուց սկսում ենք քաղելը»։ Նա էլ պատասխանեց.

—Շատ լաւ չարըդ տանեմ. դէ արի քեզ մի սեր ուտեցնեմ. շատ ժամանակ է մեր տուն չես եկել։ Ասեցի՝ շնորհակալ եմ, պիտի գնամ ուրիշ-

ներին էլ իմաց տամ։ Բայց սուտ ասեցի, գիտէք. թէպէտ սուտ ասելը լաւ բան չէ, լաւ էլ ախորժակ ունէի սերի, բայց ինչ կանես, սաստիկ ամաչելուցս սուտ ասեցի։

Հիմա պիտի ասէք՝ այդքան մարդկանցը որ կանչեցիր, հապա այդքանին ի՞նչպէս պիտի կերակրէիր։ Մի վախենաք, այդ շատ հեշտ է։ Դրանք կրէք։ Մի վախենաք, այդ շատ հեշտ է։ Դրանք իրանց կերակուրներն էլ իրանց հետն են բերում, դեռ մի բան էլ աւելի.

Մենք արդէն երկու մեծ ղօչ ունէինք՝ գիտուելեամբ այգեքաղի համար գիրացրած, մի քանի էլ թոխլի ու այծ։ Մայրս չորս թոնիր հաց թխեց, բաւականաչափ էլ գաթա, նազուք։ Պանիր էլ շատ ունէինք, խաղողն ու միւս մրգերն էլ այգին լիքը. էլ ուրիշ ի՞նչ էր հարկաւոր։ Իսկ մեր հիւրերն էլ բերին ամեն մի տանից մի քանի եփած հաւ, բօլ գաթա, բաղարջ, կաթնահունց։ Ամենից շատ մեր սանամայրերն էին բերել։

Հիմա էլ պիտի ասէք՝ այդ ի՞նչ այգեքաղ է. դա մի ուխտագնացութեան, սար գնալու կամ հէնց, ուղիղն ասած, հարսանիքի պէս բան է։

—Այո՛, հէնց այդպէս է. դեռ դրանցից մի բան էլ աւելի համարեցէք։

Այգեքաղի օրը բոլոր երեխէքն ու կնանիքը, բոլոր հարևներն ու աղջկէքը գուգել, զարդարուել էին իրանց ոսկ օրւայ ամենանոր և գեղեցիկ հագուստներովն ու զարդարանքներովը։ Տղամարդիկն էին ճնացել իրանց ամենօրեայ հագուստովը, միայն գդակները էին նորը դրել։ Տղամարդիկը չէին փոխել իրանց հագուստը, որովհետև նրանք կթոց պիտի շալակէին, շալակ տային, խաղողը կխճաքրէին,—կոխ տային,—տակառները սարքէին. էլ վաղուցւայ պէս հնձանում չէին կոխ տալիս, այլ նոր, եւրոպական ձևով ամեն սարքն ու կարգն ունէին, այսինքն մի քանի ահագին կիսատակառներ, նրանց վրայ դրած՝ յատակը ծակծկոտ մեծ

չան և էլի ուրիշ մի քանի տեսակ չաներ։ Խաղողն ածում են ծակծակոտ չանի մէջ, նրանում մէկը կանգնած, ոտները հանած, փոխկերը վեր կապած՝ կոխոտում է և թափում կիսատակառը, որի մէջ գինին մնում է մի քանի օր, մինչև եփ է գալիս, ճաճան (չեչը) երեսին կանգնում, գինին պարզւում. այնուհետև կիսատակառի վարի ծորակը բաց են անում, գինին թափում են, ածում տակառների մէջ ու յետոյ տանում դնում մառանումը։ Բայց այս մանրամասնութիւնները հիմա թողնենք։

Առաւօտը վաղ-վաղ հասանք այգին։ Ոչխարները մորթոտեցին, կրակ արին, պղնձները վրան դրին, շամփուրները շարեցին, գցեցին, որ նախաճաշիկի համար խորոված անեն։ Յետոյ մի-մի թաս արաղ խմեցին, մի-մի թիքա խորոված. մի-մի պատառ կաթնահունց կերան և սկսեցին իրանց գործը։

Մեծերը՝ մի-մի քաղլակ վազան տակը դրած, սուր դանակները ձեռքներին՝ կտրտում էին խաղողի հասած ճութերը և գցում մէջը. փոքրերը այդ քաղլակները տանում էին մեծ կթոցներն ածում, իսկ երիտասարդները կթոցները շալակում էին տանում ածում կիսատակառի վրայի չանը։

Ամբողջ այգին իր կեանքից զրկւելիս մի նոր կեանք էր ստացել։ Ձայն էր՝ որ լսւում էր ամեն մի թուփի տակից, ամեն մի ծառի վրայից։ Մէկը կանչում էր՝—քաղլակները լցւել են, շուտ արէք կթոցը բերէք։

Մանր երեխէքը փոքրիկ թռչունների պէս անդադար դէս ու դէն էին ընկնում, ամեն ճութից մի հատիկ պոկում, համը տեսնում, և որովհետև էլ ոչ ախորժակ ունէին և ոչ փորներումը տեղ, միւս մրգեղէնների ծառերի վրայ էին մագլցում, կերածը մարսում, նրանց հասն էլ տեսնում։ Մէկը բարձրանում էր խնձորենու վրայ, միւսը՝ սերկևիլի, երրորդը՝ տանձենու. աւելի ճարպիկները բարձրա-

նում էին ընկուզենու վրայ և կապկի պէս ճղնէ ճիւղ ոստոստելով՝ ուզում էին միմեանց բռնել։

Բարեսիրտ պառաւները ամենքն էլ ժպտում էին տղայոց երեսին, ամենքն էլ ձեռքով անում, կանչում երեխաներին, երբեմն էլ, կարծես գիտութեամբ, տերևների տակին թաք էին կենում, մէկ էլ յանկարծ երեսները բաց անում, երեխաներին «ճիկ» անում։

Ճաշի ժամանակը հասաւ։ Ամենքն էլ հաւաքուեցին մեծ ընկուզենու տակը. հացը, խաշլամէն փռեցին կանաչ խոտի վրայ և երկարումէկ բոլորուեցին նրա շուրջը։ Բայց ո՞վ ունէր ախորժակ հաց ուտելու։ Ծիծաղ, խնդութիւն, զրւարճութիւն, հանաքներ անել—այս էր նրանց ճաշը։

Ճաշից յետոյ էլի մի քիչ քաղեցին և երեկոյին բոլոր քաղւորները մի-մի քաղլակ խաղողով լցրին իրանց հետ տարան։ Այսպէս շարունակւեց երեք-չորս օր, և ամեն օր մի նոր ուրախութիւն էին սարքում...

Ա Շ Ո Ւ Ն

Աշունը եկաւ թափեցաւ սաղարթ,
Էլ մի փնտրիլ դու մանուշակ ու վարդ.
Բնութիւնը տխուր, պարտէզը տրտում,
Ջմեռւայ հոգսն է մարդոցը սրտում։
Երեխան փակւած մենակ սենեակում՝
Պատուհանիցը պարտէզ է նայում,
Միտքը բերում է գարնան օրերը։
Մարգերի վրայ զրւարթ խաղերը.
Մի տրտմիլ, տղայ թող անցնի մարտը,
Նորից կըբացւին նարգիզն ու վարդը,
Նորից սոխակը պիտի գայ հանդէս,
Նորից խաղալու դու կերթաս պարտէզ։

Ն Ա Հ Ա Ս Ա Ր Դ

Նաւասարդը ոչ կըպատմւի, ոչ կըգրւի, հապա պէտք է տեսնել, շօշափել քնքշութիւնը, ճաշակել քաղցրութիւնը։ Երանի՛ այն հային, որ Նաւասարդի օրը իր օջախումը կըգտնւի, երանի՛ նրան, որ Նաւասարդի անհուն քաղցրութիւնը, սրտաշարժ տեսարանը վայելելու բախտաւոր և երջանիկ րոպէ է ունեցել իր կեանքումը։

Ընթերցո՛ղ, եթէ հայրենագրօս, գիւղագրօս մարդ ես, գնա՛նք հետս հայի գիւղ, բայց այնպիսի գիւղ որի բնակիչները խակ Գեանջու թոռներ լինին։ Դէհ, շտապի՛ր, որ ուրբաթ երեկոյին գիւղում լինինք։ Տես, շաբաթապասին, ուրբաթ օր է, և գիւղում մօտ տասը տաւար է մորթած. այնպիսի պարարտ մսեր, որ ճարպից տրաքում են։ Ամեն մարդ էլ կրում է միս, արտալա և տանում իր տուն. վայր դրեց խօնչան, սինին, մսերը դարսեց, իհարկէ տան մեծը, որ շնորհքով կտորել գիտէ, սկսեց դարսել՝ խորովածացուն առանձին, եփելուն առանձին։ Արդէն մթնել է. բերել տըւաւ չարխի ունկնաւոր պղինձը, մէջը մի շարք միս դարսեց, վրայից ձաւար (կորկոտ) շաղ տըւաւ, հետն էլ աղը, էլի գեր միս կամ արտալի ծուծ, կրկին ձաւար ու աղ ցանեց։ Դռանը թոնիրը վառւում է. ցախը մի կողմից են դարսում, որ շեղջ կանգնի. իսկ երեխայքը՝ տղայ, աղջիկ, զարթուն, թոնրի չորս կողմը բռնած՝ ծիծաղում, խընդում են, որ աճա ամին՝ հայրը՝ պղինձը կըդնի մէջը, որ եփւի։ Բերին պղինձը՝ երկու հոգի ունկներից բռնած։

Նանը գօտիկը յետ արեց, պղնձի ունկից կապեց, մի ուրիշն էլ միւս ունկից։ Կիսավառ ածխակոթերը հանեցին բակն ածեցին, կարմիր շեղջը յետ-յետ արին, պղինձը կամաց կախեցին, դրին մէջը։ Առաջ մի չափ ջուր ածեցին, յետոյ երկու,

երեք՝ մինչև լցւեց, կրակքաշով շեղջը պղնձի չորս կողմը պատեցին, պղինձը թաղեցին կրակի մէջ։ Թոնրի բերանին խուփ դրին, որ բան չընկնի, իրանք միամիտ տուն գնացին՝ միւս օրւայ պատրաստուքիւնը տեսնելու։

Միւս առաւօտը տան մեծը բազմած էր սիրուցի վրայ ուստրով, դստրով, մեծով, փոքրով, եղբայրներով, զաւակներով։ Դեռ բերանները մանանայ չեն դրել, նանը թոնրի կշտին է, կերակուրը չի հանել. իսկ թոնրի մեծ պղինձը հանելը հեշտ բան չէ. երկու ուժեղ տղայք՝ ամեն մինը մի սահանի կեռ ձգում են պղնձի ունկը և կամաց-կամաց թոնրի միջից բարձրացնում։ Նանը կողքներին կանգնած՝ սիրտ է տալիս՝ «Քաշի կեա՛»։ Ահա այդ պատճառով այդ կերակրի անունը կպցրել են «քաշկեայ»—իբր՝ քաշի գայ։ Դեռ քաշկեան դռանն է, նրա անուշ հոտն ընկել է տուն և անուտիլ կըշտացրել։ Շատ տեղ սովորոյթ ունին՝ հարիսա են եփում. բայց հարիսան ինչ կարող է քաշկեայի պատւական համն ու հոտն ունենալ։

Լաւ, սուս, նանը եկաւ տուն. ամեն մէկը իր պասը քաշկեայով պէտք է բանայ։ Բաժիններըը ածելուց յետոյ՝ առաջ պապն ու տատը մի-մի գդալ վերցնում են պըրնկներին տանում—տեսած, տեսած, բարձրաձայն կանչում,—«Ա՛յ խոխէք, ա՛յ բալէք, քաշկեայի զօրութիւնը ձեզ պահապան ըլի, ծիծաղ երեսով, ուրախ սրտով մէկ էլ քաշկեայի ռաստ կեանք»։

Տատն էլ խօնչայի մէջ բերում է, իւրաքանչիւրի բաժինը տալիս, գլխին, ճակտին կամ թշին համբուրում և ասում. «քոյդը պառաւիս, բալա ջան, իմ տարսը հասնես, ծլես, ծաղկես, շիւեր առնես»։ Նրանք էլ նանի ստինքն են համբուրում և մրգի բաժինն առնում։ Պապը կամ տան մեծ հայրը՝ գինու բաժակը ձեռքն առնելով՝ ասում է. «Ա՛յ տղէք, ա՛յ բալէք, շնորհաւոր Նաւասարդ ըլի,

հաստատ մնայ մեր ազգի համար. սա մեր պապերի ազիզ օրն ա ըլել. մեզ վրայ պարտք են դրել՝ քանի շունչ ունինք, կատարենք, էս սովորութիւնը մեր մտէն չըգցենք. մեր հայութիւնն էլ Նավասարդի վրայ ա, բալէն կծիմ, դուք էլ անմոռ պահեցէք՝ թէկուզ հարուստ ըլիք. դէ, ձեզ մատաղ ըլիմ, մեր պապերի, սուրբ հայրապետների օրհնանքը ձեզ վրայ կենայ. ամէն»։

—Շնորհաւոր Նաւասարդ ըլի՛, ազիզ, աջողակ տարի ըլի,—ձայն տըւին, կրկնեցին միասին տղայ ու աղջիկ և հարսներից սկսած՝ եկան համբուրեցին պապի ու տատի ձեռքերը։

ԱՇՆԱՆ ՏԵՐԵՒՆԵՐ

Աշնան ըսկզբին մի բարակ քամի
Սարիցը եկաւ դաշտերը իջաւ.
Վըսսաց, փըսփըսաց մի բան ամենքին
Ու անցաւ գնաց, անտառը մտաւ։

Ծառը չորացաւ, հողը ցամաքեց,
Այստեղ ու այնտեղ բացւեցին ճեղքեր,
Անտառը դողաց ու վախից իսկոյն
Դեղին գոյն առան կանաչ տերևներ։

Շատ օր չէր անցել, ահա նոյն քամին
Սըլսլաց նորից, մտաւ մերկ դաշտեր,
Բերաւ, հաւաքեց, դէպի վեր քշեց
Աւազն ու փոշին ու չորցած խոտեր։

Մրտաւ անտառը, շաղհարեց ծառեր,
Թափեց տերևը, աչ ու ձախ փրռեց,
Փըչեց ու ձգեց թէ սար և թէ ձոր
Ու իրանց բուսած տեղիցը զըրկեց։

Ձ Մ Ե Ռ

Ձմեռը գալիս է թէ չէ՝ նրա առաջին ամեն ինչ դողդողում, սարսռում է։ Գթառատ ձիւնը միայն մերկացած գետնին օգնութիւն է հասնում, իր հաստ վերմակով նրան ծածկում և այդպէս պաշտպանում նրան ձմեռուայ դառնաշունչ ցրտերից։

Կրակը դառնում է մի շատ սիրելի առարկայ և ամեն բանից աւելի հարկաւոր։ Ով որ դրսից տուն է մտնում, ամենից առաջ կրակին է բարևում։

Ձքաւորների ապրուստը տարւայ ոչ մի եղանակին այնքան դժւար չի լինում, ինչպէս ձմեռը։ Մէկի վառելիքն է հատնում, միւսի ուտելիքը, մէկը տաք հագնելիք չունի, միւսը ապահով քնակարան։ Ծուրսին ու մաղալը թէպէտ տաքացնում են դրանց, բայց շատ անգամ էլ իրանց ածխահոտով գլխները շարունակ ցաւացնում են։ Այո, ածուխի կապոյտ ծխից պէտք է շատ ու շատ զգոյշ կենալ։ Քանի-քանի մարդիկ են մեռել նրանից, քանի անգամ ամբողջ ընտանիքով, մի գիշերւայ մէջ, քնած ժամանակը թմրել, կոտորւել են։ Ածուխի կապոյտ ծուխը մարդասպան է, երբ ամեն կողմից փակւած տեղ է գտնւում։

Ձմեռւայ եղանակին պէտք է ունևորները յիշեն չունևորներին և նրանց օգնեն՝ ինչով որ կարող են։

Պինդ ձմեռը վայրենի անասուններին աւելի է ձեաս տալիս, քան թէ մարդկանցը. գիւղացիներն աւելի են նեղութիւն քաշում քան թէ քաղաքացիք. բայց եթէ գիւղացիք մի փոքր կրթւած ու աչքաբաց լինին, ձմեռը նրանց ոչ մի ձեաս չի տալ և նոյնքան օգտակար կըլինի, ինչքան միւս եղանակները։

Թէպէտ ձմեռը համարւում է երեք ամիս, բայց լեռնային տեղերում մինչև հինգ ամիս պինդ ձմեռ է լինում։

Ձմեռւայ ամիսներն են—դեկտեմբեր, յունւար և փետրւար։

ԳՆԱ, ՑՈՒՐՏ ՁՄԵՌ...

Գնա, ցուրտ ձմեռ, խստասիրտ ծերուկ,
Ռո մէջ չըկայ սէր, չկայ զգացմունք.
Ռո մէջ չկայ կեանք, կեանքի հրապոյր,
Ցնծութիւն, տարփանք, ծիծաղ ու համբոյր։

Աշխարհ ես մտնում դու արհաւիրքով,
Աշխարհ կաշկանդում քո ցուրտ կապանքով.
Նայւածքդ դաժան, չունչդ մահաբեր
Մարդկանց, բնութեան բերում են աւեր...
Լռում է գետակ անտառի խորքում,
Մարում սէր, փափագ և՛ մարդու սրտում.
Ծաղիկն է թօշնում բլուրի կրծքին...
Ժպիտը սառչում մարդու շրթունքին...

Գնա, ցուրտ ձմեռ, արի, ջերմ գարուն.
Բեր մեզ կեանք ու սէր, յոյս, եռանդ, աւիւն,
Բեր մեզ դու պայծառ արև ու աստղեր,
Յոյսերի աշխարհ, գարնան երազներ...
Բեր ծիծաղ անհոգ, անհոգ րոպէներ,
Ծանդ, յոյզ ու բորբոք, սիրաճունչ երգեր.
Բեր անուշ զեփիւռ, անձրև զովարար,
Կարկաչիւն աղբիւր, սար ու դաշտ գալար...

Ջ Ի Ւ Ն

«Ա՜խ, ինչո՞ւ, ինչո՞ւ կուգայ պաղ ձիւնը,
Նորից ամիսներ պիտ մնամ տունը.
Տեսնելու չեմ ես կանաչ ծառ, առօտ.
Հոտոտ ծաղիկին պիտ մնամ կարօտ»։
—Ձիւնը որ կուգայ երկնքէն ի վար,
Իմացիր մեծ բախտ է մարդուս համար.
Վերմակի պէս տաք կըծածկէ գետին,
Նա հողին կուտայ հիւթ, պարարտութիւն,
Դաշտին ու արտին մեծ առատութիւն,
Մի տրտնջար, մարդ, դու բնութենէն.
Թէ տաք և թէ ցուրտ մեզ միշտ օգուտ են։

* *
*

ԶԼԳԻՏԵՄ ԻՆՉՈ՞Ւ

Զլգիտեմ՝ ինչո՞ւ ձմեռւայ օրը
Յիշում եմ ես միշտ իմ խեղճ եղբօրը,
Ասում եմ՝ արդեօք չունի՞ նա կարիք.—
Հաց, միս, եղ ու փայտ, ունի՞ նա մուշտակ,
Ամո՞ւր է տունը, կտուրը չի՞ ծակ...
Ու այսպէս ես միշտ ձմեռւայ օրը
Միտս եմ բերում իմ խեղճ եղբօրը։

ՁՄԵՌԸ ԵՐԵՒԱՆԱՅ ԳԻՒՂԵՐՈՒՄ

Բարիկենդան էր։ Ձիւնը եկել, դիզւել, սար ու ձոր բռնել էր։ Պարզկայ գիշերը այնպէս էր գետինը սառցրել, որ ամեն մէկ ոտը կոխելիս՝ հազար տեղից տրաքտրաքում, ճռճռում, ճքճքում էր ու մարդի մարմինը սրսռացնում։

Ամեն մէկ ծառի ճիւղերից, ամեն մէկ կտրից հազար տեսակ սառցի լուլա, հազար տեսակ ձնի

քուլա կախ էր էլել ու բիզ-բիզ իրար վրայ սառել։

Հէնց գիտենաս սար ու ձոր կամ նոր էր ծաղկել, կամ նոր ծերացել, մահւան դուռն ընկել, շունչն էր փնացել, որ տայ ու աշխարքին մնաս բարով ասի։

Թռչուն, գազան, անասուն, սողուն՝ որը փետացել, այստեղ, այնտեղ վայր էր ընկել, որն էլ վաղուց, ամսով առաջ, բունը մտել. ձայնը կտրել, պաշարը վայելում, գարնան գալուն սպասում։

Գետերի, առուների երեսները սառոյցը մէկ գազ եկել, հաստացել, իրար վրայ դիզւել, այնպէս էր ջրի, աղբիւրի բերնին հուպ տւել, որ մօտնեբին կանգնողը միմիայն նրանց խուլ ձայնն էր լսում, որ սառցի տակին տխուր, տրտում քլքլում էր ու էլ ետ այստեղ, այնտեղ կամաց-կամաց ձայնը կտրում, պապանձւում, սառչում։

Այս առաւօտ արեգակը որ իր գլուխը բարձրացրեց ու աչքն աշխարհի վրայ գցեց, շողքը սարերի գագաթին, դաշտերի երեսին այնպէս էր պէծին-պէծին տալիս, պսպղում, փայլում ու սառցի, ձնի հետ խաղում, ծիծաղում, կանաչ ու կարմրին տալիս, որ հէնց իմանաս, թէ ալմաստ, զումրուխտ եաղութ ու հազար տեսակ անգին քարեր լինէին դաշտերի, սարերի գլխին, երեսին, լանջին փռւած։

Սարերի սառը բուքը, դաշտերի դառնաշունչ քամին այնպէս էր մէյդան բաց արել, գոռում, փչում, հոսան անում, ձնի թեփը իրար գլխով տալիս, որ ճամբորդի քիթ ու պռունկը կպցնում, ճաքացնում էր, երեսը պատռում, գլխին, երեսին հազար անգամ խփում, աչք ու բերան լցնում, շատին կամ ձորերն էր գցում, խեղդում կամ քարէքար տալիս։

Այսպէս մէկ խիստ ձմեռւան օրի լոյսն ու մութը որ բաժանւեց, աղօթարանը բացւեց, մեր գիւղացիք քնից վեր կացան, տան երթիկները բաց արին, երեսները լւացին, մէկ երկու խաչ հանեցին,

քարի լոյս ասեցին իրար, մանր երեխանցը ծածկեցին, ու ամեն մարդ գնաց իր բանին։

Մեծ մարդիկը միրուքները սանդրելով, պառաւ կնանիքը՝ չարսաւը կռնատակներին՝ կամաց-կամաց դուրս եկան, գնացին ժամ։

Երիտասարդներն էլ՝ ամառւայ պէս խոտ հընձելու, կալ կասելու, այգի փորելու, էտելու, թաղելու, դարման կրելու հոգս չունենալով՝ աչքերը ճմռեցին, ճըլմկոտալով ու քնաթաթախ մտան գոմը, որ տաւարին, ձիանոնցը խոտ տան, տակները սըրբեն, ջուրը տանեն, ձիանը թիմարեն ու հետը խաղ ասելով՝ էլ ետ կապեն ու գնան տուն։

Յարգևոր հարսները՝ ասղարոյր, ոսկեկար օշմաղը մինչև քթների կէսը խոր գցած, քօղ ու լաչակի ծայրը մինչև աչքերի տակը խոր քաշած, որ էլ երեսները չէր երևում, մէկ դարայի կամ ղադակ մինթանա հագներին՝ մով կամ կտաւի շապկով զարդարած, մէկ մեծ գօտկով մէջքները չորս տակ, հինգ տակ կապած—թուչնիկի պէս կուպ-կուպ վեր թռան, երեսները մի քիչ ջուր քսեցին, փէշով սրբեցին, ու որն սկսեց տունն աւլել, որը դուռը սրբել, որն էլ չախմախին տրաւ, կրակ արաւ, որ թոնիրը վառի, կերակուր պատրաստի։

Տան նորահարսը, աղջկէքն էլ գլխները սանդրեցին, մազները հիւսած, քամակներին գցած, կարմրագագաթ մորթէ գդակը գլխներին՝ ականջները կապեցին, դաստամանն ուսներին գցեցին, կուժը վրան դրին, բերանը կալան ու գնացին, որ տան համար ջուր բերեն. ջրի վրայ էլ երկար ժամանակ իրար հետ խօսելով, ծիծաղելով, մէկն իրանց տուն գնաց, միւսն իրանց։

Արեգակի շողքն ընկաւ տունը։ Բորեազը մէկ կողմից էր շւացնում, բզզում, հոսանը միւս կողմից վզզում, ձիւնը պատուհաններովն ու երթիկովը ներս ածում, աչք ու ականջ լցնում։ Երեխեքն էլ քնաթաթախ վեր կացան, թոնրի չորս կողմը բոլորւած, շարւած ու դեռ անլըւայ, ոտները քարին, գետնին էին ծեծում, մօրները խփում, որ հաց առնեն ուտեն։ Աթարի սև, թանձր ծուխը դուռն ու երթիկը կալել, տունը մխի ծով էր շինել, այնպէս որ մարդի աչքը առաջը չէր կարող ջոկի։

Երեխաների սուգն ու շիւանը գլուխ էր տանում։ Որն օրօրոցումն էր լալիս, որը դեռ վերմակի տակին աչք ու բերանը ծխով լիքը՝ գոռում, հարայ տալիս, հաց ուզում, որն էլ տրւած հացովը հերիք չէր, էլի ժնգժնգում, ուզում էր, որ էլի տան, որ ձայնը կորի։

Խեղճ տանտիկինը չէր իմանում, թէ ձեռը ո՞րի բերնին դնի, ո՞րի աչքը կշտացնի, ու իր բերանն ու աչքը հօ շատ բաց ու խուփ անելով՝ համարեա թէ մեռել էր։

Վերջապէս Աստծու ողորմութիւնը հասաւ. ծուխը յետ քաշւեց, քամին դադարեց, ջրի գնացողները եկան, տղէքն էլ հաւաքւեցին։ Արեգակը մէկ նիզակաչափ եկաւ բարձրացաւ, բայց դեռ ժամաւորները չեկած, «ողորմի Աստւած» չըլսած՝ ո՞վ էր կարող բերանը նշխարք դնել…

Զ Մ Ե Ռ Ն Է

Զմեռն է, ձմեռ, սիրուն երեխէք,
Զմեռն է, և դուք դուք դողում, մրսում էք.
Բայց դուք մենակ չէք, ես էլ եմ մրսում,
Ես էլ եմ ձեզ պէս դողում, սարսռում։
Բայց գիտէ՞ք արդեօք ինչ է ձմեռը,
Այդ պատկառելի համարւած ծերը.
Ո՛հ, մի հարցնէք, դուք կըսարսափէք,
Երբ դրա բարքը պատմեմ ձեզ մէկ-մէկ։
Այդ անիրաւը ուր ոտք է դնում,

Առանց խղճալու մահ է տարածում.
Երեսին առած սպիտակ դիմակ՝
Մեզնից ծածկում է սև դէմքն այլանդակ։
Շատ ժամանակ չէ, ինչ որ դա եկաւ,
Եւ դուք լաւ տեսաք, թէ ինչեր արաւ.
Դըրա երկիւղից ջուրը քար կտրեց,
Քչքըչան առուն լուեց, պապանձուեց,
Դալար բոյսերը սառան փէտացան,
Նախշուն հաւքերը թռան հեռացան,
Բայց էլի շատին իր ճանկը ձըգեց,
Բուք-բորան արաւ, բոլորին խեղդեց,
Սիրուն վարդենու թուփը չորցրեց,
Սոխակի լեզուն տակիցը կտրեց,
Ո՛վ դու կեղծաւոր փարիսեցի ծեր,
Դու ունիս, գիտենք, շողոքորթներ էլ,
Որոնք բորանըդ, թիփիդ չեն տեսնում,
Ոչ բուք-բորեաղիդ տակ ցրտահարւում.
Սառցեղէն սրտին ի՞նչ բուք, ի՞նչ բորան
Կարէ ներգործել, կամ ի՞նչ ցուրտ, ի՞նչ բան.
Նըրանք սըղդում են, ինչպէս անգգայ,
Ձիւնով պատանած զոհերիդ վրայ,
Եւ դու, երեսպաշտ, լաւ ես որոշում
Հարըստին խեղճից և ջոկ-ջոկ որսում,
Մէկին տալիս ես կճեայ վառարան,
Միւսին և ոչ մի խեցեայ կրակարան.
Մէկին թանգագին մազեղէն մուշտակ,
Միւսին և ոչ մի ցնցոտի մաշկեակ.
Մէկին տալիս ես մի սիրտ սառցեղէն,
Միւսի թոքերը հանում ես տեղէն.
Մէկին տալիս ես միջոց զւարճութեան,
Միւսին դառն օրեր, օրեր հեծութեան.
Մէկին տանում ես դէպի մոլութիւն։
Իսկ միւսին դէպի դառն սուրկութիւն.
Մէկին կաշառով, միւսին երկիւղով
Թակարդ ես ձգում դիւական ցանցով...

Անմեղ պատանիք, սիրուն երեխէք,
Փոքը ինչ հեռացայ, դուք ինձ կընկերէք.
Եթէ իմանաք, թէ այս րոպէիս
Ինչ պատկերներ են առաջըս գալիս...
Տեսե՞լ էք արդեօք խախուտ խըրճիթներ,
Բոբիկ, գլխաբաց, տկլոր մանուկներ,
Դատարկ ամբարներ, հորեր, մարաքներ,
Աղի պէս լիզած երկայն մսուրներ,
Աչքերը պլըշած՝ քաղցած տաւարներ,
Սիրտ պատռտորող մայեր, բառաչներ...
Ջրաղաց չըկայ,—ջուրը սառել է.
Ճանապարհ չըկայ,—ձիւնը կապել է։
Թէ մարդ, թէ տաւար միակերպ քաղցած՝
Ողբում, լալիս են մահւան դուռն ընկած...
Օրը կարճացել, գիշերն երկարել,
Լոյսը նըւաճել, խաւարն է տիրել,
Երկինք ամպապատ, գետինքը սառած,
Գարունը հեռու, ցուրտը կատաղած—
Այսպէս է ահա սոսկալի ձմռան
Ալիքով ծածկած պատկերը դաժան...
Ցուրտ է, սաստիկ ցուրտ. սիրուն երեխէք.
Եթէ ինձ նման դուք էլ մրսում էք,
Եկէք միասին մի հնար գտնենք,
Ձմռան ճանկերից մեր գլուխն ազատենք.
Դուք ձեր մանկական անարատ մտքով,
Ես իմ հասակիս բազմամեայ փորձով,
Եթէ կամենանք, խելք խելքի կըտանք
Եւ ինչից ասես կրակ կըստանանք,
Կրակ լուսատու, պայծառ, անստուեր,
Որ տաքացնէ սառցեղէն սրտեր,
Որ կենդանացնէ գօսացած ձեռներ,
Որ հալեցնէ սառցապատ լեռներ.
Օրինակ առնենք մեզ կիզ-ապակին*)
Եւ մենք կըհասնենք մեր նպատակին։

*) Եթէ մենք ևս միանանք այնպէս, ինչպէս արևի ճառագայթները կիզապակու մէջ, նրա նման կրակ կարձակենք, որով կըտաքանանք ամենքս։

Ա Ղ Ջ Ա Տ Կ Ի Ն

Յուրտը փչեց, ձմեռ սաստիկ,
Ձիւնը ծածկեց գետինը,
Ամենայն մարդ մտաւ իր տունն՝
Պատըսպարւիլ ցըրտից ցըրտից։
Ժամի դռանը դողդողալով
Կանգնած է մի աղքատ կին.
Նըրա հանդերձ պատառ-պատառ,
Ձունի շապիկ իր հագին։
Անհամարձակ նա իր ձեռքը
Պարզում է անցկացողին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։
Ձեզ, սիրելիք, ասեմ ով էր
Այս խղճալի աղքատը՝
Այն ցրտումը ոտաբոբիկ
Կանգնած ժամի դռանը։
Շատ ժամանակ դեռ չէ անցել,
Երբ նա փառքով ու պատուով
Ման էր գալիս փողոցներում
Իր սեփական կառքերով.
Այժմ վախով նա իր ձեռքը
Պարզում է անցկացողին.
«Ողորմութիւն արէք, պարոն։
Անտուն, անտէր աղքատին»։
Ամենայն օր նրա դռանը
Կանգնած էին շատ կարքեր.
Միշտ հացկերոյթ, ընթրիք, գինի,
Նըւագարան ու տաղեր.
Ամենայն ոք ցանկանում էր
Լինել նրան բարեկամ։

Այժմ զըրկւած ամեն բանից՝
Ձունի անգամ հացի գին.
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։
Ամենայն օր իր մարմինը
Անուշահոտ ջրերով
Լըւանում էր, մազը սանրում
Կըրիայի նուրբ սանրով,
Նա հագնում էր բեհեզ, կերպաս,
Դիպակ, թաւիշ թանգագին
Նա չըգիտէր ինչ ասել է
Կարօտութիւնն արծաթին։
Այժմ անլըւա, մազերն արձակ,
Ձունի հագուստ, թէև հին.
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։
Ժամի դռնում նա կանգնած է
Աչքերը կոր, վիզը ճուկ,
Նրա նախկին բարեկամքը
Ձեն ասում նրան՝ «Խըղճուկ,
Ե՛կ դու մեզ մօտ, մենք կամոքենք
Քո վիճակի դառնութիւն,
Կըթուլացնենք ճակատագրիդ
Խիստ հարւածի սաստկութիւն»։
Նա տանում է տառապելով
Այս սոսկալի վշտերին.
«Ողորմութիւն արէք, պարոն
Անտուն, անտէր աղքատին»։

«ՓՇՈՒՐՄԸ ԽԱՀ»

Յունուարի մի ցուրտ, շատ ցուրտ օր էր. թքէիր՝ գետին չէր ընկնիլ։ Սպիտակ էր գետինը, սպիտակ էին մանաւանդ փողոցների և պարտէզների ծառերը. ձիւնի միատեսակ ճերմակ սաւանը փռւած էր ամեն տեղ, պատել էր ամեն ինչ։ Գիշերը խիստ պարզկայ էր, և այժմ սառած ձիւնը անցուդարձ անողների ոտների տակ այնպէս անախորժ ճռճռոց էր հանում, որ մարդու մարմինը փշաքաղւում էր։ Արև չկար. մառախլապատ էր երկինքը. սաստիկ ցրտից յանկարծ խտացած գոլորշիները բարակ եղեամներ դարձած՝ խաղում էին թռչկոտում կարից կտուր, բակից բակ՝ պաշար թողնելու. նրանք նստոտել էին այս ու այն պատի վրայ, այս ու այն ծառի ճիւղերին լուռ, խղճուկ, կծկւած սաստիկ ցուրտը սրանց էլ էր նեղել։ Ամեն մի անկիւնից, ամեն մի բնից, ամեն մի սաքուից, ուր որ կենդանի շունչ կար՝ ծուխ էր բարձրանում. մարդիկ կուռւմ էին ցրտի դէմ, ինչով և ինչպէս կարող էին՝ տաքանում էին։

Թէև արդէն առաւօտ էր, բայց Ա...ի փողոցները դատարկ էին և անկենդան, ով էր գժւել այս կատաղի ցրտին գլուխ դուրս հանել տնից. հազիւ երբեմն փողոցների այս ու այն ծայրում աւերների պէս երևում էին մուշտակների, եափունջիների կամ վերարկուների մէջ կոլորւած մարդիկ՝ քիթ ու պռունգը փաթաթած, եղեամով ծածկւած. սրանք էլ, ով գիտէ, հրպիսի անհրաժեշտ կարիքից ստիպւած էին թողել իրանց փափուկ բնակարանները, այն էլ ոչ թէ քայլում էին, այլ ակամայից վազում էին համարեա հևալով։

Այդ ժամին փողոցի հեռաւոր ծայրում յանկարծ անսպասելի կերպով երևացին երկու փոքրիկ մանուկներ՝ եօթը և տասը տարեկան։ Խեղճերն այնքան վախտ էին, որ ասես գերեզմանից դուրս քաշած մեռելներ լինէին. դժւար էր առանց սոսկումի նայել նրանց վրայ։ Երկուսն էլ գլխաբաց, գըզգըզած մազերով, որոնց վրայ առաւօրէն թափւել էին եղեամների թերթիկներ. յօնքերի և աչքերի թերթերուկների վրայ նոյնպէս նստել էին եղեամներ, տալով մանուկներին մի անօրինակ, մի խղճալի տեսք։ Նրանց մարմինների մերկութիւնը հազիւ հազ ծածկւել էր ինչոր կախկխւած ծւենների։ Անհնարին էր նոյն-իսկ որոշել, թէ ինչ է նրանց հագինը, կամ ո՞րն է վարտիքը, շապիկը կամ արխալուխը։ Տեղացի չէին նրանք, այլ գաղթականներ հեռու տեղից. տարաբախտ, արիւնոտ երկրից էին եկել, անհայր, անմայր, անտէր... կատարեալ որբիկներ... Սրի և կրակի ճարակ դարձած իրանց խեղճ հայրենիքի մասին այս փոքրիկ թշւառները շատ քիչ գիտէին, կամ գուցէ և շատ բան գիտէին, բայց քիչ էին պատմում։

Խեղճերը գիշերները քնում են մի աստւածաշէն գոմում. այնտեղ շատ անասուններ կան, տաք է... Առաջ փորձեցին մեծ գոմէշների մսուրի մէջ քնել, բայց նրանք այս տարօրինակ մարմինները տեսնելով՝ խրտնեցին, փնչացրին. թշւառները վախեցան և փախան մտան մսուրը մի փոքրիկ, խղճուկ հորթիկի, որ նոյնպէս նիհար էր, նոյնպէս տխուր, նոյնպէս թշւառ՝ որպէս երկու որբիկները։ Խեղճի մայրը հէնց նոր էր մեռել. նրան ծիծ տւող չըկար, ուստի կերակրում էին չոր խոտով. բայց նա դեռ ուտել չէր կարողանում, սովոր չէր. մէկմէկ ծիլ վերցնում էր, ծամըլմորում և վէր ածում. նա միշտ սոված էր, միշտ էլ տխուր, դունչը կախած, օր աւուր նիհարում էր ու նիհարում։

«Թշւառին թշւառն է միշտ մխիթար». որբ հորթուկը սիրով հիւրընկալեց որբ մանուկներին. նրանք բարեկամացան և սիրեցին իրար. և երբ գիշերները երկու որբիկները ճիտ-ճիտ արած իրար պինդ խոտած՝ քնում էին մսուրի մէջ, հորթուկն էլ իր փոքրիկ դունչը դնում էր նոյն մսուրի շըրթին, քնում էր, իր տաք շունչը մանուկների երեսին փչելով։ Գոհ էին մանուկները. միայն փոքրիկ որբը գիշերները շուտ-շուտ վեր էր թռչում, ճըւում, ճչում լաց լինում, ապա զարթնելով՝ գանգատւում էր մեծին, թէ գալիս են... տանում են... մորթում են... Գոմի խաւարի մէջ սարսափում էր դևերից, չարքերից։ Եղբայրն այդ ժամանակ աւելի պինդ էր գրկում նրան, հանգստացնում էր, և նրանք կրկին քնում էին։

Լաւ էր գոմը նրանց համար, շատ լաւ, տաք էր... Առաւօտները վաղ զարթնում էին և նրանց վայելած հիւրընկալութեան փոխարէն նախ աւելում, մաքրում, չորացնում էին հորթուկի տակը, գուրգուրում էին նրան, ապա կրում թափում էին մնացած անասունների աղբը և դուրս էին վազում՝ փողոցներում թափառելու... հաց հաւաքելու... Այսպէս էին ապրում նրանք և գոհ էին. «զուլում» չկար։

Սրանից առաջ էլ համարեա ամեն օր նրանք շրջում էին փողոցներում. տեղացիք տեսնում էին նրանց նոյն ցնցոտիների մէջ, նոյնպէս ոտաբոբիկ, նոյնպէս գլխաբաց, գզգզած, որպէս այսօր, և ոչ ոքի խիղճը չէր վրդովւում։ Դէ եղանակը տաք էր, «եթիմն էլ աներես կըլինի, հաց հաւաքելով կապրեն էլի», մտածում էին նրանք և խիղճը հանգստացնում։ Բայց այսօր... Որբերը դարձեալ փողոցումն են։ Այս լաւ չէ, անտանելի ցուրտ է. օձի ճուտն էլ այս ցրտին թող դրսում չըմնայ, մեղք է. մտածում էին անցորդները... ախր այս ինչպէս են բոբիկ, դողալով վազում և ինչ կարիք կար այսօր էլ անպատճառ դուրս գալ... Ա՛խ, աներես լակոտները...

Վա՛յ, վա՛յ, սրանց մտիկ տուր, սրանց,— ասեց մի մուշտակաւոր պարարտ մարմին իր հետ գնացողին՝ երկու վազող որբերի վրայ ցոյց տալով. օֆ, հոգիս մղկտաց, կրակ մաղւեց գլխիս, կրակ... ինչպէս են դողում, Աստւած իմ. ախր այս ցրտին ծուր էին դուրս գալիս իրանց բնից... Եւ նա ի սրտէ ցանկացաւ, որ այդ որբերն այսօր գոնէ դուրս եկած չըլինէին կամ գոնէ ինքը չըտեսնէր նրանց դողդողալիս. հանաք չէ, մարդու հացը հարամ եղաւ...—Եթէ ճաշին միտս ընկնին՝ դժւարութեամբ կըճաշեմ,—մտածեց նա և դէմքը կնճռեց։

Յօսակիցը հասկացաւ ընկերոջ խղճին հասած վիրաւորանքը և կամեցաւ նրան դուրս հանել այդ անախորժ վիճակից։

—Է՜հ, իզուր ես այդքան անհանգիստ լինում նրանց մասին, բարեկամ. նրանք ոսկոր են, կըտանեն. ա՛յ, այլ բան է, Աստւած չանէ, եթէ իմ և քո երեխաներին մի այդպիսի բան պատահի. գիտես, իմ Օնիկին որ եօրղանով էլ հիմա դուրս հանես՝ տեղն ու տեղը կըսառի, հաւատա կըսառի. սրանց բանն ուրիշ է, սրանք կըտանեն...

Փաստաբանութիւնը խելացի էր. պարարտ մարմինն ու յօսակիցն անցան...

Իսկ որբե՞րը... Նրանք շարունակեցին առաջ գնալ փողոցով և ամենևին չէին էլ զարմանում, որ իրանք այս անտանելի ցրտին փողոցումն են, մինչդեռ իրանց հասակակից ոչ մի ուրիշ երեխայ չի երևում. նրանք մի բան միայն գիտէին, որ՝ թէև սաստիկ ցուրտ է, թէև իրանք էլ մերկ են, ոտաբոբիկ, գլխաբաց, դողդողում են, բայց և այնպէս պէտք է դռներն ընկնին, որ հաց ճարեն, շատ են սոված, երեկ ճաշից սկսած բան չեն կերել...

—Վա՛խ, Գալօ, էս իմաձ ցուրտ ա, եաման,— ասեց փոքրիկը ձեռները իր կապտած շրթունքներին մօտեցնելով և ոտները խշխշացող ձիւնի վրայ վերև-ներքև անելով։

—Ա՜խ, Մրտօ, շատ ցուրտ ա, մրմուռ մարդու չիգեար կուտա, շուտ արի։

—Ախր փագեախը (գոմ) տաք էր,—շարունակեց փոքրիկը լացակումած. արցունքների խղճուկ կաթիլներ կախուեցին արտևանունքներից, բայց առանց ընկնելու սառան։

—Տաք էր, ապա որ անօթի ենք, ի՞նչ էնինք... Փոքրիկը լռեց, կծեց շրթունքները, փչեց մատներին—փո՜ւ, փո՜ւ, փո՜ւ...

Ահա նրանք կանգ առան մի մեծ դարպասի առաջ, որ բացուած էր։ Բակի ներսում սաստիկ ցրտից կծկուած քնած էր մի մեծ գամփռ. նա չէր նկատում մանուկներին, որոնք վախվխելով, ձեռք ձեռքի տուած, անվստահ քայլերով ներս մտան բակը և մի փոքր առաջ գնալով՝ տեսան ահաւոր շունը։ Մեծը կանգ առաւ, չըհամարձակուելով աւելի առաջ գնալ։

—Մրտօ, շունը... կըկծի, դառնանք։

—Ախր անօթի եմ, մսիմ, էլ դո՞ր երթանք,—մրմնջաց փոքրիկը.—էս տուն ճոչ-ի, փշուր ըմ խաց ուզենք, էլման վազենք փագեախ. ցուրտ ա, փէտացանք...

Նրանք մի փոքր էլ առաջացան, յուսալով անձայն, անշշուկ անցնել շան մօտից և տունը հասնել։ Բայց ձիւնի ճռճռոցը զարթեցրեց շանը. նա գլուխը բարձրացնելով՝ տեսաւ երկու պզպզած մանուկներին, մի կատաղի ոռիւն գործեց և վրանները յարձակուեց։ Վտանգն զգալով, խեղճ մանուկները ճչացին, իրար գրկեցին և վայրկենապէս նատեցին ձիւնի վրայ։ Այսպէս են պաշտպանուում շների յարձակումից մուրացիկ մանուկներն ու կանայք։ Ասես իրանց յաղթահարուած ցոյց տալով՝ այդ թոյլ արարածներն ուզում են զազանի սըրտում գութ զարթեցնել։ Եւ արդարև շունը կանգ առաւ, կենդանու կատաղութիւնը զսպեց որբերի անպաշտպանութեան առաջ. նա մի փոքր հեռու

պառկեց՝ գլուխը թաթերի վրայ դրած, ասես հրաւիրելով երկու թշուառների վրայ, որ չըլինի թէ վեր կենան փախչին։ Սրտաճմլիկ, արտասուելի տեսարան էր. երկու ոտաբոբիկ, գլխաբաց, ցնցոտիների մէջ դողդողացող մանուկներ, կապտած շրթունքներով, իրար կպած՝ կծկուել, նստել էին ձիւնի վրայ և լալիս էին. եղեամի թերթիկները խաղում էին ցուրտ օդի մէջ և պատուելով թափուում էին նրանց գզգըզած մազերի վրայ։ Կատաղած շունը շնթըռկել*) էր նրանց կողքին մռմռալով, կարծես սպասում էր, որ թշուառները վեր կենան թէ չէ՝ վրայ պրծնի, կտոր-կտոր անէ։ Բակումը ոչ ոք չըկար։ Մանուկները շարունակում էին յուսահատ լալ ու ճրչալ. սարսափած աչքերով նրանք նայում էին մէկ շանը, մէկ էլ տան դռանը, այնտեղից օգնութիւն սպասելով։ Ահա վերջապէս տան դուռը ճռճռալով բացուեց և շէմքի վրայ երևաց մի կին.

«Փշուր ըմ խաց», պոռացին մանուկները միասին դողդողուն ձայնով։

—Աներես լակոտներ... ասում էի սրանք կըլինին,—մըրթմրթաց նա և ներս մտնելով՝ բերաւ մի կտոր հաց, տըւաւ սարսափած մանուկներին, իսկ ինքը յետ դարձաւ։

Մանուկները խլեցին հացի պատառը և մինչ պատրաստուում էին շտապով դուրս թռչել դռնից՝ շունը վեր թռաւ նրանց ետևից, վրայ պրծաւ, փոքրիկ որբի ոտքից բռնեց, քաշեց կատաղի հուպոցով։ Սարսափած մանուկը ճչաց և երեսի վրայ ընկաւ հացը ձեռքին, մինչդեռ մեծը շշկլուած՝ չգիտենալով օգնութեան վազել, թէ փախչել՝ կանգնած ճչաց և լաց էր լինում։ Տանտիկինը վազեց. հաւածեց կատաղած շանը ու երբ ձեռքից բռնելով վեր կացրեց որբիկին՝ երեխան ծանր տնքաց։ Գազանի սուր ժանիքները պատռել էին նրա փոքրիկ

*) Նստել էր։

ոտքը. կաթ-կաթ արիւնը ծորում էր նրա վէրքից և թափւում ձիւնի վրայ։ Երեխան ձեռք տըւաւ ոտքին՝ ձեռքը ներկուեց արիւնով՝ նա զարհուրած յետ քաշեց ձեռքը, նայեց ափին, նայեց վիրաւոր ոտքին և էլ աւելի բարձր ձայնով լալ սկսեց։ Այնուամենայնիւ նա կռացաւ, վերցրեց հացի պատառը և կաղալով ու տնքալով հետևեց իր եղբօրը։ Արիւնը շարունակում էր կաթել նրա ոտքից, և երկուսով էլ լալիս էին, տեսնելով կարմիր կաթիլները...

Բայց և այնպէս՝ քաղցած, դողդողացող մանուկները կիսեցին հացի արիւնոտ պատառը և մի կտոր կրծելով՝ առաջ գնացին։

Դեռ երբէք հացի մի պատառն այսքան թանգ չէր գնւել...

ՈՂՈՐՄԱԾ ԵՂԷՔ

Երբ ձեր հոյակապ, շքեղ տներում
Անթիւ զարդարանք ձեզ շրջապատած—
Գոհար, ադամանդ, դիպակ, աբրեշում,
Դուք ծիծաղում էք՝ կեանքից լիացած,
Եւ այդքան գանձերն առատ ու անբաւ
Ձեն էլ շլացնում ձեր աչքը բնաւ.
Երբ դուք բախտաւոր՝ «կենաց բաժակներ
Ուրախ պարպում էք փարթամ խնջոյքում,
Ասացէք դուք ինձ, ով մեծատուններ,
Այդ զըւարթ ժամին դուրսը, փողոցում
Դուք նկատո՞ւմ էք անճար աղքատին.
Լալով նայելիս ձեր լուսամուտին.
Աղճուկը քաշւած փողոցի անկիւն,
Քաղցած նայում է նա ձեր խնջոյքին
Ու խուլ մրմնջում. «Ահա լուսինն,
Առատ բարիքներ. ահա խնդագին
Եւ պայծառ օրեր, և վիճակ խաղաղ.
Ահա ամեն ինչ—կեանք, վայելք, ծիծաղ...

Իսկ ես... թշւառ, ես մերկ, անօթի,
Իմ օթևանը խարխուլ ու մրթին։
Վայ ինձ... ես մի այլ դառն վիճակի
Դատապարտւած եմ երկրի երեսին.
Կինս թոքախտում, տանս հոգս ու ցաւ,
Մեղմ զաւակներս քաղցած ու ծարաւ...
Ու շատ քչերին տըւած է կեանքում
Վայելել օրեր լի երջանկութեան.
Անարդար բախտը կեանքի խնջոյքում
«Ապրիր»—ասում է հարուստ մեծատան,
Իսկ ինձ՝—«Դու հեռո՛ւ, դու բախտին օտար,
Անվերջ երազիր բախտալից աշխարհ...»։
Օ՛հ, նա միայն նա կարող է ըզգալ,
Թէ ի՞նչ ասել են այս դաժան խօսքերը,
Որ ինքն է եղել թշւառ, տառապեալ...
Բայց դուք, դուք, բախտի հարուստ ընտրեալներ,
Ձեզ ի՞նչ փոյթ...ձեր կեանքն առատ է լեցուն.
Ողորմած եղէք, Աստուծոյ սիրուն։
Ողորմութիւնը մայր է որբերին,
Մայր նոցա, որոնք իրանց սև բախտին
Որբ մայր են կոչում։ Եւ այնտեղ, ուր միշտ
Տիրում է տանջանք, ցաւ, կարիք ու վիշտ,
Այնտե՛ղ է նա միշտ թռչում, սլանում
Եւ մարդկանց աչքից արտասուք սրբում։
Աղերսում եմ ձեզ յանուն որբերի՝
Հալածւած բախտի անողոք վճռով,
Թո՛ղ մարդս բարի, ողորմած լինի,
Թո՛ղ նա գթառատ, սիրաբուխ սրտով
Իր ճոխ գանձերից և՛ հէք թշւառին
Ջերմ կարեկցութեամբ միշտ հանէ բաժին։
Ողորմած եղէք։ Ահա գորթ վսեմ...
Երբ անտէր մի որբ կամ ծեր մուրացկան
Ձեր դռան առաջ ահով, սխրագէմ,
Լուռ սպասում է ձեր ողորմութեան,
Եւ դուք ՚ւում էք անհոգ, անտարբեր—
Դուք Տիրոջ սիրտն էք խոցում, հարուստներ։

Ողորմած եղէք, որ հզօր Աստած
Ձեզ և ձեր որդոց լինի պահապան,
Որ ձեր ամբարներ ցորենով լցած՝
Նըրա օրհնութեամբ անսպառ մընան.
Ողորմէք... և ձեզ ամենայն զիշեր
Հայցեցէն պայծառ, սիրուն երազներ...
Ողորմած եղէք, որ մահուան ժամին
Որբին, անճարին ձեր տըւած տուրքից
Հանդերձեալ աշխարհ դուք տանէք բաժին.
Որ նա, ում այստեղ կեանքն էր ողբալից,
Նա կարողանայ ձեր ղըռան մօտով
Անցնել աննախանձ և խաղաղ հոգով։
Ողորմած եղէք, որ ապրիք զըւարթ,
Որ տիրոջ սիրոյն լինիք արժանի.
Ողորմէք անվերջ, ողորմէք առատ...
Ջերմ աղօթքները տարապետների
Թռչում են այնտեղ, ամն սուրբ օթևան,
Ուր աղքատութեամբ հզօր ենք միայն...

Ի Մ Պ Ա Ն Ա Ր Ա Մ Ը

Ա.

Ես մի ծեր մարդ եմ, սիրելի մանուկներ, իմ ընթերցողներ. պատահել եմ շատ գիւղ ու քաղաքներ, անցկացել գետեր ու ծովեր, շատ բաներ տեսել ու շատ բան լսել, երբեմն տրամել, երբեմն ուրախացել, այժմ ուզում եմ պանարամիս մէջ փոքրիկ պատկերով տեսածս ցուցնել...

Դէհ, շուտով այստեղ դուք, ժիր մանուկներ,
Մեծ ու պստիկներ, խելօք ու չարեր,
Կարգ-կարգ շարուեցէք, ինչ որ կըլսէք
Եւ կամ կըտեսնէք, ձեր մտքում ամուր,
Ամուր պահեցէք...

Սկսում է. ահա մի պատկեր։ Մի մեծ քաղաք է, մեծ-մեծ աներով, լայն-լայն քուչէքով, ուր պտտում են մարդիկ ոտով ու կարքով, տաք-տաք մուշտակներ ուսներին ձգած, սիզար, պապիրոս բերանները դրած՝ ֆիւ, ֆիւ, ծծում, փչում են մուխը թանձրացած։

Թող ծըծեն, փչեն փորներն ուռցնեն,
Ի՞նչ ունին պակաս, որ ինչ հոգս անեն...

Ահա մի պատկեր դարձեալ նոյն տեղից, մի խուլ փողոց է ցեխոտ ու կեղտոտ, խարխուլ տընակներ աջ ու ձախ շինած, երկու դրկիցներ դրան առաջին զրոյց են անում՝ քիթ քըթի տըւած։ Եւ հետուն կանգնած մի աղքատ կնիկ շորերը պատըռտած, ոտքերը բոբիկ, մի հիւանդ մանուկ բռնած իր գրկում՝ եկող-գնացողին ձեռք է դէմ անում...

Այժմ ձեզ ցոյց տամ մի այլ տեսարան.
Դարձեալ նոյն քաղքում մի լայն փողոց է,
Եղևնու ճիւղեր աջ ու ձախ փուած,
Մի մեծ բազմութիւն առաջ է անցնում,
Դիակառքի չորս կողմը լըցուած։

Առջևից գնում են քահանաները, ծաղկեայ փիլոններ ու խաչվառներ ձեռքներին բռնած. իսկ վերջից, տեսէք, ինչքան կառքեր կան՝ սևազգեստ կանայք մէջը նստոտած, ախ, ինչպէս տխուր, ինչպէս վշտալից հետևում են սրանք մեռելի եռքից։

Դարձեալ մի պատկեր. քաղաքի ծայրում հինգ—վեց մշակներ ուսների վրայ տանում են անբախտ ընկերի դիակ. որքան տարի իր երկրից հեռու ծանր բեռի տակ մաշել է իր կեանք... չըկան յուղարկներ—ոչ քոյր, ոչ եղբայր, չեն տեսնում նաև ոչ հայր և ոչ մայր. լուռ է փողոցը, լուռ են և մարդիկ. տեսնում է այս բոլոր միայն պարզ երկինքը...

Ահա ձեզ մի այլ պատկեր. բարեկենդան է. մի մեծ զարդարուն սենեակ ձեր առաջ, կանթեղ ու լամպա վառած ձախ ու աջ, մեծ-մեծ հայելիք

կախած պատերին, աթոռ, բազկաթոռ, ամեն տեղ շարած, իսկ մէջտեղ երկայն սեղանը ձրգած, տասնեակ մարդ ու կին ընթրիքի նստած. ախ ինչեր չըկան նրանց առաջը դրած.

Շամպայն ու մադէր, անուշ գինիներ,
Խաշած ու խորւած լաւ ձկնեղէններ,
Խաւեար ու պանիր, տապակած հաւեր
Ու քանի՛ տեսակ քաղցրաւենիներ...
Ուտում են խմում, քահ-քահ ծիծաղում,
Բարեկենդանը լաւ անցկացնում...
Ես էլ մաղթում եմ բարի վայելում...

Ահա նոյն տան կից փոքրիկ խրճիթում, մի թոյլ ու աղօտ ճրագի լուսում, չոր թախտի վրայ մայրը որդոց հետ բարեկենդանի ընթրիքն է անում: Ձրկայ ոչ սեղան, ոչ համեղ ընթրիք, չըկան գինիներ ու քաղցրաւենիք, այլ մի հին, մաշած սփռոց առաջները, հացի կտորտանք նրա մէջ դրած ու մի ամանով պանրի փշրտանք. ուտում են անձայն, գլուխ քաշ ձգած...

Տխուր է խրճիթը, խոնաւ և անշուք, տխուր են դէմքերը մօրն ու որդոցը. միայն չար փիսօն նրանց մօտ պրպտած՝ շարժում է պոչը՝ աչքերը պլշած...

Այժմ ծերուկիս թողէք որ գնամ.
Եկող ժանգամը շատ բան ցոյց կըտամ.
Դէհ, ճնաք բարեաւ դուք, ժիր մանուկներ.
Մեծ ու պստիկներ, խելօք ու չարեր:

Բ

Անցան ամիսներ, բոլորեց տարին, ահա խեղճ ծերուկս կայ ձեր առաջին. եկէք մանուկներ, իմ աչքի լոյսեր, գառնացած սրտիս դուք միակ յոյսեր. գարձեալ բերի ձեզ ես իմ պանարամ, մի քանի պատկեր նորից ձեզ ցոյց տամ:

Պատկեր լաւ ու վատ երբոր կը տեսնէք,
Աղաչում եմ ձեզ, մտքից մի հանէք:
Դէհ, սկսւում է:

1

Ամառը սարում:

Տեսէք այս սարը կանաչով պատած, այստեղ ու այնտեղ վրանները թողած, վրանի դիմաց հայ, թուրք գիւղական՝ մի-մի գործ ձեռին, բանի է նստած. որը տաղում է, որը սրում է, որը կար կարում, տղին օրօրում, որը հաց կամ կաթ է տաքացնում, կարագ ու պանիր, մածուն պատրաստում:

Ահա քիչ հեռու նրանց տաւարը, ոչխարի հօտեր, ձիանց բօլուվներ, մինչև փորի տակ խոտերում ծածկւած կամ գլգլան ջրի ափը հաւաքւած, տկզած կանգնել են, չեն շարժւում տեղից, ինչուոր կուշտ են ու գոհ վիճակից,

Եւ գիտէք ով է մոթալ փափախով,
Հաստավիզ մարդը իր դագանակով,
Որ աչքը տնկած սարի լանջերին՝
Մի բան է երգում զիլ-զիլ խոտերին.
Դա է նախրորդը—տէրը տաւարի,
Որ սար է գալիս ամենայն տարի:

2

Ահա նոյն նախիր, նոյն հօտն ու ձիեր, բայց ոչ թէ ամառը սարի խոտերում և ոչ քրչքրչան ջրի ափերին, այլ, ցուրտ ձմեռը գիւղի գոմերում:

Հալւել է միսը, ոսկրներ ցցւել, տկզած փորերնին մէջքներին կպել. քաղցած է տաւարը՝ խոտ չըկայ տալու, սառել են դաշտեր՝ գարունն է հեռու.

Կրծում են սովից մսուրի փայտեր,
Դոփում կճղակով, պլըշում աչեր,
Մայում, բառաչում, վիզերնին ծռում,
Թուլացած ընկնում, քաղցից սատակում:
Իսկ մեր գիւղացին, ոհ ինչպէս խղճուկ
Կանգնած նայում է ու թափում արցունք...
Մեծ է նրա վիշտ, մեծ է նրա ցաւ,
Երբ մի անասուն նրա ձեռքից անցաւ:

3

Ահա ձեզ մի ուրիշ պատկեր։
Գարնան սկզբում գիւղացու յոյսեր։

Գարուն է, գարուն, ինչ քաղցրիկ անուն։ Արտերը կանաչել են, ծառերը ծաղկել, ծաղկունքը բացւել, ջրերը փուել, գեղջուկ մշակը յոյսերով լցւել։

Կըգայ ամառը՝ կը դեղնի ցորեն, հունձը կըհնձէ, կըժողվէ ամբար, կրհանեն պտուղք՝ թափ կըտայ, կըլցնէ կթոց, կըկախէ շարեր։

Ծոտ կայ տաւարին, դարման ձիերին,
Ծաղկունք մեղուին, մեղր՝ մանուկներին։
Ո՜հ, մեր գիւղացին ինչպէս երջանիկ
Կանցնէ այդ տարին...

4

Պատկերը փոխւեց։

Ահա նոյն գեղջուկ ամառ ժամանակ, տխուր նստած է իր կտուրի տակ. ուր է նրա յոյսը, իր արտն ու այգին, ինչո՞ւ է ժանգոտ մանգաղ, գերանդին։

Մորեխը եկաւ արտերը կերաւ,
Մորեխից պրծածը՝ կարկուտը տարաւ.
Թրթուրը խժռեց ծառերի տերև,
Պտուղ չըմնաց՝ ողջ այրեց արև։
Սոված մեղուները թռան փեթակից,
Բճիճը մնաց դուրկ ծորան մեղրից.
Դաշտը չորացաւ՝ խոտ չըկայ կովին,
Ամբարն է դատարկ՝ մահ է գեղջուկին։
Ո՜հ ինչպէս թշւառ, ինչպէս յուսահատ
Կանցնի այդ տարին...

5

Նայեցէք հովտի փոքրիկ քաղաքին, ուր սև-սև ամպերը սարերի նման կանգնել են գլխին։ Բնութիւնը խաղաղ է, խաղաղ է և գետը, որ սարի կողմից իջնում է քաղաք, ջրում պարտէզները,

պարտում ջաղացք, վշշալով անցնում, կորչում ձորերում, ամենայն տարի յոյս և կեանք բերում։

Ահա ամբոխը կանգնած գետափին՝ ուրախ է հոգով երկնից ամպերին, որ անձրև կըտայ, կըջրէ երկիր, կեանք կառնէ մարդը, դաշտն ու այգին...

Իսկ փոքրիկ տղայք՝ տես՝ ինչպէս անհոգ
Խաղում վազում են, «անձրևը» երգում.
Որ ցած գայ ջրէ, բացնէ կանաչ խոտ,
Աւելէ փոշիներ ու մաքրէ վատ օդ։

6

Ահա նոյն քաղաք, նոյն սև-սև ամպեր, որից թռչում են կրակէ նետեր, անձրևի տեղակ կարկուտ է թափւում, որոտում երկինք, երկիր դղրդում։

Մարդիկ հաւաքւած իրանց տները՝ քարացած նայում են այդ ահեղ պատժին, որ փշրում է, ջարդում, տուն ու տեղ այրում, այգի ու պարտէզ խլում, հետը տանում։

Լացում է մանուկը մօր վզին փաթթւած,
Բառաչում է տաւարը դրսում մնացած,
Գոռում, գոչում է գետը կատաղի,
Ահ, սարսափ պատում ամեն սրտերի...
Եւ ահա յանկարծ մի ձայն է լսւում։
Մի ձայն գուժաբեր ամենքին հասնում.
«Հեղեղ, հեղեղ,— կանչում են մարդիկ
Ա՜խ մեռանք, կորանք, խնայէ, երկինք...»։

7

Հեղեղը եկաւ, հեղեղը գնաց,
Բայց տեսէք ահա տեղը ինչ մնաց.

Ահա մի ծերուկ խոտած մի դիակ՝ կիսամեռ ընկել է իր փլած տան տակ. նրանից հեռու գետնին տարածւել տանտիրուհի մանուկ՝ մօր հատիկ զաւակ։

Ահա քոյր, եղբայր մէկ-մէկի գրկած՝ ընկել են իրանց ծնողաց կրծքին, իսկ այնտեղ խեղդւել

սկեսուրն ու հարս՝ օրօրոցում կապած մանուկը կողքին...

Սգում է քաղաքը սգում են ամենքը, որը իր հայրը, որը իր որդին քոյրը իր միակ եղբայր թանգագին։

Որքի լացի ձայն երկինք է հասնում, մեծ ու փոքրի սիրտ շարժում, մղկտում...

Ա՜խ, թողէք ծածկեմ այս տխուր պատկեր,
Պատկեր սոսկալի արիւնով ներկւած,
Որի ժանտ տեսիլ դեռ մինչև այսօր
Սարսափ է ազդում դժբախտ բնակչաց...

ՏԱՐԵՄՈՒՏ

«Կաղանդի», այսինքն նոր տարւայ ծնունդը հայ ժողովրդի ամենաուրախ օրերից մէկն է։ Այդ օրը ամեն դասակարգի, ամեն վիճակի ու ամեն հասակի մարդիկ՝ բոլորն էլ մի նոր տեսակ հոգեկան ուրախութեամբ լցւած՝ «Շնորհաւոր նոր տարի» քաղցր խօսքն են ասում ու լսում։ Այդ օրւան յատուկ զանազան երկրներում սովորութիւններ կան. բայց ամենից նշանաւորները Տաճկահայաստանում մինչև օրս պահպանւած սովորութիւններն են, որոնք կատարւում են ամենայն ճշտութեամբ։

Արդէն դեկտեմբերի 30-ին տան հասակաւոր կանայք պատրաստութիւն են տեսնում «Կաղանդի սեղանը» վայելուչ ու ճոխ կերպով սարքելու։ Ընդունւած է, որ օրը պահոց օր է, այսու ամենայնիւ սեղանը պատրաստում են շատ սիրուն։ Զանազան մրգեղէն, ընկուզ, մեղր, ձիթապտուղ, սունկ և այլ պասի վերաբերեալ կերակուրներով ճոխ զարդարում են սեղանը, որի վրայ փայլում են գինին ու օղին՝ Հայաստանի այդ սիրելի ըմպելիքները, որ այդ օրը շատ առատ է լինում։

Դեկտեմբերի 31-ին թխում են բաղարջ։ Կաղանդի բաղարջը սովորական բաղարջներից ու գաթաներից տարբեր է։ Այդ բաղարջը շաղում են ալիւրից, ձիթից ու մեղրից և շինում են արևի ու լուսնի ձևով։ Բայց բաղարջների մէջ իր մեծութեամբ որոշւում է «տարին»։ «Տարին» շինում են բոլորաձև ուղիղ վերշոկ լայնութեամբ։ Դա շաղւած է լինում ալիւրից, իւղից, հաւկիթից ու մեղրից։ Ծմորի մէջ դնում են մի մեծ արծաթեայ դրամ. «տարին» նախշում են եղէգնով ու ընկուզով. նրա վրայ զանազան նկարների հետ գրում են նաև թըւականը։ Թխելուց յետոյ «տարին» պահում են մինչև Ծննդեան տօնը՝ յունւարի 6-ը։

Այդ օրը սովորաբար քահանայք տնօրհնէք են գալիս։ Տան հետ օրհնել են տալիս նաև «տարին»։ Յետոյ օրհնած «տարին» բաժանում են այնքան մասերի, որքան տանը անդամներ կան։ Ո՛ւմ բաժնից որ դուրս է գալիս արծաթեայ դրամը, նա համարւում է «տարւայ տէրը». նրան առանձին յարգանք են ցոյց տալիս։

Դեկտեմբերի 31-ին, գիշերը 10 ժամից լսելի է լինում «Ալելու» ասող մարդկանց ձայնը։ Նրանք այդ գիշերը աւետում են նոր տարին. կարգով այցելում են ամենքի երդիկն ու երգում հետևեալ երգը.

Ալելուեա, ալելուեա,
Հինը կերթա, նորը կուգայ.
Հինը ուրախ ճանապարհէք,
Նորի համար պատրաստուեցէք.
Դուռ, լուսամուտ բացէք,
Ինչ որ կամիք՝ խնդրեցէք,
Թէ կեանք, թէ խելք, թէ մալ,
Ամենքիդ մուրազն ալ
Կուտայ, միամիտ եղէք։
Աղաներ ու խաթուններ,
Ձեզ շնորհաւոր նոր տարի,
Ապրիք շատ ու շատ տարի։

Տանտիկինները երգը լսելուն պէս՝ պատրաստուում են գոհացնելու մանուկներին։ Նրանք տալիս են միրգ կամ դրամ, երբեմն էլ հաւկիթ։ Երգող տղայոց ձայնին հետևում է հրացանաձգութիւն, որ մեծ բաւականութեամբ կատարում են երիտասարդները։

Նոր տարի օրը ամեն ոք պարտաւոր է իրանց մեծի ձեռքը համբուրելու։ Ո՛րքան ուրախալի է, երբ տեսնում ես, որ յիսնամեայ տղամարդը, որպէս մի փոքրիկ մանուկ, չոքում, համբուրում է իր զարամեալ հօր կամ մօր ձեռքը, ասելով՝ «Շնորհաւո՛ր նոր տարի»։ Իսկ ծերունիք օրհնում են նրանց և բարեմաղթում են երկար կեանք ու գործերին յաջողութիւն։

Նոր տարի օրը սովորութիւն կայ նւիրաբերութիւն անելու։ Այդ նւէրները լինում են ամեն տեսակից. բայց այդ նւէրը ծանրագին է լինում, երբ սկեսուրը հարսնացուին տես է գնում։

Նոր տարու հետևեալ օրը «Բախտափորձում» են ասում. այդ օրը կանանց է պատկանում։ Կանայք փոխադարձաբար գնում են միմեանց տարին շնորհաւորելու։ Բախտափորձումի օրը կանանց ամենաերջանիկ օրն է։ Նրանք այդ ամբողջ օրը երգելով ու պարելով են անցկացնում։

ՀՈՆԻ ԿՈՐԻԶ

Տարեմուտի երեկոյին
Մայրս թխեց կարկանդակ,
Մէջը դրաւ հոնի կորիզ,
Իբրև բախտի նշանակ։
«Կորիզն, ասեց, ումմ որ ընկնի,
Դովլաթաւոր կը դառնայ,
Ուր որ գնայ, ինչ գործ բռնի,
Փառք ու պատիւ կըստանայ»։

Կարկանդակը բաժանեցինք,
Կորիզն ընկաւ ինձ բաժին,
Եղբայրներս սրտնեղելով՝
Նախանձեցին իմ բախտին։
«Կոյր է բախտը», սուտ չէ ասած,—
Մեծ եղբայրս փընթփընթաց,
Մ՛թթէ սա է ամենիս մէջ
Աշխատաւոր, բանիմաց»։
Մէկէկներն էլ հաւանեցին
Մեծ եղբօրս ասածին.
«Իրա՛ւ, իրա՛ւ, չէր արժանի»,
Միաբերան ձայնեցին...
Մայրս ասեց. «Ժելօք կացէք,
Ահա կըգայ Նոր Տարին.
Նա որ տեսնէ ձեզ կուելիս՝
Պարգև չի տալ ոչ մէկին։
Բայց որ տեսնէ՝ դուք սիրով էք
Եւ խոով չէք իրարից,
Այնուհետև ինչ որ ուզէք,
Չի խնայիլ ձեզանից»։
Այս ասելով՝ նա մեզ տըւաւ
Տեսակ-տեսակ մրգեղէն՝
Չիր ու չամիչ, տանձ ու խնձոր
Եւ զանազան քաղցրեղէն։
Բաղցըր կերանք ու քաղցրացանք
Եւ խնդացինք շատ ու շատ,
Զարագ արինք նուռ, սերկևիլ,
Ունաբ, սալոր, թուզ, փշատ.
«Հոնի կորիզն» այնուհետև
Բոլորովին մոռացանք
Եւ շատ սիրով իրար գրկած՝
Պառկոտեցանք, քնեցանք....

ՋՐՕՐՀՆԷՔ

Ամեն տարի յունուարի 6-ին՝ Ջրօրհնէքին ամենքն ուրախութիւնով շտապում են եկեղեցի կամ գետի ափը՝ մասնակցելու «խաչը ջուրը ձըգելու» հրաշափառ հանդիսին, որը յատուկ շքեղութիւնով է կատարւում մեր եկեղեցում։ Ինչպէս է կատարում մեր եկեղեցին այժմ այդ հանդէսը՝ ձեզ ամենքիդ յայտնի է։ Անշուշտ շատ հետաքրքրական կըլինի ձեզ, փոքրիկ ընթերցողներ, իմանալ, թէ ինչպէս էր կատարւում այդ հանդէսը մի քանի հարիւր տարի առաջ, մեր պապերի ժամանակ։

Մի եւրոպացի ճանապարհորդ Արևելքում՝ Հաննովերի Հելեոհայմ քաղաքացի, կրօնաւոր Վիլլեբրանդ անունով՝ 697 տարի առաջ իր ուղեւորութեան ժամանակ՝ գտնւում էր Կիլիկիայում, ուր երկու ամսի չափ հիւրասիրեց նրան մեր Լևոն Ա. թագաւորը։

Վիլլեբրանդ վարդապետը Սիս քաղաքում 1211 թուի ներկայ լինելով Հայոց Ջրօրհնէքի հանդիսին՝ ահա ինչպէս է նրան նկարագրում, որը մէջ ենք բերում, Հայր Ալիշանի «Յուշիկք» պատմական գրքից քաղելով.

«Սիս քաղաքը՝ տէր թագաւորի մայրաքաղաքն է. բնակիչները անթիւ են և հարուստ. պարիսպ չունի, ուստի նրան աւելի քաղաքաւան կըկոչէի, եթէ մէջը չըլինէր Հայոց կաթողիկոսարանը։ Սակայն ունի մի ամուր բերդ լեռան գագաթի վրայ, որի ոտքից սկսում է քաղաքը աստիճանաբար դարիվայր տարածւիլ։ Ջրօրհնէքի հանդէսը հայերը այս կերպով են կատարում. Ծննդեան տօնից տասներկու օր առաջ՝ որ մենք լատիններս խընդումով, կերուխումով ենք անցկացնում, նրանք ապաշխարութիւնով և պասով են անցկացնում, հրաժարւելով մսից, գինուց, իւղից. իսկ բուն խթման օրը բոլորովին ծոմ են պահում, որպէսզի վերջալուսից յետոյ պատարագ մատուցանեն։ Իսկ երկրորդ օրը Քրիստոսի ծննդեան տօնն են կատարում ասելով՝ Յիսուս նոյն օրը ծնաւ և 30 տարուց յետոյ նոյն օրը մկրտւեց։ Առաւօտուն ամենքն շտապում էին քաղաքի մօտի գետեզերքը գնալ, ուր որ թագաւորը զարմանահրաշ ճոխ պճնւած՝ բարձրահասակ ձիու վրայ հեծած էր. նրա կողքից գնում էին Ալեման ասպետների կարգապետը, իրանց կրօնակից հազար ընկերներով. յետոյ գալիս է տէր Ռուբէն թագաւորազնը, նրա ետևից Հայոց երկրի ազնւականները, իշխանները և զօրականների բազմութիւնը գեղեցկազարդ հագնւած, որոնց մարդիկ ամեն մէկ զօրախմբի դրօշները և վառերը տանում էին ձեռներին բարձրացրած և նրանց տարած ձիերի սանձից բռնած՝ մեծ թագաւորի առաջից գնում էին։ Նրա և այդ խմբի միջով գնում էին շատ գինակիրներ՝ իբրև անձնապահներ թագաւորի, իսկ ժողովրդի բազմութիւնը չորս կողմից ողջունում էր նրանց սաստկաձայն աղաղակելով՝ «ՍՈՒՐԲ ԹԱԳԱՒՈՐ»։ Այսպիսի մեծ հանդիսով թագաւորը եկաւ իջաւ գետեզերքում սարքած վրանի տակ. ապա եկան յոյներն իրանց սրբազանով, շատ սրբազան սպասներով, և ապա այնչափ փողերի և երաժշտական նըւագների ձայներ էին լսւում, որ աւելի մի հանդէս, քան թէ մի թափօր էր ձևանում։ Սրանք էլ եկան իրանց որոշած տեղը կանգնեցին, և ամենքը սպասում էին Հայոց եկեղեցական ուխտին, որ գալիս էր խաչերով, խաչվառներով, ոսկեհուռ զգեստաւորւած, ակնախտիղ ծանրագին սպասներով, իրանց կաթողիկոսով, խոնարհական կերպով վայելչակարգ թափօր կազմած։ Երբոր բոլոր թափօրը մէկ տեղ եկաւ, սկսեցին քաղցրաձայն երգել, գըր-

քեր, աւետարաններ և աղօթքներ կարդալ։ օրհնեցին ջուրը, մկրտեցին սուրբ խաչը, հեղմամբ սրբեցին միւռոնի։ Այդ ժամանակ մէկը գետի մէջ մտաւ և շաքարաբերան կանչեց. «կեցցէ թագաւորը մեր յաւիտեան». բոլոր բազմութիւնը պատասխանեց. «Ամէն»։ Ցետոյ թագաւորը և ուրիշները օրհնած ջրով իրանց ցօղեցին, իսկ ասորիները մերկացած ընկան ջուրը։

«Այս արարողութիւնն աւարտելուց յետոյ եկեղեցականները յետ դարձան իրանց տեղը, իսկ թագաւորը և զինուորականները փութացին դէպի դաշտերը, պալատականները երիվարները վազեցնելով, նիզակներ նետելով՝ զինուորական խաղեր արին, ամբողջ օրը մեծ ուրախութիւններով անցուցին։

«Այս էլ գիտցէք, որ տէր թագաւորը այդ Սիս քաղաքի մօտ իրան զբօսանքի մի պարտէզ է պատրաստել, որի աքանչելի փափկութիւնները նկարագրելը, խոստովանում եմ, որ իմ կարողութիւնից վեր է»։

ԳԱՐՈՒՆ

Տարին չորս եղանակ ունի, բայց ամենից սիրունը, ամենից դուրեկանը գարունն է։

Ինչ որ մեռած ու թմրած է լինում ձմեռը, գարնանը կենդանանում ու արթնանում է։

Սառած գետինը տաքանում է և սկսում է կանաչիլ։ Փէտացած ծառերը բացւում, փթըթում են։ Սար ու ձոր ծլում, ծաղկում։

Երբոր տեսնում ես գոյն-գոյն ծաղիկները արևի տակ փայլելիս, կարծում ես թէ փոքրիկ մանուկներ են ժպտում երեսիդ, ճխում, ճըչում, խնդում, ծիծաղում։ Եւ երբ որ նորեկ երգեցիկ թռչուններն էլ ձայն ձայնի տւած՝ ծլըլում են, կարծում ես, թէ բոլոր արարածները ձեռք ձեռքի տւած՝ պար են գալիս, ցնծում, զըւարճանում, գարնան գալը շնորհաւորում։

Ով ասես՝ որ անհամբեր չի սպասում գարնան գալուն։ Թէ մարդ, թէ գազան, թէ անասուն և թէ թռչուն՝ ամենքն էլ գարնան գալուն են սպասում, ամենքն էլ ուզում են որ գարունը շուտով գայ և իրանց անուշ արև ու քաղցր օրեր տայ։

Ձմեռւայ վերջին ամենի կերակուրը պակսում է. ընտանի կենդանիներին խոտ ու յարդ է պէտք, —չըկայ։ Նրանք նիհարում են և մինչև անգամ սովամահ են լինում։ Թէպէտ լեզու չունին, որ մեզ նման պարզ ասեն՝ «քաղցած ենք, խոտ ենք ուզում», բայց ամեն անգամ իրանց տիրոջը տեսնելիս՝ այնպէս աղիողորմ ձայնով մայում բառանչում են, որ տիրոջ սիրտը կտոր-կտոր է լինում։

Ինչ անէ խեղճ տէրը։ Էլ մարաքումը յարդ չի ճնացել, էլ ամառւան դրած ահագին դէզը չըկայ։

Սրանից լաւ վիճակի մէջ չեն լինում և վայրենի անասունները, գազանները ու թռչունները,

և ոչ էլ այն մաքղիկը, որոնց ձմեռւայ պաշարը հատած է լինում, էլ ոչ վառելու փայտ ու ածուխ են ունենում և ոչ ուտելու հաց։

Ահա ամենքի այս տեսակ յուսահատած ժամանակը գալիս է գարունը և իր հետ բերում նոր կեանք և ուրախութիւն։

Այնուհետև ձիւնը հալւում է, կապւած ճանապարհները բացւում են, գնալ-գալը՝ թէ ձիով և թէ սայլով՝ հեշտանում է։

Այնուհետև ով ինչ որ չի գտնում իր գիւղումը, գնում է ուրիշ գիւղից է բերում։ Ով որ քաղաք տանելու և վաճառելու բան ունի, հիմա կարողանում է տանել։ Քաղաքումն էլ էժանանում է ապրուստի պաշարը։

Ահա թէ ինչու՛ գարունը սիրելի է բոլոր արածների համար, մանաւանդ մանր ու մրսկան երեխանց համար։

Գարունը մտնում է մարտի իննին և շարունակւում է երեք ամիս։ Գարնան ամիսներն են՝ մարտ, ապրիլ և մայիս։

ՀՐԱՒԷՐ ԳԱՐՆԱՆ

Արի՛, գարուն,
Արի՛, սիրուն,
Բեր պարզ արև,
Առատ անձրև,
Խնդրէ Տէրէն
Հաճար, ցօրեն։
Ձմեռն էր մեծ,
Ողջ սպառեց,
Ամբար, մառան
Դատարկ դառան։

ԽՆԴԻՐ ԳԱՐՆԱՆ

Կարօտ ենք տեսքիդ, աննման գարուն,
Շուտ արի մեզ մօտ, բեր ծաղիկ սիրուն,
Բեր պայծառ արև, բեր մեզ տաք օրեր,
Ճուրտող թռչուն, բեր կանաչ դաշտեր։
Բաց մեր դռները, բաց մեր պատուհան,
Թող բացւին, ծաղկին վարդ, մեխակ, շուշան,
Փակւած սենեակից ելնենք ազատւինք,
Կանաչ դաշտ երթանք, խաղանք, գլորւինք։

ՄԱՆԻՇԱԿ

Դեռ ձուր է ծիծեռ, դեռ ձուր է սոխակ,
Գարնան կարապետ եկաւ մանիշակ.
Երկնային խունկը չորս կողմը բուրեց,
Նորածին աշխարհ նախ նա համբուրեց։
Երկինքն է անաժպ, շողշողուն արև,
Տանք մանիշակին, երեխէք, բարև,
Որ մեր դաշտերին բերաւ նոր գարուն,
Նախշուն հաւերով, ծաղկով զարդարուն։

ՏՈՒՆԸ ԿԱԹՈՒՄ Է

Գարունը նոր էր մտել։ Մի քանի օր եղանակը շատ գեղեցիկ էր։ Բայց մէկ էլ անձրևն այնպէս սկսեց, որ կարծես էլ դադարելու չէ։

Էլ տուն, գոմ, մարաք, մառան չքմնաց, որ չըկաթէը։ Ամենից շատ կաթում էր Կիրակոսի տունը։ Այդ խեղճի տանը էլ մի ցամաք անկիւն չքմնաց։

Հէնց այդ դառն օրերին գաւառապետը եկաւ մեր գիւղը։ Նա ոչ մի ցամաք տուն չըգտնելով՝ մի վրան սարքեց, մտաւ մէջը։ Գիւղացիներից ով ինչ պանգատ ունէր, գնաց գաւառապետին յայտնեց։ Ամենից յետոյ գնաց Կիրակոսը։

Կիրակոսը մի գւարճախօս և ծաղրածու մարդ էր։ Նրան որ տեսաւ գաւառապետը, ժպտալով հարցրեց.

—Դու ինչ գանգատ ունէիս, Կիրակոս, ինչո՞ւ համար ես եկել։

—Աղա, գլխիդ, արևիդ մատաղ, տունս կաթում է,—ասեց Կիրակոսը։

—Յետո՞յ, ես ինչ անեմ, որ քո տունը կաթում է։

—Աղա, ախր քո սասած չի կաթում։ Ես ինձ համար նստած՝ հաց եմ ուտում, հէնց որ ուզում եմ գդալը տանեմ բերանս, մէկ էլ տեսնես—ծ՛ըլթ—կաթեց գդալիս մէջին։ Էլ չի թողնում, որ հալալ հաց ուտեմ։

—Շատ լաւ, բայց ես ինչ կարող եմ անել։

—Աղա, ախր ես քեզ ասում եմ, որ քո սասած չի կաթում, սա մի ջոկ բան է։ Ես ինձ համար պառկած քնած եմ լինում, գլուխս կարպետի տակից հանում եմ, որ տեսնեմ լուսացել է, թէ դեռ մութն է։ Հէնց որ աչքս բաց եմ անում որ հերթին մտիկ տամ, մէկ էլ տեսնես—ծ՛ըլթ—աչքիս մէջին... Բա սրան մի դատաստան չըկա՞յ։

—Ինչու չըկայ, եթէ կը յօժարիս։

—Կը յօժարիմ, աղա, կը յօժարիմ. ինչ որ դու կըհրամայես, ես յօժար եմ։

—Շատ լաւ։ Քո տունը կաթելու համար դու պէտք է այնքան օր բանտումը նստես, որքան օր որ կաթել է։

—Վա՛յ, աղա, այդ ինչ ես հրամայում։ Ես էլ հէնց իմացայ թէ լաւ բան պիտի ասես։ Համ իմ տունը կաթի, համ ես բանտ նստե՞մ. այդ ինչ դատաստան է։

—Շատ լաւ դատաստան է և շատ էլ արդար։ Եթէ մի կծոտող շուն լինի և չըկապեն նրան, նա էլ սրան-նրան կծի, դրա համար ո՞ւմ կըպատժես դու, շո՞ւնը, թէ տիրոջը։

—Ի հարկէ, տիրոջը. շանից որ խօ տուգանք չե՞ս

առնիլ, պէտք է տիրոջից առնես. շունն ինչ գիտէ պատիժն ինչ է։

—Ողորմի քո հօրը։ Ես էլ հէնց քո բերանովը կանեմ քո դատաստանը։ Քո տունը խօմ ինքը չի իմանում, որ կաթում է, բայց դրա համար դու պատժի արժանի ես, որովհետև այն տեսակ հող չես ածում և այն ձևով չես շինում, որ չըկաթի։

—Հա՜... աղա դու ինձ յաղթեցիր։ Ես հէնց իմացայ, թէ քեզ կըկապեմ, բայց չեղաւ, լաւ տեղ չըմթնացրի,—ասեց Կիրակոսը և գլուխը քորելով դուրս գնաց։

ԽՈՋԱՐԱԾԻ ԲԻՆԱ

Խիտ անտառի մութ խորքումը
Մի տեսակ խուղ կայ շինած՝
Անդուռ, անպատ, անպատուհան,
Գերաններ են թեք դրած։
Ցերեկն այնտեղ մարդ չի լինում,
Թէև լիքն է պաշարով.
Թուրքեր, քրդեր չեն մօտենում,
Խուղը մնում է ապահով։
Միակ շէնքն է, որ ազատ է
Գող թուրքերից, քրդերից,
Որովհետև խոզի մսի
Հոտ է գալիս այնտեղից։

ԲՆՈՒԹԵԱՆ ԿԵՆԴԱՆԱՆԱԼԸ

Մայիս ամիսն է. գարունը իր բոլոր փառաւորութիւնով ամեն շնչաւորի վրայ իր հրաշալի տպաւորութիւնն է ներշնչել։ Վարդահոտը բարակ զեփիւռի շնորհիւ ամեն կողմը հեռու ման է գալիս.

լեռ ու դաշտ կանաչներով, սեզերով և սիրի-սիրի համեստ երեքթևեան խոտերով զարդարել են. հազարաւոր գոյնզգոյն ծաղիկները երեսիդ ծիծաղում, խաղում են և առհասարակ մի բուռ հող եղած տեղը բուսական թագաւորութիւնը իր գահն է դրել։

Քարափների ծերպերին էլ կեանք է արտադրւում. մի կտոր կոշտ ընկած տեղն էլ կանաչի գլուխն է դուրս ցցել. էլ ապառաժ ու մերկ գետին չի մնացել։ Սքանչելի է մայիսը։ Թռչուններն իրանց աղւամազ ձագերի համար կերակուրները են տանում։ Ո՞ւր է վազվզում օդի մէջ ծլւծլւալով ծիծեռնակը։ Նայիր այն ճնճղուկի՝ փայտիսորի բներին. ինչպէս քնքուշիկ ձագուկները՝ դեղին երիզը կտուցի չորս կողմը՝ բաց են անում իրանց բերանները և լեզուիկները հանած, ճիչ ու ծուոց բարձրացրած՝ կերակուր են խնդրում իրանց մօրից. ինչ քաղցր ճուռողիւն են բարձրացրել։

Սակայն այնպէս չի կարգադրել բնութեան ամենագէտ Արարիչը. թռչ ինչքան ուզում են սիրուն ճուտիկները միմեանց առաջը կարեն, մայրը իր կարգը լաւ գիտէ. նա հերթը չի կորցնում, իր հաշւի մէջ չի սխալւում. նա լաւ գիտէ, թէ առաջ կերակուրը ո՛րի բերանն է դրել. նա դեռ այն էլ է հասկանում, թէ իր ընկեր արուն ո՛րին է կերակրել։ Նա ուրախանում է իր նախշունիկների վրայ. մի րոպէ էլ կանգ է առնում բնի մօտ, քրքրում է կտուցիկով ձագերի դեղին, փափուկ բուրդը, փափկացնում է նրանց անկողինն ու թռչում կրկին դէպի դաշտ։

Ը.

Ի՜նչ ախորժալուր է հովւական սրնգի ձայնը մայիս ամսին, երբ նա մի քարի վրայ նստած, կամ լեռան գլխին թիկնած՝ սուլում է ինքնագոհ։ Դուք չկարծէք, թէ նա միայն իր սրտի ուրախութեան համար է ածում. ո՛չ, նա դրանով հասկացնում է իր սիրելի հօտին, թէ ժամանակ է ժողովւել իր չորս կողմը և գնացքն ուղղել դէպի փարախը, ուր սիրունիկ գառներն սպասում են լսելու իրանց մայրիկների մայիւնը։

Ո՜հ, ինչ հրաշալի տեսարան է, ինչ քաղցր րոպէ։ Գառները լսում են հեռւից մօր ձայնը և անհամբերութիւնից ուզում են կոտրատել գըռուկի*) դուռը, դուրս թափւել՝ դիմաւորելու ամենաթանգագին մօրը, որ իրանց համար կուրծը լի ախորժահամ կաթն է բերում։ Մինչև որ հովիւը բաց կանէ գըռուկի դուռը, ուլերը՝ այդ ճարպիկ պատիկ սատանաները՝ քիչ է մնում որ բարձրանան նրա ուսերը։

Նախանձելի է հովւի դրութիւնը հօտի վերադառնալու ժամանակ։ Ուլերի ու գառների մկրկոցը, այծ ու ոչխարի հարայ-հրոցը նրա սրտի վրայ անպատմելի տպաւորութիւն են գործում։ Ոչ ոք չի կարող բոլոր ցաւերը չմոռանալ այն միջոցին, երբ գառնուկներին իրանց փափկիկ դմակները շարժելով և ուլերն իրանց անհանգիստ պոչիկները խաղացնելով՝ իրար գլխով են դիպչում։

Գառն ու ոչխարը իրար են խառնւում և նրանցից իւրաքանչիւրը աշխատում է գտնել իր մօրը կամ ձագին։ Բաւական է, որ մաքին մի փոքր հոտոտէ, իսկոյն յետ է խփում իրան մօտեցող օտար գառանը և հոտոտելիքը դէպի վեր բռնած՝ ցատկում է դէպի այն կողմը, ուր իր սիրելի հարազատն է։ Մօր անուշ մայիւնը և խանդաղատական ակնարկը թափանցում է անմեղ գառնուկի սիրտը և վստահութիւն է տալիս նրան վազելու դէպի ինքը եկող ոչխարի կուրծը. իսկ վերջինս իսկոյն ոտքերը յետ է քաշ անում և թոյլ է տալիս ամենասիրելի զաւակին փշփշալով ծծել մօր պտուկները։ Եւ սրտի ուրախութիւնն ու մայրական քաղցր գգւանքն ա-

*) Փարախ՝ ցանկով պատած։

ւելացնելու համար՝ նա անդադար լիզում է փոքրիկ գառնուկի թաւշանման մորթը։

Անխիղճ են այդ միջոցին մարդիկ. նրանք իրանց կենսական պիտոյքը հայթայթելու համար՝ խլում են խեղճ գառան բերանից նրա մօր պտուկը և կաթնի մեծ մասն իրանք են կրթում։ Անբան անասունն ի հարկէ լաւ գիտէ մարդկանց անիրաւութիւնը. ինչքան էլ նրանք կթեն, նա իր զաւակի բաժինը թաքցնում է կուրծքի մէջ։

Ուշադրութեան արժանի է նաև կթողների իրարանցումը։ Գալիս են մանկահաս հարսները և մատաղահաս աղջիկները. նրանք լաւ գիտեն ճաշակայ կթի ժամանակը։ Գիւղական փարախները առհասարակ շինւած են լինում գիւղից մօտիկ, մի ձորամիջում կամ բլրի ստորոտում, քամուց ու տօթակէզ արեգակից ապահով։ Եւ ահա մեր ամօթխածներն ուստում են կամ շալակում կովկիթն ու կճուճը, գլուխներին են դնում կաթ-քամիչն ու մաղը և գիւղից միասին դուրս են գալիս՝ երեք-երեք, չորս-չորս, խումբ-խումբ բաժանւած՝ խընդալով, կատակներ անելով գալիս են փարախը և սպասում են հօտի վերադառնալուն արօտից։

ԳԱՐՆԱՆ ԳԱԼՈՒՍՏԸ

Աչքաւ ձմեռը, եկաւ վառ գարուն,
Զարթնեց խոր քնից ամբողջ բնութիւն.
Ամեն առարկայ շունչ-հոգի առաւ
Եւ սիրոյ ողջոյն գարնանը տըւաւ։
Օդը մաքուր է, արևը պայծառ,
Կանաչ են դաշտեր, սար, հովիտ, անտառ,
Եւ սլսլսլալով զեփիւռը մեղմիկ
Դալար բոյսերին ասում է նանիկ։
Ահա արտուտը դայլայլիկներով
Ճեղքում է օդը քնքոյշ թևերով,
Եւ սիրով վառւած քաղցրաձայն սոխակ
Գոել է վարդին, երգում անուշակ։
Սարերի գլխի գլխի ձիւները յստակ
Հալւում են, կազմում կարկաչուն առւակ.
Նրա ափերին գոյն-գոյն ծաղիկները
Ներկայացնում են հրաշալի պատկեր։
Ծայրի կատարին, քարին տւած թինկ,
Նստած է հովիւն, սուլում է սրինգ,
Ու նրա չորս կողմ փռւած այծ, ոչխար
Կարծես թէ բռնած լինին սիրուն պար։
Այսպէս ամեն տեղ խինդ ու ցնծութիւն։
Ուրախ են մարդիկ, ուրախ բնութիւն.
Գարունը բերաւ անուշ եղանակ,
Վանեց ծուլութիւն, շնչեց աշխատանք։

Ա Ր Ա Հ Օ Տ

Առաւօտ է։ Ամենքը շարժողութեան մէջ են։ Գիւղացիները արդէն զարթել են այն փոքրիկ թըռչնիկի ձայնից, որ գալիս նստում է երդիկների վրայ ու կանչում. «լծէ, լծէ»։ Նրանք արդէն լծել են իրանց եզներն ու գոմէշները և բաւական վարել են իրանց եզներն ու գոմէշները և բաւական վարել են գետինը։ Տների մէջ մատակներն ու կովերը կթել են։ Ոչխարների հօտն էլ դաշտումը մատղաշ արօտներից արդէն մի քաղցր նախաճաշ է արել։ Տանտիկինն էլ կովերն ու հորթուկներն է դուրս հանում։

Գիւղի աղջկէքը խումբ-խումբ գնում են դէպի կանաչ մարգագետինը, ծաղիկները կոխելով, ծաղիկներ քաղելով և իրար վրայ ածելով ծիծաղելով, խայտալով։ Նրանք հանդիպում են կաքաւների երամին, լորին, արտուտիկին, որոնք խոտերի տակից թռչկոտում են թփից թուփ, ուզենալով իրար նմանուիլ։ (դու ասա՝ աղջկէքը թևաւոր թռչուններ

ըին, թէ թռչուննե՛րը ոտնաթռիկ աղջկանց։ Նրանք անցնում գնում են առաջ՝ բանջարներ ժողովելու և կանչելու։ Աղջկէքը՝ «քա՛, քա՛», կաքաւները «գա՛, գա՛»։

Կռունկը երամով կարաւան է կազմել սլաքաձև, օդի բարձր տեղերումն անցնելով՝ «կռո՛ւ—կռո՛ւ» է կանչում։ Ծառայ եմ ձայնին։

Երկարասրունք արագիլը կտուցը սրած՝ բոյնից դուրս է եկել, «հո՛ղ—հո՛ղ» ձայնելով դէպի դաշտն է վազում ջրի ու ցամաքի օձերը բռնելու և սպանելու։

Զկնկուլը գետերի ափերն է վազում ու «ձը՛կ—ձը՛կ» կանչելով՝ ձուկ-մուկ է որոնում կուլ տալու։

Բաղն ու սագը ջրերի վրայ նստած՝ կայտառ նաւավարների պէս թռուրռում են ու երգում։

Սանրակատար յոպոպը անհանգիստ ոստոստում է և անդադար աղաղակում. «յո՛պ-յո՛պ»։

Դեղնապորտիկը փափուկ ու մաքուր, ճերմակ ու դեղին շորեր հագած՝ փոքրիկ մացառների ու թանձր խոտերի միջից գլխիկը ցոյց տալով ու թաքցնելով՝ իր ձայնըն է լսեցնում։

Սոխակի ձայնն էլ լսում է բոլոր երգողների ձայների հետ և ամեն լսողի ուշք ու միտքը վերացնում։

Բարբարոս բաղէն որոտացող ձայնով վեր ու վայր է սլանում՝ մի անմեղ ու անզգոյշ աղաւնի կամ տատրակ պատառոտելու։

Անգղները, ձրի ապրող աւազակների պէս, մի սպանուածի հոտ առել, գնում են նրա դիակի մսերը կողոպտելու։ Ահա արծիւն էլ երևում է. նրա հզօր թևերի բաղխումից օդը շարաչելով պատռւում է. բոլոր թռչունները միանգամից լռում են, մինչև անցնի հեռանայ այդ ահեղ ու փառահեղ թագաւորը։

Լ Ո Ւ Ս Ա Դ Է Մ Ի Ն

Ազատ ծովը կաշկանդել է մառախուղ,
Քամին փըչեց — և նա ցըրուեց որպէս ծուխ
Քամին ճանպին ասեց անշարժ նաւերին.
«Լուսադէմ է, առագաստներդ թող բացւին»։
Եւ հասնելով ծովի եզերք, նա ուժգին՝
«Ելէ՛ք, ելէ՛ք»—գործի կանչեց ամենքին։
Անտառի խորք սըլանալով՝ չըշընջաց.
«Զարթի՛ր, անտառ, կանաչ կուրծքդ շուտով բաց»։
Թռչնիկների աչքից խըլեց անուշ քուն.
«Երգէ՛ք»—հընչեց նրա շունչը հովասուն.
Թռաւ նա գիւղ, գոչեց. «Վե՛ր կաց, գիւղի մարդ,
Լոյսը բացւել, քեզ են մընում դաշտ ու արտ»։
Հասկին ասեց, սըլանալով արտի մօտ.
«Հըցւի՛ր, լըցւի՛ր, քեզ ժպտում է առաւօտ»։
Զանգակատան նա հասնելով՝ քաղցրալուր
Սուլեց. «Ժամկոչ, առաւօտեան զանգը տո՛ւր»։
Բայց երբ մտաւ գերեզմանոցն անբարբառ՝
Խուլ հառաչեց ու ասաց.
«Քնէ՛ք հանգիստ, մեռեա՛լ մարդի՛կ, քա՛ր աշխարհ,
Ձեր ժամը դեռ չէ հասած»...

ՄԻ ՊԱՏԿԵՐ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՑ

Գարուն էր. տաքացել էին օրերը, բարձր սարերի հալ ընկել ձիւներ, քըչքչան առուներ ու աղբիւրներ դաշտ ու ձոր բռնել։ Կանաչել էր խոտը, ծաղիկներ ծաղկել և անուշ բուրմունք ամեն տեղ սփռել։ Մարդ ու անասուն, թիթեռ ու թռչուն ուրախ ու զբաղրթ ամեն կողմ լցւել...

Մաճկալը հանդում իր վարն էր անում. նախըրչին՝ դագանակն ուսին՝ կով ու գոմշուկին առաջ բռած առում. հորթարածը իր հորթերն առած խոզարածն իր խոզն ու գոճին, գառնարածը՝ փափկիկ ու նախշուն գարներն առաջին, ինչպէս և հո-

վիւը խուրջինը շալկած, բրդոտ ոչխարները առաջը ձգած՝ «հի՛, հէ՛ս, հո՛, հա՛» բարձր բղաւում, կանչում ու շրւում և կանաչ խոտում արածացընում։

Իսկ մեր թռչնիկները՝ բըմբլոտ հաւիկները, ծիծեռնակ, սարեակ ու քաղցրիկ սոխակ, լոր ու մշահաւ, արտուտ ու կաքաւ սիրուն ճըլւլոցով, անուշիկ երգով թփից ծառ թռչում, ծառից դէպ ծաղկունք, ամենքի սիրտը իրանց են գրաւում։

Բայց այն թիթեռները, նախշուն բզէզները, որ խոտերի մէջ վեր-վար են ցատկում, բըզզում ու տրզզում ու յանկարծ խոտից մի այլ տեղ թռչում, դըռդըռան ձայնով թռչնոց երգերի դամբ լաւ պահում, ինչքան քաղցրութիւն են մեզ պատճառում...

Բայց այս դեռ ոչինչ. ահա կէս օր է. արևը վերևից կրակ է թափում, բայց դաշտավայրից ամենքին քշում դէպ խոր-խոր ձորեր և կամ տերևոտ ու զով անտառներ։

Հանդն ու արօտը պահ մի լռեցին, թըռչկան հիւրերից զրկւեցին, միայն դեռ հովտում քըչքչան առւի վշշոցն է լսւում։ Ահա մեր մաճկալն իր մաճը թողեց, եզների վզից սամիքն արձակեց, հօտաղ ու մշակ իր շուրջը առած՝ թանէ սպասը մէջ տեղը քաշեց...

«Կերէք, տղէք ջան, ձեր ջանին դուրբան, այսօր լաւ օր է, աշուկ է մեր բան»։

Բայց ահա հովտում մի ձայն է լսւում. լուռ կացէք. այդ հովիւն է իր սրինգը փչում, բրդոտ ոչխարները ջրելու տանում։ Ահա ոչխարի տուրը երևաց. գլխները քարշ՝ գնում են գնում, մի-մի բառաչում կամ թէ խոտ կծում ու սաստիկ տաքից հազիւ հազ քայլում։ Վերջապէս հասան առւրի ափին, գլխներն իսկոյն ամենքը մեկնեցին ու պաղուկ ջուրը անուշ փոսոցով իրանց քաշեցին։ Սրանք մայրերն են, բայց ՞ւր են գառներ, սրանց զաւակները։ Նրանք քիչ հեռու՝ մի բլրի վրայ կաթի փոխարէն խոտ են արածում, գլուխնին ծռում,

դէս ու դէն նայում, անուշ մայունով կանչում, բղաւում։ Եւ ահա հասաւ կթելու ժամը. ոչխարը նստած տեղից վեր կացաւ, իսկ բլրից գառները խունջիկ ու մունջիկ՝ առւի մօտ եկան... մայրը գառնուկին, գառը մայրիկին պտրում պըտրտում է հարիւրի միջին... բառաչ ու մայիւն ու իրարանցում շարժում է ամենքի սիրտն ու հոգին...

Տէս, ահա ձայնով գտան մէկ մէկու. լռիկ ու մնջիկ կանգնեց մեր մաքին. գառնուկն առաջի երկու ոտք ճկեց և մօր ստինքներն իր բերան քաշեց. անուշ մշշոցով ծծում է, ծծում, իր փոքրիկ դնչով մօր կուրծքին խփում, երբեմն էլ մօր ծիծը ատամների տակ ձգում ու կծում ու շատ ցաւեցնում. բայց ներող մայրը իր լեզուն հանած՝ սիրուն զաւակի դնչիկն է լիզում ու մի հրճւանքով նրան գուրգուրում...

Անցաւ մի րոպէ. ահա կովկիթներ, կաւէ պըտուկներ շրը՛խկ ու թրը՛խկ մէջ տեղ շարւեցին և հարս ու աղջիկ՝ ձեռքերնին ծալած՝ հովիւների հետ կիթն սկսեցին. խ՛ըժ, բը՛ժ, խը՛ժ, բը՛ժ—լսւում են ձայներ, փըրփըրուն կաթնով լցւում ամաններ, իսկ մեր հեզ մաքին միամիտ կանգնած է տիրոջ առաջին...

Երբ վերջացրին, հովիւներն իսկոյն մայրը իր որդուց նորից բաժնեցին, առաջւայ կարգով արօտ քշեցին...

Սիրում եմ, այո՛, գարնան եղանակ,
Երբ որ ծաղկում են հանդ ու դաշտօրայք.
Անցնում եմ յաճախ ես նրանց միջով
Եւ միշտ հրճւում եմ բնութեան տեսքով...

Հ Ո Վ Ի Ւ

Ծառի հովանին, տերևի շըրշիւն,
Տըխուր ողբերգակ աքքիւրի շաչիւն,
Հաճելի դիրքը գմբուխա կանաչով,
Մի սքանչելի գեղեցկութիւնով
Միշտ ասում են քեզ. Ո՛վ դու անցաւոր,
Ո՛վ ինքնահաւան դու ճանապարհորդ,
Ինչո՞ւ չես գալիս այս հազարաւոր
Բարութեան լինում մասնակից կցորդ։
Եւ ահա հովից մի քաղցր քամի
Բերում է իր հետ աննշան ձայներ։
Լաւ ականջ դիր դու... Այն խաշնարածի
Սրնգի երգն է։ Եկել է գիշեր.
Կանչում է գառներին հանգչիլ խաղերից
Եւ պատսպարուիլ պատառող գայլից։

Մ Ի Օ Ր Գ Ի Ւ Ղ Ո Ւ Մ

Սիրելի քաղաքացի ընթերցող, եթէ քեզ մի քիչ անախորժ կրթուի ինձ հետ պտրտիլ գիւղի մէջ, ուր առաջին անգամ ոտք պիտի դնես և ուր չես գըտնիլ այն մեծ-մեծ տներն իր կարգուսարքով, այն լայնլայն փողոցներն իր գրաւիչ խանութներով, այն կոկիկ հագնւած պարոններն ու տիկիններըը, որ անգադար չափչըփում են վերուվար, մի խօսքով՝ այն նիստուկացը, որին դու սովոր ես, սակայն արժէ գոնէ մի օր գիւղականի պարզ կեանքը տեսնել և նրա մխոտած կտուրի տակով անցնիլ...

Ահա մօտեցանք. տեսնում ես այն քարաժայռին կպած հարիւրաչափ տները, որոնց երդիկից ծուխ է բարձրանում և ուր լսւում են շների հաչոցը, աքաղաղների կուկլիկուն, եզան ու կովի բառաչը, գոմշուկի տըրլընգոցն ու ձիանների խըրխինջը. դա մի գիւղ է։

Կանգնիր մի րոպէ. ահա մեր շինականը՝ մո-

թալ փափախը գլխին, տրեխները հագած, խուրջինն ուսին՝ հանդն է շտապում, եզներն առաջին։

Ահա նախրչին՝ պռոշ հացերն իր մէջքին կապած՝ գիւղի մի ծայրում նախրին է սպասում, իսկ գամփռ շունը պոչը վեր տնկած՝ դէս ու դէն նայում։

Տես այն վայտհատը, չըվանն ուսով, ցաքհատը գոտկում, ճախեր կտրելու անտառ է գնում. իսկ այն ծերունին՝ ցուպը դէմ տալով, պարկը շալակած՝ ջաղաց է տանում։

Ահա հնձւորներն իրանց մանգաղով, խոտհար, այգեպան գերանդով, բահով, ծիծաղ և ժպիտ ամենքի դէմքին. գնում է մէկը դէպի իր արտը, միւսը իր արօտը, երրորդը այգին...

«Դը՛նդ, դը՛նդ, դը՛նդ»...

Այս առաւօտեան ժամի կոչնակն է. դէ, մըտնենք գիւղը։ Նայիր ինչպէս ծերեր ու պառաւներ, փայտերը տըմտըմբացնելով, եկեղեցի են գնում, իսկ հարսները քըթկալով բերանները ծածկած, աղջիկները կարմիր աղլուխը գլխներին փաթաթած, կժերն ուսերին՝ դէպի աղբիւրն են վազում։ Տես այն տանտիկինը՝ թոնրի մօտ նստած, հացհանը կողքին, տէփն իր ձեռքում, տան հացն է թխում, իսկ իր աղջիկը թաբախը գլխին՝ պիւլերն է կրում։

Ահա մի ուրիշն աւելը ձեռքին տան բակն է աւլում, իսկ նրա դրացին իր հաւ ու ճըւին կուտ է շպրտում։

Տես այն կինը՝ կովկիթը ծընկան՝ կթում է կովը, իսկ իրա մարդը, ուրագը ձեռին՝ շինում է լուծեր...

Անցնենք միւս կողմը. նայիր այն տղաներին, որոնք գլխաբաց, ոտաբաց, որն այծն է տանում արածացնելու, որը հորթի կապը բռնած՝ եռևից քաշ է տալիս, որն էշն առաջին չոր-չոր է անում. այնտեղ մի պառաւ ճախրակ է մանում, իսկ իր հարսները ոստայնը հինած՝ կարպետ են գործում...

Սիրելի քաղաքացի, թողնենք մի րոպէ փողոցները ու սրահները և մտնենք տներ։ Կասկածում ես, որ քեզ չեն ընդունիլ. ոչ, գիւղացու դուռը բաց է ամենքի համար. ուր որ գնաս, աչքի վրայ տեղ ունես. մտիր համարձակ...

Տեսնո՞ւմ ես այս մխոտած մեծ տունը, որ չորս հսկայ սիւների վրայ կոթնած մի դուռն ունի միայն ու մի երդիկ, որից թէ լոյսն է մտնում և թէ օջախի ծուխը բարձրանում։ Այստեղ աչքի չեն ընկնում մեր տիրուհիները ու սեղանները, հայելիքն ու կանթեղները, շողշողուն զարդն ու զարդարանքը... Առաստաղը սև կոճեր են, յատակը՝ չոր հողը, կահկարասիքը՝ կարպետներն ու գորգերը, կաթսաներ ու կճուճներ, թաբախներ ու գուշեր, բոխու, կմախուկի, դանդուռի ու խիարի օշնակներ, պանրի մոթալը, եղի ու թանի կարասները, ալրի ամբարը, սիսեռի ու լոբու չրլանները, սոխի ու սխտորի շարոցները, պատին քաշ արած ժանգոտ թուրն ու հրացանը, դռան մօտ ընկած խուին ու ձևիչը, կացինն ու ցաքհատը։

Ահա այս կտուրի տակ է ապրում մեր գիւղացին իր եղբայրներով, որդիներով, հարսներով ու թոռներով, որոնց թիւը հասնում է երեսնի, քառասնի։

Այս կտուրի տակ են անցնում և նրա ուրախութեան ու տխրութեան ժամերը...

Կուզե՞ս տեսնել ցորենի ու գարու հորերը, գոմանոցն ու ախուռը, կալն ու մարաքը, բոստանն ու այգին, բայց այդ էլ մի ուրիշ անգամ...

Արդէն կէս օր է, հնձւորի ճաշի ժամանակն է. նայիր, տանտիկինը վեր կացաւ, կրակը թեժացրեց, կասկարանքն ուղղեց ու թանով լիքը կաթսան վրան դրեց... օջախը վրթվրթում է, ծուխը քուլա-քուլա երդիկից բարձրանում է և մեր տանտիկինը՝ աչքերը ջրակալած, շերեփը ձեռքին՝ կաթսան է խառնում... Ահա պըլթպըլթաց, եփ եկաւ... աղն

ու բրինձը ձգեց... մի քանի պըլթպըլթոց էլ՝ ու թանապուրը պատրաստ է... Տես, քոյր ու եղբայր դուրս եկան տանից, մէկը հացն ու պանիրը, սոխն ու մածնի քսակը շալակին, միւսը սաթլով թանապուրը ձեռքին, քըչփըչալով տանում են իրանց հօրը...

Թողնենք տղաներին ու աղջիկներին, որ հանդի ու այգիների ճանապարհը բռներ՝ հնձւորի, մշակի հացը տանեն, մենք դառնանք տանեցիներին, որ ձեռքները լըւացած՝ նստել են ճաշի։ Բայց այն ճաշը չէ, ինչ որ քաղաքում. սփռոցի տեղը փայտէ թաբախն է, դանակ-չանգալի՝ իրանց հինգ մատները, սուփ ու բուլիօնի՝ թանովն ու մախոխ, կատլետ-ժարկօյի՝ փիփերթն ու գունդ սոխ։

Ուտում է ախորժակով մեր գիւղացին, ցուրտ չուրը գլխին խմում, փառք տալիս Աստծուն, երեսը խաչակընքում ու նորից իր գործն սկսում...

Երեկոյ է. արևն անցաւ սարի քամակը, գիւղը նորից կենդանութիւն առաւ. մի կողմից լսւում է գղրի ճըղճղոցը, որ կտուրներին կանգնելով՝ յայտնում է տանուտէրի հրամանը. միւս կողմից մարդկանց հարայ-հրոցը, շների, ձիերի, կովերի խառն ու ողողակը։ Հօտաղ, հնձւոր, նախրչի, հովիւ, այգեպան, պարտիզպան՝ ամենքն էլ դառնում են տուն. որը երգում է, որը շըւշըւացնում, որը դուդուկը փչում կամ ձիուն, էշին գո՜հ ու չո՜ւ ասում...

Ահա մեր գիւղացին իր տունը հասաւ, անասուններն տեղաւորեց, գլխին հաւաքեց ընտանիքը և լուսնի լուսով իր ընթրիքն է անում...

Գիշեր է... բաց երկնքի տակ, մի չոր անկողնում քնած է գիւղացին... ձայն-ձուն չկայ. քնած է և բոլոր գիւղը. միայն գիշերային այդ լռութեան մէջ երբեմն-երբեմն լսւում են ծծկեր երեխաների լացի ձայնը, գորտերի կռկռոցը, մժեղների տըզտզալը և շների հաչոցը...

Աստղերը վերևից պլպլում են, լուսինը ծառե-

ըի ճղներից, տների երդիկներից թափանցելով՝ լուսաւորում է յոգնած մշակների սևացած դէմքերը...

Բարի գիշեր ու հանգիստ քուն, չարքաշ գիւղացի. քեզ էլ բարի գիշեր, փափկասուն քաղաքացի...

ԳԻՒՂԻ ԺԱՄԸ

Տան-դօ, տան-դօ... Նազլու, վեր կաց,
Արևն արդէն մայր է մտնում.
Տես, Խաթունն էլ գործը պրծած՝
Փողոցումն է, ժամ է շտապում։
Ժամը տըւին — տան-դօ, տան-դօ...
Տէր, փառքըդ շատ. տան-դօ, տան-դօ...
Շուտով նախիրն հանդից կըգայ.
Գընանք, որ շուտ էլի յետ գանք,
Կովը կթենք, թըռ-թըռ կաթ տայ,
Կովը կթենք, մեր ցաւն հոգանք...
Ա՛խ, Նազլու ջան, չես իմանում —
Էգուց էլի աղան կգայ.
Նրա սիրտը միշտը անկշտում,
Էլ ամպի պէս պիտի գոռայ։
«Շուտով, Գրիգոր, փողերը բեր...
Էլի չըկայ. կովըդ հանիր»...
Ա՛խ, Նազլու ջան, այն ինչ բան էր,
Մի՞տդ է, հերու... Տէր, դու փրկի՛ր։
Հայրիկդ արդէն գընացել է,
Որ փող ճարի. ետը պիտի գայ.
Տեսնենք մէկը խղճացել է...
Ա՛խ, սև օրը Տէրն էլ չըտայ։
Շուտով, Նազլու, գընանք ժամը,
Աղօթք անենք, քո ձայնն Աստուած
Շուտ կըլսի — այս անգամը
Մեզ չի թողնիլ անկով, անհաց...
Բարի մարդիկ միշտ կըլինին,
Հայրիկդ հետը փող կըբերէ.
Փողը կըտանք չար աղային,
Որ մեր հորթուկն էլ չըխլէ...
Տան-դօ, տան-դօ... Նազլու, գնանք.
Արևն արդէն մայր է մտնում.
Էգուց տեսնենք, որ վեր կենանք,
Ի՞նչ նոր արև է մեզ ծագում...
Ժամը տըւին — տան-դօ, տան-դօ.
Տէր, փառքըդ շատ, տան-դօ, տան-դօ։

ԳԱՐՈՒՆԻՒՅ ՄԵԾ ՏՕՆԵՐԸ

ՄԵԾ ՊԱՍ

Մեծ պասն ու ձմեռը շատ նման են միմեանց։

Մեծ պասը ապաշխարութեան պաս է, ախտս միայն, որ աւելի նրանք են ապաշխարում, որոնք ոչինչ մեղք չունին։

Մեծ պասին քաղցը կերակուրներից զրկւում ենք և ուտում թթու, կծու, դառը, աղի, որթիպ և ամեն տեսակ անհամ ու անհիւթ բաներ։

Զատիկը որ գալիս է, պրծնում ենք այդ տեսակ կերակուրներից։

Զատիկը որ կայ՝ Մեծ պասի գարունն է։ Կարծես հարազատ եղբայրներ լինին — Ձմեռն ու Մեծ պասը և Գարունն ու Զատիկը։

Մեծ պասի վերջերին՝ դաշտային տեղերում հանդում են տեսակ-տեսակ կանաչեղէններ ու սունկեր, բայց դրանք ամենն էլ միևնոյն գաւառում չեն լինում։

Մի տեղ լինում է փիփերթ և աւելուկ, մի տեղ կըռմզուկ (սւինարի), ձնեփակ և խազազ, մի ուրիշ տեղ՝ տոմբալան, խնջլոզ, շրէշ և ուրիշ կանաչեղէններ։

Այդ խոտերը եփում են դառը կամ քաղցր ձիթով և կամ շոր-շոր։ Տաւարածները հանդումը

եղինճ են ուտում, որ առաջ աղով տրորում են բուռներում։

Եթէ Մեծ պասը ձմեռւայ կարճ օրերին լինէր, շուտ անց կըկենար, բայց Մեծ պասի օրերը երկարում են։ Օրէնը հինգ անգամ հաց ենք ուտում, էլի չենք կշտանում։

Լոբին ու սիսեռը, ոսպն ու մաշը, բակլան ու կարտոփիլը թէպէտ բարի պտուղներ չեն, բայց ամեն տեղ չեն էլ գտնւում, որ էլի, ինչ կուզի լինի, սոխ ու սխտորից, զոխ ու բոխից աւելի անուշ կըտան մարդու։

ՕՐՕՐՕՑԻ ԵՐԳ

Արի, իմ սոխակ, թող պարտէզ, մէրին,
Տաղերով քուն բեր տղիս աչերին.
Բայց նա լալիս է. դու, սոխակ, մի գալ,
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ։
Ե՛կ, աբեղաձագ, թող արտ ու արօտ,
Օրօրէ տղիս, քնի է կարօտ.
Բայց նա լալիս է. դու, ձագուկ, մի գալ,
Իմ որդին չուզէ աբեղայ դառնալ։
Թող դու, տատրակիկ, քո ձագն ու բունը,
Վույվույով տղիս բեր անուշ քունը.
Բայց նա լալիս է. տատրակիկ, մի գալ,
Իմ որդին չուզէ սգաւոր դառնալ։
Կաչաղակ ճարպիկ, գող արծաթասէր,
Շահի զրուցով որդուս քունը բեր.
Բայց նա լալիս է. կաչաղակ մի գալ,
Իմ որդին չուզէ սովդագար դառնալ։
Թող որսըդ, արի, քաջասիրտ բազէ,
Քու երգը գուցէ իմ որդին կուզէ։
Բազէն որ եկաւ, որդիս լռեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քնեցաւ։

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Մեծ պասը ամբողջ վեց շաբաթ տխուր ու բարկացած ծնալուց յետոյ՝ յանկարծ սկսում է ծիծաղիլ խնդալ, ուրախանալ։

Այդ լինում է Ծաղկազարդին։

Ամբողջ տարւայ մէջ եկեղեցին ոչ մէկ անգամ այնպէս լիքը չի լինում, ինչպէս Ծաղկազարդի գիշերը։

Մեծ ու փոքր, ծեր ու մանուկ, մարդ ու կին, նորահարսներ ու նորափեսէք, նշանած ու նշանւելու տղէք ու աղջկէք, հանդերից հաւաքւած տաւարածներ, հովիւներ, խոզարածներ,—մի խօսքով՝ ամենքը, ամենքը, Ծաղկազարդի գիշերը ժամուն են լինում։

Հէնց որ մտնում ես եկեղեցին, կարծում ես թէ մի հարսնքատուն ես մտել։ Ամենքն էլ իրանց հին ու կեղտոտ հագուստը փոխած, նոր զարդարանքներով զարդարւած, մաքրւած, գեղեցկացած։

Եկեղեցու պատերի, սիւների, ջահերի, աշտանակների վրայ էլ տեղ չի լինում, այնքան մոմեր են լինում վառած։ Բացի դրանից՝ ամեն մի հոգի մէկ-երկու վառած մոմ էլ ձեռին է ունենում բռնած։ Նշանած աղջկերանց ձեռքի մոմերը ոսկի վարագով նախշած են լինում։

Եկեղեցու մէջ այնպիսի աղմուկ ու աղաղակ է լինում, որ չի լսւում, տէրտէրն ինչ է ասում, տիրացուն ինչ։

Փոքր երեխաների ճիչն ու աղաղակը, հարսնեբի քըչփըչոցը, տաւարածների քըրքչոցը, ծերերի հազալը, ժամհարի բարկանալը, այդ ամենը իրար խառնւած՝ եկեղեցին շինում են մի ճշմարիտ որ հարսանքատուն։ Ճռռանն ու ճչանակն էլ միասին հարիւր երեխայի ձեռքում՝ մի այնպիսի աղմուկ ու աղաղակ են բարձրացնում, որ կարծես եկեղեցու պատերի բոլոր քարերը լեզու առած՝ գոռալիս

լինին։ Եւ շատ ճիշտ է կատարւում այն ասածը, թէ՝ «եթէ մարդիկը լռեն, քարերը կաղաղակեն»։

Այդ խօսքը Քրիստոսի ասածն է։ Նա որ Երուսաղէմ էր մտնում, քաղաքի բոլոր երեխայքն ու ծերերը գնում են նրա առաջը, ձեռքներին ձիթենու և արմաւենու թարմ ճիւղեր բռնած, և միաբերան կանչում են.

—Բարի՛վ, հազար բարի՛վ ես գալիս Դու. օրհնեա՛լ և բարի՛ լինի Քո գալուստը. Քեզ Աստուած է ուղարկել մեզ մօտ, որ մեզ ազատես գերութիւնից...

Այս որ լսում են քաղաքի իշխանները, սաստիկ բարկանում են և ասում Քրիստոսին.

—Ասա այդ մանուկներին ու ծերերին, որ լռեն և քեզ այդքան փառք ու պատիւ չըտան։

Այդ ժամանակ Քրիստոս նրանց պատասխանում է.

«Եթէ սրանք լռեն, քարերը կաղաղակեն»։

Ծաղկազարդը իր այս կերպարանքով մեր այն տօներիցն է, որոնց մէջ մարդկայինն աստուածայինի հետ, երկրայինը երկնայինի հետ, ազգայինը եկեղեցականի հետ այսպէս հաշտ ու գեղեցիկ կերպով խառնւած, միացած է։

Այս տօնի մէջ մարդ աշկարա տեսնում է, որ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսը, Նա, որ այնքան սիրում էր երեխաներին և գեղեցիկ խրատներ էր տալիս,—մտել է մարդկանց մէջ և ուրախակից է նրանց ուրախութեանը։

Ահա ուռի ճղներից մեծ-մեծ խուրձեր կապած՝ դրած են եկեղեցու մէջ տեղը։

Երբոր ժամանակը հասնում է, վրայ են թափւում և կոտրտում։

Պէտք է տեսնել, թէ ինչ ճըռթճըռթոց է բարձրանում, ինչպէս շտապում են ամենքն էլ, որ մի-մի ճիւղ ունենան ձեռներին և նրանով դիմաւորեն Քրիստոսին, ինչպէս որ դիմաւորել են նրան Երուսաղէմացիք արմաւենու և ձիթենու ճղներով։

Երբոր ժամասացութիւնը վերջանում է, դեռ լոյսը բացւած չի լինում։ Ամենքն էլ դուրս են գալիս և տուն գնում խումբ-խումբ, ճղները ձեռքներին, վրան մոմեր վառուած։

Այս ու այն կողմ ցրւելով, ամբողջ գիւղը լուսաւորւում է։ Ամեն դռան, ամեն կարի, ամեն փողոցում լոյս է երևում և ամեն կողմից ուրախութեան ձայներ են լսւում։

Վերջապէս ամենքն էլ մտնում են իրանց տները, ճղները խրում են պատերի արանքները և սուրբի պէս պահում։ Մոմերն էլ հանգցնում են, որ երբ, Աստուած մի արասցէ, տան մէջը մի նեղութիւն պատահելու լինի կամ կարկուտ լինի գալիս, վառեն։

Այսպէս ամենքն էլ ուրախ են լինում այդ օրը, ամենքն էլ հաղորդւում են. բայց ամենից շատ ուրախ են լինում այն նշանւած աղջկէքը, որոնք խնամոց տանից լաւ-լաւ ընծաներ են լինում ստացած եկեղեցումը։

Զ Ա Տ Ի Կ

Ծաղկազարդից մի շաբաթ անցած՝ գալիս է Զատիկը։ Այդ վերջին շաբաթն այնքան երկարանում է երեխաների համար, որ նրանց թւում է, թէ մեծ պասը էլի նոր մէկանց սկսւել է։

Երեխէքը մի-մի կարմիր ձու ձեռքներն առած՝ մտիկ են տալիս վրան, բերանների ջուրը գնում է, բայց ուտելու իրաւունք չունին։ Պաչպըչում են, գնում գրպաններումը, մէկ էլ հանում, մէկ էլ պաչպըչորում, գնում ծոցներումը, էլի հանում, պաչպըչում...

Ուեղճ երէխէքը այսպէս տանջւում են, մինչև լսում են զանգի ձայնը. վազում են եկեղեցի, ձուն կպչում, պատրաստ պահում, և հէնց որ տէրտէրն

ասում՝ է «Առէք կերէք», իսկոյն բերաններն են ձգում։

Վերջապէս ժամը դուրս է գալիս, ամենքն էլ իրար Զատիկ շնորհաւորում են՝ ասելով.

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Զատիկը Քրիստոսի յարութեան յիշատակն է։ Հրէաները Քրիստոսին խաչեցին խաչափայտի վրայ այնպէս, ինչպէս որ տեսնում էք եկեղեցում։ յետոյ թաղեցին, բայց նա երեք օրից յետոյ կենդանացաւ, վերկացաւ գերեզմանիցը, գնաց իր աշակերտների մօտ և ասաց նրանց.

«Ահա տեսնում էք, որ ես կենդանի եմ։ Դէ, գնացէք այսուհետև ամեն երկրում և ամեն ազգի մէջ քարոզեցէք, որ ես կենդանի եմ և կենդանի կըմնամ միշտ այն մարդկանց սրտում, որոնք կը հաւատան իմ ասածներին և կը կատարեն իմ պատուէրները»։

Աշակերտներն էլ տարածւեցին ամեն կողմը, ամեն աշխարհք և Քրիստոսի ասածները քարոզեցին։

Այդ քարոզութեան օրինակն է, որ Զատկին տէրտէրը պըտըտում է ժողովրդի մէջ և ամենի տուն օրհնում։

ԶԱՏԿԻ ԵՐԳ

Հողմը հնչեց ի հարաւէն,
Ազատւեցան դաշտք ձիւներէն,
Բերկրութիւն է ամեն տղոց.
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։
Առուները խոխոջացին,
Ծառերը բողբոջ արձակեցին,
Օդը լի է ձայնիւ թռչնոց.
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։
Տղայ, աղջիկ ուրախ, զւարթ՝
Փթթեցան գերդ մայիսի վարդ.

Ոխ, քէն չունի սիրտը մարդոց.
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։
Քրիստոս յարեաւ... կասկած չկայ,
Բնութիւնն համայն է մեզ վկայ...

ՀԱՅՐ ՅՈՎՍԷՓ ԵՒ ՄԱՆՈՒԿ ՅԻՍՈՒՍ

«Հայրիկ, խնդրեմ ինձ ասես,
Այսօր ինչո՞ւ են այսպէս
Կարմիր հագնում ամենքը
Եւ կատարում մեծ հանդէս»։
Հարցնում է Զատկի ոօնին
Մանուկ Յիսուսն Յովսէփին,
Որ նստած էր տխրադէմ
Իր խրճիթի առաջին։
Յովսէփ տըւաւ պատասխան.
—«Կարմիր գոյնը, հոգի Ջան,
Եթէ կուզես իմանալ,
Ուրախութեան է նշան.
Այսօր բոլոր աշխարհում
Ուրախութիւն է տիրում,
Արեգակն էլ երկնքից
Ուրախ զըւարթ է նայում.
Դաշտերն էլ են կարմրել,
Կարմիր ծաղկով զարդարւել.
Այսօր է մեր պարտէզն էլ
Վարդի նման բաց էլել.
Տես ծըտերը պարտիզում
Ինչ ուրախ են ճըւճըւում,
Կարծես նրանք էլ մեզ պէս
Զատկի ոօն են կատարում»։
—«Իսկ դո՞ւ, հայրիկ, դու մխայն
Ենթարկւած ես տխրութեան.
Դէմքիդ վրայ չեմ տեսնում
Ուրախութեան մի նշան»։

—«Այո, որդեակ, ուրախ չեմ,
Քեզանից ինչ թաքցընեմ.
Ամեն Զատիկ լինելիս՝
Ինձ կըտեսնես տխրադէմ։
Զատկի կարմիրն իմ աչքում
Արիւնի է փոխարկւում,
Արիւն անարատ գառին՝
Խաչ-կապ քսած դռներին,
Որ անդրանիկ մանուկները
Մահւան ձեռքից ազատւին։
Մահն արիւնով է յաղթւում՝
Արիւնն արնով լըւացւում,
Եգիպտական ճանկերից
Արիւնով ենք ազատւում։
Այսօր կարմիր արեան տեղ
Գործ են ածում կարմրադեղ,
Կարմիր գինի, կարմիր ձու,
Կարմիր հագուստ փառահեղ»...
Ասեց Յովսէփ և լուեց.
Դէմքն արեան պէս կարմըրեց,
Որդու վրայ նայելով՝
Ծոր հառաչանք արձակեց։
—Հայրիկ, հայրիկ, մի տխրիլ,—
Ասեց հօրը Սուրբ Որդին,—
Ես արիւնըս չեմ խնայիլ,
Ձոհ կլինիմ իմ ազգին։

Ա Մ Ա Ռ

Տարւայ եղանակներն այնպէս են յաջորդում միմեանց, ինչպէս մարդուս հասակը։

Գարունը երեխայի նմանութիւն ունի։ Գարունքին ամեն ինչ նոր է ծլում, բողբոջում։ Թռչնիկները դեռ ոչ ձու ունին, ոչ ձագ։ Նրանք աշխոյժ և ուրախ մանուկների պէս անդադար թրթռթրթռում, անդադար թռչկոտում են, և նրանցից շատերը իրանց կեանքի մէջ առաջին անգամն են բոյն շինում։ Միւս բոլորն էլ, ինչ-որ տեսնում ենք գարունքին—խոտ, ծառ, ծաղիկ, ճանճ բզեզ—ամենքն էլ երեխայի կերպարանք ու բնաւորութիւն ունին։

Երեխան քիչ-քիչ աճում, զարգանում է։ Այդ աճման շարժւիլը մենք չենք տեսնում, բայց մէկ էլ տեսնում ենք մեծացած, հասակն առած։ Գարունքն էլ այսպէս մեծանալով, օրէցօր նորանոր գեղեցկութիւններ ցոյց տալով՝ մտնում է իր երիտասարդութեան հասակը, այսինքն դառնում է ամառ. յետոյ էլ աւելի չափահաս է դառնում, այսինքն աշունքանում է և վերջապէս ծերանում է և ապիտակում, ինչպէս ձմեռը։

Ճշմարիտ որ՝ գարնանային օրերը քանի գնում, երկարանում են և աւելի տաքանում։ Ծաղկազարդ ծառերը փոխում են իրանց ծաղկեայ բարուրն ու պատմուճանը և զարդարւում աւելի խիտ ու պինդ հագուստով, այսինքն լայն-լայն տերևներով և նրանց մէջ թաքցնում իրանց գոյն-գոյն և անուշահոտ պտուղները։ Քանի որ անմեղ երեխայ էին, իրանց կիսամերկութիւնից չէին ամաչում, ինչպէս Ադամը, որ երբ արգելած պտուղը կերաւ, իր լուսեղէն և ծաղկեայ պատմուճանից էլ զրկւեց և ծածկւեց լայն-լայն տերևներով, որովհետև երե-

խայական անմեղուԹիւնը կորցրել էր և սկսել էր ամաչել իր մերկուԹիւնից։

Երեխաների բերանների ջուրը գնում է, երբ որ տեսնում են նորափԹիԹ պտուղները—շլորն ու ծիրանը, տանձն ու խնձորը, հաղարճն ու կեռասը, դեղձն ու դամոնը։ Էլ այնքան համբերուԹիւն չունեին, որ սպասեն մինչև իրանց լաւ հասունանալը։

Ծակ-խակ ուտում են, բերաններն առցնում, այնպէս որ՝ էլ հաց ուտել չեն կարողանում, Թէև փորները վեց-վեց է անում։

Եթէ մանուկներն իմանային, Թէ որքան վնասակար են խակ պտուղները ԹէՀ ատամներին և ԹէՀ իրանց առողջուԹեանը, երբէք չէին ուտիլ։ Ճաշակը նրանց իմաց է տալիս, ասում է՝ «խակ է, ԸերԹու է, դեռ ուտելու ժամանակ չէ, մի ուտէք», ատամներն աւելի են կրճըտում, բարկանում, ԹէՀ «էլ չենք կարողանում կրծել, մեզ մի տանջէք». բայց կամակոր և անմիտ մանուկներն ուտում են և պատիժն էլ կրում, Թէպէտ իրանք չեն հասկանում, ԹէՀ այն ցաւը, այն ջերմն ու տենդը ինչից հանդիպեց իրանց։

Վերջապէս խակ պտուղները միմեանց ետևից հասունանում են։ Կեռասը դեղնում, կարմրում է և Ըուշերը պլպլացնում։ Սև ու սպիտակ Ըութը ծածկում է ծառի յատակը։ Կանանչ վարունգի հոտով ամբողջ բուրաստանը բուրում է։ Նրա ետևից հասնում են և սեխն ու ձմերուկը, անուշահոտ ու նախշուն շամամը։

Ամառը երկրագործի աշխատանքի ամենաԸունդ ժամանակն է։ Երկրի բերքերն այնպէս շուտ-շուտ են հասնում իրանց ետևից, որ եթէ տան մէջ աշխատող ձեռքերը շատ չըլինեին՝ մենակ մարդը կըշըշկլուի, ոչ մի բան էլ չի կարող անել։

Դեռ գարունքաւարը, ցել անելը չըվերջացած՝ խոտը գալիս հասնում է, որ եթէ շուտ չըհաւաքի, կըվըղանի, այսինքն հարելու ժամանակը կանցնի,

կըփչանայ։ Ձեռք է գարկում խոտին, միւս կողմից գարին է հասնում. եթէ Ըութն ունի, արագ պիտի քաշի, նա է Ըափւում ծառերիցը. եթէ այգի ու բանջարանոց ունի, նրանք էլ այնտեղ են չորանում, ջրւել են ուզում։ Մինչ այս, մինչ այն, աշնանացանն է հասնում. նրան հետևում է գարնանացանը։

Եթէ դաշտային տեղ է գիւղը, պէտք է երեխէքը տաւարը սարը տանել, ամառան շոքերին նրանց դաշտումը կարելի չէ պահել, բայց սարումն էլ նրանց պահող, պահպանող է պէտք։

Հունձն ընկնում է. մշակ չի ճարւում։ Մենակ մարդն ինչ կարող է անել, ձր մէկին հասնէ։ Մինչև մէկ արտը կըհնձի, միւսը կըկծղի։

Այսպէս՝ երկրագործի ամառային աշխատուԹիւնն այնքան շատ է և բազմակողմանի, որ մի հոգին ամեն բանի հասնել չի կարող։

Այս հանգամանքը մէկ լաւ պատճառ է, որ ամենքն էլ ընկերովի աշխատեն, եղբայրները միմիանցից շուտ չըբաժանուին, մինչև որ հասած որդիք ունենան. դրացին դրացու հետ ամեն բանում հրաքաշ լինի, աշխատակից ընկերակից։ Եւ առաջ հէնց այդպէս են եղել ամենքը։ Բայց հիմայ այդ ընկերուԹեան, եղբայրասիրուԹեան ոգին վերացել է մեր գիւղերից։

Ամառային աշխատուԹեան շատ մեծ օգնուԹիւն են անում և մանր երեխէքը, ԹէՀ աղջկէք։ Նրանք եղները պահում են, խոտ ու խուրձ բարձելիս՝ սայլի առջև կանգնում են, հօտաղուԹիւն են անում, բանւորներին հաց ու ջուր են տանում։ Ամեն բանում ԹեԹևաշարժ սուրհանդակի պաշտօն են կատարում, արագ-արագ ոստոստելով և ուրախ-ուրախ Ըռչկոտելով։ Բայց լինում են շատ ծոյլ, խլականջ, դանդաղ և անպէտք երեխէք էլ, որոնք ոչ մի բանի պէտք չեն գալիս։ Ափսոս այդպիսիների կերած հացը։

Տղան ամեն բանում պէտք է քաջ և ճարպիկ լինի, աշխատելուց չըպիտի փախչի, բանից չըպիտի վախենայ, ամեն բան, ինչ-որ ձեռքիցը կըգայ, պիտի անի։ Կարդալու ժամանակը պէտք է կարդալ, խաղալու ժամանակը՝ խաղալ, բայց բան ու գործի ժամանակն էլ պէտքէ բանել, գործել։ Դեռ լսած չէ, որ աշխատելուց մարդ վնասած լինի, բայց չաշխատելու և ծուլանալու վնասը ամեն օր տեսնում ենք։

Ամառը մի գեղեցիկ պատկեր է ժրաջանութեան և աշխատասիրութեան։ Ամեն ուսումնարան նում այնքան բան չի կարող սովորիլ երեխան, ինչքան ամառը դաշտումը թէ աշխատելով և թէ իր չորս կողմի երևոյթների վրայ նայելով։

Ամեն մի ծառ, ամեն մի թուփ, ամեն մի զեռուն շարժման մէջ է, գործի, աշխատանքի վրայ է։ Շերամը կամաց-կամաց իր մետաքսն է գործում սուս ու փուս, մեղուն իր բջիճներն է մեղրով լցնում, մրջիւն իր ձմեռուան պաշարն է տուն կըրում, թռչուններն իրանց ձագուկներն են շահացնում։

Ճշմարիտ որ, ինչքան տեսնելու բաներ կան։ Շերամի կերպարանափոխութիւնը, թրթուրների թևաւորելը, շերեփուկների գորա դառնալը, մեղուների ձագ տալը, թռչունների բոյներն ու ձուաները, տեսակ-տեսակ բզեզներ, զեռուններ ու սողուններ, ձկնիկները, խոտեր, ծառեր, ծաղիկներ, բոլորն էլ իրանց կեանքի կայտառ ու երիտասարդ ժամանակ...

Իսկ ինձ (որովհետև ես հիմա երեխայ չեմ, որ թիթեռնիկների ետևից վազվզեմ, որ տեսնեմ որը որից նախշուն է) ինձ ամեն բանից շատ դիւր է գալիս այն, որ այդ ընդհանուր աշխատութեան, այդ ընդհանուր գործունէութեան մէջ տեսնում եմ մի շատ գեղեցիկ ներդաշնակութիւն—մի ո ւ թ իւ ն։

Ամեն բանի մէջ մի համբակցութիւն, մի կապ, մի միութիւն կայ։ Ի՞նչ բան է, օրինակ՝ արտը, եթէ ոչ մի խումբ անհամար ցողուններից, որոնք իրար վրայ յենելով, իրար վրայ շաք անելով, միասին աճում, միասին հասնում և մէկին վաթսուն և հարիւր պտուղ են տալիս։

Ի՞նչ գեղեցկութիւն կունենար մի ձմերուկ, եթէ նա մեն մենակ ընկած լինէր մի դաշտի մէջ։ Բայց ուրիշ գեղեցկութիւն ունի բուրաստանը, ուր հարիւրաւոր ձմերուկներ կողք կողքի պառկած՝ իրար ականջի քչփչում են, թէ այն օրը պարտիզպանը իրանցից քանի հատ պոկեց։ Կարծես անհամբեր սպասում լինին, թէ երբ պիտի իրանք էլ կըտրվին, բացվին ու մարդկանց երեսին ծիծաղելով նրանց ծարաւը զովացնեն։

Ամառային ամիսներն են—յունիս, յուլիս և օգոստոս։

Ա Մ Ա Ռ

Ստեղծողն իր առատ ձեռքը բաց արեց,
Արտեր անտառներ հարստացրեց.
Ծառեր ու թփեր զարդով ծածկվեցան,
Ամենայն կողմում ծաղկունք փայլեցան։
Ագատ շրջում են հօտերը դաշտում,
Ագատ լողում են ձկները ծովում,
Արտերում հարուստ ցանքսերը հասան.
Դաշտերում գերանդին սկսաւ փայլել
Եւ անտառներում թռչնակներ երգել.
«Ինչքան սիրուն է այս ստեղներում.
«Ե՛կ հանգստացիր, մանկիկ, հովերում,
«Ականջ դիր՝ ինչպէս մենք երգ ենք երգում,
Առատ ամառուան փառք վերընծայում»։
—Ո՛չ թէ ամառուան, ասեց, փառք տըւէք,
Ով ամառ տըւաւ, Նրան օրհնեցէք։

ԵՐԱՇՏ

Գարունը հետզհետէ տաքցաւ։ Մայիսի մէկին կասես օգոստոս ամիսը լինէր. երկինքը ամեն օր այնպէս պարզ էր լինում, որ դեղապետի համար ամպի նշան չէիր գտնի. արևի սաստկութիւնը մարդու գլուխ էր այրում. այն այգինները, որ մի փոքր ջրգլխի են, էլի ափներումը կանաչի ծեղ է երևում՝ սուերոտ տեղերումը. իսկ ցածի այգինները այնպէս են չորացել, որ կարծես ամայի դաշտ լինին. կանաչ տեղ ամենևին չի երևում։

Երաշտը կարծես բաւական չէր՝ թրթուրն էլ միւս կողմից էր ծառերը փչացնում։ «Տնաշէններ, — ասում էին գիւղացիք,— մեր քրիստոնէութիւնը վերացել է, հաւատներս բոլորովին պակասել է։ Ամեն տարի այս ժամանակ ս. Գէորգի մասունքը, մեռնեմ նրա սուրբ զօրութեանը, երկու անգամ բերած էինք լինում. այս տարի սուրբն էլ ենք մոռացել, Աստուածն էլ հետը»։

Հետևեալ օրը արևը մի փոքր բարձրանալուց յետոյ զանգակները խփեցին. տիրացուները հագան ժամաշապիկները, որը քշոցը վեր առաւ, որը խաչ-ւառը, որն էլ մոմերը բռնած՝ առաջ ընկան։ Գարեգինն էլ նրանց կարգի ձգելուց յետոյ՝ բուրվառն ու շապիկը վեր առաւ գնաց. մի տիրացու էլ շարականը խոտեց տարաւ. տէրտէրներն էլ շուրջառները ժամկոչի կռնատակը տրւած, որն էլ իր ուսին ձգած՝ գնացին դէպի Մողնի։ Ժողովուրդն էլ՝ մայր ու մանուկ՝ տէրտէրների հետևից իրանց զարդարանքով, տիրացուներով առաջ ընկան գնացին Մողնի՝ այնտեղի վանահայր վարդապետի մօտ, ժողովրդի կողմից խնդրեցին, որ ս. Գէորգի մասունքն առնի գայ։ Փառաւորւի հայր սուրբը. իսկոյն պատրաստւեց, գնաց եկեղեցու դուռը բաց արաւ, մասունքները խորանից հանեց, տէրտէրների հետ ինքն էլ շուրջառն առաւ ու ամենքը մի-մի մասունք վեր առան, ինքը բռնեց ս. Գէորգի արծաթի ոսկեզրած աջը, քահանաների մէկը՝ գլխաքարը, միւսը գագաթը, երրորդը պահարանաւոր մասունքը, զգեստաւորւած, շարական երգելով՝ մեծ հանդիսով գնացին դէպի Աշտարակ։

Հէնց որ հասան «Պատաշարը»*), ջերմեռանդ ժողովուրդը, որ այնտեղ սպասում էր՝ գառան նման բառաչելով, գլխները բաց, արտասունքն աչքերին՝ թափւեցին առաջը։ Կանայքն էլ բոբիկ ոտքով, ճանապարհի քարին ու փշին, գետնի տաքութեանը չընայելով՝ «Ո՛վ ս. Գէորգ» են կանչում, «քո զօրութեանը մատաղ. մեր տէրն ու պահապանը դու ես, այս տաք ջրերին մի հով ջուր ածա, մեր լացն ու աղաղակը լսիր, մեր երեխաներին խղճա»։

Հայր սուրբը կանգնեց այստեղ, մինչև ողջ ժողովուրդը համբուրեցին ու մասունքի ետևից ընկած՝ եկան Կարմրաւորի առաջը և այնտեղ թափօր արին։ Թափօրից յետոյ դարձեալ շարական երգելով գնացին գիւղի ս. Մարիամ եկեղեցու թաղը։ Շատերն էլ առաջը մատաղ արին։ Երբ հասան գիւղի միւս ծայրը, այնտեղ էլ թափօր արին ու պըտըտելով տարան Ամենափրկիչ եկեղեցու առաջը. այնտեղ էլ թափօր անելուց յետոյ, խաչըլւայ արին առւի վրայ, ս. Գէորգի աջը ջուրը ձգեցին, որ գնայ այգինները՝ թրթուրը ոչնչացնի։ Յետոյ տարան եկեղեցի, սեղանի վրայ բազմացրին։ Ժողովուրդը առատ սրտով գալիս՝ պանձանակ էր ձգում։

Երեք օր ս. Գէորգը մնաց Աշտարակ. աստւածապաշտ ժողովուրդը այնչափ մատաղ ու կարասներով գինի խոստացաւ, բացի տւած պանձանակից՝ որ եթէ Մողնու միաբանքը ուզի ամիս ուտէին, չէր հատնիլ։ Երեք օրից յետոյ ս. Գէորգի մասունքը առաջւայ հանդիսով յետ տարան։ Երեխաներն

*) Ճանապարհի մի յայտնի տեղ։

էլ «Նուբրին» չինեցին ու ման ածեցին. երկուսը կռներից բռնեցին, մէկն էլ տոպրակ վեր առաւ, միւսն էլ մի փոքրիկ բղուղ, և սկսեցին ման գալ տները։ Ամեն դռան առաջը կանգնում, երգում էին.

«Նուբրին, Նուբրին եկել է,
Ալբա հուբրին եկել է,
Շիլա շապիկ հագել է,
Կարմիր գօտիկ կապել է։
Եղ բերէք, պորտին քսենք,
Ջուր բերէք, գլխին ածենք,
Մեր Նուբրինի փայը տուէք,
Ուտենք, խմենք, քեփ անենք»։

Կանայք էլ մի ման ջուր են բերում թափում Նուբրինի գլխին, և երեխաներին բրինձ, իւղ կամ հաւկիթ տալիս, որ տանեն քեփ անեն։

ԱՆՋՐԵՒԻ ԿԱԹԻԼ

Փայլուն կաթիլը ամրան անձրևի
Մի օր հարց տուաւ իր ընկերներին,
—«Ինչո՞ւ մենք այս հին, աղքատ խրճիթի
Լուսամուտն այսպէս բաղխում ենք ուժգին»։
Կաթիլներն իսկոյն տուին պատասխան.
—Այստեղ երկրագործ մշակն է ապրում.
«Բաղցր աւետիք տալիս ենք նրան,
«Որ արտում ցորենն աճում է, ծաղկում»։

ՕՏԱՐԻ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ

Լորը բուն էր դրել գիւղացու արտում և ձագեր հանել։ Հնձի ժամանակ էր։ Մի օր արտատէրը իր կնոջ հետ եկաւ արտի գլխին կանգնեց և ասեց. «Արդէն ժամանակ է հնձելու—հատիկները թափուում են. վաղը ես կբնդրեմ հարևաններիս, որ գան ինձ օգնեն»։ Ճուտիկները լսեցին այս խօսքերը և սաստիկ վախեցան։ «Չեռանանք այստեղից», ասացին նրանք իրանց մօրը։ Բայց մայրը պատասխանեց.—«Մի վախենաք, վտանգը դեռ այնքան էլ մօտ չէ»։ Գիւղացին գնաց հարևաններին խնդրելու։ Նրանք խոստացան առաւօտը գնալ, բայց խաբեցին ու չեկան։

Միւս օրը երեկոյեան գիւղացին դարձեալ եկաւ արտը և ասեց. «Վաղն իմ ազգականներին կըկանչեմ աշխատելու. նրանք անշուշտ ինձ չեն խաբիլ և կըգան»։ Ճուտիկներն այս անգամ աւելի ևս վախեցան. «Գնանք, գնանք շուտով» կանչեցին միաբերան։ Բայց փորձած մարին ասեց նրանց. «Մի վախենաք, դեռ փոխելու ժամանակը չի հասել»։ Գիւղացու ազգականներն էլ չեկան նրան օգնելու։ Վերջապէս գիւղացին ասում է կնոջը. «Ուրիշ ճար չկայ, պիտի է, որ մենք ինքներս անենք մեր գործը. Ասուածոյ օգնութեամբ մենք էլ կարող ենք հնձել մեր արտը»։ Լորն այս խօսքերը որ լսեց, իսկոյն ձայն տուաւ իր ճուտերին. «Զաւակներս, այժմ ահա այստեղից հեռանալու ժամանակն է. գիւղացին քանի դեռ իր յոյսն օտարների վրայ էր դրել, ես չէի վախենում, իսկ այժմ, երբ նա վճռել է անձամբ կատարելու իր գործը, հաւանական է, որ շատ շուտով արտը հնձի»։

Այս ասեց ու ձագերն առաւ, արտից հեռացաւ։

ՀՈՒՆԶ

Ահա բանուորները շարիշար կանգնած,
Մանգաղը ձեռքին գոգնոցը, կապած,
Մինչև գօտկատեղ բարձրացող արտում,
Ծպիտն երեսին՝ ցորեն են հնձում։

Ընդարձակ դաշտը, որ ամիսուկէս
Մեղմ քամու դիմաց, կապոյտ ծովի պէս,

Ճկւում թեքւում էր ու հօրանց գնում,
Նորից յետ դառնում, իր տեղն էր բռնում,

Այժմ բաց-դեղին ոսկու գոյն առած,
Տիրոջ օգնութեամբ հասկերը լցրած՝
Արևի դիմաց փայլում է, խաղում,
Ամբողջ հովիտը հուր ու ծով շինում։

Կարծես հրեշտակը աիրոջ հրամանով
Ծիծաղ է սփռել իր առատ ձեռքով.
Ուրախ ու քրքիջ, խինդ ու բերկրութիւն
Դաշտը բռնած է, կասես, օրնիբուն։

Ահա բանւորները, շարիշար կանգնած,
Մանգաղը ձեռքին գոգնոցը կապած՝
Հնձում են ցորեն ու խուրձեր կապում,
Կապած խուրձերից տաննեակներ կազմում։

ՊԱՐՏԻԶՊԱՆ

Ամառն է։ Կարծես կրակ է բարձրանում
Գետնի երեսից և հուրհրատում.
Ոչ շունն է հաչում, ոչ ճիճին երգում,
Գորտն էլ է լռել, էլ չի կրկռում։

Ամենքն էլ փախել, հով տեղ են գտել,
Իրանց բներում լռել, պապանձւել.
Միայն մէկ հատիկ մարդ է երևում
Խորընկած դաշտում, առւի եղերքում։

Կանգնած է մարդը արևի տակին,
Ոտն ու ծունկը բաց, բահը ղրած ուսին,
Մի շապիկ միայն ունի նա հագին
Եւ մի սպիտակ թաստակ կայ գլխին։

Բայց ինչ մարդ է նա և ինչ է շինում,
Արևի տակին ինչո՞ւ է այրւում.
—Նա պարտիզպան է, պարտէզ է ջրում,
Սեխն ու ձմերուկը նա է հասցնում։

ՍԱՐ ԳՆԱԼԸ

Ուզումնթալըցիք, ինչպէս և Ղազախի կողմերի բոլոր գիւղացիք, սովորութիւն ունին ամառային ժամանակ իրանց անասուններով բարձրանալ դէպի մօտակայ սարերը։ Այդ պաշտօնը կատարում են բացառապէս կանայք։

Ուզումնթալըցոց սարը մի բարձր, գեղեցիկ տեղ է, Սրւէղից դէպի հարաւ։ Մի օր ձիաներով գնացինք սարը։ Ինչպիսի հրճւանքով էի անցնում ես այն խիտ անտառների միջով, ծուռ ճանապարհներով, ձորերի և աղբիւրների վրայով։ Ահա անցանք Սրւէղի ջուրը, բարձրացանք դէպի «Մուրթը Ձորը». մեր առաջն է «Ծրմծրմանը», ահա և «Գիւռ Աղբիւրը»։

Այս ինչ հոյակապ անտառներ են, որ մեզ շրջապատել են. այս ինչ ուղղահայեաց և բարձր հաճարի ծառեր են, որ կլանել են արևի ճառագայթները։ Գոյնզգոյն ծառակուտակուտները՝ պինդ կպած ծառերին՝ կլտկլտացնելով կոցահարում են նրանց կեկեր՝ միջատներ կուլ տալու։

Դուրս եկանք «Գիւռ Աղբիւրի» հովիտը. ինչ գեղեցիկ հարթավայր է նա. մէջտեղը բղխում է մի վճիտ, սառնորակ աղբիւր, որ իր առատութեան համար ստացել է «Գիւռ»*) կոչումը. նրա վրայ շինւած է մեծ փայտէ նաւ՝ անասուններին ջրելու համար։

Մենք կանգ առանք այս աքանչելի աղբիւրի վրայ. առաւիսս սեղմելով՝ կուշտ խմեցինք, ե-

*) Մեծ, վարար, յորդարար։

բեռներիս զարկեցինք այդ անմահական ջուրը, զովացանք և զովացրինք մեր ձիերին։ Նորից նստելով ձիերի վրայ մենք մի փոքր էլ շարունակեցինք մեր ճանապարհը դէպի վեր. և ահա դուրս եկանք անտառից լոյս աշխարհ. և մեր առաջ սփռուեց լայնանիստ, կանաչազարդ, ծաղկափթիթ տարածութիւն, որ տեղ բարձրանալով, տեղ ցածրանալով՝ ստանում է ալեծածան տեսք։

Ոչզունթալըցոց՝ ուռից հիւսած, եղեգնէ լաստերով շրջապատած՝ գլուխը հաստ թաղիքով ծածկած դագեանները*) շարիշար կանգնած էին այս բլրի վրայ, այն աղբիւրի մօտ, մի-ւս ձորի կամ անտառի բերանում։

Առաւօտ էր. արեգակը բաւական բարձրացել էր հորիզոնի վրա. կանաչ խոտերի մարգարտափայլ ցօղը դեռ ևս տեղ առ տեղ երևում էր։ Մենք կոխելով այդ ցօղը, շարունակում էինք մեր ճանապարհը։

Ես առանձին հետաքրքրութեամբ նայում էի այս վայրենի դրախտի վրայ իր վայրենի բնակիչներով։ Երիտասարդ կանայք բոլիկ ոտքերով, չքուանները ձեռքներին՝ վազվզում էին հորթերը կապելու։ Միւսները հարում էին երեք ձողից կախած խնոցին։ Տաւարածները Սուի լանջով, «Իրիցի Աղբիւրի» կողմից բերում էին կթի կովերը կթելու։

Հորթերը ու կովերի բառաչը, կանանց խառը ձայները հովիւների երգն ու սրինգը. շների հաչոցը, ձիերի խրխնջոցը, այդ բոլորը իրար խառնուելով մի նահապետական կենդանութիւն էին տալիս այդ կանաչ լեռներին։

Մենք իջանք դագեայի առաջ, ձիերն արձակեցինք արածելու. դրացի հարսները բերին մեզ համար կարագ, սեր, մածնի երես, թերթերուտ, գա-

*) Վրան։

թա և այլն՝ մեր գալուստը շնորհաւորելու։ Այդպէս անցաւ ամբողջ օրը։

Երեկոյեան ժամանակ տաւարը նորից եկաւ, և իւրաքանչիւրը կանգնելով իր տիրոջ դագեայի առաջ՝ ծանր ու բարակ որոճում էր։ Գիշերը շատ մրթին էր։ Իւրաքանչիւր դագեայի առաջ վառուած էր մեծ խարոյկ. և ինչո՞ւ չվառես, երբ շուրջդ անտառով պատած է և վայրը ձրի։ Խարոյկի շուրջը նստած էին կանայք, տաւարած, շներ։ Մի խարոյկի մօտ բարձր խօսում էին, միւսի մօտ երգում, երրորդի մօտ սրինգ ածում։ Այդ էլ մի տեսակ կենդանութիւն էր։ Կարճ միջոցից յետոյ ամենքը պառկոտեցին քնելու։

Հետևեալ առաւօտը, Աստուած իմ, ինչ թարմ օդ, ինչ փայլուն ցօղ, ինչ պայծառ արև, ինչ գոյնզգոյն ծաղիկներ, ինչ մեղմիկ զեփիւռ, ա՛խ, կեանք, կեանք...

ԼԱԼԻԱՐ ՍԱՐԸ

Ծագում է մանուկ արևը գարնան
Կովկաս լեռների ձիւնի պատնէշից,
Զարթնում են մէկ-մէկ սարերն աննըման
Ջմրան անվրդով քնի մըշուշից։
Ահա Լալաբի*) վիթխարի ուսին
Բազմում է արփին թարմացած ուժով.
Սարեր ու ձորեր իրար երեսին
Նայում են, ժըպտում ամպի մշուշով...
Վերջին ձիւները էլ ահա հալ ընկան,
Արտասուեց իսկոյն լեռների հրսկան,
Ամեն մի ձորից աղբիւր է հոսում,
Ամեն մի թփից բիւլբիւլ է խօսում։
Ե՛ւ գալար հովիտ, և՛ ժայռի կըրծքեր
Արձագանգ տալով զարուն են հընչում.

*) Լօռւայ ամենաբարձր սարը։

Ձմրան փարախից հովւական երգեր
Ջեփիւռի թևով սարերն են թռչում,
Ծաղկալից աշխարհ անվերջ ձորերի
Բացւում է, ժպտում կոկոնից զըւարթ,
Փարթամ գեղուհեան ոգին Գուգարքի
Շընչում է գարնան բոյրով անարատ։
Ամպերն էլ իրար համբոյրներ տալով՝
Զըւում են կայտառ, լալւարը գրկում,
Առաջին անգամ թունդ որոտալով,
Գուգարք աշխարհին ողջոյն են երգում.
Եւ հայրենիքում փայլակ-կայծակի
Գիշերւայ զրոշմած գաղտնի համբոյրներ
Երգում են երկրին սէրը երկնքի.
Դողում են սիրուց սարեր ու ձորեր
Եւ խորհրդաւոր մի թովիչ ձայնով
Ասում են նըրանք, իրար հետ փարւում,
Երգում են, խնդում, հազար բերանով
Լալւարի վիթխար հասակը գովում։
Ահա գարնան հետ և շարան-շարան
Դաշտավայրերից դէպի գով սարեր
Զգւեց սայլերի, ուղտերի քարւան.
Փախչում են շոքից թէ թռւրք, թէ հայեր,
Թողնում են ձորում զանգի հնչիւններ,
Ջիերի խրխինջ, պայտերի դոփիւն։
Մէկ-մէկի կըցած անվերջ քարվաններ
Քաշում ու նառը, ահեղ մռնչում.
Ո՛րը տանում է ալաչխի [1]) քեչան.
Կուժն ու խնոցին, ճիպոտն ու չաթան [2]),
Ո՛րն էլ զարդարւած գիր [3]) ու վինջերով՝
Օրօրւում, անցնում լեռան լանջերով։
Բայց նաուն ինքնագոհ քայլում է հանդարտ,
Բոժոժ ու զանգեր վզին ու կըրծքին,

[1]) Հովւական վրանի մեծ սեռակը։ [2]) Բարակ ճիպոտներից հիւսւած վրանի շրջապատ։ [3]) Թղթերում կարած չար աչքից պահովող աղօթքներ։

Եւ օրօրելով կապերտներ ու զարդ՝
Գեղեցիկ հարսն է նա տանում մէջքին.
Մերթ բարկանալով, կանգնում է հպարտ,
Մերթ փրփուր թափում կատաղած բերնով,
Մերթ երկար շուրթը կախելով բարդ-բարդ,
Նա պարծենում է գեղեցիկ բեռնով։
Բռնել է ճանպէն թունդ իրարանցում.
Դոփում են ձիերը, սանձերը կըրծում—
Աղնիւ մետաքսից ոսկեթել գործած,—
Աղալարիներ [1]) թամքերին գըցած,
Հուժկու կըրծքերից կապած թալիսման [2]),
Արևելեան ճոխ արծաթն ու ոսկին,
Ճերմակ դաթիբան, քօղն ամպի նման
Փըռփռում են սիրուն հարսների դէմքին։
Լեռների ոտնն է. մարդ և անասուն
Ուրախ երգելով դիմում են սարեր.
Մոռնալով ձըմռան քաշած վայնասուն,
Ծաղիկ վինջելով անցնում են ձորեր,
Անցնում են արագ քոչ-քոչի միջով.
Գարնան արևից փայլում են գէնքեր,
Եւ թարմ կենսաբոյր թաւիշ կանաչով
Բացւում են, ժըպտում սարւորի դէմքեր։
Փոքրիկ երեխան պինդ մէջքին կապած՝
Ուռճ հովւի կինն էլ վազում է ոտքով,
Օգնում է մարդուն՝ գոհ ու սրտաբաց
Բախտի որոշած ծանր վիճակով։
Մայում են, բայում գառնուկ ու մաքի,
Թրնդում կովերի, հորթերի բառաչ.
Իսկ տուլընգալով՝ գոմէշը ձագին
Կանչում է դանդաղ վազելով առաջ։
Վազում են յոգնած շները հօտի
Եւ լիզուն հանած՝ թանչին են տալիս.
Լսւում է յանկարծ ձայնը լակոտի,

[1]) Մետաքսից գործած ձիու ծածկոց։ [2]) Թղթերում կարած՝ չար աչքի դէմ աղօթքներ։

Որ քոչից ընկած՝ կալանչ է գալիս։
Քարւանի ծայրը սարերը հասաւ,
Հասաւ ու ձուլւեց թուխ ամպերի հետ.
Վըրան-վրրանի եահից բըսաւ
Ծաղիկների մէջ գոյն-գոյն սիզաւէտ.
Ալաչուխ, դագա [1]), անվերջ վրաններ,
Շըրջան կազմելով սառն աղբրի ափին,
Ինչպէս ծեր արծւի կարկատած բըներ,
Յենւեցին մէկ-մէկ բարձր քարափին.
Դաշտերի հայն էլ՝ սառ ջրի կարօտ՝
Եկել է, դըրել բինէն այս ամառ
Լօք [2]), Լալւար, Լէջան [3]) աղբիւրների մօտ,
Շոքերից ազատ ապրելու համար։
Գուզարք սարերի սիզաւէտ լանջին
Բազմել են հայի, թուրքի բինաներ,
Բայց դարձեալ խառնւած քոչ-քոչի միջին՝
Դեռ երերում են ուղտի քարւաններ։
Ծըրխնջում է ձին, կովը բառաչում,
Բոլորն էլ իրանց իւրան են ճանաչում.
Մայում է անուշ ամլիկը [4]) գառան,
Սարեր ու ձորեր նորից կեանք առան։
Գիշերը հասաւ. մըթին է ճանապան.
Մարում է կամաց աղմուկը քոչի.
Առւակի ափին քարւաններն իջան.
կանչում են՝ «տըղէք, ապրանք չըկորչի»։
Սայլերի ճըռռոց, ոչխար ու տաւար
Գոնելով ձորում գիշերն իջևան.
Հանգիստ են առնում մինւս օրւան համար։
Կըրակի վրայ առւակի ափին
Մի տեղ ընթրիք են շտապ պատրաստում,
Մի տեղ էլ կորած գառանն ու հորթին
Սար ու ձոր ընկած՝ հովիւն է կանչում.

[1]) Հովւական վրանի փոքր և հասարակ տեսակը։ [2]) Լօռւայ սարերից մէկը։ [3]) Լօռւայ սարերից մէկը։ [4]) Մօր հետ անբաժան ապրող և ծծող գառը։

Մի այլ տեղ ուրախ շրջան բոլորած՝
Ուտում են նրանք կաթն ու խորոված.
Գիշերն էլ արդէն մինջում է, լռում,
Յոգնած քոչւորին հանգիստ քուն բերում։
Միայն մի կով է դարձեալ բառաչում
Եւ քունը կրտրած՝ հորթուկին կանչում։
Լսելով նրան գիշերն անդադար՝
Հևում է տխուր ծերունի անտառ։
Սամպի փէշերը կախած մի ծայրին՝
Լալւարն էլ կարծես նոյն վիշտն է զգում,
Ինչպէս վիրաւոր արծիւը ժայռին,
Թևերը փռած քոչւորին հսկում։
Բայց Լօք սարերի կանաչ լանջերում
Մի բինա էլ կայ, որ դեռ չի քընում.
Այստեղ խարույկի շուրջը բոլորած՝
Տեսած ու լսած արկածն են պատմում,
Եւ մեծ ու փոքր ականջները լարած՝
Աշուղ Գիքօյի երգերն են լսում։
Պատմում է, երգում աշուղն անցեալից,
Զորերում տեսած հին իգիթներից.
Կըրակին գըցած կաղնի մեծ գերան՝
Սարւորն էլ արթուն լսում է նրան։

ԳՈՒԳԱՐՔԻ ՍԱՐԵՐԸ

Ողջոյն վեհափառ լեռներ երկնահուպ,
Ո՛վ հրաշալիք հզօր Արարչի,
Եւ ահա հոգիս՝ ինչպէս մի ասուպ,
Թռած գալիս է ձեր գլխին հանգչի,—
Այդ գագաթներին, որ ձիւնապսակ
Փայլատակում են ընդդէմ աստղերին.
Այդ ամպերի մէջ, որ կուտակ-կուտակ
Ծանրանում են ձեր շքեղ ուսերին.
Այդ սառն ու յստակ աղբիւրների մօտ,
Որ ապառաժից յորդառատ բղխում

Աւազի վրայ, կայտառ, ծիծաղկոտ
Երեխի նման կրկչում են, խաղում.
Պարզ առուների դալար ափերին,
Որ սահանքաւոր իջնում են փրփրած.
Ուր որ կենսաշունչ հովը լեռնային
Մերթ վազվզում է, մերթ դըզւում կամաց.
Ուր որ համասփիւռ բուրմունքը ծաղկի
Եւ ծըծմբային հոտը կայծակի
Խառնւում իրար և տարածւում են,
Խոռոչ ու ծործոր բռնում, լցնում են։
Օրհնութեան վայրեր, ուր առոյգ կեանքի
Եւ զըւարթութեան շունչն է միշտ խաղում.
Հոյակապ երկիր, որ միայն երկնքի
Բարձրութեան մէջ ես խորհուրդդ խորհում։
Ուզում եմ պատմել, թէ ինչ եմ սիրել,
Բարձրացնել փառքը քո վսեմ անւան,
Ուզում եմ երգել և քեզ մեծարել,
Արժանիդ երգի և երանութեան.
Բայց թոթովանքը ապիկար լեզւի
Աստւածայինը կարող չէ յայտնել.
Եւ նա ճնում է, որ պիտի աստի,
Որ միմիայն քեզ է երկինքը սրբել։
Ա՜խ, թէ քո տւած հոգուն ու սրտին
Տայիր և թարգման—հրաթափ լեզու,
Քեզ մաքից հանող քո թշւառ որդին
Քո վեհութեանը կըլինէր հասու։

ԿԱՐՕՒՏ

Ա.

Գարունն անցել էր, ամառը մտել, բիւր, անթիւ բարիք պիւղացուն բերել կանաչ արտերի ցօրենն ու գարին, կորեկն ու հաճարն ուռել ու լըցւել, ոսկեգոյն ներկւել. և այգիների խնձորն ու տանձը, դամբուկն ու ծիրան հասել, կարմրել, ծա-

ռերը բռնւել. իսկ պարտէզների սեխն ու ձմերուկ, դդումն ու գաղար փորներն ուռցրել, մեղրի համ առել...

Գեաը պարզել էր, խոտը երկարել, հօտեր, նախիրներ դաշտերը փուել. ծառերի գլխին և կամ արտերում թռչունք բուն դրել, ձագուկները դառել...

Սողում էր օձը խոտերի մէջից, մեղուն թըռչկոտում ծաղկից դէպ ծաղիկ. կրիան վիզը հանած պատեանից՝ քաշւում, քաշկռտւում թփերի տակից...

Պայծառ էր օրը, պայծառ էր երկինք.
Ուրախ են թռչունք, անասուն, մարդիկ...

Բ.

Բայց այն ինչ ամպ է, որ սարի տակից գալով գալիս է ու իրա հետից՝ կարծես շղթայած քաշում է բերում մեծ ու սև ամպեր, ամեն տեղ փռում...

Մի րոպէ ևս. խորին մթութիւն ամեն ինչ պատեց. որոտաց երկինք, երկիր դղրդեց. փայլակն ու կայծակ իրարու խառնւած՝ մարդկանց սրտերը ահ ու դող ձգեց։ Մռնչաց քամին, շարժւեցին ծառեր. կաթեց, կաթկաթեց, յորդ անձրև թափւեց. անձրևի հետից սառցէ գնդակները—չըրը՛կ, հա չըրը՛կ—երկար գլորւեց։ Թափւում է, թափւում, սար ու ձոր ծածկում, ոչ դաշտ է հարցնում, ոչ այգի ասում։

«Ա՜խ կարկո՛ւտ կարկո՛ւտ,—կանչում են մարդիկ,—
Այս ինչ պատիժ է. խնայէ, երկինք...»։

Գ.

Ծերը ծնկաչոք, արտասուք աչքին, Աստուած է կանչում՝ խնայել երկրին. պտուղը հասած երկրէ կասկարան՝ բակն է շպրտում ու նզով կարդում. հարս ու աղջիկներ պատի տակ շարւած՝ սուր պա-

նակներով կարկուտ են կըտրում, երկնքին նայում. իսկ նրանց մօտը մշակ—երկրագործ յուսահատ կանգնած, ձեռը դրած ծոցում ախ-վախ է քաշում, գլուխը շարժում...

Բայց հանդերի մէջ այս ինչ շփոթ է ու իրա-րանցում... Հօտը ցրւել է, նախիրը փախել, ձիերը խրտնել, դէս ու դէն ընկել, հաւքերը թռել, բունի մէջ պահւել, հովիւ, հորթատած, փայտհատ, կովա-րած, ամենքն էլ իրանց գործերը թողած՝ թփերի տակին մնացել են սառած...

Դ.

Դադարեց կարկուտ, որոտը լռեց, ամպերի ճեղքից արևը նայեց. երկիրը ժպտաց, նորից փայլ առաւ, բայց տխուր փայլ էր, որ նա ստացաւ:

Այգեպանը վազեց իր այգին մտաւ, դէս ու դէն նայեց, մնաց քարացած.—ծառեր տերևթափ, ճիւ-ղեր կոտրտւած, բոլոր պտուղները կարկտահար ե-ղած: «Վայ իմ աշխատանք, ափսոս իմ այգի», ա-սեց, հեռացաւ՝ աչքերը լցւած...

Արտաւէրը գնաց իր արտը հասաւ. թուլացան ոտները, սևացան աչքեր, երբ տեսաւ հասկը ջարդ-ւած, փշրւած, հողին հաւասարած, անգութ հեղե-ղից աւազով ծածկւած, «Կորաւ իմ յոյսը, փշացաւ իմ արտ», ասեց ու գնաց, սիրտը մորմոքած...

Դրսում մնացած հաւքերն էլ թռան գտան ի-րանց բուն, բայց ախ, ինչ տեսան. բունը աւեր-ւած, ձագուկներն ընկած. չորսից միայն մինը ողջ էր մնացած. իսկ այն միւսները թափւած ցեխի մէջ՝ անշունչ ընկել են, աչքները փակել, որի գլ-լուխը, որի թևիկը կարկտից ջարդւել:

Ճլւլացաց թռչունը, սգաց իր ձագուկ...
Դէս ու դէն ընկաւ, արաւ ողբ ու սուգ...
Այսպէս ամեն տեղ, ուր մի ժամ առաջ
Տիրում էր յոյս, կեանք, ցնծութիւն անբաւ,

Այժմ յաղորդեց կարկտի չնորհիւ
Յուսահատութիւն, տառապանք ու ցաւ...

Ա՜Յ ՍԵՒ ԱՄՊԵՐ...

Ա՜յ սև ամպեր, վայ սև ամպեր,
Սիրտս պատեց սև ու մութ.
Արդեօք ինչ էք բերում դուք ինձ,
Գարնան անձրև՞, թէ կարկուտ...
Յուսով-լուսով արտ եմ ցանել,
Արիւն թափել ու քրտինք,
Ողջ սուրբերին մոմ եմ վառել.
Աղօթք արել, որ երկինք
Սրտիս նայի, տունս խնայի,
Օր տայ, կեանք տայ իմ հացին:
Վայ բալէքս... Աստւած չանի,
Թէ որ անհաց մընացին...
Ա՜յ սև ամպեր, ինչ էք գոռում,
Սիրտս պատեց սև ու մութ.
Արդեօք ինչ էք արտիս բերում,
Գարնան անձրև՞, թէ կարկուտ...

Վ Ա Ր Դ Ա Վ Ա Ռ

Քրիստոսի պայծառակերպութեան տօնը, որ «Վարդավառ» է կոչւում, Ղարաբաղում և այնտեղ գաղթած գիւղերում շքեղութեամբ է կատարւում: Նաւակատիք շաբաթ երեկոյին համարեա բոլոր ժողովուրդը հաւաքւում է եկեղեցու բակը՝ զուգ-ւած, զարգարւած: Այդ երեկոյին կըտեսնեն ամե-նայետին աղքատի հագուստն էլ նոր: Ամբողջ տար-ւայ մէջ չարչարւում, աշխատում են հէնց կար-ծես այդ տօնի համար, որ միայն այդ օրերը ի-րանց հագուստը նոր լինի, իսկ մնացած ժամանակ-ները հոգ չէ, եթէ հին, կեղտոտ ու պատառոտած

հագուստներով լինին ապրում։ Շաբաթ երեկոյին, ժամը վերջանալուց յետոյ, թէ մարդ, թէ կին գընում են տուն և ամեն ինչ պատրաստում են լոյս կիրակի համար։

«Քրիստոս Համբարձման» գիշերւայ համար նըրանք պատմում են հետևեալ աւանդութիւնը. իբր թէ այդ գիշեր երկրիս բոլոր սուրբերը գնում են երկինք՝ իրանց «հօրանց տունն», այսինքն ս. Աստուածածնի մօտ, ըստ որում նրանց մայրը նա է։ Սուրբերի գնալու ժամանակ երկինքը բացւում է. ով որ տեսնի այդ ժամը, ինչ որ խնդրի Աստծուց, նրան կըտրւի։ Մինչև անգամ պատահել են մարդիկ, որ այդ գիշեր անքուն են մնացել և իբր այդ՝ երկինքը բացւելու ժամը տեսել են. ոմանք այդ րոպէին խնդրել են որդի՝ որ և ծնուել է, ոմանք հարստութիւն՝ և դարձել են շատ հարուստ, բայց անժառանգ, ըստ որում միայն տրւում է այն՝ ինչ որ ցանկանում ես, ուրեմն խնդրելու ժամանակ պէտք է մի այնպիսի խօսք ասել, որ ամեն ինչ իր մէջ պարունակի։ Բայց մեր օրիորդները այդ շատ լաւ գիտեն, և նրանք աշխատում են երկինքը բացւելիս տեսնել։ Դրա համար էլ հաւաքւում են միասին մի տեղ և նոյն գիշերւայ ուտելու պարէնն էլ հետները. երբ փոքր ինչ մթնում է, սկսում են իրանց «Գիւղում հայ» սովորական երգը։ Մի քանի աղջկէք կերակուրներ են եփում, պատրաստում. միւսները ծաղիկներ են քաղում, վինջում ու իրանց քնքոյշ ու բարակ ձայնով թնդացնում են օդը և անհոգ սպասում են երկնքի բացման։ Երբ կերակուրները եփում են, գնում են մէջտեղը և չորս բոլորը շարւում, որ ապագ պատանիները չըգողանան. եթէ նրանք կարողանան գողանալ, ուրեմն մրցանակը տարած կըլինին ու օրիորդների բախտը տղաներին կըլինի վիճակւած։ Իսկ պատանիները՝ տեսնելով որ իրանց թաղի օրիորդները գիշերը «Գիւղումով» են անցկացնում, իրանք էլ հաւաքւում, աշխատում են օրիորդների պատրաստած կերակուրներն ու ծաղիկները գողանալ. պատահում է, որ տղաները գալիս են և բռնի կերպով ուզում են նրանց ձեռքից խլել. բայց այդ ժամանակ օրիորդները վրայ են թափւում, ծագում է կռիւ, տուր ու դմբոց, իրար քիթ ու պռունգ են արիւնոտում ու չեն տալիս։ Իսկ երբ պատահում է, որ գողանալ են տալիս, այն ժամանակ վշտացած, տխուր-տրտում՝ օրիորդները դառնում են տուն. այնուհետև գիշերը անքուն մնալն ու երկնքի բացւիլը և լոյս տեսնելը անհնար է։ Մէկ էլ պէտք է «Համբարձմանից» մինչև «Վարդավառ» պաս պահել ու նորից խաղ անել, որովհետև այն գիշերը դարձեալ երկինքը բաց է լինում, սուրբերը «Հրանց անից» վերադառնում են իրանց տեղերը։

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍՆ

ՀԷՔԻԱԹՆԵՐ ԵՒ ԶՐՈՅՑՆԵՐ *)

ՕՁԱՄԱՆՈՒԿ ԵՒ ԱՐԵՒԱՀԱՏ

Ձմեռն էր։ Հասակաւոր մարդիկը հաւաքւել էին օդէքը, այնտեղ էին զրոյց անում, հէքիաթ ասում և իրանց առօրեայ հոգսերի մասին խօսում, խորհրդածում։ Գիւղնազ տատի թոռներն էլ՝ քուրսու չորս կողմովը բոլորած՝ իրանց տատին էին հէքիաթ ասել տալիս՝ ականջ դնում։

Մի երեկոյ Գիւղնազ տատը մի քիչ «չեմ-չեմ» անելուց յետոյ՝ սկսեց Օձամանուկի և Արևահատի հէքիաթը, որ երեխէքը դեռ չէին լսած և աչքները չորս արած՝ ականջ էին դնում։

Ա.

—Դէ, լսեցէք, երեխէք,—սկսեց Գիւղնազ տատը։

Շատ հին ժամանակներում, մի հեռու երկրում, Մասիս սարի միւս երեսից էլ դեռ շատ դէնը մի թագաւոր էր կենում։ Այդ թագաւորը շատ հարուստ էր. ոսկին ու արծաթը անհամբարք, դօրքն անթիւ, շատ ու շատ քաղաքների տէր. բայց զաւակ չունէր, այդ պատճառով իր ունեցած անթիւ

*) Դպրոցից դուրս տանը ազատ կարդալու համար, ինչպէս և երբ կըպատւիրէ ուսուցիչը։

գանձն ու հարստութիւնը աչքին չէր երևում։

Ինչքան հէքիմ, ինչքան չառահ, ինչքան բժիշկներ են գալիս, դեղ ու դուղ անում, ոչինչ չի լինում։ Յետոյ՝ էլ գրքաց ասես, փալչի ասես, դէրվիշ, չադուքեար, չինդար, ոչով ոչինչ չի կարողանում անել։

Թագաւորը տեսնում է, որ մարդկանցից օգուտ չըկայ, յոյսը դնում է Աստծու վրայ։ Ամենայն օր մատաղ է անում, աղքատներին առատ ողորմութիւն է բաժանում, օրը եօթն անգամ աղօթք է անում, ծունը դնում, աղաչանք անում Աստծուն.—չի լինում, չի լինում, չի լինում։

Մէկ օր էլ՝ իրա մաքի խորն ընկած, յոյսը կորցրած՝ այդ թագաւորը ման էր գալիս իրա պարտիզումը տխուր ու տրտում, մէկ էլ տեսնում է՝ հրէս մի սիրուն շահմար օձ, որ ճուտերը գըլխին հաւաքած՝ ինքն ապառաժի վրայ մեկնւել, արեգուն է արել, ճուտերն էլ խաղ են անում իրանով,—որը մօր վզովն է փաթաթւում, որը փորի տակը մտնում, որը գլուխն է նրա բերանը կոխում կամ հոտոտում, լըպստում։

Թագաւորն այդ որ տեսնում է, ճնում է տեղն ու տեղը սառած, փէտացած։ Մտիկ է տալիս, մըտիկ, յետոյ մի յոդոց քաշելով ասում է.

«Փառքըդ շատ լինի, Արարիչ Աստուած. օձի սիրտն էլ ես սէը գցել, որ իրա ձագերին սիրի, գուրգուրի. բայց ինձանում, դու էլ գիտես, որ քո տըւած սէրը կայ ու կայ. ինչո՞ւ չես ինձ էլ մի օձի ձագ տալիս, որ ես էլ նրան սիրեմ, նրան գուրգուրեմ, նրանով մխիթարւիմ»։

Դու մի ասիլ, Աստծու գռները հէնց այդ խօսքըն ասելիս՝ բացւած են լինում։ Թագաւորի այդ խօսքը Աստծու ականջն է հասնում։

Սրա վրայ մի տարի չանցած՝ թագաւորի կինը ծնում է ու բերում—ի՞նչ էք կարծում, ի՞նչ,—մի օձի ճուտ։

—Ինչ ես ասում, տատի,—բացականչեցին մանուկները։

—Հապա, երեխեք, մի օձի ճուտ, բայց ինչ ճուտ։ Այդ ճուտը լինում է թէ չէ՝ ամեն մի շունչ առնելիս մեծանում է, դառնում է մի ահագին, մի ահագին վիշապ։ Ծննդկանը, տատմայրը և միւս-ները ահ ու դողի մէջ ընկած՝ փախչում են, նրան թողում տեղն ու տեղը վէր ընկած։

Օձի ճուտը երբ որ տեսնում է որ մենակ է մնացել, սկսում է լաց լինել։ Բայց ինչ լաց, այնպէս է ծըւում, ծկլթում, որ Թագաւորի բոլոր պալատը դղրդում է։

Թագաւորին չէին իմաց տալիս, թէ կինը օձ է ծնել, բայց երբ օձի ձայնը Թագաւորի ականջն է հասնում, և նա սկսում է հարց ու փորձ անել, նոր ընկնում են տաներն ու յայտնում, թէ՝ Թագաւորն ապրած կենայ, բա չես ասիլ, Թագուհին մի օձի ճուտ է ծնել, որ հիմա ահագին վիշապ է դառել, ու նա է, որ այդպէս ծըւում է։

Թագաւորն իսկոյն միտն է բերում իր խընդիրքն ու մաղը կծում է. «Հը՛մ—ասում է,—ես ինչ որ ուզել եմ Աստուածանից, նա էլ այն է տըւել»։ Յետոյ իր մարդկանցն ասում է. «Այդ վիշապն ինչ մեծութեան կըլինի, մի մարդու չափ կըլինի՞»։ Ասում են՝ դեռ չկայ մի մարդու չափ, բայց այնպէս է մեծանում, որ մարդու մեծութիւնից էլ կանցնի շուտով։ Յետոյ Թագաւորն ասում է.—Հիմա ինչ անենք, ինչ կայ՝ կայ Աստծու տըւածն այդ է։ Օձ է, թէ վիշապ, իմ զաւակն է. պէտք է պահենք, պէտք է բան տանք ուտելու, որ քաղցած չըմեռնի։

Մարդիկ գնում են երթիկովը ուտելու բաներ են գցում առաջը, բայց օձը չի մօտենում ոչ մէկ բանի, այլ հէնց մի բերան ծըւում է։

Այդ որ իմանում է Թագաւորը, ժողովում է իր գիտուն մարդկանցն ու հարցնում նրանց, թէ՝

ինչ պիտի տանք այս օձին, որ ուտի. ես չեմ ուզում, որ դա քաղցած մեռնի։ Նրանցից մինը, որ ամենից իմաստունն է լինում, ասում է. «Դա ոչ մի բան չի ուտիլ, բացի աղջկանից։ Փորձեցէք և կըտեսնէք, որ իմ ասածը ճշմարիտ է»։

Թագաւորն ասում է. «Ո՞ւմ վրայ փորձենք։ Դէ բեր, առաջ քո աղջիկը տանք, յետոյ ուրիշներից կուզենք»։

Դրա վրայ մեւս խելօքները ասում են. «Թագաւորն ապրած կենայ, թէպէտ դուք ուզիլ դաւեցիք, որ վճռեցիք ամենից առաջ այդ խօսքն ասողի աղջիկը գցել վիշապի բերանը, բայց դրա հետևանքը շատ վատ կըլինի քեզ համար։ Մենք ամենքս էլ չենք խնայիլ մեր աղջկերքը, կըտանք, բայց երբոր հերթը հասնի ժողովրդին, բանն ուրիշ տեսակ կըփոխուի։ Նրանք որ իմանան, թէ իրանց աղջկէքը պիտի վիշապին տանք, մէջները խռովութիւն կըընկնի, ամենքն էլ ոտքի կըկանգնեն ու քեզ Թագաւորութիւնից կըզցեն։ Լաւն այն է, որ մարդիկ ուղարկենք ուրիշ երկիրները, որ գնան նրանցից աղջկէք փախցնեն բերեն»։

Թագաւորն տեսնում է, որ դրանց ասածն ուղիղ է, մարդիկ է ուղարկում Մասիսի այս երեսը, որ գնան այտեղից աղջկէք փախցնեն, տանեն։

Դէ հիմայ Թողնենք վիշապին, որ դեռ մի քանի օր քաղցած մնայ, մենք էլ այն մարդկանց հետ գանք Մասիսի այս երեսը։

Բ

Մասիսի այս կողմումը մի մեծ գիւղ է լինում, անունը Արևան։ Գիւղի բնակիչները բոլորն էլ հայեր են լինում, ինչպէս հիմա մենք ենք։

Այդ գիւղում մի մարդ ու կին են լինում, երկու էլ աղջիկ են ունենում։ Աղջկանց մէկը մար-

դի առաջւայ կնոջիցն է լինում, իսկ միւսը՝ երկրորդ կնոջ հետ քերովի։

Մարդը իր հարազատ աղջկանը շատ էր սիրում, քայց խորթ աղջկանն էլ չէր ատում. իսկ ինչ-որ կնիկն էր, նա ուրիշ տեսակ բնութիւն ունէր, շատ չար ու նախանձոտ սրտի տէր էր։ Նա իր աղջկանն էր սիրում, իսկ միւսին ատելով ատում էր, նրա լոյս արևը խաւարացրել էր։

Կնոջ խորթ աղջկայ անունը Արևահատ էր, հարազատինը՝ Մամխի։ Արևահատը հէնց ուղիղ արևահատ էր. նրա երեսը արևի նման շափաղ-շափաղ էր անում,—այնքան սիրուն էր. միւսն էլ հէնց ուղիղ մամխի էր—մամխի պէս սև, նրա թփի նման փշփշոտ։

Մօր բարկութիւնը շատ էր գալիս, թէ ինչի իր աղջիկը այնքան տգեղ ու գէշ էր, իսկ Արևահատը այնքան սիրուն, այնքան գեղեցիկ։ Ամբողջ օրով աշխատեցնում էր Արևահատին—աթար էր շինել տալիս, կով կթել տալիս, հաց էր թխել տալիս, ման էր ածել տալիս, խոտ ու դարման էր կրել տալիս, որ նրա սպիտակ ձեռքերը կնճռոտուին, նրա շարմաղ երեսն այրւի, սևանայ, նրա շիմշատ մէջքը կորանայ, որ նրա ուժը պակասի, գունաթափուի, թառամի. քայց ընդհակառակն, նա աւելի էր ուժովանում ու գեղեցկանում, իսկ միւս աղջիկը, որ աղջիկ պարոնի պէս էր մեծանում, օրէցօր աւելի էր նիհարում ու գէշանում։

Արևահատը աշխատելուց չէր նեղանում. նա այնպէս էր սովորել աշխատանքին, որ առանց սոխպելու էլ ինքը մի րոպէ հանգիստ չէր նստում։ Հէնց որ ծանր աշխատանքը վերջանում էր, տղամարդի անելիքներն էլ ինքն անում պրծնում, այնուհետև ձեռք էր զարկում իր մանածին ու գործին։ Տանը չահրա էր մանում, ջուրը գնալիս էլ՝ իլիկը կամ սկսած գուլբան էր հետը տանում, որ աղբրին, մինչև հերթն իրան կրհասնի, մինչև կու-

ժը կլցւի, ինքը պարապ չլկանգնի, իր իլիկը մանի կամ գուլպան գործի։

Ամեն բան Արևահատի ձեռքիցը գալիս էր—հոգործ, գեռնագործ, ոստայնագործ, կար, ձև, եփել, թխել, կրթել, հարել, շինել, սարքել։ Մի խօսքով՝ մի աղջիկ էր, որ հատը չլկար. բայց ի՞նչ կանես, որ խորթ մօր ձեռք էր ընկել, իր արած բանը ինչքան լաւ է լինում, այնքան վատ էր թուում անգութ կնկանը։ Ամեն անգամ, չար գայլի նման, մի պատճառ էր պտրում ու անմեղ Արևահատին ոտի տակը գցում, տրորում, մազերից քաշքշում, քիթ ու պրունկը արունլըւայ անում, մարդուն էլ հաւատացնում, թէ՝ քո աղջիկը հոգիս բուկս է հասցնում իր չարութիւնովը ու կամակորութիւնովը։ Արևահատը չէր կարողանում իրան արդարացնել. ուզում էր մի խօսք ասել՝ արտասուքը խեղդում էր նրան. հայրն էլ հաւատում էր կնոջ խօսքին ու բարկանում հարազատ աղջկայ վրայ։

Արևահատը իր սրտի ցաւերը միշտ իր մօր գերեզմանի վրայ էր թափում։ Շատ անգամ գնում էր գերեզմանատուն, մօր գերեզմանի վրայ չոքում, աղի արցունք թափում, գանգատւում, սիրտը հանդարտացնում, էլ հետ գալիս տուն։ Շատ անգամ մօր գերեզմանի վրայ էր դնում գլուխն ու քնում, երազում մօրը տեսնում, վզովն ընկնում, փաթաթւում. նա էլ մխիթարում էր նրան ու խրատ էր տալիս, որ բարի լինի, բարի կենայ, ամեն նեղութեան համբերի։ «Աստւած չի կորցնել անմեղին,—ասում էր նա,—միայն դու այնպէս կաց, որ Աստւած քեզ հաւանի, քեզ սիրի, այնուհետև նա իր պաշտպանութիւնը քեզանից չի խնայիլ, քեզ այլ նեղութիւնից կազատի»։ Այս խօսքերը լսելով Արևահատը նոր ուժ, նոր հոգի էր ստանում, մխիթարւում էր, ցաւերը մոռանում, օրէցօր վարդի նման բացւում, մանիշակի պէս վինջւում։

Այնքան արդար ու անմեղ էր նրա հոգին, որ ամեն առաւօտ-երեկոյ աղօթք անելիս՝ նրան այնպէս էր թւում, թէ իր հոգին թռչում, վերանում էր մինչև երկինքը, հասնում Աստծու աթոռին, այնտեղ Նրա հրեշտակների հետ փառաբանում Նրա անունը։

Ողորմութիւնն այնպէս էր տալիս, որ նրա տուածը շատ քիչն էլ աղքատի աչքումը այնքան շատ էր երևում, որ խեղճ մարդը աչքերը երկինքն էր գցում ու արտասուքն աչքերին՝ Արևահատի համար արևշատութիւն խնդրում։

Թէ Աստուած էլ շատ էր սիրում Արևահատին, այդ մասին ինչ կասկած։ Երբոր մի մարդու Աստուած չըսիրի, չարը նրան չի ատիլ ու բարին նրան չի սիրիլ։ Բոլոր անմեղ արարածները նրան տեսնելիս՝ ցնծում, խնդրում էին, այնքան էին սիրում։ Իրանց տանու բոլոր կենդանիները, կովը թէ եզը, ոչխարը թէ այծը, շունը թէ կատուն՝ տանտիկնոջը տեսնելիս՝ փախչում էին կամ վրան խէթ-խէթ մոիկ տալիս, շունը հաչում էր վրան, կատուն չանգռում էր, կովը չէր թողնում իրան կթի, քացի-քացի էր անում, ձին խրտնում էր, եզը պլըշում, այծն ու ոչխարը փախչում էին։ Բայց այդ միևնոյն կենդանիները՝ այդ անմեղ անասունները՝ երբ Արևահատին էին տեսնում, շրջապատում էին նրան, փաղաքշում, լիզ տալիս, մէկ-մէկու հարու տալով՝ իրար ձեռքից խլում։ Կովը կթելիս՝ երբ որ տեսնում էր թէ Արևահատը լաւ չի նստած՝ ինքն այնպէս էր կանգնում, որ կթելը յարմար լինի։ Ջուրը կամ այգի տանելիս՝ շունը կշտից չէր հեռանում, որ նրան ամեն չարից, փորձանքից պահպանի, նրա հրամանին միշտ արթուն, միշտ պատրաստ լինի։

Ահա այսքան զեղեցիկ, այսքան բարի ու այսքան սիրելի էր Արևահատը. բայց ինչ կանես, որ խորթ մօր սիրտը քարացել էր, խղճմտանքը մեռել,

ամօթը կորել, խեղճ Արևահատի համար նոր-նոր տանջանքեր էր հնարում։

Չէնց այդ օրերումը գիւղումը լուր է տարածւում, թէ հանդ գնացող աղջկէքը էլ յետ չեն գալիս. մի վիշապ է լոյս ընկել, նրանց կուլ է տալիս։

Այդ լուրը շատ ուրախացնում է խորթ մօրը։

Ասում է՝ այս լաւ եղաւ. այս յիմար աղջկանը կուղարկեմ հանդ. թող գնայ վիշապի բերանն ընկնի։

Մի օր կով ու ոչխար Արևահատի առաջն է անում, թէ՝ տար հանդումն արածացրու։ Մի հաց էլ տալիս է, թէ՝ այս էլ կըտանես հետդ ման կածես, երեկոյին էլի ետ կըբերես, որ ես ուտեմ։ (Որովհետև հանդումը ման ածած հացը խիստ համով է լինում, ուզում է, որ այն համով հացն ինքն ուտի)։ Շատ էլ բուրդ է տալիս, թէ՝ այս էլ մինչև երեկոյ բոլորը բարակ կըմանես, հետդ կըբերես։

Արևահատը, կով ու ոչխար առաջն արած, քըշում է նրանց, առանց իմանալու, թէ մինչև ուր պիտի տանի։

Վերջապէս՝ երբոր հասնում է մի լաւ կանաչ-կոտ տեղի, որ դեռ արածացրած չէր, այնտեղ նըստում է, էլիկը մանում, իր դառն օրը լալիս, անմեղ, անասուններն էլ մշմշալով արածում են։

Իրիկնապահին, արևի մարեմար ժամանակը, հէնց ուզում էր թէ վեր կենայ, տաւարն առաջն անի, գնա տուն մէկ էլ տեսնում է, որ ահա մի պառաւ կնիկ կայ կշտին կանգնած։ Վեր է կենում, որ շան առաջը կանգնի, որ պառաւին չըկծի, պառաւն ասում է. «Մի վախենար, Արևահատ, շունն ինձ չի կծիլ. նա էլ է իմանում, որ ես չար պառաւ չեմ. տեսնում ես՝ ինչպէս ուրախ է, ինչպէս պոչը շարժում է»։

—Բայց դու ո՞վ ես, նանի. ես քեզ չեմ տեսած. դու մեր գիւղիցը չես,—հարցնում է Արևահատը։

—Ես ոչ մի գեղից չեմ, հոգիս, ես այս երկրա-

ցի չեմ. ես արևի մայրն եմ. եթէ լսել ես, «Արևամայր» որ ասում են՝ ես եմ: Քո դառն օրերը, քո անմեղութիւնն իմ գութս շարժեցին. ես եկել եմ, որ քո տարաբախտութեան վերջ տամ: Չոքիր առաջիս, ես քեզ պիտի օրհնեմ, որ դու գնաս քո մուրազին հասնես:

Պառաւի այս խօսքերը շատ զարմացնում են Արևահատին: Մէկ էլ լաւ մտիկ է տալիս, տեսնում է, որ իր ծանօթ կանանց նման չէ: Այնպէս է շողշողում նրա ամբողջ հագուստը, որ կարծես ոսկուց էր ձուլած և ոչ թէ սովորական պաստառներից կարած: Նրա աչքերն այնպէս էին ցոլցլում, վայլում, ինչպէս արևի ճառագայթները. նրա խօսելու ձևն այնքան քնքուշ էր, ձայնն այնքան անուշ, որ Արևահատին թւում էր, թէ իր հարազատ մայրն է խօսում հետը: Հէնց որ պառաւն ասում է՝ չոքիր, նրա ծնկները թուլանում են. ընկնում է առաջը, ուզում է Արևամօր ոտները համբուրի, բայց նա Արևահատի գլուխը բարձրացնում է, ձեռքը դնում է վրան և հետևեալ օրհնանքը տալիս.

«Ոտքիդ տակին վարդեր բացուին,
Ձորս կողմդդ փուխր մանուշակ,
Բարով հասնես քո մուրազին,
Գլխիդ տեսնեմ թագ ու պսակ:
Քո ժպիտը վարդի նման,
Արտասուքդ մարգարիտի,
Ուր որ գնաս՝ Աստւած քեզ հետ,
Օձ ու կարիճ քեզ չըխայթի:
Քո խրճիթը պալատ դառնայ,
Ողջ սիւները՝ անգին քարից,
Պատ ու յատակ՝ ոսկի, արծաթ,
Առաստաղը՝ գոհարներից»...

Այսպէս օրհնում է Արևամայրը և էլի ուրիշ շատ բաներ է ասում, խրատներ է տալիս, գուշակում է նրա ապագան, ամեն բան առաջուց ասում է և զգուշացնում: Յետոյ ասում է. «Դէ վեր կաց, սիրուն Արևահատ. ես քեզ սիրեցի, ես քեզ օրհնեցի, ես քեզ աղօթեցի, որ էլ այսուհետև քեզ մի մի վնաս չըլինի, քո մէկ մազը չըպակասի»: Յետոյ համբուրում է Արևահատին ու ասում. «Այս համբուրովս ես քո գեղեցկութեան վրայ իմն էլ եմ աւելացնում»: Յետոյ տալիս է մի փոքրիկ կապոց: Այդ կապոցի մէջ լինում է մի ձեռք հագուստ: Բայց ինչ հագուստ... բոլորն անգին քարերով զարդարուած ու այնքան էլ նուրբ, այնքան բարակ է լինում, որ հէնց իմանաս՝ ոչ բամբակից է, ոչ մետաքսից, այլ արևի ճառագայթներից է գործած: Ասում է. «Այս կապոցը ծոցումդ կըպահես, մինչև քո հարսանիքի օրը, միայն այն օրը կըհագնես: Ես հիմա գնում եմ, իմ որդին ինձ է սպասում»: Այս էլ ասելուց յետոյ՝ աներևոյթանում է, արևն էլ մայր է մտնում:

Այս անցքն այնպէս զարմացնում է Արևահատին, որ չի իմանում՝ քնած է, թէ արթուն, երազումն է տեսնում, թէ ճշգրիտ: Ձեռը ծոցն է տանում, տեսնում է, որ կապոցը տեղն է. ուրեմն երազում չեմ, ասում է ինքն իրան և այնքան ուրախանում է, որ բոլոր տխրութիւնը փարատւում է, ունքերը բացւում, երեսը զւարթանում, քաղցածութիւնն անցնում:

Վեր է կենում, իրա կով ու ոչխարն առաջն անում, ճանապարհին նրանց չոկ-չոկ շոյելով, իր ուրախութիւնը նրանց պատմելով՝ գնում:

Գնում է, գնում, մէկ էլ տեսնում է, որ ահա մի քանի ձիաւոր են գալիս՝ զէնք ու զրահում կոլորւած: Արևահատի սիրտն իմանում է, որ լաւ մարդիկ չըպիտի լինեն. այդ բանը շունն էլ է իմանում և զանազան շարժմունքներով իր վախն իմաց է տալիս Արևահատին: Տեսնում է, որ զրանց ձեռքիցը փախչել չի կարող, իսկոյն ցեխ է քսում

երեսին, որ իր սիրունութիւնը նրանց աչքումը չերևայ, որ իր վրա ուշադրութիւն չը դարձնեն։

Մարդիկը գալիս են՝ հասնում և տեսնում՝ մի գեշ աղջիկ։ Յետոյ մէկ-մէկու իրանց լեզուովը ասում են. «Մեզ համար մէկ է՝ սիրուն եղած, գէշ եղած, երկուսն էլ վիշապի փորը պիտի մտնեն»։

Հիմա դուք իմացաք, կարծեմ, թէ դրանք ինչ մարդիկ պիտի լինին. «Աղջիկ, էլ դէս ու դէն չը-փախչիս, աբի մեզանից մէկի գաւակին նստիր, քեզ պիտի տանենք»։

Աբևահատը մնում է շըւարած։ Մտքումն ասում է՝ էլ ինչ կարող եմ անել, ուր տանում են՝ թող տանեն. մեր տանից խօմ վատ տեղ չեն տանելու։ Իրա կողմից, ոչխարների աչքիցը պահպանում է, նրանց մնաս բարով ասում ու նստում մէկի գաւակին։ Յեղճ անասունները կարծես իմանում են բանի էութիւնը, սկսում են եռանից բառաչել ու մայել. իսկ շունը չի բաժանւում նրանից, այլ վեգրատակով ու անգնգալով գնում է նրանց ետևիցը։

Այդ աւազակները գնում են մի քարափի դէմ ընկնում, այնտեղ վեր են գալիս, Աբևահատին ներս տանում մի մաղարա։ Հէնց որ ներս է մտնում, տեսնում է որ ինչ,—մինչև երեսուն-քառասուն աղջկանից աւելի կան՝ շրջակայ գիւղերից հաւաքած այնտեղ։ Այդ խեղճ աղջկէքն այնպէս էին հեծկլտում, որ տեսնողի մազերը փշաքաղւում էր։ Վախենում էին, թէ բարձր ձայնով լաց լինին. ձայները փորներն էին գցել ու արտասուքի հեղեղ էր, որ թափում էին հեկեկալով։

Աբևահատը նրանց սիրտ է տալիս, թէ՝ մի վախենաք, մեզ կըտանեն կըծախեն, մենք էլ կըփախչենք կըգանք էլի մեր աշխարհքը։ Բայց շատերն իմանում էին, որ նրանց պիտի տանեն վիշապին տան, որովհետև նրա համբաւը տարածւել էր ամեն տեղ։

Մուխը որ վրայ է հասնում, դրանց դուրս են բերում քարափիցն ու առաջներն արած՝ սարով ձորով քշում, տանում են օձահայր թագաւորի մօտ։

Այստեղ Գիւլնազ տատն ասում է. «Երեխէք, ես բեզարեցի. քունս տանում է, ճնացածն էլ է-դուց իրիկուն կասեմ»։ Բայց երեխէքը վրայ են թափւում, քունը փախցնում, թէ՝ չի լինիլ, պէտք է վերջացնես, որ տեսնենք վերջն ինչպէս է լինում։ Գիւլնազ տատը ճարահատած շարունակում է, բայց որովհետև քունը տանում էր, էլ շատ չի երկարացնում։

Գ

«Աղջկէքը տեղ են հասնում։ Քաղաքի մեծ ու փոքրը հաւաքւում են, որ տեսնեն ինչ աղջկէք են եկողները, ու տեսնում են, որ ինչ, բոլորն էլ հայ աղջկէք, մինը քան զմիւսը գեղեցիկ։ Շատ ափսոսում են, որ այդ խեղճերը պիտի վիշապի կերակուր դառնան։ Նրանց մէջին մէյն Աբևահատն է ամենից ոգեղ երևում, որովհետև երեսին ցեխ ու մուր էր քսել, սիրունութիւնը չէր երևում։ Թագաւորը հրամայում է, որ դրանց լաւ տան մէջ պահեն, լաւ հագցնեն, լաւ ուտեցնեն, զիրացնեն, և օրէնը մէկը տան օձին։ Առաջին օրը ընտրում են Աբևահատին, թէ՝ սա ամենից ոգեղն է և չի էլ վախենում. առաջ սրան տանենք, որ միւսներն էլ սիրտ առնեն։

Բռնում են Աբևահատի կռնիցը, թէ՝ դէ արի գնանք, քեզ պիտի մարդու տանք. քո փեսացուն թագաւորի որդին է, դու թագուհի կըդառնաս։ Այսպէս խաբելով, կռնից բռնած՝ տանում են օձի քնակարանը, որ թագաւորական պալատումը մի ընդարձակ տեղ էր բռնում իր առաջի պարտէզումն ու նրա մէջի գեղեցիկ հաւուղներովը։

Երբ մտնում են պարտէզ և այնտեղից ուզում են դուռը բաց անեն, ներս գցեն, Արևահատն ասում է.—Որովհետև ինձ տանում էք թագաւորի որդու մօտ, թողէք առաջ այս հաւուզումը երեսս լըւանամ, հագուստս շտկեմ, մազերս սանդրեմ, թէ չէ՝ ամօթ է։ Ասում են շատ լաւ, ինչ անում ես՝ արա, մենք կըհեռանանք կըշտիցդ, որ դու չամաչես մեզանից։

Արևահատը որ մենակ է մնում, երեսը լըւանում է, գլուխը սանդրում, Արևամօր տըւած հագուստը հագնում է։ Այդպէս զուգւած, զարդարւած որ դուրս չի գալիս, նրա տանող մարդիկը մնում են ապշած, այնպէս են կարծում, թէ մի նոր արեգակ դուրս եկաւ պարտէզից. չեն հաւատում, որ նա իրանց տարած աղջիկն է, որ նա մի հողեղէն է. ասում են՝ սա երկնքից կըլինի եկած՝ խեղճ աղջկայ կերպարանքով, բայց հիմա փոխւեց, իր պատկերն առաւ։

Արևահատը մօտենում է նրանց ու էլ խեղճ-խեղճ չի խօսում, այլ հրամայում է, թէ՝ ինչ էք պըլըշել տաւարի պէս, ցոյց տուէք ինձ ճանապարհը, ուր պիտի գնամ։ Այսպէս որ հրամայում է նրանց, նրանք դողում, սարսափում են. չոքում են առաջին, մեղայ գալիս, խնդրում են, որ իրանց յանցանքը ների։ Ասում են. «Քեզ բերել ենք ոչ թէ մարդու տալու, այլ վիշապին, որ ահա այս տան մէջն է։ Եթէ ուզում ես, մենք քեզ կազատենք, թէկուզ թագաւորը դրա համար մեզ խեղդել տայ»։

Արևհատն ասում է. «Հարկաւոր չէ. տըւէք ինձ այս դռների բանալիքը, դուք գնացէք. ես վիշապից չեմ վախենում»։

Բանալիները առնում է, բաց է անում դուռը, սենեակից սենեակ անցնելով՝ մտնում է մի մեծ դարբաս. տեսնում է, որ ահա այստեղ՝ տաղտի վրայ մի ահագին վիշապ է մեկնւած։ Արևահատը մի քիչ հեռու կանգնում է ու ասում. «Բարով քեզ, թագաւորի որդի։ Ես Արևամօր կըտիցն եմ գալիս. նա շնորհաւորում է քո ծնունդն ու քեզ արևշատութիւն է ցանկանում»։

Վիշապը գլուխը բարձրացնում է ու սուր աչքերով մտիկ տալիս Արևահատին։ Արևահատը բսկսում է դողդողալ, բոլոր չանը սարսռում է, մազերը փշաքաղւում։ Օձը տեսնում է, որ Արևահատը վախենում է, գլուխը շուռ է տալիս՝ տանում է պոչի մօտ, բայց մէկ էլ էլի յետ է դառնում, մտիկ տալիս. այսպէս կրկնում է մի քանի անգամ և խեղճ աղջկանը հալ ու մաշ է անում։ Յետոյ Արևահատի միտն է ընկնում Արևամօր տըւած խրատը. նոր սիրտ է առնում ու ասում է. «Թագաւորի որդի, եթէ ինձ ուտելու ես, միանգամից կոլ տուր՝ ես պրծնեմ, էլ ինչո՞ւ ես ինձ այսպէս տանջում. իսկ եթէ ոչ՝ Արևամօր անունովը ես քեզ հրամայում եմ՝ դուրս արի քո խորխիցը»։

Այս խօսքի ասելն ու վիշապի կըծկւիլը մին է դառնում։ Կծկւում է, կծկւում, կոլորւում, դողդողում, ոլորւում, մէկ էլ որ չի տրաքւում, նրա ձայնից բոլոր պալատն այնպէս է թնդում, որ թագաւորն ինքը տեղիցը վեր է թռչում։

Ամեն կողմից վազում գալիս են, որ տեսնեն ինչ պատահեց, ու գալիս տեսնում են որ ինչ—վիշապի խորխը մի կողմը ընկած ու նրա տեղ՝ սպիտակ սաւանում փաթաթւած մի սիրուն տղայ, մօտն էլ խաս ու զումաշում ծփալիս, արևի նման շլմնաղ մի աղջիկ նստած՝ իրար հետ խօսում, ծիծաղում են։ Իսկոյն վազում են թագաւորին ականջաբռնուկ. նրան աչքալոյս են տալիս ու ասում. «Բաս չես ասիլ, օձը մի սիրուն, շլմնաղ տղայ է դառել»։ Թագաւորը, թագուհին վազում են, իրանց որդուն չոկ, Արևահատին չոկ գրկում, համբուրում։ Տղային հագցնում են, զուգում, զարդարում, անունն էլ դնում են Օձամանուկ։ Յետոյ

Օձամանուկին ու Արևահատին եօթն օր, եօթը գիշեր հարսանիք են անում։ Նրանք հասնում են իրանց մուրազին, դուք էլ հասնէք ձեր մուրազին»։

ԼՈՅՍ ԵՒ ՄՈՒԹ ԱՇԽԱՐՀՆԵՐ

(Մանկական աշխար-հայեացք)

«Երեխէք, նայեցէք այս վայր ընկած չինարի ծառին, տեսէք ինչպէս մեկնուել է և արդէն սկսել է փթիլ։ Մի ժամանակ սա գալար է եղել և ձեզ նըման փոքր։ Բայց որ սկսել է բարձրանալ, շատ գոռոզացել է։ Պատուղ չի ունեցել, որ ճղները կըռացնէր, գլուխը խոնարհեցնէր։ Աստուած սրան բարձրանալու շնորհք է եղել տըւած, բայց սա իր գլխի պատիւը չի ունեցել, Աստծու ողորմութիւնը չի հասկացել։ Այս յիմարն ուզեցել է այնքան բարձրանալ, որ գլուխը երկինք հասցնէ և իր ճղներով երկնքի սիրտը ծակծկէ։ Աստուած բարկացել է սրա գոռոզ մտածութեան վրայ և ահագին բարձրութիւնից տապալել է»։

Այս խօսքն ասողը Գիւլնազ տատն էր, որի անունը դուք, իմ փոքրիկ ընթերցողները, պէտք է որ լսած լինէք։ Լուսահոգին ամեն բան գիտցող մի պառաւ էր և շատ երեխաներ։ Օրը ցերեկով բոլոր երեխէքս հաւաքել էինք մօտը, յոգնած լինելով շատ խաղալուց, որ տատիկը մի բան պատմի մեզ, որ մենք համ լսենք, համ հանգստանանք։ Դուրսը, կանաչ խոտի վրայ, մի տանձենու շւաքում էինք նստոտել։ Եղանակը գարնանային էր։

—Մենակ ծառերը չեն, որ յիմարանալ, գոռոզանալ գիտեն. մի ժամանակ մարդիկն էլ են այդպէս եղել։ Նրանք էլ մի աշտարակ են շինել այն մտքով, որ նրա ծայրը երկինք հասցնեն և այնտեղից Աստծու հետ կռիւ սկսեն։ Աստուած համբերել

է մի առ ժամանակ, մինչև նրանք աշտարակի ծայրը մօտեցրել են երկնքին և սկսել են աւելի գոռոզանալ։ Դրա վրայ Աստծու համբերութիւնը հատել է. նրանց աղմուկից ու աղաղակներից ձանձրացած, սաստիկ քամի է բարձրացրել և աշտարակի ամեն մի քարը, ամեն մի քարփիչը ուրիշ-ուրիշ աշխարհք է գցել...

—Ո՜հ, ինչքան բարձր է եղել այդ աշտարակը, որ ծայրը մինչև երկինք է հասել,—բացականչեց երեխաներից մէկը։

—Աշտարակը չի եղել բարձր,—ծաղրեց նրան մի ուրիշը,—այլ երկինքն է եղել ցածր։ Այնպէս չէ՞, տատիկ, որ երկինքն առաջ շատ մօտիկ է եղել։

—Այո՛, երկինքը մեզանից մօտիկ է եղել, բայց այդ եղել է աշտարակը շինելուց առաջ։ Աշտարակը շինելիս երկինքը բարձր է եղել, և աշտարակն էլ այնքան բարձրացած են եղել, որ նրա գլուխը գետնքից երևալիս չի եղել. այնքան բարձր է եղել, որ ամեուը նրա վրայ բարձրացողը մինչև ամառը հազիւ է եղել ցած գալիս... Բայց դրանից առաջ, ճշմարիտ է, երկինքը շատ մօտիկ է եղել մեզանից, այնքան մօտիկ, որ երեխաները գնդակ խաղալիս շատ անգամ երկնքին է եղել դիպչում գնդակը և այնտեղ էլ մնում։

—Ինչո՞ւ էր այնտեղ մնում գնդակը, տատիկ. թող դիպչէր ու էլ յետ վայր ընկնէր,—հարցնում էինք մենք և մի և նոյն ժամանակ աւելի մօտենում տատիկին, որ լաւ լսենք նրա պատմութիւնը երկնքի մօտիկութեան մասին։

Նրա համար էր այնտեղ մնում, որ երեխէքը միւս անգամ երկնքին չդիպչեն և Աստծուն անհանգիստ չանեն։ Հապա չէ՞ք լսել, որ մէկ անգամ Արևամանուկը պատահմամբ իր նետը դիպցրել էր Արեգակին, նա էլ անիծել էր Արևամանուկին, դրա համար և ասել... «Այսուհետև ցերեկները

չապրիս դու, որ իմ երեսը չըտեսնես»։ Այնուհետև խեղճ Արևամանուկը ցերեկները մեռնում է եղել և գիշերը կենդանանում։ Նրան այդ պատժից ազատում է Արևահատը՝ Օձամանուկի նշանածը։ Բայց Արևահատի վերջը ձեզ չեմ պատմել կարծեմ։

—Հիմա պատմիր, տատիկ, հիմա պատմիր,— աղաղակեցին երեխաներից մի քանիսը, իսկ մեսները զանազան հարցումներ արին երկնքի մօտիկութեան մասին...

Գիւլնազը մի բան պատմելիս պարապ չէր նստում. նա կամ գուլբա էր անում, կամ ակնոցը քթին դրած՝ երեխաների պատռած շորերն էր կարկատում, երբեմն էլ՝ ձեռքի գործը մի կողմ էր դնում և երեխաներից մէկի կամ միւսի գլուխը քաշում դնում ծնկան վրայ, որ տեսնի հարսները լաւ են լացել երեխի գլուխը և մաքրել, թէ ոչ։ Նա մի և նոյն ժամանակ առանց ուշադրութեան չէր թողնում տան հոգսը. շատ անգամ միևնոյն ատեում էր իր պատմութիւնը և զանազան հրամաններ էր տալիս այս ու այն հարսին։ Երեխէքս գիտէինք այդ և ամենայն զգուշութեամբ փաղաքշում էինք նրան, փայփայում, որ նա ուրիշ ոչ մի բանի վրայ ուշադրութիւն չդարձնէ, այլ միայն մեզանով զբաղուի, մեր հետաքրքրութիւնը լցնէ։

«Այ, մի ժամանակ երկինքը շատ մօտիկ էր երկրից,—շարունակեց տատիկը։—Երկնքից լսում էր Աստղծու ձայնը. նա այնտեղից խօսում էր մարդոց հետ և յայտնում էր նրանց իր կամքն ու հրամանը, պատուէրներ էր տալիս և հասկացնում էր, թէ ինչ պէտք է անեն և ինչ չըպէտք է անեն։

«Ուղիղ կէս գիշերին լսում էին հրեշտակների քաղցր մեղեդիքը։ Աքաղաղներն ամենքից առաջ էին լսում նրանց ձայնը և իրանց միաձայն կանչիւնով զարթեցնում էին մարդկանց, որ վեր կենան և հրեշտակների հետ միասին փառաբանեն Աստղծու հզօր ու մէկ անունը...»

—Աքաղաղները հիմա էլ են լսում հրեշտակների ձայնը,—աւելացնում էր տատիկը և խոր հոգոց քաշում մի այնպիսի ձևով, որ կարծես ինքն ապրած լինէր այն հին ժամանակներում, իր ականջով լսած լինէր Աստղծու ձայնը և հրեշտակների մեղեդիքը, և այժմ զրկւած էր այն երջանկութիւնից։

Զարմանալի մի աշխարհ է մանկական աշխարհը. ափսոս որ մարդ խելահաս եղած ժամանակ՝ էլ չի կարողանում մտնել այդ աշխարհը, որ իր առաջւան լսածները մէկ անգամ էլ լսէ։ Ամենայն ինչ, որ մանկութեան ժամանակ մօտիկ էր, մեծացած ժամանակ հեռանում է. ինչ որ հեշտ էր, դժւարանում. ինչ որ պարզ և հասկանալի էր, խաւարում և անըմբռնելի դառնում։ Ինչքան հիմա ես յիշում եմ, մանկութեանս ժամանակ մեզ համար ոչ մի վերացական բան չըկար, ամենայն ինչ տեսանելի և շօշափելի էր։

—Առաջ Մութ-Աշխարհքն էլ է եղել մեզանից մօտիկ—ասում էր Գիւլնազ տատը։—Պատահել է, որ աղջկէքն իլիկ մանելիս՝ յանկարծ թելը կտրւել է և իլիկը մի հորի մէջով ընկել է Մութ-Աշխարհքը։ Եթէ իլիկ մանող աղջիկը մի բարի աղջիկ է եղել, Ներքի-Աշխարհքի բարի պատուհանները նրա իլիկը վեր նետելով՝ յետ են դարձրել նրան։ Բայց հիմա Ներքին-Աշխարհքն էլ է հեռացել մեզանից։

Գիւլնազը մի երկար հեքիաթ էր պատմում, որի մէջ Մութ կամ Ներքին-Աշխարհքի մասին մի այսպիսի կտոր կար—

...Անտես-Աննմանին դէւը փախցրեց։ Թագաւորազն Գուրգէնը, որ Աննմանի փեսացուն էր, վեր առաւ իր երկու եղբայրներին և դէւի հետքովը գնաց ու գտաւ նրան հորի մէջ։ Դէւը մրափած էր։ Այդ երևում էր նրանից, որ հորի բերանից ծուխ ու բոց էր բղխում։ Այդ դէւի արտաշնչութիւնն էր։ Մեծ եղբօրը կախեցին հորի մէջ, որ

երթայ ազատէ Աննամանին. նա չկարողացաւ կրակին դիմանալ և աղաղակեց. «վա՛յ, այրւեցի՛, այրւեցի՛»... Նրան դուրս քաշեցին և միջնակին կախեցին: Նա էլ աղաղակեց. «վա՛յ, այրւեցի՛»: Նրան էլ դուրս հանեցին: Յետոյ Գուրգէնն ասեց. «Հիմա ինձ կախեցէք, և ինչքան էլ աղաղակելու լինիմ, թէ այրւեցի՛, վեր չընհանէք»: Եւ ճշմարիտ՝ Գուրգէնը գընաց մինչև հորի յատակը, առանց ձայն հանելու: Այնտեղ նա գտաւ Անտես-Աննամանին: Նրա ծնկան վրայ էր դրել հրէշ դէւն իր գլուխը և քառասուն օրով մրափել: Այնտեղ կախ էր դէւի թուրը: Միայն այն թրով կարելի էր կտրել նրա գլուխը, այն էլ մէկ զարկով միայն. եթէ երկրորդ անգամ զարկէին նա կրկին կրկենդանանար:

Աննամանը ծունկը դուրս քաշեց թէ չէ՝ դէւը զարթեց և իսկոյն ոտքի կանգնեց. բայց միևնոյն ժամանակ թուրը պսպղաց և դէւի գլուխն ընկաւ գետին:—«Մէկ էլ զարկիր, մէկ էլ, մէկ էլ»... ղըղըացրեց գլուխը, բայց Գուրգէնը չզարկեց և ասեց. «Ես մէկ անգամ եմ ծնւել իմ մօրիցը և ոչ թէ երկու անգամ»:

Հրէշ դէւին սպանելուց յետոյ Գուրգէնն ու Աննամանը պատեցին դէւի սոորերկրեայ ընդարձակ բնակարանը և ինչ որ գանձ ու հարստութիւն ունէր՝ բոլորն էլ ժողովեցին և վեր բարձրացնել սրւին: Երբ որ մնացին միայն իրանք, սկսեցին վիճել, թէ ով իրանցից առաջ բարձրանայ: Աղջիկը տեսաւ որ Գուրգէնը յամառութեամբ չի ուզում ինքն առաջ բարձրանալ, ասեց նրան. «Ես շատ կասկածում եմ, թէ մի գուցէ քո եղբայրները քեզ վեր չընհանեն և դու մնաս հորի մէջ: Եթէ իմ նախազգացմունքս կատարւելու լինի, դու կերթաս դէւի գոմը. այնտեղ քո առաջդ կրգան մի սև այծ և մի սպիտակ ոչխար. եթէ կարողանաս ոչխարի վրայ նստել, նա քեզ վեր կընհանէ Լոյս-Աշխարհք, իսկ եթէ չը կարողանաս, և այծն ընկնի տակդ, նա

քեզ կրտանէ Մութ-Աշխարհք, որտեղից դու այլ ևս Լոյս-Աշխարհք ընկնել չես կարող»: Այս ասելուց յետոյ Աննամանը վեր բարձրացաւ, իսկ Գուրգէնին նրա անիրաւ և անգութ եղբայրները թողեցին հորի մէջ...

Գուրգէնը շատ ազաչեց, պաղատեց և տեսաւ որ իր եղբայրների սիրտը քարացել էր, ճարը կրտրած՝ գնաց դէպի դէւի գոմը, որ փորձէ իր բախտը—նստէ ոչխարի վրայ: Բայց անիրաւ այծը այնքան ճարպիկ էր, որ ոչխարին պողահարելով մի կողմ ձգեց և ինքն ընկաւ Գուրգէնի տակը և տարաւ դյեց Մութ-Աշխարհքը:

Այդ աշխարհքն էլ մեր աշխարհքի նման քաղաքներ և գիւղեր, ունէր և մինչև անգամ գիշեր ու ցերեկ կար, թէև աստւում էր մութ: Նա մի քաղաքում իջևանեց մի պառաւի տան և նրանից իմացաւ, որ քաղաքացիք ջրի պակասութեան համար շատ նեղութեան մէջ են: «Ամբողջ քաղաքում մի աղբիւր կայ միայն, բայց նրանում էլ բոյն է դրել մի ահագին վիշապ, և ամենայն օր մէկ աղջիկ են տանում գցում նրա երախը, որ ապա թողյ է տալիս ջուր վերցնել: Էգուց էլ հերթը մեր թագաւորի միամօր աղջկանն է. նրան պիտի տանեն ահռելի գազանի բերանը ձգեն», ասեց պառաւըև սկսեց լալ:

Գուրգէնը շատ ծարաւած էր. այս որ լսեց՝ նրա ծարաւն աւելի սաստկացաւ: Միւս առաւօտ, դեռ լոյսը չը բացւած, վեր կացաւ նա և պառաւին էլ զարթեցրեց, որ տանէ աղբիւրի տեղը ցոյց տայ իրան: Պառաւը տարաւ նրան և հեռւից ցոյց տւաւ աղբիւրը: Գուրգէնը դէւի թուրը ձեռին՝ մօտեցաւ և տեսաւ մի լիճ, որի մէջ մեկընեկել էր վիշապը մի ահագին լեռնակղզու պէս: Ամբողջ լիճը ժահահոտութիւնով և ապականութիւնով թունաւորւած էր: Վիշապի գլուխը գտնւում էր աղբիւրի ակնում, որ բղխում էր մի լայնաբերան քարայրից: Նա

անշարժ էր, կարծես թմրած լինէը կամ մրափած։

Վիշապի գլխաւերևը նոր արդէն մի ծառից կապել էին թագաւորի աղջկանը, որին պիտի կուլ տար վիշապը մի քանի րոպէից յետոյ։ Աղջիկը արդէն մեռելի գոյն էր ստացել։ Գուրգէնը մօտեցաւ նրան, կապերն արձակեց և սիրտ տըւաւ, որ չըվախենայ։ Թուրը ձեռին մօտեցաւ վիշապին և այնպիսի մի հարուած տըւաւ նրա վզին, որ վիշապը երկու ահագին կտոր դարձաւ, իսկ լիճն արիւնի ծով։ Թագաւորի աղջիկը ձեռքը թաթախեց արիւնի մէջ և Գուրգէնի մէջքին նշան դնելով, ինքը վազեց տուն, որ թագաւորին յայտնէ եղելութիւնը։ Հաւաքւեցին բոլոր քաղաքացիք և քառասուն ջուխտ գոմէշով հազիւ կարողացան ամեհի գազանի լեշը դուրս քաշել այնտեղից և մաքրել աղբիւրը։

Թագաւորն ուզեց վարձատրել Գուրգէնին, և մունետիկ ձգեց քաղաքի մէջ, որ գտնեն նրան և բերեն, և գտան նրան թագաւորի աղջկայ դրած նշանով։

Թագաւորն ասեց Գուրգէնին. «Դու որ փրկեցիր ինձ և իմ ժողովրդին չար վիշապի գերութիւնից, այսօր դու ես մեր տէրը և թագաւորը. ուզիր իմ աղջիկս և իմ տեղ թագաւոր եղիր»։

Գուրգէնը պատասխանեց. «Ես այս երկրից չեմ. ես Լոյս-Աշխարհքից եմ ընկել այստեղ». և սկսեց պատմել իր գլխի անցքը և յետոյ աւելացրեց. «Եթէ կարողանաք ինձ Լոյս-Աշխարհք գցել կրկին, ես ուրիշ բան չեմ ուզիլ ձեզանից»։

Թագաւորն ասեց. «Այդ անհնարին բան է. Լոյս-Աշխարհքը շատ ու շատ բարձր է մեզանից. ով կարող է քեզ վեր թռցնել և տանել այնտեղ»։

Գուրգէնն ասեց. «Ինչպէս լինի, ես պէտք է վեր բարձանամ. քո առաջարկութիւնը ես ընդունել կարող չեմ»։

Թագաւորն ասեց. «Դու գիտես, բայց որ չըկարծես, թէ ես ընդդէմ եմ քո գնալուն, ես կըժողովեմ իմ աշխարհքի բոլոր գիտուններին, թող նրանք մեզ ասեն, թէ արդեօք մի հնար կայ վեր բարձրանալու։ Եւ մինչև այդ, իմ իշխանութիւնը և բոլոր հարստութիւնս քեզ եմ յանձնում»։

Թագաւորը ժողովեց իր բոլոր աստղաբաշխներին, իմաստուններին և յայտնեց նրանց Գուրգէնի ցանկութիւնը. նրանք ասեցին, թէ հին ժամանակներում, ճշմարիտ է, ներքին և վերին աշխարհների մէջ սերտ յարաբերութիւն է եղել, բայց յետոյ մեր մեղքից է եղել թէ պատահմամբ, մեր աշխարհը ցածրացել է, առաջ քիչ և յետոյ շատ։ Լըսած ենք, որ մեր հեռացած ժամանակն էլ մի սանդուխք է եղել և այդ սանդուխքով արդար մարդիքը վեր բարձրանալիս և վայր իջնելիս են եղել, բայց հիմա այդ սանդուխքն անհետացել է, էլ չի երևում...

Այսպէս Գուրգէնը մնաց Մութ-Աշխարհում մոլորւած։ Սկսեց պտըտւել զանազան տեղեր, հարց ու փորձ անել և ոչ մի տեղից մի դուռ չըգտաւ վեր բարձրանալու։

Մէկ օր դուրս էր եկել որսորդութեան։ Շատ մանգալուց յոգնելով՝ նստեց մի հսկայական ծառի տակ, որ փոքր ինչ հանգստանայ, մէկ էլ մի ծըւծըւոց լսեց ծառի վրայից. նայեց և... ինչ տեսնի... Ծառի վրայով սողում էր մի ահռելի վիշապ դէպի մի մեծ բոյն, որի մէջ լիքն էին մեծ-մեծ թռչուններ, բայց դեռ չէին թևաւորւած։ Երևում էր, որ դրանք ձագուկներ էին մի հսկայական թռչունի։ Այդ ձագուկները օձին տեսնելով՝ սարսափի մէջ էին ընկել և սկսել էին ծըւծըւալ։ Այս որ տեսաւ Գուրգէնը, առաւ իր նետաղեղը և ուղղակի շեշտեց վիշապի գլխին և վայր կործանեց։ Յետոյ հանեց դէւի թուրը և վիշապին կտոր-կտոր անելով՝ մի ահագին բլուր շինեց։ Այս բարեգործութիւնից ու քաջութիւնից սիրտը մխիթարւած՝

պառկեց ծառի տակերում և խոր քնի մէջ մտաւ։

Այս անցքից մի քիչ յետոյ թռչունների մայրը թռած եկաւ ու Գուրգէնին տեսնելով այնտեղ պառկած՝ կարծեց, թէ նա է իր թշնամին, որ ամենայն տարի կոտորում է իր ձագերին։ Նա իսկոյն յետ դարձաւ և ճանկերով մի չաղացաքարի չափ ժայռ վերցրած՝ բերաւ, որ ձգէ Գուրգէնի վրայ։ Այս որ տեսան ձագուկները, մի սարսափելի ծըւծըւոցով և աղաղակով զգուշացրին իրանց մօրը և հասկացրին, որ Գուրգէնը ոչ թէ նրանց թշնամին, այլ նրանց ազատարարն է։

«Նայիր, ասեցին, մայրիկ, այդ բլրի վրայ և տես ինչ գազան է. դա գալիս էր, որ մեզ ուտի, այդ մարդն էր, որ սպանեց դրան և մաս-մաս արաւ»։ Այս որ լսեց մայր թռչունը, երախտագիտական զգացմունքով լցւած՝ ժայռը տարաւ առաջւան տեղը դրաւ և վերադարձաւ իր ձագուկների մօտ։

Գուրգէնը դեռ քնած էր։ Ծառի տակերն անցել էր միւս կողմը և արևն ընկել էր Գուրգէնի վրայ։ Օրը շատ շոգ էր։ Մայր թռչունը, որ աստւում էր Զումրուխթ, չուզեց Գուրգէնին զարթեցնել. նա իր հսկայական թևերը փռեց ամպհովանու պէս և շրւաք արաւ Գուրգէնի վրայ, որ նա հով-հով քնէ։ Վերջը, Գուրգէնը որ զարթեց, կարծեց, թէ մթնել է արդէն, բայց թռչունը որ թևերը յետ քաշեց, կրկին լուսացաւ, և Գուրգէնը տեսաւ հսկայ Զումրուխթին, որ խօսեց Գուրգէնի հետ և ասեց։

Ո՛վ ազնիւ երիտասարդ, դու իմ փրկիչն ես երկնքից իջած. դու այնպիսի մի բարերարութիւն ես արել ինձ, որ չըգիտեմ ինչով կարող եմ վարձատրել քեզ։ Ահա ուղիղ հարիւր տարի է, որ ես չէի կարողանում ազատել իմ ձագերին այդ անգութ գազանի երախից։ Այսօր դու փրկեցիր ինձ դրանից, ազատեցիր իմ ամբողջ սերունդը։ Օ՛... եթէ դա գողի պէս չըհետամտէր, եթէ ես կարո-

ղանայի գոնէ մէկ անգամ տեսնել դրան, դրա գլուխը կըջախջախէի... Ո՛վ պատւական և քաջ երիտասարդ, ինչ ես կամենում, որ ես քեզ համար ձեռք բերեմ. ո՞ր թագաւորութիւնն ես ուզում, որ քեզ տամ. ո՞ր թագաւորի աղջիկն ես ուզում, որ գնամ բերեմ. ինչ փառք ու պատիւ ես ուզում, որ քեզ տամ. որքա՞ն հարստութիւն ես ուզում, որ աշխարհիս ամեն ծայրից հաւաքեմ բերեմ քեզ համար. ասա ինձ, ամենայն ինչ մի ակնթարթի մէջ կը կատարեմ ես։

—Ես ոչինչ չեմ ուզում,—պատասխանեց Գուրգէնը քնաթաթախ, աչքերը տրորելով.—ես ոչինչ չեմ ուզում, այլ միայն Լոյս, Լոյս-Աշխարհք. կարող ես տանել ինձ Լոյս-Աշխարհք...

—Լոյս-Աշխարհք... բացականչեց Զումրուխթ։—Ուրեմն դու այնտեղից ես ընկել մեր աշխարհը, և ինչ հրաշքով։

Գուրգէնը պատմեց իր գլխի անցքը։

—Շատ լաւ,—ասեց Զումրուխթ,—ես քեզ կըտանեմ Լոյս-Աշխարհք, թէպէտ դա մի շատ դժւար ճանապարհորդութիւն է թէ ինձ համար և թէ քեզ համար։ Քառասուն օր հազիւ կարող ենք հասնել։ Միշտ թռած պիտի գնամ. իջնելու տեղ չըկայ։ Մեզ հարկաւոր է քառասուն օրւան պաշար վերձնել հետներս. քառասուն ոչխար և քառասուն տիկ ջուր։ Դու կերթաս այդ տկերն ու ոչխարները կըբերես թագաւորից և մենք ճանապարհ կընկնինք տասն օրից յետոյ, երբ որ ձագուկներս թռցրած կըլինիմ։

Գուրգէնը ճանապարհ ընկնելու օրը քառասուն ոչխար մորթեց և ամեն մէկը չորս կտոր արաւ, դարսեց պարկերումը, տկերն էլ ջրով լցրեց, բոլորը դարսեց Զումրուխթի վրայ և ինքն էլ նստեց վրան։ Զումրուխթն ասեց. «Եթէ գլուխս աջ կողմդ մեկնեմ, մի կտոր միս կըգցես բերանս, իսկ եթէ ձախ՝ տկի բերանը կըզնես բերանումս»։ Այս ա-

սեց Զումրուխն ու թռաւ, ամպերը ճեղքելով՝ բարձրացաւ դէպի Լոյս-Աշխարհք։

Հառաստուն օրը լրացաւ, բայց նրանք դեռ տեղ չէին հասել։ Մսի պաշարը հատել էր։ Զումրուխը գլուխը մեկնեց դէպ աջ. Գուրգէնը այլ ևս միս չունէր, որ գցէր բերանը։ Հանեց թուրը և իր ոտքից մի կտոր միս կտրեց և գցեց Զումրուխի բերանը։ Սրանից յետոյ մի ժամ չանցած՝ Զումրուխն իջաւ Լոյս Աշխարհքի վրայ։ Գուրգէնը վայր իջաւ արիւնաթաթախ և չըկարաց ոտքի վրայ ուղիղ կանգնել. ոտքի ջլերը կտրատել էր։ Զումրուխն ասեց. «Գուրգէն, ես քո միսը չըկերայ. հանիր. ահա բերանումս է, դիր տեղը, իմ թևս քսիր վրան, իսկոյն կառողջանայ»։ Գուրգէնն էլ այնպէս արաւ և իսկոյն առողջացաւ։

Յետոյ Զումրուխը Գուրգէնին մի քանի խրատներ տուաւ, թէ որտեղ պիտի գտնէ Աննմանին, իսկ ինքը նոր պաշարով բեռնաւորուած՝ մնաս բարով ասեց Գուրգէնին և դարձաւ կրկին դէպի Ներքի-Աշխարհքը...

Ահա թէ ինչ էր պատմում Գիւլնազ տատը Մուէթ կամ Ներքի-Աշխարհքի մասին։ Երկինք գընալը այսքան դժւարութիւն չունէր։ Արևահատը Արևամանուկին ցերեկւայ մահից ազատելու համար՝ մի ջուխտ երկաթէ տրեխ է հագնում և մի երկաթէ գաւազան է բռնում ձեռին և ճանապարհ է ընկնում դէպի արևմուտք։ (Այնպէս էին անում առհասարակ, որոնք որ ուզում էին Աստրծու մօտ գնալ։ Այնքան գնում էին, որ տրեխները մաշւում էր, գաւազանի ծայրը կոտրւում. այդ նշան էր, որ արդէն աշխարհի ծայրն են հասել)։ Արևահատի տրեխները որ մաշւում են, նրա առջև բացւում է մի հրեղէն պալատ։ Ներս է գնում և տեսնում է այնտեղ նստած Արևամօրը, այսինքն Արեգակի մօրը, որ մի շատ սիրուն պառաւ է լինում։ Արևամայրը նրան սիրով ընդունում է, իմանում է գընալու պատճառը և թաքցնում է նրան, որ տղան՝ Արեգակը՝ չըտեսնէ նրան։ Երեկոյին տղան ներս է մտնում շատ շոգած ու քրտնած... մայրը նրան աղաչում է, որ խնայէ Արևամանուկին ազատէ նրան մահից։ Տղան մօր խօսքը չի կոտրում. վեր է առնում մի կտոր բամբակ, իր քրտինքը սրբում է նրանով և ասում է. «Ահա այս է նրա դեղը. եթէ մի քրտինքը քսեն նրա երեսին, նա կառողջանայ. բայց ով կըտանէ»։ Այտտեղ մայրը յայտնում է Արևահատի գալը, դուրս է բերում նրան թաքցրած տեղից. Արեգակը նրան սիրով ընդունում է և կարճ ճանապարհ է ցոյց տալիս կրկին իր տեղը գնալու։

Գիւլնազ տատը, որ այս հէքիաթում արևի համար ասում էր, որ տղայ է, նա ուրիշ անգամ ասում էր՝ Արեգակն ու Լուսինը քոյր ու եղբայր են։ Մօր մասին խօսք չըկար։ Նա ասում էր. որովհետև արեգակն աղջիկ էր, գիշերը վախենում էր ման գալ, իսկ ցերեկը, ամաչում։ Լուսինը նրան մի բուռ լիքն ասեղ տուաւ և ասեց. «Ով որ քեզ մտիկ տայ, դու այս ասեղներով կըծակծակես նրա աչքերը»։ Այնուհետև քոյրն սկսեց ցերեկը ման գալ, իսկ եղբայրը՝ գիշերը։

Գիւլնազը չէր ասում, որ ցերեկի պատճառը Արեգակն է, որ առանց արեգակի ցերեկ չի լինիլ. ոչ. ցերեկն ինքն իր համար մի ջոկ բան է, գիշերը ջոկ։ Արեգակ լինի, չլինի, ցերեկ պիտի լինի։ Նա ասում էր՝ ցերեկն ու գիշերը մի ծեր մարդու ձեռքում են գտնւում։ Ծերունին նստած է մի բարձր սարի վրայ և երկու կծիկ ունի ձեռին, մինը սև և միւսն սպիտակ։ Երբ որ գլորում է սև կծիկը, աշխարհքը մթնում է, և երբ որ սպիտակն է գլորում, լուսանում է և ցերեկ դառնում։ Այդ ծերունին էլ ուրիշ բան չունի... շարունակ սպիտակը կծկում է, սևը բաց թողում, սևը կծկում է, սպիտակը բաց թողում։

Գիւլնազ տատիկը շատ անգամ խոր յոգոց քաշելով ասում էր.

—Էէէյ, հէյ... դուք հէնց կարծում էք, թէ մեր աշխարհքն առաջ էլ այսպէս է եղել... Ո՛չ։ Հին ժամանակները, երբ որ Աստուած մօտիկ է եղել մեզանից, Նրա ողորմութիւնն էլ անպակաս է եղել։ Ամեն ձմեռ երկինքը ձիւնի տեղ ալիւր է եղել թափելիս, ձիւնի պէս սպիտակ, նրա պէս մաքուր։ Մարդիկ հաւաքում են եղել երկնքի ալիւրը և իրանց ամբարները լցնում այնքան, որ բաւականա՜նար մինչև միւս ձմեռը...

Մէկ անգամ, երբ տատիկն արդէն սկսել էր պատմել, թէ հին ժամանակներում մարդիկ ինչպէս են եղել ապրելիս, երեխաներից մէկը, որ գլուխը տատիկի ծնկանը դրած քնել էր, յանկարծ զարթեց և պատմութիւնը միջահատելով՝ հարցրեց տատիկին.

—Ցեռո՛յ, տատիկ յեռո՛յ...

—Ի՞նչ յեռոյ, հոգիս—հարցրեց տատիկը։

—Դու չասեցի՛ր, որ երկինքն առաջ շատ մօտիկ էր մեզանից... յեռոյ ի՞նչպէս եղաւ, որ նա այդքան բարձրացաւ։

—Այդպէս եղաւ, որ երեխէքը երբոր սկսեցին շատ չարութիւն անել, անդադար վազվզում, թրոչկոտում էին և Աստծուն չէին թողնում հանգիստ քնել, Նա էլ բարձրացրեց երկինքը, հեռացաւ, առանձնացաւ, որ երեխէքն իր քունը չըխանգարեն։

—Այդպէս չէ, տատիկ, այդպէս չէ,—մէջ ընկաւ մի սրամիտ երեխայ, որ ուրիշ կերպ էր լսել այդ անցքը։

—Հապա ի՞նչպէս է եղել,—հարցրինք ամենքս միաբերան։

—Թող տատիկն ասի... Աստծուն խռովեցնողը ոչ թէ երեխէքն են եղել, այլ մի անգէտ պառաւ է եղել, որ երեխի...

—Այդ սուտ է, այդ սուտ է... խնդալով ընդ-

հատեց Գիւլնազ տատը, չուզենալով՝ որ պատճառը պառաւները լինին եղած։

Այստեղ երեխէքս պաշտպան հանդիսացանք տատիկին և բարկացանք նոր զարթած երեխայի վրայ, որ միջահատեց տատիկի պատմութիւնը։ Գիտէինք առաջուց, որ եթէ տատիկի պատմութեան թելը կորչէինք, էլ միւս անգամ նա իր ասելիքի ծայրը չէր գտնիլ, այնպէս էլ կըխափանուէր գործը։ Եւ ճշմարիտ այդպէս էլ եղաւ։

Տեսնելով որ տատիկը էլ նոր բան պատմելու տրամադրութիւն չունի, սկսեցին խառնիխուռն շատ հարցեր առաջարկել։ Աղջկէքը հարցնում էին, թէ՝ այնպէս չէ՞, տատիկ, որ եթէ աղջիկը կանաչ-կարմրի տակովն անց կենայ, տղայ կըդառնայ. տղէքը հարցնում էին, թէ՝ այնպէս չէ՞, որ եթէ մէկը կարենայ իր արմունկիցը պաչել, ծիտ կըդառնայ, և ուրիշ այս տեսակ հարցուփորձեր։

Եւ ամենքիս սիրով պատասխանում էր Գիւլնազ տատը։ Ողորմի իրան, շատ բարեսիրտ պառաւ էր. նա իսկապէս մի պառաւ երեխայ էր, որովհետև հաւատում էր այն բաներին, ինչին որ միայն երեխաները կըհաւատան.

Ա Ր Ե Ւ Ա Մ Ա Ն Ո Ւ Կ

1.

Մի գեղեցիկ գարնանային առաւօտ էր։

Արևը նոր էր դուրս եկել ու իր բարի լոյսը տըւել Մասիսի գագաթին։

Մասիսի ձիւնապատ գագաթը սկսել էր այնպէս փայլել, փայլփլել, այնպէս կանաչ-կարմրին տալ, որ տեսնողի խելքը գնում էր։

Մի ժամից յետոյ սարի զանազան մասերից

քուլա-քուլա ամպեր բարձրացան, աջ ու ձախ, վեր ու վայր շարժելով, մեծանալով ու փոքրանալով, փուելով ու խմբելով՝ զանազան ձևեր ստացան։

Այս հիանալի պատկերներն ամենայն առաւօտ նկարում էին Մասիսի վրայ, բայց ոչ ոքի ուշադրութիւն չէին գրաւում։

Ոչ ոք ժամանակ չուներ նայելու, ոչ ոք ճաշակ չուներ հիանալու։ Դա մի սովորական երևոյթ էր ամենքի համար, մի հասարակ արևաբաց էր, որ շողշողալով՝ ամենքին իմաց էր տալիս, որ վեր կենան իրանց գործին կենան, իրանց բանին գնան։

Այգեպանն շտապում էր, որ շուտով այգին գնայ ու անցած օրւայ կիսատ թողածն աւարտի, տաւարածը տաւարն էր արօտ տանում, աղջկէքն ու հարսները դէպի աղբիւրն էին վազում, պառաւները կերակուրի պատրաստութիւն էին տեսնում։

Բայց այս անգամ մէկը կար, որ Մասիսին էր նայում, նրա փայլուն տեսքից հիանում ու զարմանում։

Այդ մէկը մի մանուկ էր։

Մի առոյգ, զարթ ու սիրուն մանուկ։

Մի ոսկեթել մազերով, նախշուն աչքերով մանուկ։

Նրա երեսն արևի նման լոյս էր տալիս, ձիւնի նման փայլում։

Նրա աչքերն արեգակի նման ճառագայթներ էին արձակում։

Նա կարծես հողեղէն չէր, այլ հրեղէն։ Նա հէնց իմանաս Արեգակի ծնունդը լինէր։ Արևի որդին։

Եւ հէնց անունն էլ Արևամանուկ էր։

2.

Ամեն առաւօտ, երբ արևի շողքն ընկնում էր

Մասիսի վրայ, Արևամանուկը պէտք է վեր կացած լինէր, որ մայր արևի առաջին ողջոյնը, առաջին բարի լոյսն ընդունէր։

Նա շատ էր սիրում ամպերէն երևոյթների, ամպերէն ձևերի վրայ նայել։

Առաւօտեան արշալոյսը, թէ երեկոյեան վերջալոյսը—որ կրակէ գոյնով ներկում, նկարում են հորիզոնի վրայ կուտակւած ամպերը—հազարաւոր պատկերներ էին ցոյց տալիս նրան։

Ամպերի շարժումները, նրանց ձևափոխութիւնները գրաւում, յափշտակում էին նրա ուշքն ու միտքը։

Առաւօտ էր լինում՝ թէ երեկոյ, խաղաղ էր լինում երկինքը՝ թէ փոթորկալից, կուտակւած էին լինում ամպերը՝ թէ ցրւած, մի ուղղութեամբ էին շարժւում՝ թէ զանազան,—նա այդ ամեն ձեւերին ու շարժումներին մի միտք, մի նշանակութիւն էր տալիս, ու ամեն ինչ, որ լսել էր հեքիաթներումը, տեսնում էր նրանց մէջ։

Այդ ամպերը շատ անգամ նրա աչքումը վիշապների կերպարանք էին ստանում և մէկ մէկու կռւ տալիս։

Երբեմն գազաններ էին դառնում ու իրար հետ կռւում։

Երբեմն դառնում էին ոչխարի հօտեր ու մի լեռնաչափ հովիւ էր՝ գերանաչափ մի սրինգ բերնին դրած՝ ածում էր։

Երբեմն դառնում էին մեծ-մեծ վրաններ ու նրանց մէջ ներս ու դուրս էին անում վիթխարի հսկաներ։

Երբեմն դառնում էին զօրախումբեր ու իրար դէմ պատերազմում։ Այդ լինում էր աւելի փոթորկի ժամանակ։ Երբ որոտում էր երկինքը, փայլատակում կայծակը ու ամպերը իրար էին խփւում։

Արևամանուկը ոչ միայն չէր վախենում այդ որոտմունքներից, այլ բարձրանում էր մի քարի

վրայ ու ամպերին հրամաններ էր տալիս, գոչելով՝ յառաջ, յետ, աջ, ձախ, միասին, կարգով, արագ…

Այսպէս բղաւում էր հեռուից, մինչև կարկուտը կամ տարափը վրայ էր տալիս ու մեր մանուկ զօրապետին վախեցնում, ձգում քարայրերի ու ծառախոռոչների մէջ։

Ինչպէս տեսնում էք, մեր Արևամանուկը թէպէտ փոքր էր, հազիւ տասը կամ տասներկու տարեկան կըլինէր, բայց շատ սրտոտ էր ու սրամիտ։

Երևում էր, որ ժամանակով մեծ ու երևելի մարդ պէտք է դառնայ։ Այսպէս էին ասում բոլոր գուշակողները, այսպէս հաւատացած էին ամենքը։

Բայց նա այժմ դեռ մի գառնարած էր։

3.

Այս՝ ինչ որ ասում եմ, ով է իմանում, թէ մեզանից քանի քանի տարի առաջ է եղել։ Եթէ ասեմ հազար տարի, երկու հազար տարի, երեք հազար տարի, էլի քիչ կըլինի։

Այդ հին ժամանակումը Մասիսի ու Արագածի արանքումը, ուր որ հիմա Արարատեան մեծ դաշտն է, ուր որ մեր Սուրբ Էջմիածինն է, Երևան քաղաքն է, Երասխ գետն է, Գեղամայ ծովն է, ահա այդ գաւառումը մի մեծ գիւղ է լինում՝ Արեւանն՝ թէ Արմաւան անունով, հաստատը չըգիտեմ և յատուկ տեղն էլ չեմ կարող ձեզ ասել։

Արմաւանի օդն ու ջուրը շատ մաքուր էր ու առողջարար։ Նրա աղբիւրը քառասուն ակն ունէր, քառասուն տեղից բղխում էր ու յետոյ միանում, դառնում մի այնպիսի գետ, որ եօթը ջրաղաց էր պտրտեցնում։ Բացի դրանից, գիւղի հանդերն էլ լիքն էին անմահական աղբիւրներով։ Այդ աղբիւրներն ամենքն էլ մի-մի անուն ունէին՝ իրանց յատկութեանը յարմար տրւած, որին ասում էին «Կաթնաղբիւր», որին «Ստառնաղբիւր», որին «Տղա-

բերուկ», որին «Պարկակերի», որին «Գառնակերի» և ուրիշ անուններ։

Լաւ աղբիւրը շատ սիրելի բան է։ Նա իր խըմողի երեսին խնդում, ծիծաղում է, քըչփչում, թաքուն բաներ ասում, մօտը պառկողի մէջքն օրօրում է ու վրան անուշ քուն բերում։ Երանի, հազար երանի այն մարդուն, որ իր մանկութեան ժամանակ այդպիսի տեղերում է անց կացրել իր կեանքը, անմահական աղբիւրների ու ծաղկունքների ծոցումն է մեծացել…

Արմաւանի հայերը, թէ մարդիկ և թէ կանայք, բոլորն էլ գեղեցկադէմ, վայելչակազմ, ուժեղ և բարձրահասակ էին։ Գլխացաւ, փորացաւ, սրտացաւ, բկացաւ, ծաղիկ, կարմրուկ և ուրիշ բոլոր մեր տեսած ցաւերի անունը նրանք չէին լսած։ Մարդիկ հիւանդ էին լինում միայն այն ժամանակ, երբ վիրաւորւած էին լինում զազանից կամ թըշնամուց և կամ ծառից վայր ընկած։ Նրանց կեանքը շատ երկար էր, շատ էին ապրում։ Այնքան ապրում էին, որ շատ ապրելուց բեզարում էին։ Շատ քիչ ապրողը հարիւր տարի էր ապրում, բայց սովորաբար երկու և երեք հարիւր տարի էին ապրում ու մի քանի անգամ ատամները փոխում, նոր ուժ ստանում։

Ծերացած հայրն ունենում էր քսան, երեսուն զաւակ, երեք-չորս այդչափ էլ թոռներ, մի այնքան էլ ծոռներ։ Մի գերդաստանի, ընտանիքի մէջ մինչև երեք-չորս հարիւր հոգի էին լինում, բոլորն էլ իրար հնազանդ՝ ամեն փոքրը իրանց մեծին, և ամենքն էլ ի մասին՝ մեծ հօրը։

Մեծ հայրը միւս բոլոր հայրերի գլխաւորն էր, գլուխն էր, և այդ պատճառով ասւում էր հայրապետ, այսինքն հայրերի գլուխ, կամ նահապետ, որ մի և նոյն նշանակութիւնն ունի։

Գերդաստանի բոլոր անդամները մի յարկի, մի ծածկարանի տակ չէին ճնում, այլ ջոկ-ջոկ յարկե-

րի ու ծածկոցների։ Ամեն անգամ, երբոր մէկին պսակում էին, նրա համար առաջուց մի վրան էին գործում բրդէ կամ մազէ թելից։ Այսպիսով տաբէցտարի շատանում էր վրանների թիւը։ Վրաններն այն յարմարութիւնն ունէին, որ շարժական էին, և ուր ուզում էին՝ տանում էին, ամառն աւելի բարձր ու լեռնային տեղեր, ձմեռը՝ ցածր ու դաշտային։ Քարաշէն տներ էլ ունէին, բայց հասարակ։ Դրանք մի տեսակ ձմեռանոցներ էին, աւելի անասունների համար, քան թէ մարդկանց։ Միայն մեծ նահապետն էր ունենում լաւ քարաշէն տուն։

Մեծ նահապետը որ վախճանւում էր, նրա մեծ որդիքը հեռանում էին միմեանցից և դառնում էին չոկ-չոկ նահապետներ։ Նրանք երկիրն էլ էին բաժանում իրանց մէջ և ամէն մէկը մի չոկ գաւառում էր բնակւում։

Իմ ասած ժամանակը նահապետներ շատ կային, բայց ամբողջ Արարատեան դաշտը, Երևանի ափերը, Արագածի արևմտեան և Մասիսի հիւսիսային երեսները, Գեղամայ ծովի արևմտեան ափերը, Գառնու և Հրազդան գետերի հովիտներն իրանց շրջակայ լեռներով մի նահապետի ձեռքի էին, և այդ նահապետն էր մեր Արևամանուկի հայրը։

Արևամանուկի հօր անունն էր Արևամանեակ, բայց նրա որդիքն ու թոռները դժւարանում էին ասել «Հայր Արևամանեակ», որովհետև շատ էր երկար, այդ պատճառով ասում էին «Հայր-Մանեակ» կամ «Հայրմա». իսկ նրա մօր անունն էր «Արևամատ», բայց նրան էլ փոխանակ ասելու «Մայր-Արևամատ», ասում էին «Մայրամ» կամ «Մամար»։ Նոյն իսկ Արևամանուկին չէին ասում «Արևամանուկ», այլ «Արմիկ» կամ «Արամիկ»։

Բայց թէ ինչու ամենի անունի մէջ էլ «արև» կայ, այդ ես չըգիտեմ. միայն շատերն ասում են՝ այդ նրանից է, որ մենք՝ հայերս՝ մի ժամանակ

արևապաշտ ենք եղել, մեր նահապետն էլ համարւում է եղել արևի փոխանորդ, նրա ազգական, ցեղ, ծնունդ. ահա այս պատճառով նրանց մեծ մասի անունն էլ արևով էր սկսւում։ Բայց այս տեսակ մութ բաները մենք յետոյ կլիմանանք. հիմա մենք դառնանք մեր արևամանուկին։

4.

Ահա այսպէս մեր սիրելի Արևամանուկը Արեւամանեակ նահապետի որդին էր։

Դեռ եօթը տարեկան հասակում՝ նրա թիկունքըն ու կուրծքն այնքան լայն էին ու մէջքն այնքան բարակ, որից երևում էր, որ նա մի փոքր առիւծ էր, որի պէսին մեր հէքիաթներում ասում են ասլան բալասի, այսինքն՝ առիւծի ձագ, կորիւն առիւծի։ Նրա աչքերը խոշոր-խոշոր և կրակոտ էին, երկայն թերթևուկները մինչև վարի կոպերն էին հասնում, գլխի մազերը խիտ ու երկայն։

Հին ժամանակները մազ ածիլելու սովորութիւն չունէին, բայց խուզում էին ուսերի հաւասարութեամբ, սանդրում էին դէպի յետ ու կապում վարսակալով, այսինքն մի մազակապ ժապաւէնով։ Արևամանուկի մազերի գոյնը հրաշէկ էր, այսինքն կրակի գոյն ունէր և փայլում էր ջուհարի նման։ Նա հաւաքւում էր «հրահեր», այսինքն կրակի մազեր ունեցող։ Այդ տեսակ մազեր ունեցողին մեր հէքիաթներում ասում են ոսկեքաքուլ, ոսկեքոչոր։

Արևամանուկի մազերը չէին խուզում։ Այդ տեսակ մազեր ում վրայ էլ լինում էր՝ չէին կտրում։ Նա իր մազերը երկու հիւս էր անում և աջ բաժինը դէպի ձախ, ձախինը դէպի աջ տանում, բկովը երկու անգամ պատ տալիս, վզին կապում ու ծայրերը կախ գցում մէջքին։ Նրա համար էր

այնպէս անում, որ խաղալիս ու վազվզելիս մազերըն իրան չըխանգարեն։

Երբ Աբևամանուկը ծնւում է, նրանից յետոյ նրա մայրը երկար ժամանակ երեխայ չի բերում, այս պատճառով նրան եօթը տարի շարունակ ծիծ է տալիս և ծծից չի կտրում։ Ամբողջ օրը խաղում էր Աբևամանուկը, բայց հէնց որ ճաշելու ժամանակը գալիս էր, նա առաջ մի նախաճաշիկ էր անում մօր ծծովը ու յետոյ ճաշն ուտում մէկ էլ ճաշելուց յետոյ էր վրայ ընկնում մօր ծծին ու բերանը քաղցրացնում. գիշերն էլ մօր ծոցումն էր քնում և ամեն անգամ զարթնելիս՝ ծիծը բերանն էր առնում։

—Բաւական է, որդի, էլ ինչ կայ, որ ինչ ծըծես, ծծերս ցամաքել են, ասում էր շատ անգամ մայրը, բայց էլի ծիծը դնում էր բերանը և գլուխը շփելով՝ քնացնում։

Աբևամանուկը սիրում էր և կովի ծիծը ծծել։

Շատ անգամ, երբ որ հարսները կովերը կըթելիս էին լինում, նա անցնում էր միւս կողմը և կովի ծծերից մէկը բերանն առնում ծծում։ Հարսները քթին էին խփում, որ յետ քաշւի, բայց նա էլ ջգրու արձակում էր հորթի կապը, խփում էր կովին և այսպիսով ինքը յաղթում էր հարսներին և ուզածի չափ ծծում։ Պատահում էր, որ մինչև կովի կթելը՝ ինքն արդէն ցամաքեցրած էր լինում ծծերը և խեղճ հորթին էլ չէր լինում բաժին թողած։

Կերակուրներից նա ամենից շատ սիրում էր իւղն ու մեղրը։ Իւղը նա կաթի պէս էր խմում, իսկ մեղրաբլիթը գաթի պէս ձեռքն էր առնում կծոտում։

Էլ ինչ ասել կուզի ուրեմն, որ ով տարով կըմեծանայ, մեր Աբևամանուկը օրով էր մեծանում ու զօրանում։ Դեռ տասը տարեկան հազիւ կլինէր, այնպէս էր աճել, զարգացել, որ տեսնողը կարծում

էր, թէ առնւազն տասնըհինգ կամ տասնըվեց տարեկան կլինի. բայց երբ դառաւ տասնըհինգ տարեկան, արդէն մի կատարեալ չինարի ծառ էր և էլ իր հասակին վայել չէր համարում իր տարիքն ունեցող մանուկների հետ խաղալ, այլ քան, երեսուն տարեկանների հետ էր խաղում, նրանց հետ մըրցում և ամեն տեսակ մարզմունքների մէջ յաղթում էր ամենքին։

Միշտ յաղթելը և ոչ մի անգամ չըյաղթւելը մեր Աբևամանուկի համար դառաւ մի այնպիսի յատկութիւն, որ յաղթւել ու մեռնելը նրա համար միևնոյն էր։ Այդ բանը նկատել էին խաղընկերները, և երբ պատահում էր իրանից աւելի ուժեղներին, նրանք խնայում էին Աբևամանուկին և չէին ուզում յաղթել, որ նրա սիրտը չըկոտրւի։ Այս տեսակ վեհանձնական սովորութիւն ունէին Արմաւանցիք, նրանք նշանաւոր քաջին և ուժեղին միշտ խնայում էին, նրան սիրում, պաշտում և իրանց պարծանք էին համարում։

5.

Աբևամանուկն արդէն դառել էր տասնըհինգ տարեկան, բայց իր ծնողների հսկողութիւնից դեռ չէր ազատւել։ Նրա ընկերներից ոմը տասւած էր, ոմը հովիւ, որը եղնարած էր, ոմը հօտաղ, բայց նրան միայն գառներն էին պահ տալիս, այն էլ միայն գարունքը, իսկ մնացած ժամանակ տանից չէին դուրս թողում։ Չէին դուրս թողում, որովհետև գիտէին որ նա ոչ մի տեղ հանգիստ չի մնալ, իր ուժը կըփորձի ամեն բանի վրայ ու փորձանքի մէջ կընկնի։

Բայց որքան շատ էին զսպում նրան ու հսկում վրան, նա այնքան աւելի էր ցանկանում վազել, ընկնել անտառները, ձորերը, բան տեսնել, բան շինել, իր պարսատիկն ու նետաղեղը փորձել։

—Մայրիկ, ինձ ուղարկեցեք տաւար,—աղաչեց նա մէկ անգամ իր մօրը.—ես աւելի լաւ տեղեր կըտանեմ արածացնելու. կովերն էլ աւելի կաթ կըտան և շուտ չեն ցամաքիլ.

—Ինչ հարկաւոր է, որդի,—պատասխանում է մայրը.—մենք այնքան տաւար չունինք, որքան պահողներ ունինք. նրանք էլ լաւ գիտեն, թէ որտեղ պէտք է արածացնենք:

—Բայց ես, մայրիկ, մինչև ճրը պէտք է տանը պարապ մնամ ու երեխանց հետ խաղամ: Աղջիկ էլ չեմ, որ բուրդ գզեմ, գուլպա գործեմ, իլիկ մանեմ: Չէ՞ որ ես տղայ եմ. իմ ընկերք տղէքը բոլորն էլ տաւար են գնում, ես ինչո՞ւ չըգնամ:

—Տաւարածուքիւնը հեշտ բան չէ, հոգիս: Տաւարը շատ հեռու տեղեր են տանում: Գող է, գազան է, ամեն ինչ պատահում է տաւարածներին:

—Ես էլ հէնց դրա համար եմ ուզում տաւար գնամ, որ մի քիչ հեռու տեղեր տեսնեմ: Ինձ ինչ պիտի անեն գողերն ու գազանները: Բա մեր շներըն ինչացո՞ւ են: Մեր Կորանն ու Ջեղդանը որ մօտս լինեն, էլ ինչ գող, ինչ գազան կըմօտենայ մեր տաւարին: Չէ, մայրիկ, ես պիտի գնամ տաւար: Բայց եթէ չըթողնէք, ես կըփախչեմ կընկնիմ Մասիսի ձորերը, կերթամ քաջերին կը գտնեմ, կասեմ՝ «Եկել եմ ձեզ մօտ, որ ինձ սովրեցնէք լաւ ձի հեծնել, նետ ձգել, թուր ու նիզակ գործածել»:

—Արմիկ, Մասիսի քաջերը սուր ու թուր չունին, ոչ ձի հեծնել գիտեն, ոչ նետ ձգել:

—Բաս էլ ինչի՞ քաջեր են, մայրիկ:

—Հէնց նրա համար չունին, որ շատ քաջ են: Նրանք այնքան քաջ են, որ կարիք չունին զէնք ու զրահի: Այնքան ուժով են, որ ահագին կաղնի ծառը արմատահան կանեն, և այդ կըլինի նրանց համար ինչպէս մի թեթև մահակ... բայց այդ մահակով նրանք հազար ձիաւորի պատասխան կըտան:

Նրանք ինչ կանեն նետաղեղը, քանի որ Մասիսի ստորոտից բլրաշափ ժայռերն այնպէս են շպռտում, որ սարի գլխովն անց են կացնում մինս կողմը գցում:

—Այդ ինչքան ուժով են, մայրիկ. ո՞վ գիտէ՝ իրանք էլ ինչ ահագին հսկաներ են:

—Իհարկէ, այնքան մեծ-մեծ են, որ նրանց տակին ոչ թէ ձի, այլ ոչ էլ ուխտ և ոչ փիղ կըկարենայ դիմանալ: Ամեն մինը մի սարի չափ կայ: Երբ որ նրանք դուրս են գալիս իրանց խոր ու մութ այրերից ու որսի ետևից ընկնում, Մասիսի ձորերը դըմբդըմբում են ու դաշտերը դողդողում: Երբ որ նրանք կրակ են անում, որ ճաշ եփեն, ով գիտէ քանի-քանի գերան են դարսում իրար վրայ. նրանց խարոյկի ծուխն ու ալիքը Մասիսի գագաթից է դուրս գալիս ու վրան ամպանում:

—Եթէ այդպէս է, մայրիկ, նրանց մօտ գնալ չի լինիլ, նրանք՝ ով գիտէ՝ մարդ էլ են ուտում:

—Չէ, հոգիս, նրանք մարդակեր չեն: Իմ պապը մէկ անգամ գնացել է նրանց մօտ: Ես այդ ժամանակը շատ փոքր եմ եղել, ինձ յետոյ են պատմել: Ասում են՝ իմ պապը որ գնացել է նրանց մօտ, առաջ հարցրել են, թէ դու ո՞վ ես. նա էլ ասել է՝ ես Արևագանց ցեղից եմ: Այդ որ լսել են, ասել են. «Որովհետև դու Արևագանց ցեղից ես, քեզ վնաս չենք տալ. բայց եթէ Վիշապազանց ցեղից լինէիր, քո մեծ կաորը ականջդ կըթողնէինք:

—Ուրեմն նրանք մեր ցեղին սիրում են, մայրիկ, իսկ Վիշապազանց ցեղին ատո՞ւմ:

—Այո՛ մեր ու դրանց մէջ կարծեմ մի տեսակ ազգականուքիւն կայ: Այժմեան քաջերի մայրը մեր ցեղից է եղել:

—Որ այդպէս է, ես կերթամ նրանց մօտ, կասեմ՝ ես ձեր պապոնց երեխան եմ, նրանք էլ ինձ լաւ պատիւ կըտան:

—Դու այդպէս ես կարծում, բայց ո՞վ գիտէ,

վայ թէ քեզ այնտեղ պահեն ու էլ բաց չթողնեն։ Կըզցեն մի խոր ու մութ այրի մէջ, մի ահագին ժայռով էլ բերանը կըփակեն, յետոյ՝ գնա կաց այնտեղ ու սպասիր, թէ քեզ երբ պէտք է ազատեն։

— Դէ որ այդպէս է, ես էլ չեմ գնալ նրանց մօտ, բայց տաւար պիտի գնամ, ինչ կուզէք՝ արէք։

— Իհարկէ որդի, էլի լաւ է տաւարը գնաս, քան թէ քաջերի մօտ։ Բայց գիտե՞ս, սիրելիս Արմիկ, քո հայրը քեզ ուրիշ տեսակ է ուզում պահել։ Նա ուզում է, որ դու տուն պահել, տուն կառաւարել սովորես, գնացող-եկողի հանդիպես, նրանցից խելք ու շնորք վերցնես, մարդավարութիւն սովորես և ոչ թէ ընկնիս ձորերն ու վայրենանաս։ Ահա պատճառը, որ հայրդ քեզ տաւար չի ուղարկում։ Բայց նա ընդդէմ չի լինիլ, որ դու լաւ գիտենաս՝ ձի նստել, նետ ձգել նիզակ ու վահան գործ ածել։ Հասկացա՞ր. բայց որովհետև սիրտդ շատ է ուզում տաւար գնալը, վնաս չունի. մի քանի ժամանակ էլ տաւար գնա։ Այդ քո առաջին փափագն է, թող կատարւի, թող կողքդ ու մէջքդ մի քիչ էլ տաւարոտմբ հաստանան։

6.

Արմաւանի երեխէքը շատ ուշ էին սկսում տնական հոգսերին մասնակցել։ Մանուկները դառնում էին տասնըհինգ, քսան տարեկան, բայց դեռ էլի համարւում էին տղայ, այսինքն երեխայ։ Մինչև տասնըչորս, տասնըհինգ տարեկան դառնալը ոչ մի պարապմունք չէին ունենում բացի ուտելուց ու խաղալուց։

Նրանց սկզբնական ուսումն ու կրթութիւնն էլ խաղն էր։ Եւ պէտք է ասենք, որ պակաս ուսում չէր և շատ էլ լաւ էր։ Լաւ էր նրանով, որ մեզ նման փաղօրօք չորս պատի մէջ չէին փակւում

ու կորցնում իրանց առողջութիւնը, մէկ էլ նրանով որ նրանց խաղերն անմիտ ու անօգուտ խաղեր չէին։ Նրանք իրանց խաղերով աւելի լաւ էին պատրաստում իրանց անձը ապագայ գործունէութեան, ապագայ պարապմունքների համար, քան թէ հիմա մենք։

Նրանց հարկաւոր էր լինել ուժեղ, ճարպիկ, սրամիտ, հնարագէտ, առաքինի. պէտք է իմանային լաւ ձի հեծնել, լաւ վազել, լաւ լողալ, ծառերի վրայ մագլցել, պառակների ու ժայռերի վրայ բարձրանալ, մեծ ոստիւններով ցատկել, սուր ու նիզակ գործ ածել, վահանով պաշտպանւել, ուղիղ պարսատիկ ու նետ ձգել. պէտք է իմանային անսասանապահութիւն, վար ու ցանք, փայտտաշութիւն, քարտաշութիւն, դարբնութիւն... և այս բոլորը այն ժամանակւայ երեխէքը սովորում էին խաղալով։

Մեծերը նրանց չէին ասում, թէ այս արքէ և այն շինեցէք, այս խաղացէք և այն մի խաղաք։ Երեխէքն իրանց կամքովն էին անում, ինչ որ անում էին.—փոքրերը՝ փոքրն ու հեշտը, մեծերը՝ մեծն ու զժւարը, և այնքան սիրով և ուրախութեամբ, այնքան ոգևորւած ու տաքացած, որ շատ անգամ հացն էլ էին մոռանում։

Նրանց գիշերւայ խաղերն ուրիշ էին, ցերեկւանն ուրիշ, աշունանն ուրիշ, ձմեռւանն ուրիշ. ուրիշ էր տղաների խաղը և ուրիշ՝ աղջիկներինը։ Ամեն տեղի, ամեն դէպքի, ամեն ժամանակի յարմար խաղեր ունէին։

Խաղում էին ամենախիստ կարգապահութեամբ։ Եթէ խաղացողները լինում էին մինչև հարիւր հոգի, էլի այնպէս կարգով էին խաղում, որ ոչ մի անկարգութիւն չէր պատահում, և եթէ պատահում էլ էր երբեմն, մեղաւոր երեխային իսկոյն հեռացնում էին իրանցից, որ մեծ պատիժ էր համարւում։

Խաղերի մեծ մասը երկու խմբով էին խաղում։ Առաջ երկուսին մայր էին նատեցնում, միւանները ձագեր դառնում։ Ձագերը գոյգ-գոյգ էին դառնում և վիճակով ընկնում մէկը՝ մէկ և միւսը՝ միւս մօրը։ Այսպիսով բոլոր խաղացողները դառնում էին երկու խումբ, ամեն մէկը իր մօր հովանաւորութեան և պաշտպանութեան տակ։

Մայրը իր ձագերից ամեն մէկի պաշտօնն իրան հասկացնում էր, և նրանք պիտի կատարէին իրանց մօր պատուէրը ամենայն ճշտութեամբ և ճարպիկութեամբ։ Այս խաղերի մէջ շատ լաւ սովորում էին պաշտպանւելու և յարձակւելու կերպերը. սովորում էին շարքով կանգնել, շրջան կազմել, խմբւել, ցրւրւել, մէջք մէջքի տալ, վայր թափւել, չորեքթաթ վազել, փորսող տալ, մի ոտքով վազել, ծեծի դիմանալ, հակառակ խմբի բոլոր շարժմունքները դիտել, նրա մտադրութիւնը նախագուշակել։

Այս խաղերի մասին էլ ես չեմ ուզում երկարացնել խօսքով. դուք ինքներդ, եթէ գիւղի երեխէք էք, կարող էք ասել, թէ ինչ տեսակ խաղեր գիտէք, միայն պէտք է գիտենաք, որ իմ ասած հին խաղերի կէսի կէսն էլ չկայ հիմա, և ինչ էլ որ կայ, այն ժամանակւայ եղածի միմիայն սուերն է և ոչ իսկականը։ Բայց ինչ էլ որ լինի, դրանք էլ են հարկաւոր և շատ բաւական են մեզ։

Մեր Աբևամանուկը խաղալ շատ էր սիրում։ Պառաւներն ասում էին, որ նա մօր արգանդումն էլ խաղալիս է եղել, և սուտ չէին ասում։ Բոլոր խաղերի մէջ նա այնպէս շուտ ճարպիկացաւ, որ էլ ձագ չէր դառնում, այլ իրանից մեծերի վրայ էր մայր նատում, և ամեն երեխայ աշխատում էր, որ նրան վիճակւի, նրան ընկնի, նրա ձագը դառնայ, նրա զօրեղ պաշտպանութեան տակ գտնւի։

7.

Ահա այս աստիճան զօրացած էր մեր Աբևամանուկը, երբ որ սկսեց տաւար գնալ։ Տաւարուհին էլ երկու թէ երեք օր միայն փոքրութիւն արաւ. շուտով տաւարածապետ դառաւ, այսինքն տաւարածների գլխաւոր։ Տաւարածապետ լինելը հեշտ բան չէ։ Նա պէտք է ամենից զօրեղը լինի և ամենից ճարպիկն ու սրտոտը։ Ճշմարիտ է, նրա գործը հեշտ էր նրանով, որ պիտի նստէր սառն աղբիւրների մօտ, հով ու զով տեղերում և միւսներին հրամայէր, որ տաւարը մակաղից դուրս անեն, գոմէշները՝ ցեխերից, այս կողմ քշեն, այն կողմ տանեն, եւ ժողովեն, ականեն. բայց և դժւար էր նրանով, որ եթէ տաւարներից մինը կորչէր, նա պիտի ման գար գտնէր, գող ու գազանի ճանկերից նա պիտի փրկէր։ Իսկ գազաններ այն ժամանակ շատ ու շատ կային. հիմա այնքան գայլ ու աղւէս չկայ, ինչքան որ այն ժամանակ քաւթառներ ու փալանգներ (վագրեր) կային։ Աբևամանուկը մի քանի շաբաթ շարունակ շատ լաւ պահեց տաւարը, այնպէս որ ոչ մէկի քիթը չառնեց, բայց ասած է՝ «Տատն ամեն օր գաթա չի թխել»։

Մէկ անգամ մի եզը կորցրեց. շատ ման եկաւ, վերջը մի գոռոցի ձայն հասաւ ականջը։ Մինչև ինքն ականջ կդնէր, որ տեսնէր որտեղից է գալիս ձայնը, իր քաջ շները—Խեղդանն ու Կորանը—աւելի շուտ իմացան տեղը և նետի պէս թռան դէպի ձայնը։ Գոռոցը հասարակ բառանչ չէ. այդ ձայնը հանում են միայն գազանների ճանկ ընկած ժամանակ, և այդ գիտեն՝ ինչպէս տաւարներն ու մարդիկը, նոյնպէս և շները։

Աբևամանուկը ոչ մի զէնք չուներ, բացի մի հաստագլուխ մահակից։ Մահակը ձեռին՝ վազեց շների ետևից և նրանց գտաւ մի ձորակի մէջ հաչելիս։ Հեռուից նկատեց, որ մի գազան վայր է ձգ-

պել ահագին եզանը, թանթուրները դրել նրա մէջքին, իսկ գլուխը դէպի շները ծուած՝ այնպէս կատաղի կերպով նայում է, որ աչքերից կրակ է թափւում։ Շները հաչում էին հեռւից՝ պոչները ներս քաշած, և սիրտ չէին անում գազանին մօտենալ։

Արևամանուկը՝ էլ չըմտածելով թէ ինչ պէտք է անէր արդեօք, սաստիկ բարկացաւ շների վրայ և գոռաց. «Խեղդան, խեղդիր, կարան, կորիր», ու ինքը մի ճարպիկ ոստիւնով թռաւ ընկաւ գազանի մէջքի վրայ ու բռնեց նրա վզիցը։ Այդ տեսնելով՝ շները սիրտ առան ու հախռեցին գազանի եռևից։ Գազանը բարկացաւ և ցատկեց տեղիցը, բայց նըրանից պոկ չեկան ոչ Արևամանուկը և ոչ շները։ Գազանն աւելի կատաղեց. երեսը շրջեց, բաց արաւ ահագին բռեխը և ուզում էր Արևամանուկի գլուխը հախռել ու փշրել, բայց նա իսկոյն ձեռքը ձգեց գազանի բերանն ու լեզւի տակիցը այնպէս պինդ բռնեց քաշեց, որ գազանի թանթուրները թուլացան և նա սկսեց խըռխռացնել։ Գազանը որ խեղճացաւ, թուլացաւ, Արևամանուկը նրան իր տակն առաւ, աջ ձեռքը նոյնպէս կոխեց գազանի բերանը և երկու ձեռքով քաշեց նրա լեզւիցը։ Այդ միջոցին Խեղդանը հախռեց նրա քկիցը, կարանն էլ փորատակերից։ Այսպէս միացան ուժով գազանին անշնչացրին, սատկացրին։

Քափ ու քրտնքի մէջ կորած՝ յետ քաշւեց Արևամանուկը և նոր տեսաւ, թէ ինչ վիշապ էր սպանւածը։ Վագր էր, մի ահագին ու քաւթառ վագր, որ բոլոր շրջակայքի վրայ իշխում էր։ Նրա երկիւղից ոչ ոք չէր համարձակւում տաւար կամ ոչխար տանել այն տեղերը, ուր որ տարել էր Արևամանուկը։ Ամբողջ գիւղերով աշխատում էին նրան սպանել, բայց չէին կարողանում։

Եզը վաղուց արդէն շունչը փչել էր։ Անիրաւ

գազանը մի հատ հարւածով կոտրել էր նրա մէջքի սէռը և մի ծրւէն կաշի էր հանել։

Արևամանուկը մաշկեց գազանը ու մորթին քաշ տալով՝ գնաց տուն։ Նրա այս քաջագործութեան համբաւը շուտով տարածւեց ամեն տեղ։ Տանըհինգ տարեկան հասակում վագր խեղդել,— հեշտ բան չէ։ Բայց ով իմանում էր, թէ այդ քաջութիւնը Արևամանուկն է արել, չէր գարմանում. ասում էին՝ նա կարող է առիւծի բերանն էլ ճղել մեն մենակ, առանց շների օգնութեան։

Արմաւանցիք սովորութիւն ունէին, որ երբ մէկը մի քաջութիւն էր անում, նրա վրայ գովասանական երգ էին շինում ու երգում ամեն տօնի օր։ Երգում էին տղէքն ու աղջկէքը ձեռք ձեռքից բռնած, խմբով ու պարերով։ Այս անգքից յետոյ Արևամանուկի վրայ էլ շինեցին մի գովասանական երգ, որ ասում էին տղէքն ու աղջկէքը փոխ առ փոխ։ Ահա այդ երգը։

—Աղջկէք, պար բռնեցէք,
Արմիկի երես գովեցէք.
Ա՛յ երես. շարմաղ երես,
Դու մեզ չըթողնես սև երես։
«Բարձր սարէն պաղ ջուր կուգայ,
Արմիկի երես կըւայ.
Ա՛յ երես, արև երես,
Քո շափաղով մեր սիրտ կէրես»։
—Աղջկէք, պար բռնեցէք,
Արմիկի աչեր գովեցէք.
Ա՛յ աչեր, սիրուն աչեր,
Արևի պես փայլուն աչեր։
«Արմիկի աչերն արեգակ,
Մեզի կըտայ լոյս ու կրակ.
Ա՛յ աչեր, վառ-վառ աչեր,
Մանուշակի թաւ-թաւ աչեր»։
—Աղջկէք, պար բռնեցէք,
Արմիկի կռներ գովեցէք.

Ա՛յ կռներ, ուժեղ կռներ,
Դուք կըշարժէք մեծ-մեծ լեռներ։
«Արմիկի կռներն է գերան,
Կըպատառի վագրի բերան...
Ա՛յ կռներ, գլխատ կռներ,
Դուք կըբանաք մեր վիակ դռներ»։
—Աղջկէք, պար բռնեցէք
Արմիկի հասակ գովեցէք.
Ա՛յ հասակ, բարձր հասակ,
Քեզ կըվայլէ դափնեայ պսակ։
«Արմիկի հասակն է ասօր,
Շուքը մեզնից չըպակասի.
Ա՛յ հասակ, չինար հասակ,
Ո՞վ չի տար քեզ դափնեայ պսակ»։

(Միասին և թռչկոտելով)

Ո՞վ պատառեց վագրի բերան.—
Արմիկ պատառեց վագրի բերան.
Վագրի բերան—ահա այսքան—
Ժանիքները մէկ-մէկ գերան.
Ապրի Արմիկ, ապրի շատ օր,
Իր թշնամին ընկնի գլոր...

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԹԻ ԿԱՋԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Ա.

Մսրա Մէլիքը անհամար զօրքով
Եկաւ ու նստեց Բաթման գետի քով.
Ով եկաւ—խմեց,
Գետրը ցամաքեց.
Սասմայ քաղաքում մընացին ծարաւ։
Չէնով Օհանի զարմանքը տարաւ։
Ջուրքը վեր առաւ, սարը բարձրացաւ,
Սարը բարձրացաւ, տեսաւ ինչ տեսաւ—
Ճերմակ վըրանից դաշտը ճերմակել,

Ասես էն գիշեր ձըմեռը եկել,
Սպիտակ ձիւնով ծածկել էր Սասուն։
Լեղին չուր կտրեց, կապ ընկաւ լեզուն.
Հարայ կանչելով՝ փախաւ տուն ընկաւ.
—Վայ, փախէք, եկաւ... հայ, հարայ, եկաւ։
Մըսրայ թագաւոր եկել է, եկել,
Եկել մեր դաշտին բանակ է զարկել.
Թիւ կայ աստղերին, թիւ չըկայ զօրքին...
Վայ մեր արևին, վայ մեր աշխարհքին...
Ե՛կ ոսկի տանենք, աղջիկները տանենք,
Զօքենք առաջին, պաղատանք անենք,
Գուցէ մեզ գթայ,
Մեզ սըրի չըտայ...
—Դու կաց, հօրեղբայր, դու դարդ մի անի,
Գընա քո օդում դու հանգիստ քընի,—
Ասեց Դաւիթը,—ես կերնեմ կերթամ,
Մըսրայ Մելիքին պատասխան կըտամ։
Դաւիթը թողեց Չէնով Օհանին,
Գընաց ախոռից դուրս քաշեց հօր ձին,
Զըրահը հագաւ, զէնքերը կապեց,
Ձին հեծաւ, կանգնեց ու ձէնով երգեց.—
«Սասմայ քոյրեր, բարով ձեզ,
Քուրուքիւն էք արել ինձ.
Սասմայ մայրեր, բարով ձեզ,
Մօր նըման էք սիրել ինձ։
Կըռիւ կերթամ, դուշմանը ձեզ
Չըգայ, գերի չըտանի.
Ո՛վ իմանայ—մին էլ էսպէս
Ինձ չըտեսնէք կենդանի...
Խնդում անէք, թէ դաշտ գընաք,
Չըմոռանաք ձեր Դաւթին.
Բարով ձեզ, բարով կենաք
Մեր աշխարհքին, մեր հանգին»։
Երգեց Դաւիթ ու ձին քշեց,
Ելաւ Սասմայ սարի գլուխ.
Նայեց ներքև—դաշտը խիտ-խիտ

Կորած փոշին, կըրակ ու ծուխ։
Տեսաւ, կանգնեց ամպի տակին
Ու էն անծայր ծովի վըրայ
Գոռաց ձէնովն իր ահագին՝
Տարածելով սարսափ ու ահ.
«Ով ըընած էք—արթուն կացէք,
Ով արթուն էք—ելէք կեցէք,
Ով կեցեր էք—գէնք կապեցէք,
Զէնք էք կապել—ձի թամբեցէք,
Զի էք թամբել—ելէք, հեծէք,
Յետոյ չասէք, թէ մենք ըընած՝
Դաւիթ գող-գող եկաւ, գնաց...»։
Էսպէս գոռաց, ասպանդակեց
Ու, ինչ ամպից կայծակ զարկի,
Մըսրայ օրըի մէջ տեղ զարկեց,
Շողացնելով թուր—կայծակի։
Զարդեց, փըշրեց մինչև կէսօր։
Կէսօր արիւնն ելաւ հեղեղ,
Քըշեց, տարաւ հազարաւոր
Մարդ ու դիակ ողջ մի տեղ։
Կար օրըի մէջ մի ալևոր,
Աչքարհք տեսած ու բանագէտ.
—Տղէք, ասաւ, ճանպայ տըւէք,
Գընամ, խօսեմ ես Դաւթի հետ։
Գընաց կանգնեց Դաւթի առաջ,
Էսպէս խօսեց էն ծերունին.
—Դալար կենա կուռդ, ով քաջ,
Թուրըդ կարուկ միշտ քո ձեռին։
Մի ծերունուս խօսքին մըտիկ,
Տես՝ քո խելքը ինչ է կորում.
Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ,
Չէ՞ր ես սրանց դու կոտորում։
Ամեն մինը մի մօր որդի,
Ամեն մինը մի տան ճըրագ,
Որը կինն է թողել էնտեղ՝
Աչքը ճամպին, խեղճ ու կրակ,

Որը մի տուն լիք մանուկներ,
Որը ծընող՝ աղքատ ու ծեր,
Որը լացով, քօղն երեսին,
Նորապսակ չահել հարսին...
Թագաւորը զօրով-թըրով
Հաւաքել է, էստեղ բերել.
Խեղճ մարդիկ ենք, պակաս օրով,
Մենք քեզ վնաս ի՞նչ ենք արել։
Թագաւորն է քո թշնամին,
Կրռիւ ունիս, իր հետ արա.
Չէ՞ր ես քաշում Թուր-կայծակին
Էս անճարակ խալխի վըրայ։
—Լաւ ես ասում դու, ծերունի,—
Ասաւ Դաւիթն ալևորին,
Բայց թագաւորն ՚ուր է հիմի,
Որ սև կապեմ նրա օրին։
Մեծ վրանում քընած է նա,
Է՛ն՝ որ մէջից ծուխը կելնի.
Էն ծուխն էլ հօ ծուխ չի որ կայ,—
Գոլորշին է իր բերանի
Ասին. դէպի մեծ վըրանի
Ասպանդակեց Դաւիթն իր ձին
Քըշեց, գընաց ու դրռանը
Գոռաց կանգնած արաբներին.
—Ո՞ւր է, ասաւ, ի՞նչ է կորել,
Դուրս կանչեցէք, գայ ասպարէզ.
Թէ մահ չունի—մահ եմ բերել,
Գըրող չունի—գըրողն եմ ես։
Մելիքն,—ասին, քուն է մըտել,
Օխտը օրով պէտք է քընի.
Երեք օրն է դեռ անց կացել,
Հորս օր էլ կայ—քունը առնի։
—Ի՞նչ, բերել է աղքատ ու խեղճ
Խալխին լցրել ծովն արիւնի,
Ինքը մըտել վըրանի մէջ,
Օխտը օրով հանգիստ քընի՞...

Քընել-մընել չեմ հասկանում.
Վեր կացրէք շուտ, դուրս գայ մէյդան.
Ինպէս դըրան ես քընացընեմ,
Որ չըզարթնի էլ յաւիտեան...
Ելան մարդիկ, ճարահատուած՝
Շամփուր դրին թէժ կըրակին
Ու զարկեցին խոր մըրափած
Մըսրա-Մելքի բաց կըրընկին։
«Օֆ՛, էլ հանգիստ քուն չունի մարդ
Էս անիծւած լըւի ձեռից»,
Խոր մըռընչաց հըսկան հանդարտ
Ու շուռ եկաւ, քընեց նորից։
Ելան, բերին մեծ գուբանի
Խոփը դրին թէժ կրակին
Ու կաս-կարմիր, կէծկըծալի,
Շիկցած դրին մերկ թիկունքին։
Օ՜ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ
Էս անիրաւ մոծակներից».
Աչքը բացաւ հըսկան հանդարտ,
Ուզում էր եա քընել նորից,
Տեսաւ Դաւիթին. գլուխն ահեղ
Վեր բարձրացրեց մըռնչալով,
Փըչեց վըրէն, որ թըռցընի
Էն աժդըհին մի փըչելով։
Տեսաւ՝ տեղից ժաժ չի գալիս,
Զարմանք ու ահ պատեց հոգին.
Արնոտ աչքերն ըսպառնալի
Յառեց խոժոռ Դաւթի աչքին։
Նայեց թէ չէ — ըզգաց՝ իր մէջ
Տասը գոմշի ուժ պակասեց.
Պառկած տեղից վրայ նստեց
Ու ժպտալով՝ հետը խօսեց.
—Բարով, Դաւիթ, յոգնած ես ղեռ,
Եկ, մի նստիր, խօսենք կարգին,
Յետոյ դարձեալ կուիւ կանենք,
Եթէ կըուիւ կուզես կըրկին...

Իր վըրանում բըռնակալը
Քառասուն գաղ խոր հոր էր փորել,
Յանցով փակել մութ բերանը,
Վըրէն փափուկ խալի փըռել.
Ում որ յաղթել չէր կարենում,
Շողոմելով կանչում էր նա,
Ընստեցնում էր իր վրանում
Էն կորստեան հորի վրայ։
Իշաւ Դաւիթ ձիուցը ցած,
Գընաց, նըստեց... ընկաւ հորը։
—Հա՜, հա՜, հա՜, հա՜,—վերից խընդաց
Մըսրայ դաժան թագաւորը.—
Դէ, թող հիմի գնայ, խաւար
Հորում փըտի, էնքան մընայ։
Ու ահագին մի ջաղցաքար
Բերաւ, դըրաւ հորի վըրայ։

Բ

Քընեց էն գիշեր Ջէնով Օհանը։
Գիշերն երազում երևաց ծերին
Մըսրայ երկնքում արև ճառագած.
Սև ամպ էր պատել Սասմայ սարերին։
Սաստիկ վախեցած՝ վեր թռաւ տեղից.
—Վայ, կնիկ, ասաւ, մի ճըրագ արա,
Գընաց մեր մանուկ Դաւիթը ձեռից.
Սև ամպ էր իջել Սասունի վրայ։
—Տունըդ չըքանդւի, ասաւ կընիկը,
Ով գիտէ Դաւիթն ուր է քէֆ անում...
Դու էլ քեզ համար քու տանդ քնած՝
Ուրիշի համար երազ ես տեսնում։
Քընեց Օհանը։ Վեր կացաւ դարձեալ.
—Կնիկ, Դաւիթը նեղ տեղն է ընկած.—
Մըսրայ վառ աստղը շողում էր պայծառ,
Մեր աստղը հազիւ ցոլքում գալկացած։
—Ի՞նչ եղաւ քեզ, մարդ, գիշերուան կէսին,

Բարկացաւ վըրէն կընիկն ադմուկով։
Ծաչ քաշեց էլ եա Օհանն երեսին,
Շուռ եկաւ, քընեց խըռոված հոգով։
Մի ուրիշ պատկեր աւելի ահեղ.—
Տեսաւ երկնքի բարձըր կամարում
Վառւում էր Մըսրայ աստղը փառահեղ,
Սասմայ աստղիկը սուզւեց խաւարում։
Զարթնեց վախեցած։—Տուն՛ըդ քանդւի, կին,
Ես հնց լսեցի քո էդ կարճ խելքին.
Կորաւ մենմենակ մեր Չահէլն անտէր,
Վեր կաց, ըշտապիր, շուտ գընքերըս քեր...

Գ

Ելաւ Օհան, գոմը մտաւ,
Զարկեց ձերմակ ձիու մէջքին.
—Էյ ձերմակ ձի մինչ ճըր, ասաւ,
Կը հասցնես Դաւթի կըռւին։
—Մինչև լոյսը կըհասցնեմ,
Ու ձին սըւաւ փորը գետին։
—Մէջքդ կոտրի, լուսն ինչ անեմ,
Լաչին հասնեմ ես, թէ նաչին։
Կարմիրը ձիու մէջքին զարկեց.
Սա էլ էրետ փորը գետնին։
—Չան կարմիր ձի, մինչ երբ, ասաւ,
Կը հասցնես Դաւթի կըռւին։
—Մի ժամի մէջ, կարմիրն ասաւ,
Կը հասցնեմ Դաւթի կռւին։
—Լեղի զառնայ, սև ու մահ-ցաւ,
Ինչ սըւել եմ քեզ էն գարին։
Հերթը եկաւ Սևին հասաւ.
Գետին չէրետ փորը սև ձին։
—Էյ, չան Սևռւկ, մինչ ճըր, ասաւ,
Կը հասցնես Դաւթի կըռւին։
—Եթէ ամուր մէջքիս մընաս,
Ոտըդ գնես ասպանդակին,

Մինչև մէկ էլ ոտըդ շուռ տաս—
Կը հասցնեմ, ասաւ Սև ձին։

Դ

Սև ձին քաշեց Զէնով Օհան,
Զախը դըրաւ ասպանդակին,
Աչն էլ մինչև շուռ տար վըրան՝
Կանգնեց Սասմա սարի գլխին։
Տեսաւ Դաւթի նըժոյգն անտէր՝
Սարերն ընկած խըրխընջալով,
Ներքև Մըսրայ զօրքը ծըփում,
Ինչպէս անծայր ծըփուն մի ծով։
Օխտը գոմշի կաշի հագաւ,
Որ չըպատռի իրեն զօռից,
Կանգնեց Օհան ու ամպի պէս
Գոռաց Սասմայ սարի ծէրից.
—Դաւիթ, գոռաց, ոըտեղ ես դու.
Յիշիր Ծաչը պատարագի,
Սուրբ Տիրամօր անունը տուր,
Լոյսը գուրս ել արեգակի...
Զէնը գընաց դըմդըմբալով
Դաւթի ականջն ընկաւ հորում.
—Հայ-հայ, ասաւ, հօրեղբայրս է,
Սասմա սարից ինձ է գոռում։
—Ո՛վ Մարութա Աստւածածին,
Ո՛վ անմահ Ծաչ պատարագի,
Ջէզ եմ կանչել,—հասէք Դաւթին...
Կանչեց, տեղից կանգնեց ոտքի,
Էնպէս զարկեց ձաղացքարին,
Քարը եղաւ հազար կտոր,
Կտորները երկինք թըռան,
Ու գնում են մինչև էսօր։
Ելաւ հորից, կանգնեց ահեղ.
Սարսափ կալաւ դև Մելիքին։
—Դաւիթ, ասաւ, ել դեռ էստեղ
Սեղան նստենք... խօսենք կարգին...

—Էլ չեմ նստիլ ես քու հացին.
Դու, տըմարդի, վախկոտ ու նենգ,
Շուտ զէնքըդ ա՛ռ, հեծի՛ր դու ձին,
Դուրս եկ մէյդան, կըռիւ անենք։
—Կըռիւ անենք, ասաւ Մելիք,
Ինձ է միայն զարկն առաջին։
—Քունն է, զարկիր, կանչեց Դաւիթ,
Գնաց, կեցաւ դաշտի միջին։
Ելաւ, կանգնեց Մըսրա-Մելիք,
Իր գուրզն առաւ, հեծաւ իր ձին,
Քըշեց, գնաց մինչ Դիարբեքը
Ու էնտեղից եկաւ կրկին։
Երեք հազար լիդը էր քաշում
Հըսկայական իր մըկունդը.
Եկաւ, զարկեց, կոըաւ փոշում,
Ու երերաց երկրի գունդը։
—Երկիր քանդուեց կամ ժաժք եղաւ,
Ասին մարդիկ շատ աշխարհքում։
—Ջէ, ասացին, արնի ծարաւ
Հսկաներն են իրար զարկում։
—Մեռաւ Դաւիթ էս մի զարկից,
Ասաւ Մելիք իրեն զօրքին։
—Կենդանի եմ, ամպի տակից
Գոռաց Դաւիթ Մըսրա-Մելքին։
—Հայ,-հայ, մօտիկ տեղից եկայ,
Տես, որտեղից հիմի կըգամ։
Ու վերկացաւ, կանգնեց հըսկան,
Իր ձին հեծաւ երկրորդ անգամ։
Երկրորդ անգամ քըշեց Հալաբ
Ու բաց թողեց ձին Հալաբից։
Բուք վերկացաւ, տեղ ու տարափ
Աւրար աշխարհ գոռաց թափից։
Եկաւ զարկեց. զարկի ձէնից
Մօտիկ մարդիկ ողջ խըլացան։
—Գընաց Դաւից Սասմայ տանից,
Գուժեց գոռոզ Մըսրայ արքան։

—Կենդանի եմ, գոռաց Դաւիթ.
Մին էլ ասի - հերթն ինձ հասաւ։
—Հայ-հայ, մօտիկ տեղից եկայ,
Կանչեց Մելիք ու վեր կացաւ։
Երրորդ անգամ հեծաւ իր ձին,
Գընաց մինչև հողը Մըսրայ
Ու էնտեղից՝ գուրզը ձեռին՝
Քշեց, եկաւ Դաւթի վըրայ։
Եկաւ, զարկեց բոլոր ուժով,
Ծանր զարկով հըսկայական.
Փոշին ելաւ Սասմայ դաշտից,
Բըռնեց երեսն արեգական։
Երեք գիշեր ու երեք օր
Կանգնեց փոշին ամպի նման,
Երեք գիշեր ու երեք օր
Բօթը տըւին Դաւթի մահւան։
Երբոր անցաւ երեք օրը,
Էն ամպի պէս կանգնած փոշում
Կանգնեց Դաւիթ, ինչպէս սարը.
Գըրգուռ սարը մէգ-մըշուշում
—Մելի՛ք, ասաւ, ո՛ւմն է հերթը...
Սարսափ կալաւ գոռ Մելիքին,
Մահւան դողը ընկաւ սիրտը,
Ու տապ արաւ գոռոզ հոգին։
Գընաց, խորունկ ձի հոր փորեց,
Իջաւ, մըտաւ վիհն էն խաւար,
Վըրէն քաշեց քառասուն կաշի
Ու քառասուն ջաղացի քար։
Մըռընչալով ելաւ տեղից
Էն առիւծի առիւծ որդին,
Իր ձին հեծաւ ու փոթորկեց,
Թաղաց, շողաց թուր-կայծակին։
Առաջ վազեց՝ մազերն արձակ՝
Մելքի պառաւ մայրը ջադու.
—Դաւի՛թ, մազըս առ ոտիդ տակ,
Էդ մի զարկը ինձ բախշի դու...

Երկրորդ անգամ թուրը քաշեց,
Էս անգամ էլ վազեց քուրը.
—Դաւիթ, եթէ կուզես, կանչեց,
Իմ սրտին զարկ երկրորդ թուրը…
Վերջին զարկի ժամը հասաւ,
Ելաւ Դաւիթ երրորդ անգամ.
—Էս մի զարկն ու Աստւած, ասաւ.
Էլ մարդ չըզայ, պէտք է որ տամ։
Աստւ, ելաւ ու փոթորկեց,
Թրռաւ, ցոլաց Դաւթի հուր ձին,
Ձին փոթորկեց, փայլատակեց
Ու ցած իջաւ թուր-կայծակին։
Անցաւ քառասուն գոմշի կաշին,
Անցաւ քառասուն քարերը ցած,
Միջից կարեց ժանտ հրէշին,
Օքսը գազ էլ դէնը գընաց։
—Կենդանի եմ, մին էլ արի,
Գոռաց Մէլիք հորի տակից։
Լսեց Դաւիթն ու զարմացաւ
Իրեն զարկից, թուր կայծակից…
—Մելիք, ասաւ, թափ տուր մի քեզ՝…
Ու թափ տըւաւ Մելիքն իրեն,
Միջից եղաւ ճիշտ երկու կէս,
Մէկն ընկաւ դէմն ու միսը դէն…

ԵՐԿՈՒՀՍԿԱՅ

(Հին ղրոյց)

Ա

«Ով է այդ հսկան, ինչ ուժի տէր է,
Որ ամբողջ աշխարհք իր ձեռքն է առել.
Երկրի մի ծայրում ինքը նստել է,
Ջորս ծայրն աշխարհի իր ատրուկ զարձրել։
«Ո՞վ է, ով գա, որ թագաւորների
Վրայ տուգանք ու հարկեր է դնում.

Ինչու՞ չի գալիս այդ իմ աշխարհի,
Ինչու՞ չի գալիս Ռոստոմիս տեսնում,—
«Իմ սարի նման Ռոստոմին տեսնում.
Թէ սիրտ չի անում նըրա հետ կռւել,
Հապա ինչու՞ է հեռւից սպառնում.
Հապա ինչու՞ է ողջ երկրին տիրել։
«Ո՛չ, նա թոյլ մարդ չէ, նա էլ է հսկայ,
Պիտի անպատճառ տեսնեմ ես նըրան.
Տեսնեմ Ռոստոմի չափ ուժ նրա մէջ կայ,
Տեսնեմ ինչ մարդ է, ով է այդ հսկան»,

Բ

Այս ասաց Զալը, նժոյգը հեծաւ,
Մնաս բարով ասեց իրա աշխարհին,
Ձիուն մտրակեց, սար ու ձոր ընկաւ,
Գնաց պատերազմ հսկայ Սալմանին։
Է՛հ, Աստւած գիտէ—շատ գնաց թէ քիչ,
Յոգնած էր, իջաւ ծառի տակ նստեց.
Տեսաւ՝ հեռւում մի ինչ որ տեղից
Ծուխ է բարձրանում, ձին այնկողմ քշեց։
Տեսաւ, ինչ տեսաւ, ահ, դու չըտեսնես.
Տեսաւ, ինչ տեսաւ, էն ինչ էր, Աստւած…
Տեսաւ մի հսկայ, հսկայ լեռան պէս,
Մի իրան յարմար ձիու վրայ նստած.
Բերանն էր դրել չիբուխ ահագին,
Չիբխի բերանն- ինչպէս մազարա,
Դուրս փչած ծուխը նման թուխ ամպին.
(Լուլէն ինչ կըլէր,—էն էլ դու ասա)։
Բայց չըվախեցաւ Զալ փահլևանը.
Մօտեցաւ, բարև հսկային տըւաւ.
Հսկան չընդունեց նըրա բարևը,
Ոչ էլ Զալի կողմ երես դարձրաւ։
Սիրտը կոտրւեց Զալ փահլևանի.
«Ես Զալը լինեմ, Ռոստոմն իմ որդին,
Ու սա ինձ վրայ ուշք էլ չըդարձնի»…
Եւ հսկայի վրայ քշեց նա իր ձին։

Քշեց նա իր ձին և ուժգին գոռաց,
Հսկայի մէջքին մզրախը զարկեց։
Հսկան յետ նայեց հիմա ու ժպտաց,
Ապա նա Զալի վզիցը բռնեց,
Բռնեց ու հաւի վառիկի նման
Ոլորեց, ձիու փորի տակ կապեց—
Իբրև թէ ոչինչ. կրկին իր ճամպան
Անհոգ ու հանդարտ նա շարունակեց։
Գնաց աղբիւրի մօտ մի վրան տեսաւ,
Տեսաւ մի վրան և այնտեղ իջաւ.
Զալի ականջը մի սիւնից մեխեց,
Որ չըփախչի նա, ու ինքը քնեց։

Գ

Արթնացաւ։ «Ո՞վ ես, ով դու, փահլևան,
Որ յանդգնեցիր խիզախել իմ դէմ»։
—Ագա, քու դուլն եմ, արևիդ մեռնեմ
Զալի երկրից եմ,—խեղճ օտարական։
«Զալի երկրի՞ց»... Հսկան ազատեց
Զալ փահլևանին. «Ազատ ես, գնա.
Գնա, Զալի տղայ Ռոստոմին ասա՝
Սալմանը քեզի կուի հրաւիրեց։
Գնա, Զալի տղայ Ռոստոմին ասա՝
Բաւ է, ինչ հեռուից իրար սպառնացինք.
Եկ, այժմ կռւենք, հերիք է, հերիք,
Աշխարհն երկու տէր պիտի չունենայ։
Գնա, Զալի տղայ Ռոստոմին ասա,
Որ դուրս գայ շուտով, կռւենք իրար դէմ.
Կամ նա կըյաղթէ, կամ ես կըյաղթեմ.
Թող երկրիս տէրը յաղթողը դառնայ։
Գնա, Զալի տղայ Ռոստոմին ասա
Որ դուրս գայ շուտով, իրան եմ սպասում.
Գնա, քեզ իբրև դեսպան եմ ղրկում,
Քեզ ազատում եմ, դէհ շուտով գնա»։

Դ

—Հայրիկ, ինձ պատմիր, ինչո՞ւ ես տխուր,
Ի՞նչըդ է ցաւում, ո՞վ է վշտացրել։
«Որդի՛, ցաւերըս, աւա՛ղ, շատ են խոր—
Զալ փահլևանին մարդ է անպատւել»։
—Բա, դու Զալն ըլիս, Ռոստոմ քո որդին,
Ես մարդ անպատւել քեզ համարձակւե՞ց։
«Այո՛, ես Զալն եմ, Ռոստոմ իմ որդին,
Բայց կայ մի Սալման, և նա այդ արեց։
«Այո՛, կայ Սալման, որ Ռոստոմի հօր՝
Տըւած բարևին չըպատասխանեց.
Այո՛, կայ Սալման, որ Ռոստոմի հօր՝
Շանն էլ անվայել՝ կերպով շղթայեց։
Դէհ, գնա՛, գնա՛, էլ մի սպասիր,
Գնա՛, անպատւած հօրըդ վըրէժն առ.
Գնա՛, թէ մարդ ես, Սալմանին յաղթիր,
Ապա եթէ ոչ՝ էլ յետ մի դառնար։
«Գնա՛, Սալմանը քեզ կռիւ կանչեց.
Գնա՛ անպատւած հօրըդ վրէժն առ.
Յոյց տուր Սալմանին, որ դու Ռոստոմն ես,
Ապա եթէ ոչ՝ էլ յետ մի՛ դառնար։
«Գնա՛, քաջ կացիր, բայց ազնիւ վարւիր.
Գնա՛ որդեակ իմ, հօրըդ վրէժն առ.
Գնա՛, Ռոստոմ Չան, քաջի պէս կռւիր,
Ապա եթէ ոչ, ո՛հ, յետ մի դառնար...»

Ե

Ռոստոմն ախոռից կանչեց իր ձիուն.
Մօտեցաւ նըրան ձին խրխընջալով։
«Հէյ, Նշխեբալաք, հեռու տեղ եմ գնում,
Քեզնից բաժանւում եմ. դէհ, մնաս բարով։
«Դէհ, մնաս բարով, բայց չըմոռանաս,
Մէկ է ճանապարհ, հազար նեղութիւն...
Երբ նեղ տեղն ընկնիմ, ինքդ կիմանաս,
Թռիր սար ու ձոր, հասիր ինձ խնդրյն»։

Ապա կենդանու Ջուխտ աչքից պաչեց.
Բայց Նշխեբալաքն աշխոյժը կորցրեց,
Պաչած աչքերից Ջուխտ արցունք թափեց
Եւ տխուր դէմքով Ռոստոմին նայեց...

Զ

«Հայր, ճնաս բարով, ահա գնում եմ,
Ընկած պատիւդը պիտի յետ բերեմ.
Թէ որ ինձ տեսար, յաղթող կըտեսնես,
Ապա եթէ ոչ՝ ինձ տեսնելու չես։
«Մի յուսահատւիր, դու դեռ չես ընկել.
Ողջ է Ռոստոմը, նա դեռ չի մեռել.
Թէ որ ինձ տեսար, յաղթող կըտեսնես,
Ապա եթէ ոչ՝ ինձ տեսնելու չես։
«Դէհ, ճնաս բարով, սիրտդ մի կոտրի.
Կռիւ եմ գնում, մի յուսահատւի.
Թէ որ ինձ տեսար, յաղթող կըտեսնես,
Ապա եթէ ոչ՝ ինձ տեսնելու չես։
«Բայց նայիր ձիուս, նա կըզգայ իսկոյն.
Երբ հասնի չարիք ինձ կամ նեղութիւն,
Կիմանայ, ոտով գետին կըդռփի,
Սանձը կրկտրի, դէս ու դէն կընկնի,—
«Իմացիր, որ ես նեղ տեղն եմ ընկել.
Առ այն ժամանակ իմ բոլոր ղէնքեր,
Կապիր ձիուս վրայ, թող արձակ դաշտում,
Կըգայ, ուր լինիմ, կըգտնի իսկոյն»։
Ապա նա առաւ իր քեռու տղան՝
Սրտոտ ու ձայնեղ, անունն էր Վրժան.
Մէկ որ գոռում էր, թռչուն ու գետուն
Սարսափում էին մարդ և անասուն։
Երկուսն էլ հագան դէրբիշի շորեր,
Ուսին ձգեցին մի-մի թմբուկ էլ
Ու ճամպա ընկան թմբուկ զարկելով,
Դէրբիշի նման խաղեր կանչելով։

Է

Շատ չար ու բարի ճամպին ռաստ եկան,
Շատ անծանօթ տեղ, ոգիներ տեսան,
Տեսան նրանք Ջիներ, Դէւեր, Ջանգիներ,
Հուրի, Փէրիներ, Քաջքեր ու Ջարեր։
Բայց ով խիզախեց կտրել նրանց առաջ,
Նա իր արևին ճնաս բարով ասաց.
Նըրա մէկ կէսը ընկաւ Հնդկաստան,
Մէկը Ջինմաչին, մէկը Փռանգստան։
Բայց խմբով դէւեր կարկտի նման
Յարձակւում էին և կտրում ճամպան.
Մէկ դէւի ոտից բռնում էր Ռոստոմ,
Սրանով միւսների գլխները ջարդում։
Այսպիսով նրանք բաւական գնացին,
Էհ զարիք էին, ցաւեր քաշեցին
Շատ քաղց ու ծարաւ, շատ ցրտեր կերան,
Բայց ամենևին չըվրհատեցան։

Ը

Մի օր նրանք տեսան, որ ամպերի մէջ
Մի ինչ որ սև բան արագ թռչում է.
Թռչուն չէր լինի—թըւում էր շատ մեծ,
Մարդ էլ չէր լինիլ,—նա թևեր ունէր։
Երկար նայեցին, տեսան, որ դէւ էր,
Մի թևաւոր դէւ, զարհուրելի բան,
Ոտքերով բռնած մի աղջիկ ունէր—
Մի հրեղէն աղջիկ, փախցընում էր նըրան։
«Է հէյ», որոտաց Վրժանը ուժգին.
Դէւը սարսռաց, բայց դեռ թռչում էր։
Ռոստոմը վերցրեց մի լեռ ահագին
Եւ այն է՝ նըրան ուզում էր խփել,
Յանկարծ աղջկան դէւը վայր ձգեց,
Ինքն էլ թուլացած ընկնում էր հետը,
Բայց ուշքի եկաւ, ոյժը հաւաքեց
Եւ ապա թափով ճեղքեց ամպերը։

Թ

«Ո՞վ ես դու, ո՛վ ես, ինչ տեղից, ասա,
Ո՞վ է քո հայրը, աննման խաթունս».
—Աստուած քո բազկին աւելի ոյժ տայ,
Հայրս է թագաւոր այս ինչ աշխարհում։
«Զըզելի դէմը ո՛ւր էր փախցնում քեզ,
Զօռո՛վ էր տանում, թէ քո կամքով էր».
—Ուր էր տանում ինձ,—այդ չըգիտեմ ես,
Դէմն ինձ մեր տանից ուժով փախցրեց։
«Դէհ, գնանք գտնենք սրա հօրը, Վըժան,
Կորած աղջիկը իր տիրոջ դարձնենք,
Ապա մենք բռնենք կրկին մեր ճանապան,
Հսկայ Սալմանին գնանք որոնենք»։
Աղջկայ հօրը նրանք գտան շուտ.
Հայրը մեծ պատուով նրանց ընդունեց.
Յոյն աղջկանից կորել էր վաղուց,
Գուսան կորուստը և նա արտասուեց,
Եւ յետոյ նստած մի ճոխ խնճոյքի՝
Ուրախանում էին երկար ու խնդում.
Ապա խոնջացած, յոգնած Ռոստոմի
Աչքը քուն առաւ, քաղցր և անուշ քուն։
Յանկարծ մի ահեղ որոտ լսեցաւ,
Թնդացին ուժգին սարեր ու ձորեր,
Մարդիկ վայր ընկան. ձայնը գոռում էր.
«Ռոստո՛մ, հասի՛ր շուտ, Սալմանն ինձ տարաւ»։
Վեր թռաւ քնից շփոթւած Ռոստոմ,
Նայեց իր կողքին, բայց չըկար Վըժան.
Նըրա տեղ կանգնած իր ձին աննման՝
Նշխեբալաքն էր տիրոջը նայում։
Արիւնն ու քրտինք կարած փրփրում,
Ոտքով դոփում էր գետինն անհամբեր,
Թամքի վրայ առած Ռոստոմի զէնքերը,
Տիրոջ հրամանին պատրաստ սպասում։
Եւ ձիու մէջքին Ռոստոմը թռաւ.

«Դէհ, գնա, թռիր,
«Դէհ, գնա, վազիր,
«Սալմանին գտիր,
«Սալմանին հասիր»։

ԺԱ

Սալմանը տարաւ Վըժանին կապեց,
Մուքը զնդանում ամուր շղթայեց,
Ապա յետ դարձաւ, տեսաւ, որ հեռուում
Ռոստոմը դէպի իրան է վազում։
Հեծաւ կրկին ձի, ընդառաջ անցաւ.
Ռոստոմ Սալմանին ահա մօտեցաւ.
Հսկաներն իրար խոր ողջունեցին,
Ապա ձիաներն յետ-յետ քաշեցին։
Ջէնքերն աջ ձեռին, վահաններ ձախին,
Հրապարակի վրայ նրանք պըտտեցին,
Ապա լախտերը ձեռքներին առած
Իրար վրայ ընկան վառւած, կատաղած։
Յանկարծ երկիրը դողալ սկսեց.
Լեռներ քանդւեցին հովիտների մէջ,
Դաշտը ծովի պէս ալեկոծւում էր,
Իսկ մուքի զնդանում Վըժան գոռում էր,
Բայց հսկաները կռւում են կրկին.
Գուրզերը առան, լախտը ձգեցին,—
Գուրզն էլ փշրւեց, վահանն էլ ճայթեց,
Սուրն էլ կոտրւեց, բայց ոչ ոք չընկճւեց։
Կրկին ձիաներն յետ ու յետ տարան,
Ապա հսկաներն հանգչելու իջան։
Մէկ տարի անցաւ, թէ երկու, կրկին
Հսկաներն իրար վրայ վազեցին.
Կրկին երկիրը դողալ սկսեց,
Լեռներ քանդւեցին հովիտների մէջ,
Դաշտը ծովի պէս ալեկոծւում էր,
Իսկ մուքի զնդանում Վըժան գոռում էր...
Այսպէս անցկացան երկար տարիներ,
Բայց նրանց կռիւը դեռ չի վերջացել։

ԺԲ

Ռոստոմ ու Սալման Աշխարհի ծայրում
Դեռ մինչև հիմա կուռում են, կուռում...
Ահա դրանից է, որ երբեմնապէս
Տարին կամ երկու տարին մի անգամ
Երկիրը շարժւում է ծովի ջրի պէս,
Շատ տեղ ճաքւում է, լւում է խուլ ձայն.—
Այդ հին կռիւն են Ռոստոմ ու Սալման
Կրկին ու կրկին վերանորոգում,
Զարդում են իրար զէնքեր ու վահան,
Իսկ մութ գնդանում վիժանն է գոռում։

Ա. Մ Ի Ր Ա Ն

1.

Մեզնից ոչ հեռու, վերջաց աշխարհում,
Կովկաս լեռների լանջերից մէկում,
Ուր Լեախւա գետն է հոսում փրփրում,
Քարափի գլխին հովիւ էր նստած։
Հովիւն ածում էր իր սալամուրին*)
Ու հանգիստ տալիս իր ոչխարներին։
Քաղցր հնչիւնը սալամուրիի
Եւ կարկաչիւնը արծաթ ջրերի,
Իրար խառնւելով քնոտթեան ծոցում,
Մի կախարդական երգ էին կազմում։
Անուշ գեղգեղից ձորեր, սար ու քար
Ըզմայլւում էին, ձայն տալիս իրար։
Ջահել վրացին երգից տաքացաւ
Ու իր խաշներին խոպան մոռացաւ։
Հօտի առաջնորդ երկու այծերը
Քաշւեցին հեռու, դէպի լեռները,
Ոչխարներին էլ իրանց հետ տարան,
Հովիւի աչքից հեռացան կորան։

*) Սրինգ։

2.

Եւ հրրապուրւած հովիւն ըսթափւեց,
Թողեց սրինգը, իր շուրջը նայեց.
Բայց հօտը չերկար... Իսկոյն նա իջաւ
Քարափի գլխից, մահակը առաւ,
Դէպի լեռները գնաց վազելազ,
Ցիրուցան հօտը ժողւեց հազիւ հազ։
Բայց չարաճճի երկու այծերը,
Տրմբաբմբացնելով ձիգ մօրուքները,
Երկայն պոզերը օդում շարժեցին,
Կամակոր ձայնով պինդ մըկըկացին.
Ապա թռչելով քարափից քարափ,
Վազեցին, հասան Լեախւային գետափ։
Հովիւը հոգնած՝ վազում էր, վազում—
Ճարպիկ այծերին հասնել չէր կարում։
Գետի եզերքից այծերը վախան,
Վազեցին ձորը ու աչքից կորան.
Հովիւը քրտնած՝ վազում էր, վազում—
Ըմբոստ այծերին գտնել չէր կարում։

3.

Եւ մեր հովիւը յոգնած, շնչասպառ,
Ահա բարձրացաւ մի սարի կատար.
Երկար աչք ածեց, նայեց իր չորս դին,
Փախած այծերը դարձեալ չկային,
Եւ անդնդախոր ձորերից յանկարծ
Մի ահեղագոչ գոռիւն որոտաց.
Ահ ու սարսափից հովիւը ցնցւեց
Եւ արձան կարած՝ ականջը լարեց։
Այդ զարհուրելի ձայնիցը դաժան
(Որ ոչ որոտ էր և ոչ էլ գազան)
Լեռներ ու ձորեր էին դղրդում
Եւ դղրդոցը երկինք հասցնում։
Իրան սիրտ տալով հովիւը ջահել
Դէպի այդ ձայնը ըսկսեց քայլել։

Քանի հովիւը առաջ էր գնում,
Այնքան այդ ձայնը հուժկու էր դառնում։

4.

Եւ նա պատեանից դաշոյնը հանեց,
Մի մեծ քարայրի առջևում կանգնեց։
Ապա երեսը խաչակնքելով՝
Ներս մտաւ այրը ահ ու սարսափով։
Եւ ինչ է տեսնում.—յատակի վրայ
Պառկած գոչում է մի մարդ աժդահա...
Հովւի ծնկները ահից դողացին,
Գլխի մազերը բիզ-բիզ ցցւեցին...
Հաստ շղթաներով կապւած, կաշկանդւած՝
Հսկան փռւած էր՝ գետնին ամրացած.
Նա մռնչում էր, ուժգին հառաչում,
Ահարկու ձայնով այրը տատանում.
Ճգնում էր փշրել շղթան ամրակուռ,
Բայց նրա չանքը անցնում էր իզուր։
Նրբա մի կողքին մի թուր էր ընկած,
Իսկ միւս կողքին էլ դրած էր չոր հաց.
Շղթայած ձեռքը թրերին էր մեկնում,
Բայց նա հեռու էր ձեռքը չէր հասնում.
Ամուր կապանքը ձգում է կրկին,
Յուսահատ գոչում, հառաչում ուժգին։

5.

Հովիւը շրջւեց և ուզեց փախչել,
Բայց հսկան յետքից ըսկսեց կանչել,
«Մի վախիր ինձնից դու, ով բարի մարդ,
Եկ, ինձ մօտեցիր անվախ ու հանդարտ»։
—«Աւա ինձ, ով ես, վիթխարի հսկայ,
Զար ոգի ես դու, թէ մի քրիստոնեայ»։
«Ես նա եմ, որը ճեղքեց ամպերը,
Սլացաւ վերև՝ դէպի աստղերը.

Ես նա եմ, որը երկինք վերացաւ
Եւ աստղերի մէջ փառքով բազմեցաւ.
Ես նա եմ, որը չընհնազանդւեց,
Տիրոջ պատւէրը ոտնատակ տրւեց.
Ես նա եմ, որը երկնքից խլեց
Անշէջ կրակը ու բերաւ աշխարհ—
Ինձ արգելւած էր, բայց ես գողացայ,
Այդ պատճառով էլ այս օրին հասայ.
Ես նա եմ, որին ամբողջ Վրաստան
Վաղուց յիշում է, կոչում Ամիրան...»։

6.

Հէնց որ Ամիրան անունը լսեց,
Հովիւը իսկոյն երկիւղից ցնցւեց,
Նրա աչքերը յանկարծ մթնեցին,
Նա տատանւեցաւ ու փռւեց գետին։
Իսկ Ամիրանը առաջւայ նման,
Ուժգին գոչում էր, ձրգձրգում շղթան։
Երկար դարերով հսկան բանտարկւած
Իր մթին այրում, շղթայով կապւած,
Արցունք էր թափում, դառն հեկեկում,
Աստծու տրւած պատիժը կրում։
Եւ հրեշտակն երկնից ամեն Աստծու օր
Բերում էր այրը մի հացի կտոր.
Իսկ եօթը տարին հազիւ մի անգամ
Քարայրի պատը բացւում էր առժամ,
Արևի շողքը քիչ ներս էր մտնում
Ու դարձեալ փախչում, բանտը մթնացնում,
Այսպէս Ամիրան իր մեղքի համար
Գետնին շղթայւած տանջւում էր երկար։

7.

Երբ որ հովիւը քիչ ուշքի եկաւ,
Հսկան խրախուսեց, նրան սիրտ տրւաւ։

Տեսնելով նրա դառը տանջանքը,
Հովիւը յայտնեց իր համակրանքը.
«Թէ ես կարենամ, թէ ձեռքովս գայ,
Անշուշտ քեզ կօգնեմ, տարապեալ հսկայ»։
—«Սուրս մօտեցրու... Սուրս թէ ինձ տաս —
Ես կբխորտակեմ այս ծանր շղթաս»։
Սարի հովիւը երկար չարչարւեց,
Բայց սուրը ծանր էր, տեղից չշարժւեց։
—«Օ՜, ազաչում եմ, շուտով տուն վազիր,
Պարան կամ շղթայ բեր, սրբիս կապիր,
Ես այն պարանով սուրըս կքաշեմ,
Կմօտեցնեմ ինձ, շղթաս կըփշրեմ.
Եւ երբ ազատւեմ իմ կապանքներից,
Թանգագին փրկանք կըստանաս ինձնից։
Սակայն զգուշ կաց, որ վերադարձին
Չբխօսես բնաւ, չբխօսես ճանապին...»։

8.

Հովիւը իսկոյն ճանապարհ ընկաւ,
Վազելով գնաց, իրանց տուն հասաւ։
Նա առաւ իր հետ հաստ-հաստ պարաններ
Ու մի քանի հատ ամուր շղթաներ.
Անխօս, լուռ ու մունջ դուրս եկաւ տանից,
Դէպի քարայրը ըշտապեց նորից,
Նա դեռ չէր հասել հսկայի բանտին,
Երբ որսորդները նրան բռնեցին.
«Է՛յ, ՞ւր ես տանում շղթան, պարանը.
Շուտ ասա, թէ չէ՝ բո՛ւրդ է քո բանը»։
Հովիւը լուռ էր, ոչինչ չէր խօսում.
Բայց որսորդները նրան չարչարում,
Քաշքշում էին, ծեծում անխնայ,
Որ հարց ու փորձին նա պատասխան տայ։
Համբերութիւնից հովիւը ելած՝
Դաշոյնը հանեց, գոչեց կատաղած.
«Փուճ սրիկաներ, ինձ հանգիստ թողէք,
Թէ չէ՝ բոլորիդ կըմորթեմ մէկ-մէկ...»։

9.

Յանկարծ երկինքը ուժգին որոտաց,
Ամբողջ աշխարհը թնդաց, դղրդաց.
Լեռան գագաթից պոկւեց մեծ ժայռը,
Գլորւեց ներքև, դէպի քարայրը,
Եւ որսորդները երկիւղից փախան,
Նապաստակի պէս ձորում կուչ եկան։
Վազեց հովիւը, վազեց շնչասպառ,
Հասաւ այրի մօտ... բայց ճանապայ չըկար—
Վիթխարի ժայռը անյողդողդ կուրծքը
Թեքել էր այրին ու փակել մուտքը։
Եւ յուսահատւած հովիւը լացեց,
Երկար հեկեկաց, հսկային կանչեց,
Բայց ժայռի տակից պատասխան չըկար.
Լեռներն էին լոկ ձայն տալիս իրար,
Միանում հովի սրտառուչ ողբին,
Անդրադարձընում նոյն ողբը կրկին...

10.

Եւ Ամիրանի տխուր վախճանը
Այժմ էլ յիշում է ողջ Վրաստանը.
Մինչև հիմա էլ Կովկաս լեռներում,
Որտեղ կաղբէկն է երկինք բարձրանում,
Մեր հովիւ տարած պարանն ու շղթան
Գետնին թափթըփած՝ կան ու կըմնան...

ՅԱԽԵԼԻԱԾ

ԱՆԱՀԻՏ

Հին դրոյց

Ա.

Մի ժամանակ Աղւանից աշխարհի թագաւորանիստ քաղաքը Պարտաւն էր, որ այժմ աւերակ է և աւում է Բարդա։ Դա գտնւում էր այժմեան Գանձակի և Շուշւայ մէջ տեղը՝ Թարթառ գետի վրայ։ Այդտեղ էր Վաչէ թագաւորի հոյակապ ապարանքը իր ընդարձակ ծառաստանով, որ երկարութեամբ մէկ ձգւած էր Թարթառի ափովը։ Այդ հինօրեայ արհեստական անտառը բնականից գերազանցում էր իր հսկայական չինարներով ու բարդիներով, որոնց բարձրութեան աւերի տակ ծածկւում էին քաղաքի նոյն իսկ ամենաբարձր աշտարակները։ Նրա չորս կողմով քաշւած ամուր պարիսպը վանդակի պաշտօն չէր կատարում բնաւ այն թեթեւաշարժ ու արագավազ այծեամների ու եղջերուների համար, որոնք այնտեղ խմբով զբօսնելու և խաղալու ազատ ասպարէզ ունէին։

Մէկ անգամ Վաչէ թագաւորի միամօր որդին՝ Վաչագանը, որ մի նորահաս երիտասարդ էր, պալատի պատշգամբի վրայ կռթնած՝ նայում էր իրանց այդ ծառաստանին։ Եղանակը գարնանային էր և առաւօտեան արևաբացին։ Աշխարհի բոլոր երգեցիկ թռչունները՝ կարծես խօսք մէկ արած՝ հաւաքւել էին այդ ծառերի վրայ, որ մի ընդհանուր նրւագահանդէս սարքեն և իրար հետ մրցեն։ Մինն իր սրինգն էր փչում, միւսն իր փողը, բայց յաղթանակը խօսողն էր տանում։ Սոխակն էր այդ խօսողը՝ բիւլբիւլն Աղւանից, սիրահար սրտերի

միակ մխիթարիչը։ Նա որ սկսում էր նրւագել իր բիւրաղի քնարը, իսկոյն լռում էին միւսները, և ականջները սրած՝ նրան էին լսում և նրա դայլայլկի բիւրաւոր ելևէջներից դաս առնում։ Մինը սովորում էր նրա ծլւրլոցը, միւսը նրա կկլոցը, մինը շրւշրւալը, միւսը սուլելը, և մէկ էլ յանկարծ ամենքը միասին, միախառն ձայնով սերտում էին իրանց սովորած եղանակները, որից դուրս էր գալիս մի բնական ներդաշնակ համերգ։

Արդեօք սրանց էր ականջ դնում վաչագանը այնպէս լուռ, այնպէս ակնապիշ։ Ո՛չ... Ո՛րիշ հոգս, ուրիշ ցաւ կար նրա սրտումը. սրանք միայն սաստկացնում էին նրա ցաւը և խոր տխրութեան մէջ ձգում նրան։

Այս տխուր մտմտուքից հանեց վաչագանին նրա մայրը՝ Աշխէն թագուհին, որ այդ պահուն մօտեցաւ նրան և մօտը նստելով՝ հարցրեց.

—Վաչիկ, ես տեսնում եմ, որ դու սրտումդդ մի ցաւ ունես, բայց թագցնում ես մեզանից։ Որդի, ասա ինձ, ինչո՞ւ համար ես այդպէս տխուր։

—Մայր, ճշմարիտ ես ասում,—պատասխանեց որդին.—աշխարհիս փառքն ու վայելչութիւնը աչքիս չեն երևում։ Ուզում եմ հեռանալ աշխարհիցս, գնալ անապատ։ Ասում են՝ Մեսրոպ վարդապետը կրկին եկել է Հայիկ, իր շինած վանքումը մխաքանութիւն է հաստատել, աշակերտներ ժողովել. ուզում եմ ես էլ գնամ այնտեղ։ Մայր, դու չըգիտես, թէ ինչքան լաւ գիւղ է այդ Հայիկը։ Այնտեղի թէ տղէքը և թէ աղջկէքը այնպէս սրամիտ, այնպէս գեղեցիկ են, որ եթէ տեսնես՝ կըմտաս հիացած։

—Ուրեմն նրա համար ես գնում Հայիկ, որ այնտեղ տեսնես քո սրամիտ Անահիտին։

—Մայր, դու ո՞րտեղից գիտես նրա անունը։

—Մեր պարտիզի սոխակները բերին ինձ այդ համբաւը։ Սիրելի Վաչիկ, ինչո՞ւ ես մոռանում, որ

դու Աղւանից թագաւորի որդին ես։ Թագաւորի որդին կամ թագաւորի, կամ մեծ իշխանի աղջիկ կուզի, և ոչ թէ մի գեղջկուհի։ Վրաց թագաւորը երեք աղջիկ ունի, կարող ես ընտրել նրանցից որին կամենաս։ Գուգարաց Բդեշխն ունի մի շատ գեղեցիկ աղջիկ, որ իր միակ ժառանգն է, իր հարուստ կալւածների միակ տիրուհին։ Սիւնեաց իշխանն ունի դարձեալ մի շատ սիրուն աղջիկ. վերջապէս մեր հազարապետի Վարսենիկն ինչ պակաս աղջիկ է,—մեր աչքի առջև մեծացած, մեր ձեռքով կրթւած...

—Մ՛այր, ես արդէն ասեցի, որ պիտի երթամ վանք. բայց եթէ դուք ուզում էք, որ ես անպատճառ ամուսնանամ, ապա գիտացէք, որ իմ ուզածը միայն և միայն Անահիտն է...

Այս ասեց Վաչագանը և ամօթից կարմրելով՝ վազեց դէպի պարտէզ, ինչպէս մի ծանր բեռնից ազատւած փախստական զերի...

Բ.

Վաչագանի քանի տարին նոր էր լրացել։ Նա երկայնացել էր իրանց պարտէզի բարդիների նման. բայց շատ քնքոյշ, ժժգոյն և վատառողջ էր։ Մանկութիւնից կրօնական կրթութիւն առանալով մեծն Մեսրոպի աշակերտների մօտ, մտադիր էր իր վարդապետների օրինակին հետևիլ—քաշուիլ մի վանք, աշակերտներ պատրաստել և քարոզութեան նըւիրուիլ։ Բայց նրա այդ ձգտումը հակառակ էր իր ծնողաց կամքին, ըստ որում ինքն էր նրանց միակ զաւակը, ինքն էր Աղւանից թագաւորութեան միակ ժառանգը։

«Որդեակ իմ Վաչագան,—ասում էր հայրը շատ անգամ,—դու գիտես, որ իմ յոյսը միայն դու ես. դու պէտք է մեր տան ճրագը վառ պահես, մեր օջաղի յիշատակը՝ կենդանի։ Պէտք է ուրեմն

ամուսնանաս, ինչպէս որ աշխարհիս օրէնքն է»։

Որդին միայն կարմրում էր հօր այդ առաջարկութիւնը լսելիս և չէր իմանում ինչ պատասխան տայ, ըստ որում ամուսնութեան վրայ նա չէր մտածել և չէր էլ ուզում մտածել։ Բայց հայրը նրան հանգիստ չէր տալիս և նոյն առաջարկութիւնը աւելի գրաւիչ խօսքերով նա անում էր շաբաթը մի քանի անգամ։ Հօրը այդ ստիպմունքներից ազատ մնալու և նրան ուշ-ուշ տեսնելու համար՝ ինքն իրան որսորդութեան տըւաւ, թէև վաչագանը զբօսասէր չէր, այլ աւելի սիրում էր շարունակ տանը նստել և կարդալ։ Այնուհետև առաւօտները վեր էր կենում շատ վաղ և ընկնում սար ու ձոր և երեկոները շատ ուշ յետ դառնում։ Երբեմն երեք-չորս օրով ուշանում էր և ծնողացը տարակուսութեան մէջ ձգում։ Շատ իշխանների որդիք ուզում էին նրան ընկերանալ և նրա հետ միասին մանգալ. բայց ինքը չէր յօժարում։ Նա յետը վերցնում էր միայն իր մտերիմ և քաջ ծառային՝ Վաղինակին, որ մի պնդակազմ և քաջառողջ տղամարդ էր, և իր հաւատարիմ շունը՝ Զանգին, որ թէև դեռ լակոտ, բայց արդէն մի ահագին գամփռ էր։ Սրանց հանդիպող մարդիկը չէին իմանում, որ մինը թագաւորի որդին է և միւսը նրա ծառան, ըստ որում երկուսն էլ միևնոյն հասարակ որսորդի հագուստն ունէին հագած, երկուսն էլ միևնոյն նետադեղը ուսներին և լայնաշեղբ դաշոյնը կախած գօտիկներից. միայն պաշարի պարկը Վաղինակն էր կրում։ Շատ անգամ իջնում էին զանազան գիւղերում, և Վաչագանը, իբրև մի օտար մարդ, ծանօթանում էր գիւղացոց կեանքին, տեսնում էր նրանց ամենօրեայ հոգսերն ու կարիքները, նկատում էր, թէ ո՛վքեր են բարեբիւն անում և ո՛վքեր անիրաւութիւն։ Յանկարծ շատ կաշառակեր գատաւորներ հեռացնում էին իրանց պաշտօնից և նրանց տեղ լաւերն էին նշանակւում, շատ գողեր բռնւում և

պատժւում էին, շատ նեղութեան մէջ ընկած տներ և համայնքներ օգնութիւն էին ստանում թագաւորից, առանց իմաց տալու նրան իրան նեղութիւնը։ Այսպէս մի աներևոյթ զօրութիւն ամեն տեղ ամեն բան տեսնում էր և հոգացողութիւն անում։ Այս տեսնելով՝ ժողովուրդն սկսեց հաւատալ, որ Վաչէ թագաւորը Աստուծոյ պէս իմանում է, թէ ումի՛նչ է պէտք և ումի՛ պատժի կամ վարձատրութեան արժանի մի բան արել։ Էլ ոչ մի տեղ ոչ գողութիւն էր լինում և ոչ մի ուրիշ անարդարութիւն։ Բայց ոչ ոք չէր իմանում, որ այդ լաւ փոփոխութեան միակ պատճառը թագաւորի որդին էր։

Վաչագանի այս տեսակ թափառական ճանապարհորդութիւնը իր համար էլ ունեցաւ լաւ հետևանք։ Նա աւելի զբաղթացաւ և առոյգացաւ։ Նա սկսեց աւելի ուժեղանալ և ճարպիկանալ՝ քան թէ առաջ էր։ Մօտիկից տեսնելով ժողովրդի հոգսերը, նա զգաց, թէ ինչքան բարիք կարող է անել մի թագաւոր իր երկրի համար, և սկսեց փոքր առ փոքր ճգնելու միտքը թողնել։ Նրա սրտի սէրն արդէն վառելու յատկութիւն էր ստացել. հարկաւոր էր միայն մի առիթ, մի շփուճ, որ ցոլային նրա լուսափայլ ճառագայթները. այդ առիթը շուտով վրայ հասաւ։

Մէկ օր իրանց սովորական որսորդութեան ժամանակ՝ Վաչագանն ու Վաղինակը հասան մի գիւղ և նստեցին նրա աղբիւրի մօտ որ հանգստանան։ Շատ դադրած ու քրտնած էին։ Գիւղի աղջկէքը եկել էին աղբիւրից ջուր տանելու և հերթով լցնում էին կուժերն ու փարչերը։ Վաչագանը ասասիկ ծարաւել էր։ Նա ջուր ուզեց, և աղջիկներից մինը լցրեց փարչը և ուզեց Վաչագանին տալ, բայց մի ուրիշ աղջիկ նրա ձեռքից խլեց փարչը և դատարկեց։ Ինքը նորից լցրեց, բայց էլի դարտկեց։ Վաչագանի թուքը ցամաքել էր, և անհամբեր սպասում էր, թէ երբ պէտք է արդեօք նրան ջուր

հասցնեն. բայց մեր անծանօթ աղջկայ հոգը չէր այդ. նա կարծես խաղ էր անում. լցնում, դարտկում էր, և այդ կրկնեց չորս հինգ անգամ, մինչև վեցերորդ անգամին տարաւ, իրան անծանօթ որսորդին տըւաւ։

Վաչագանը երբ որ խմեց և փարչը տըւաւ վաղինակին, ինքն սկսեց խօսեցնել աղջկանը, և հարցրեց թէ ինչո՞ւ նա իսկոյն չբերաւ ջուրը. չըլինի՛ թէ կատակ անել ուզեց կամ բարկացնել։ Աղջիկը նրան պատասխանեց։

—Մենք սովորութիւն չունինք մի օտար երիտասարդի հետ կատակ անել, մանաւանդ երբ նա ջուր է ուզում։ Բայց ահա ինչ էր իմ միտքը։ Ես տեսայ, որ դուք դադրած ու քրտնած էք, իսկ այդ վիճակի մէջ սառը ջուրը վնաս է մարդուն. դրա համար ես դիտմամբ ուշացրի մինչև դուք մի փոքր հանգստանաք և հովանաք։

Աղջկայ խելօք պատասխանը զարմացրեց Վաչագանին, բայց գեղեցկութիւնն աւելի ևս հիացրեց նրան։ Նրա աչքերը խոշոր, թուխ-թուխ և վառվռուն էին, ունքերը կարծես վրձինով քաշած. զբլուխը բաց էր և ծամերը փռւած թիկունքի վրայ. ճակատը լայն, քիթ ու պռօշը նկարածի պէս։ Ոչինչ զարդ ու զարդարանք չունէր. հագուստը մի կարմիր մետաքսէ շապիկ էր, որ նրա վայելչակազմ հասակը ծածկում էր մինչև ոտները և մի ասղնագործած բաճկոնակ, որով կոճկւած էր նրա բարակ մէջքն ու լայն կուրծքը։ Ոտքերը բոբիկ էին, բայց նոր լւացած կաթնաղբրի ջրով՝ բամբակի պէս սպիտակին էին տալիս։ Այսպէս էր Անահիտի արտաքին կերպարանքը, բայց նրա դէմքի գծագրութեան, նրա աչքերի մէջ մի այնպիսի գրաւիչ զօրութիւն կար, որ իսկոյն կախարդեց Վաչագանին և ապշեցրեց նրան։

—Անո՞ւնդ ի՞նչ է,—հարցրեց Վաչագանը.

—Անահիտ,—պատասխանեց աղջիկը։

—Ո՞վ է քո հայրը.

—Իմ հայրը մեր գիւղի նախրչի Առանն է։ Բայց ինչո՞ւ ես ուզում իմանալ, թէ իմ անունն ինչ է, կամ ո՛վ է իմ հայրը.

—Ոչինչ, հէնց այնպէս հարցնում եմ. հարցնելը հօ մե՞ղք չէ.

—Եթէ հարցնել մեղք չէ, խնդրեմ դու էլ ինձ ասես, թէ ինքդ ո՛վ ես, ո՞րտեղացի ես.

—Սո՞ւտ ասեմ, թէ՞ ճշմարիտ.

—Ո՛րը քեզ արժան կը համարես։

—Ի հարկէ, ես արժան կը համարեմ ճշմարիտը, իսկ ճշմարիտն այս է, որ ես հիմա չեմ կարող ուղիղն ասել, թէ ես ով եմ, բայց խօսք եմ տալիս մի քանի օրից յետոյ յայտնել։

—Շատ լաւ։ Շնորհեցէք ինձ փարչը, և եթէ էլի ջուր էք կամենում, բերեմ։

—Ոչ, շնորհակալ ենք, դու լաւ խրատ տըւիր մեզ. այդ կըյիշենք միշտ և քեզ չենք մոռանալ։

Անահիտն առաւ փարչը և հեռացաւ։

Գ.

Երբ որ մեր որսորդները ճանապարհ ընկած՝ գնում էին դէպի տուն, Վաչագանը հարցրեց Վաղինակին.

—Վաղինակ, դու մեր Բարդումը տեսա՞ծ ես սրա պէս գեղեցիկ աղջիկ։ Վաղինակը պատասխանեց.

—Ես լաւ չընայեցի նրա գեղեցկութիւնը, իմացայ միայն, որ իրանց գիւղի նախրչու աղջիկն է։

—Չես նկատել, բայց լաւ ես լսել։ Այդ նրանից է, որ քո ականջները աւելի սուր են քան թէ աչքերդ. բայց քո սուր ականջները շատ սխալ են լսում։

—Ո՛չ սխալ չեն լսում. աղջիկն ինքն ասեց, որ իր հայրը իրանց գիւղի նախրչին է։

—Շատ լաւ, բայց դրանից ինչ դուրս եկաւ. ես կարծում եմ, որ այդ հանգամանքը նրա հրաշալի գեղեցկութիւնից ոչ մի մազ չըպակասացրեց, նրա արժանաւորութիւնն աւելի ևս բարձրացրեց։

—Ուրեմն դու երբոր թագաւոր դառնաս, մի նախրչական շքանշան հնարիր և նրանով բարձրացրու քո իշխաններին։

—Նախրչական նշանն այնքան բարձր է, վաղինակ, որ կարելի չէ տալ ոչ մի իշխանի։ Այդ նշանը կարող են կրել միայն թագաւորներն ու հայրապետները։ Դու չգիտե՞ս մի՞թէ, որ այն գաւազանը, որ տրւում է թագաւորներին և հայրապետներին՝ հովւական նշան է։

—Հովւական, բայց ոչ թէ նախրչական։

—Հովիւն ու նախրչին ինչո՞վ են զանազանւում միմեանցից, եթէ ոչ նրանով, որ հովիւը միայն այծ ու ոչխար է արածեցնում, իսկ նախրչին՝ ամեն ինչ,—ոչխար, այծ, տաւար, գոմէշ, ձի, էշ, ջորի և մինչև անգամ ուղտ։ Եւ թագաւորի պաշտօնն աւելի նախրչութեան է նման, քան թէ հովւի, քանի որում նրա ժողովուրդը միայն ոչխարներից ու այծերից չէ բաղկացած, այլ շատ տեսակ կենդանիներից։ Մի՞թէ քեզ յայտնի՞ չէ, որ Աստուած ամենից շատ նախրչիներին է սիրել. ի՞նչ են եղել Աբրահամ, Մովսէս, Դաւիթ, եթէ ոչ մի-մի նախրչի։ Ո՞վ էր Աստծուն աւելի սիրել, Եսա՞ւը, որ մեզ նման որսորդ էր, թէ՞ Յակոբը, որ նախրչի էր։ Իմ կարծիքով, նախրչի են եղել աշխարհիս բոլոր արդար մարդիկը՝ Աբելից սկսած մինչև այս գիւղի նախրչին, որ այսքան գեղեցիկ ու խելօք աղջիկ ունի։

—Քեզ հետ վիճել կարելի չէ, իշխան. քիչ էլ որ խօսեցնեմ, դու Մեսրոպ վարդապետի քարոզները կըկարդաս գլխիս։ Թող գեղեցիկ լինի նախրչու աղջիկը. ասած է՝ «աչքի սիրածը տգեղ չի լինիլ»։ Բայց ես կարծում եմ, որ եթէ այդ աղջիկը

լինէը մի երկրագործի աղջիկ, դու չէիր ասիլ, որ Կայէնը երգրագործ էր, բայց կասէիր՝ «երկրագործ են եղել աշխարհիս բոլոր լաւ մարդիկը՝ Ադամից սկսած մինչև այս գիւղի երկրագործը, որ մի այսքան սիրուն աղջիկ ունի»։

—Վաղինակ, մի րոպէ թող քո սրախօսութիւնը և ինձ ուղիղն ասա. Անահիտն է գեղեցիկ, թէ մեր հազարապետի աղջիկ Վարսենիկը։

—Ես կարծում եմ, որ իբրև իշխանուհի՝ հազարապետի աղջիկն է գեղեցիկ, իսկ իբրև նախրչուհի՝ այդ գեղջկուհին. մինը միւսի տեղը չի բռնիլ։

—Բայց ո՞րը կլինի աւելի խելօք, Անահիտը, թէ՞ Վարսենիկը։

—Ես ոչ մէկի խելքը չեմ չափել, բայց կարծում եմ, թէ Վարսենիկը շատ լաւ գիտէ, որ մեր Թարթառի ջուրը ոչ ոքի վրայ ուժած չէ, և այդ պատճառով՝ երբ որ դու նրանից ջուր ուզես, նա հարկ չի համարիլ քո Անահիտի պէս նազ ու սազ անել և թուքդ ցամքած թողնել։

—Վաղինակ...

—Հրամայիր իշխան...

—Վաղինակ, դու ինձ չե՞ս սիրում...

—Իշխան, ես հասկանում եմ քո միտքը։ Եւ տեսայ, որ այդ առասպելական Անահիտի թերթեւուններն նեռի պէս ցցւեցին սրտիդ մէջ, բայց ցաւում եմ, որ այդ վէրքը քո մէջ պիտի անբժշկելի դառնայ։

Վաչագանն այլ ևս չբխօսեց և ընկաւ մի խոր մտածութեան, մի երևակայական աշխարհի մէջ։ Լռեց և Վաղինակը։ Միայն Զանգին սովորականից դուրս աւելի ուրախ էր թռչկոտում ու խաղում, կարծես մի նոր որսի հոտ լինէը առած։

Դ.

Նախընթաց դէպքից մի քանի օր անցած, թա-

գաւորն ու Վաղինակը երկար խօսակցութիւն ունէին։ Խօսակցութեան առարկան Վաչագանն էր։

—Վաղինակ,—ասեց թագաւորը,—դու մի փոքր երեխայ ես եղել, որ մեր տունն ես եկել, և ես քեզ հարազատ որդու պէս եմ պահել։ Այսօր դու ինքդ որդու տէր ես և կարող ես զգալ, թէ ինչ է որդեսիրութիւնը։ Մեր Վաչագանը քեզ եղբօրից չի զանազանում և միայն քեզ է յայտնում իր սրտի գաղտնիքը։ Դու պէտք է իմանաս նրա միտքը և յայտնես մեզ, որ մենք մեր ձեռքից եկած հնարը գործ դնենք։ Վաղինակը պատասխանեց.

—Հայր թագաւոր, Վաչագանն այնքան գաղտնապահ է, որ ինձ էլ չի բաց անում իր սիրտը. միայն այս վերջին օրերս ես նրա մէջ մեծ փոփոխութիւն եմ նշմարում։ Ես կարծում եմ, որ նա սիրահարուած է Անահիտ անունով մի աղջկայ վրայ։

—Ո՞վ է այդ Անահիտը.

—Դա Հացիկ գիւղի նախրչու աղջիկն է։

—Նախրչո՞ւ...

—Այո՛։

—Այդ նախրչու Անահիտը մի սատւածուհի պէտք է լինի ուրեմն, որ կարողացել է վաչագանին այդպէս կախարդել և կակղացնել նրա քարացած սիրտը։

—Հայր թագաւոր, ես միշտ փոնում եմ այդ աղջկանը, ծիծաղում եմ Վաչագանի վրա, բայց զուր է անցնում իմ աշխատութիւնը, և կարծում եմ, որ պիտի զուր էլ անցնի, ըստ որում այդ աղջիկը ճշմարիտ որ մի սատւածուհի է. նրա գեղեցկութիւնը մի հիացք է. իսկ խելքի մասին հրաշքներ են պատմում։ Ասում են՝ գիւղի ծերերը նրա խորհրդին են դիմում ամեն դժւար հանգամանքներում։ Ոչ մի երիտասարդ նրա քաջութիւնը չունի, ոչ մի օրիորդ՝ նրա ձեռքի ճարտարութիւնը։ Նրան անւանում են «Անտառների թագուհի», ըստ որում իր հօր նախրից երբ որ մի ոչխար է կորչում

կամ գողացուած, նա իսկոյն՝ մի կրակոտ ձի հեծած՝ սար ու ձոր է ընկնում, և որտեղից լինի՝ գտնում բերում է։ Այս տեղեկութիւնները ես հաւաքել եմ Վաչագանից ծածուկ և ոչինչ չեմ յայտնել, որ աւելի ևս չը տաքանայ, բայց ինչպէս ես տեսնում եմ, նա առանց այս էլ նրանից ձեռք վերցնողը չէ։ Ես յոյս ունեմ, որ ինքը եթէ ձեզ չըյայտնէ, մայր թագուհուց չի թագցնիլ։

—Եթէ այդպէս է, ես կըյայտնեմ մօրը։ Շնորհակալ եմ, որ ինձ նախապատրաստեցիր քո տըւած տեղեկութիւններով,

Վաղինակը ճշմարիտ որ լաւ նախապատրաստեց թագաւորին։ Նա Անահիտի գովասանքը՝ իր կարծիքով՝ չափազանցութեան հասցրեց աւելի այն մտքով, թէ՝ բան է՝ եթէ որդու կողմից զիջում չըլինի, գոնէ ծնողաց կողմից լինի, որ Վաչագանի մուրազն անկատար չըմնայ։ Ահա այս խօսակցութիւնից յետոյ էր, որ մայրն իմացաւ որդու տըխրութեան պատճառը։

Ե.

Թագուհին երբ որ իմացաւ Վաչագանի վճռական խօսքը, թէ նա միայն Անահիտին կուզի և ուրիշ ոչ ոքի, յայտնեց թագաւորին, որ իրանց որդին Հայկիկ գիւղի նախրչու աղջկանն է հաւանել, և պատմեց բոլորը, ինչ որ ինքը լսել էր։ Այս լուրը շուտով տարածուեց ամբողջ պալատի մէջ։ Բոլոր ծառաներն ու նաժիշտները իմացան։ Միւս օրը ամբողջ քաղաքը դղրդում էր այդ նոր համբաւով։ Գիւղացիք ուրախացան, որ թագուհին իրանցից կը լինի և նրա օրով իրանք շատ բախտաւոր կըլինին։ Մեծ-մեծ իշխանները տխրեցին, թէ ինչու թագաւորի որդին ռամիկ նախրչուն իրանցից բարձրը համարեց։ Վաճառականները ծիծաղում էին, թէ երևի թագաւորի որդին խելքը կորցրել է, որ

փոխանակ հարուստ օժիտով աղջիկ ուզելու՝ մի աղքատի աղջիկ է ուզում։ Պակաս չէին և սրախօս մարդիկ, որոնք այդ առիթով զանազան առասպելներ էին հնարում և պատմում սրան-նրան։

Ահա թէ ինչ էին ասում այդ սրախօսները.

—Բաբիկ, ասում են՝ մեր թագաւորի որդին նախրչու աղջիկ է ուզում, լսե՞լ ես...

—Այդպէս չէ, սիրելի Սադօկ, դու սխալ ես լսել։ Այդ նախրչին իսկապէս նախրչի չէ, այլ թագաւոր է, բայց որովհետև իր հպատակները բոլորն էլ անասուններ են, այդ պատճառով նրան նախրչի են ասում։ Հիմա մենք որ յիմար լինինք, մի՞թէ դրա համար պէտք է մեր թագաւորին տաւարած անուանենք։ Մեր թագաւորի խնամացուն մի շատ իմաստուն թագաւոր է. նա իմանում է բոլոր անասունների լեզուն. այդպէս մէկ էլ Սօղօմօն իմաստունն է եղել։

—Ի՞նչ ես ասում... մի՞թէ անասուններն էլ ունին թագաւոր։

—Ինչո՞ւ ես զարմանում։ Հապա չե՞ս լսել, որ ասում են՝ մորեխների թագաւորը, օձերի թագաւորը, մրջիւնների թագաւորը, մեղուների թագուհին։ Եւ մարդիկն էլ դեռ այն ժամանակ են սկսել թագաւոր ունենալ, երբ նրանց խելքը անասունների խելքից բարձր չի եղել։

—Ես այդ գիտեմ, բայց չեմ լսած, որ տաւարներն էլ ունենան թագաւոր։ Մէկ էլ որ՝ ասենք՝ օձերի թագաւորը օձ է, մորեխներինը մորեխ, բայց տաւարներինը մի՞թէ մարդ է։

—Հապա մարդ որ չըլինէր, էլ ի՞նչպէս աղջիկ կունենար, էլ ո՞ւմ կուզէր մեր թագաւորի որդին. երևի մարդ է, որ աղջիկ ունի, և այն էլ, գիտե՞ս, ինչպէս աղջիկ. շատ գեղեցիկ և իմաստուն։ Ասում են՝ այդ աղջիկը մարդու չի գնում, և դեռ յայտնի չէ, թէ արդեօք մեր թագաւորի որդուն կուզի՞ թէ ոչ։

—Ինչ ես ասում.

—Հապա դու ինչ ես կարծում...

Զ.

Թագաւորն ու թագուհին տեսան որ չեն կարողանում Վաչագանի միտքը փոխել, մի երեկոյ խորհուրդ արին և վճռեցին, որ ընդունեն նրա ընտրութիւնը։

Թագաւորն ինքը շատ բարի մարդ էր. նա սրտով հակառակ չէր ամենևին որդու ընտրութեանը։ Նա մինչև անգամ ուրախ էլ էր, որ իր որդին բոլոր հպատակների վրայ հաւասար աչքով է նայում և մէկը միւսից բարձր չի դասում։ Նա միայն վախենում էր, թէ մի գուցէ դրանով գոռոզ իշխաններին գրգռէ իր դէմ։ Բայց երբ որ իմացաւ թէ գիւղացիք շատ ուրախ են այդ բանին և Անահիտն էլ բարձր համբաւ է ստացել նրանց մէջ, ինքն սկսեց համոզել թագուհուն, որ յօժարի այդ բանին...

Միւս օրը կանչեցին վաղինակին, յայտնեցին իրանց յօժարութիւնը, և նրա հետ երկու պատուաւոր և իշխան մարդ ևս դնելով՝ մեծամեծ ընծաներով ուղարկեցին Հացիկ՝ հարսնախօսութեան։

Երբ որ դրանք հասան նախշչի Առանի տունը, Առանը նրանց սիրով ընդունեց և շնորհաւորեց նրանց գալը։ Անահիտը տանը չէր։ Հիւրերը նստեցին սրահում՝ մի նոր գորգի վրայ, որ Առանը փռեց իսկոյն և ինքն էլ նստեց նրանց կշտին։

Ծօսակցութեան նիւթը ամենից առաջ դարձաւ նոր գորգը, որ իր գեղեցիկ նախշերով, գոյների պայծառութիւնով և գործւածքի նրբութիւնով զբաւեց հիւրերի ուշադրութիւնը։

—Այս ինչ հիանալի գորգ է,—ասեց վաղինակը.—տիկինդ կըլինի գործած անշուշտ։

—Ո՛չ, ես կին չունիմ. ահա հինգ տարի է, որ

կինս վախճանուել է։ Այդ գորգը մեր Անահիտի գործածն է։ Բայց ինքը չի հաւանում, ասում է՝ իմ ուզածիս պէս չըդուրս եկաւ։ Մէկ նորը հինել է,—ահա այն ծածկւած ոտայինն է,- յոյս ունի, որ այն պիտի իր ուզածի պէս դուրս բերէ։

—Մեր թագաւորի պալատում էլ չըկայ մի այսպիսի գարդ,—ասեց իշխաններից մինը. յետոյ դառնալով Առանին՝ աւելացրեց.—Շատ ուրախ ենք, որ քո աղջիկն այսքան շնորհալի է։ Քո Անահիտի համբաւը մինչև թագաւորի ականջն է հասել։ Եւ ահա մեզ ուղարկել է քեզ մօտ խնամախօսութեան։ Թագաւորը կամենում է, որ քո Անահիտը տաս իր միւնուճար որդուն՝ Վաչագանին, որ իր թագաժառանգն է։

Իշխանն այս առաջարկութիւնն անելով՝ սպասում էր, թէ Առանը կամ չի հաւատալ, կամ թէ՝ սաստիկ ուրախանալուցը՝ վեր կըթռչի տեղից։ Բայց Առանը ոչ այս արաւ և ոչ էլ այն, այլ գլուխը քաշ գցեց և սկսեց ցուցամատը գորգի նախշերով սահեցնել։ Նրան այդ մտածութիւնից հանեց վաղինակը՝ ասելով.

—Ինչո՞ւ տխրեցիր, Առան եղբայր. մենք քեզ ուրախութիւն ենք բերել և ոչ տխրութիւն։ Մենք քո աղջիկը բռնի տանելու չենք, Այդ կախւած է քո միակ կամքից. եթէ կուզես՝ կըտաս, չես ուզիլ չես տալ. մեզ հարկաւոր է միայն, որ դու ուզիղն ասես, թէ դու ինչպէս կըկամենաս՝ տալ, թէ չըտալ։

—Իմ պատուական հիւրեր,—պատասխանեց Առանը,—ես շատ շնորհակալ եմ, որ մեր տէր թագաւորը իր ճոխ պալատի համար իր ծառայի աղքատիկ խրճիթից մի գարդ է ուզում տանել։ Գուցէ այդպիսի մի գարդ, ինչպէս տեսիք գորգի համար, չըկայ նրայ պալատի մէջ. բայց ճշմարիտն ասում եմ ձեզ, իմ ձեռին չէ տալն ու չըտալը։ Ահա

կըգայ ինքը, իրան կըհարցնէք. եթէ կըյօժարի, ես ոչինչ չունիմ ասելու։

Հէնց այս խօսակցութեան ժամանակ եկաւ Անահիտը, որ իրանց այգումն էր եղել, ձեռին մի գամբիւղ՝ խաղողով, դեղձով և տանձ ու խնձորով լիքը։ Գլուխ տըւաւ հիւրերին, որոնց մասին իրան իմաց էին տըւել, որ քաղաքից եկած իշխաններ են, և գամբիւղը ներս տանելով՝ մէջի եղածը դարսեց մի նոր կլեկած մեծ սիւնի մէջ, և բերաւ դրաւ հիւրերի առջև։ Ինքը գնաց իր ոտայնի մօտ, վեր առաւ նրա երեսից սաւանը և սկսեց շարունակել իր կիսատ թողած գործը։ Իշխաններն սկսեցին նայել, որ տեսնեն ինչպէս է գործում Անահիտը, և ճնացին ապշած նրա արագաշարժ մատների վրայ։

Անահիտ, ինչո՞ւ ես մենակ գործում,—հարցրեց Վաղինակը.—ես լսել եմ, որ դու աղջիկ աշակերտներ շատ ունիս։

—Այո, ունիմ մի քանի հոգի,—պատասխանեց Անահիտը,—բայց որովհետև հիմա այգեկութ է, արձակել եմ։ Այսուհետ էլ լինին, չեմ բանեցնիլ սրայ վրայ։ Այս մէկ հատը ես մենակ պէտք է գործեմ։

—Լսել եմ, որ դու քո աշակերտներին կարդալ էլ ես սովորեցնում։

—Այո, սովորեցնում եմ։ Հիմա մեզանում ամեն մարդ պարտական է կարդալ գիտենալ։ Այս վերջին օրերս էլի եկաւ ծերունի Մեսրոպը և սատիկ պատուէր տըւաւ, որ ամեն մարդ կարդալ սովորէ, որ ամեն մարդ ինքը կարդայ աւետարանը և հասկանայ։ Հիմա մեր հովիւներն էլ գիտեն կարդալ և միմեանց սովորեցնում են իրանց հօտն արածացնելիս։ Այժմ եթէ մեր անտառները պարտես, բոլոր հատ ծառերի կեղևները գրոտած կըտեսնես։ Անցեալ օրը ես մի ծառի վրայ տասը տուն սաղմոս կարդացի։ Մեր բերդերի պարիսպները, ժայռերի ճակատները ածխագրերով լցրել են։ Մէկը աւետա-

րանից մի տուն գրում է, կամ այնքան է գրում, ինչքան անգիր գիտէ, յետոյ միւսներն են շարունակում։ Ահա այսպէս սար ու ձոր լցել է գրերով։

—Մեր մէջ ուսումն այդ չափ տարածած չէ, ըստ որում մերոնք ծոյլ են, բայց ես յոյս ունիմ, որ երբ քեզ տանենք մեր քաղաքը, դու մեր ծոյլերին արիաջան կըշինես։ Մի րոպէ թող քո գործը, Անահիտ, և եկ այստեղ. քեզ բան ունիմ ասելու։ Տես, ահա քեզ համար ինչեր է ուղարկել մեր թագաւորը։

Վաղինակն այս ասելով՝ բաց արաւ մի կապոց և նրա միջից հանեց ոսկի զարդարանքներ և մետաքսէ հագուստներ։

Անահիտն այդ բանները տեսնելով՝ ամենևին չըյափշտակեց և չըտեսի նման չըզարմացաւ, այլ համեստ կերպով հարցրեց.

—Կարելի՞ է արդեօք իմանալ, թէ այս պատիւն ինչո՞ւ համար է արել ինձ թագաւորը։

—Մեր թագաւորի որդին՝ Վաչագանը քեզ տեսել է աղբիւրին. դու նրան չուր ես տըւել և նա քեզ շատ հաւանել է։ Հիմա թագաւորը մեզ ուղարկել է, որ քեզ նշանենք իր որդու վրայ։ Ահա այս մատանի է, այս ապարանջան է, այս մանեակ է, սրանք կոճակներ են, մի խօսքով քեզ համար են այս ամենն էլ։

—Ուրեմն իմ տեսած որսորդը թագաւորի որդին է եղել։

—Այո։

—Նա շատ լաւ երիտասարդ էր։ Բայց արդեօք գիտէ՞ մի որ և իցէ արհեստ։

—Նա թագաւորի որդին է, Անահիտ, նրան ինչ արհեստ է հարկաւոր. ողջ աշխարհի տէրը նա է, ամենքն էլ նրա ծառաներն են։

—Գիտեմ որ այդպէս է, բայց, ով գիտէ, աշխարհք է, այսօրւան ծառաների տէրը վաղը կարող է ինքը լինել ծառայ, թէև նա թագաւոր էլ լինի

եղած։ Արհեստը մի այնպիսի բան է, որ ամենայն մարդ պիտի գիտենայ՝ թէ ծառայ լինի, թէ տէր, թէ թագաւոր և թէ իշխան։

Այսպէս որ ասեց Անահիտը, իշխանները ճնացին իրար երեսի մռիկ տալիս։ Նայեցին Առանին, տեսան որ նա շատ հաւան է աղջկայ ասածին։ Յետոյ դարձան Անահիտին ու կրկին հարցրին.

—Ուրեմն դու թագաւորի որդուն չըպիտի ուզես միայն նրա համար, որ նա արհեստ չըգիտէ։

—Այո՛, և այս ամենը, ինչ որ բերել էք, յետ կը տանէք և կասէք, որ ես իրան շատ հաւանում եմ, միայն Թող ներէ ինձ, որ ես ուխտ եմ դրել արհեստ չըգիտցող մարդու չըգնալ։ Եթէ կամենում է, որ ես իր ամուսինը լինիմ, Թող նախ և առաջ մի արհեստ սովորի։

Իշխանները տեսան որ Անահիտը հաստատ է իր ասածին, էլ չըսատիպեցին։ Նոյն գիշերը ճնացին Առանի տանը։ Անահիտը նրանց լաւ հիւրասիրութիւն ցոյց տըւեց, և մի թագաւորի հէքիաթ պատմեց, թէ ինչպէս նա շատ արհեստներ է սովորել, յետոյ իր ժողովրդին էլ սովրեցրել և դրանով իր երկիրը շատ հարստացրել։ Իշխանները տեսնելով որ ճշմարիտ է Անահիտի ասածը՝ ամաչում էին որ իրանք ոչ մի արհեստ չըգիտեն, միայն Վաղինակն սկսեց պարծանքով ասել, որ ինքը շատ լաւ ոսկերչութիւն գիտէ, թէ նա այդ սովորել է թագաւորի պալատական վարպետից։ Մինա օրը վեր կացան գնացին և ինչ որ տեսել լսել էին, մի առ մի պատմեցին թագաւորին։

Թագաւորն ու թագուհին երբ լսեցին Անահիտի վճիռը, շատ ուրախացան, կարծելով թէ Վաչագանը չի ընդունիլ նրա առաջարկութիւնը և ձեռք կըվերցնէ նրանից։ բայց երբ կանչեցին իրան և յայտնեցին՝ նա ասեց.

—Շատ ուղիղ է ասել Անահիտը. ամենայն մարդ պէտք է մի արհեստ գիտենայ. թագաւորն

էլ մարդ է, նա էլ պէտք է գիտենայ մի արհեստ։

—Ուրեմն դու յօժար ես մի արհեստ սովորելու, —հարցրեց մայրը։

—Այո՛։

—Բայց ուղիղն ասա, ինչո՞ւ համար ես ուզում սովորել,—արհեստի կարևորութիւնն զգալով, թէ Անահիտին արժանանալու համար.

—Երկուսն էլ... ինչո՞ւ թաքցնեմ,—պատասխանեց Վաչագանը և հեռացաւ խակոյն, որ երեսի կարմրիլը ծածկէ իր ծնողներից...

Թագաւորը տեսաւ որ որդին յօժար է մի արհեստ սովորելու, խորհրդի կանչեց իշխաններից մի քանիսին, և նրանք միաձայն վճռեցին, թէ նրան վայելուչ արհեստը լաւ դիպակ գործելն է, որ չըկայ իրանց երկրի մէջ և հեռաւոր երկիրներից են բերել տալիս շատ թանգ գնով։ Մարդիկ ուղարկեցին և խորին Պարսկաստանից մէկ հմուտ վարպետ բերել տըւին Վաչագանի համար։ Մի տարւայ մէջ Վաչագանն այնպէս սովորեց դիպակ գործելը, որ իր ձեռքով նուրբ ոսկեթելից մի բաճկոնացու գործեց Անահիտի համար և Վաղինակի ձեռքով ուղարկեց նրան ընծայ։

Անահիտը՝ առանալով այդ ընծան՝ ասեց.—Հիմա ոչինչ չունիմ ասելու.

Երբ կանճարանայ,
Ջուլհակ կըդառնայ։

Յայտնեցէք թագաւորի որդուն իմ յօժարութիւնը և իմ կողմից էլ մի նոր գործած գորգը տարէք նրան ընծայ։

Վաղինակը վեր առաւ գորգը և ձին հեծնելով՝ շտապեց դէպի Բարդա, որ մի րոպէ առաջ աւետէ Վաչագանին Անահիտի յօժարութիւնը։

Սկսեցին հարսանիքի պատրաստութիւն տեսնել, և եօթն օր-եօթ գիշեր հարսանիք արին։ Այդ հարսանիքը մի չըտեսնւած մեծ տօնակատարութեան պէս եղաւ բոլոր երկրի համար։ Գիւղացոց

ուրախութեանն էլ չափ չըկար։ Նրանք ուրախանալու առիթներ շատ ունէին. նախ՝ որ շատ սիրում էին թագաւորին և նրա որդուն. երկրորդ՝ որ Անահիտը նրանց մէջ մեծ համբաւ էր ստացել, որ նրա գթութեան վրայ մեծ յոյս ունէին. երկրորդ՝ որ թագաւորը հարսանիքի օրը հրաման էր հանել, որ երեք տարի ժամանակով գիւղացոց բոլոր հարկերը ընծայւած լինին. Եւ դրա համար էլ գիւղացիք երկար ժամանակ երգում էին—

Անահիտի հարսանիքին ոսկի արև փայլեցաւ.
Անահիտի հարսանիքին ոսկի անձրև թափւեցաւ.
Մեր արտերը ոսկի դառան, մեր հորերը լցւեցան.
Մեր հարկերն անհետացան, մեր ցաւերը վերացան։
Շատ ապրի Ոսկեծղին՝
Մեր մայր թագուհին...

Է.

Անահիտի փառաւոր հարսանիքին ներկայ չէր Վաղինակը։ Մէկ օր թագաւորը նրան մի յանձնարարութիւնով ուղարկեց Պերոժ քաղաքը, որ շատ հեռու չէր Բարդայից, և այն գնալն էր որ գնաց, էլ յետ չեկաւ։ Շատ հարց ու խնդիր եղան, մանեկան, որոնեցին, բայց Վաղինակը կորաւ ու կորաւ։

Վաղինակին որոնելու գնացող մարդիկը լուր բերին թագաւորին, թէ անյայտ եղած մարդիկ շատ կան, և ոչ ոքի յայտնի չէ, թէ ինչպէս են անյայտանում այդ մարդիկը և ուր են կորչում։

Թագաւորը կարծեց թէ երևի աւազակ գերեվաճառներ կան, նրանք են գալիս գողանում և տանում Կովկասեան լեռներում բնակող բարբարոս ազգերի մէջ վաճառում։ Ճարպիկ լրտեսներ ուղարկեց այն երկիրները. նրանք գնացին, գիւղէ գիւղ, քաղաքէ քաղաք մանեկան, բայց ոչ մի հետք չըգտնելով՝ յետ դարձան յուսահատ։

Վաղինակի այդպէս անհետ կորչիլը մեծ ցաւ

պատճառեց թագաւորին։ Նա ցաւում էր ոչ միայն նրա համար, որ որդու պէս էր սիրում նրան, այլ և նրա համար, որ իր երկրի մէջ մի այնպիսի անսովոր բան էր պատահում և ինքը չէր կարողանում հետքը գտնել։

Այս դէպքից յետոյ շատ չանցած՝ թագաւորն ու թագուհին վախճանւեցին, խորին ծերութեան հասած։ Բոլոր երկիրը սուգ պահեց նրանց համար մինչև քառասուն օր։ Քառասուն օրից յետոյ հաւաքւեցին բոլոր քաղաքացիք և Վաչագանին իր հօր տեղը նստեցրին։

Վաչագանը՝ իր նախնեաց գահը բարձրանալով՝ ուզեց իր երկիրն այնպէս բարեկարագրել, որ էլ ոչ մի հոգի ոչ մի բանից դժգոհ չըլինի, ամենքն էլ ուրախ լինին, ամենքն էլ բախտաւոր։ Իր ամենամօտիկ խորհրդակիցը Անահիտն էր։ Առաջ նրա հետ էր խորհրդակցում միշտ և յետոյ ժողովրդից խելացի մարդկանց հրաւիրում խորհրդի և նրանց յայտնում իր միտքը. Բայց Անահիտը այսքանը բաւական չըհամարեց, մէկ օր նրա հետ սկսեց այսպէս խօսիլ.

—Տէր իմ թագաւոր, ես տեսնում եմ որ դու քո երկրի մասին մանրամասն և ստոյգ տեղեկութիւններ չունիս։ Քո հրաւիրած մարդիկը ամեն բան ուղիղը չեն ասում։ Նրանք քեզ միամտացնելու և ուրախացնելու համար ասում են՝ ամեն բան լաւ է և կարգին, ամենքն էլ գոհ են իրանց վիճակից։ Ո՞վ գիտէ, ինչեր են լինում այս րոպէիս քո երկրի մէջ, որոնց մասին այդ մարդիկը ոչ մի տեղեկութիւն չեն տալիս քեզ։ Դու ժամանակ առ ժամանակ պէտք է զանազան հագուստով ու կերպարանքով մանգաս երկրիդ մէջ, երբեմն աղքատի ձևով մուրացկանութիւն պէտք է անես, երբեմն մշակի հագուստով պիտի երթաս նրանց հետ մշակութիւն անես, երբեմն վաճառականութիւն, մի խօսքով՝ ամեն վիճակի մէջ էլ պէտք է մանես, որ

ամեն վիճակի էլ մօտիկ ծանօթանաս։ Աստւած ամենի համար էլ քեզանից հաշիւ է պահանջելու. դու Նրա փոխանորդն ես քո երկրի վրայ. պէտք է ամենայն ինչ տեսնես, և ըստ այնմ քո անելիքդ անես։

—Դու շատ ճշմարիտ ես ասում, Անահիտ,— ասեց թագաւորը։—Հանգուցեալ հայրս այդ սովորութիւնն ունէր, ինչ որ դու ասում ես, միայն ծերութեան ժամանակ էլ չէր կարողանում կատարել իր ուզածը։ Ես իմ որսորդութեան ժամանակը համարեա միևնոյնն էի անում, բայց հիմա ինչպէս անեմ, որ երթամ, ոչ կըկատաւարէ իմ տեղս։

—Ես ինքս կըկատավարեմ, և այնպէս կանեմ, որ ոչ ոք չի իմանալ, թէ դու բացակայ ես։

—Շատ լաւ. հէնց վաղը կարող եմ ճանապարհ ընկնել։ Քսան օր ժամանակ եմ դնում. երբ որ քսան օրն անցնի և ես չերգամ, իմացիր, որ ես կենդանի չեմ, կամ մի փորձանքի մէջ եմ ընկել։

Ը.

Վաչագան թագաւորը հասարակ շինականի հագուստով ծպտած՝ ճանապարհ ընկաւ դէպի իր երկրի հեռաւոր կողմերը։ Շատ բան տեսաւ, շատ բան լսեց, բայց ամենից անցաւ այն, ինչ որ տեսաւ իր վերադարձին Պերոժ քաղաքում։

Պերոժ քաղաքը, որ այժմ անհետացած է, գտնւում էր Կուր գետի ափումը։ Բնակիչները կռապաշտ պարսիկներ էին։ Կային և հայ քրիստոնեաներ, բայց շատ սակաւ էին և չունէին ոչ քահանայ և ոչ աղօթատուն։

Քաղաքի կենտրօնումը կար մի շատ ընդարձակ հրապարակ, որ քաղաքի շուկան էր. նրա չորս կողմն էին գտնւում բոլոր արհեստաւորների և վաճառականների խանութները։

Մի օր այդ հրապարակում նստած էր Վաչագա-

նը. մէկ էլ տեսաւ, ահա մի խումբ մարդիկ են գալիս և բերում են իրանց հետ մի փառաւոր և սպիտակ մօրուքով ծերունի՝ աչ ու ձախ բազուկները բարձրացրած։ Ծերունին շատ ծանր էր գալիս. նրա առջև սրբում էին ճանապարհը և աղիւսներ դնում ոտների տակին։ Վաչագանը մօտեցաւ մի մարդու և հարցրեց, թէ ով է այդ ծերունին։ Մարդը պատասխանեց.

—Սա մեր մեծ քրմապետն է, մի թէ չես ճանաչում։ Տես որքան սուրբ է, որ ոտը գետնին չի դնում, որ չըլինի թէ մի որ և իցէ միջատ ընկնի ոտքի տակը և սպանւի։

Հրապարակի ծայրումը մի կապերտ փռեցին, և քրմապետը չոքեց նրա վրայ, որ հանգստանայ։ Վաչագանը գնաց նրա դիմացը կանգնեց, որ տեսնի ինչ է խօսում այդ մարդը կամ ինչ է անում։ Քրմապետը շատ սրատես էր. նա էլ Վաչագանի վրայ նայեց և նկատելով նրա օտարական լինելը և առաջին անգամ իրան տեսնելը՝ ձեռով արաւ, որ գնայ մօտը։ Վաչագանը մօտեցաւ։

—Դու ով ես, ինչ գործի ես,—հարցրեց քրմապետը։

—Ես մի օտար բանւոր եմ, պատասխանեց Վաչագանը,—եկել եմ այս քաղաքը մշակութեան։

—Շատ լաւ, կըգաս ինձ հետ. ես քեզ գործ կըտամ և լաւ կըվարձատրեմ։

Վաչագանը գլուխ տալով՝ յօժարութիւն յայտնեաւ և գնաց կանգնեց նրա հետ եղած մարդկանց մօտ։

Քրմապետն իր մօտ եղած քուրմերին մի քանի խօսք փսփսաց և նրանք ցրուեցին այս ու այն կողմ, և մի քանի րոպէից վերադարձան այլևայլ պաշարներով մշակների շալակը տըւած։

Երբ որ բոլոր քուրմերը եկան, քրմապետը վեր կացաւ և մի և նոյն հանդիսով ճանապարհ ընկաւ

դէպի իր բնակարանը։ Վաչագանն էլ լուռ ու մունջ հետևեց նրան աւելի հետաքրքրութիւնից շարժւած, որ տեսնի ինչով են զբաղւում այդ քուրմերը, կամ ինչ մարդ է քրմապետը, ինչ բարեգործու-թիւններ ունի, որ այդպէս սուրբի պէս պաշտւում է։ Այնպէս գնացին մինչև քաղաքի ծայրը։

Այդտեղ քրմապետը՝ օրհնելով ճանապարհ ձգող ջերմեռանդ կռապաշտներին՝ յետ դարձրեց. միայն իր քուրմերը և բեռնակիր մշակներն ու Վաչագանը։ Դրանք շարունակեցին իրանց ճանապարհը և հեռանալով քաղաքից մօտ երկու վերստ՝ հասան մի պարսպապատ շէնքի և կանգ առան նրա երկաթի դռան մօտ։ Քրմապետն իր գրպանից հանեց մի ահագին բանալի, բաց արաւ դուռը և ամենին ներս անելով՝ կրկին կողպեց։ Այստեղ Վաչագանը մի անսովոր սարսուռ զգաց, տեսնելով, որ այստեղից իր կամքով դուրս գնալու հնար չի ունենալու։ Վաչագանի հետ եղած մշակներն էլ առաջին անգամն էին մտնում այս շէնքի մէջ։ Նրանք ամենքն էլ իրար երեսի նայելով՝ սկսեցին փսփսալ, թէ՝ ո՞ւր բերին մեզ այս մարդիկը։ Վերջապէս պարսպի համարակապ ճանապարհն անցնելուց յետոյ, դրանց առջև բացւեց մի շատ ընդարձակ հրապարակ, որի մէջ տեղը կար մի գըմբէթայարկ մեհեան, մանր խուցերով շրջապատած։ Մշակների բեռները ցած դնել տրւին այդ խուցերի մօտ, և նրանց՝ Վաչագանի հետ միասին՝ քրմապետը տարաւ մեհեանի միւս կողմը. այնտեղ բաց արաւ մի նոր երկաթի դուռը և ասեց.

—Գնացէք ներս. այդտեղ ձեզ գործ կտան։ Նրանք մոլորւածի պէս լուռ ու մունջ ներս մտան, և քրմապետն այդ դուռն էլ փակեց նրանց քամակից։ Այստեղ մեր օձարականները նոր ուշքի եկան, նոր աչք բաց արին և տեսան, որ մի սոսկալի ճանապարհի վրայ են կանգնած։

Թ.

Տղէք, ի՞նչ տեղ ենք մենք, չգիտէ՞ք,—հարցրեց Վաչագանը։

—Ես գիտեմ որ մենք Թակարդի մէջ ենք ընկել, էլ այստեղից ազատւելու չենք,—ասեց մէկը։

—Բայց չէ՞ որ այս մարդը սուրբ մարդ է, մի՞թէ այդպէս բան կանի,—ասեց մի ուրիշը։

—Ինչո՞ւ չի անիլ. երևի այս սուրբ մարդը գիտէ որ մենք մեղաւոր ենք, սրա համար մեզ բերաւ ձգեց իր քաւարանը, որ մեղքներս ապաշխարենք։

—Տղէք, կատակի ժամանակ չէ,—ասեց Վաչագանը։—Ես կարծում եմ, որ այդ դաժան ծերունին սուրբի անուն առած մի զարհուրելի դև է, և մենք կանգնած ենք այժմ նրա դժոխքի ճանապարհի վրայ։ Տեսէք ինչպէս խաւար է, ինչպէս մութ, և դեռ ո՞վ գիտէ ի՞նչ տանջանքներ կան մեզ համար պատրաստւած։ Բայց ինչո՞ւ ենք քարացել կանգնել այստեղ. էլ յապաղեան բացւելու չէ այս դուռը. եկէք առաջ գնանք, տեսնենք ո՞ւր է տանում մեզ այս անդառնալի ճանապարհը։

Այդ ճանապարհով բաւականին առաջ գնացին և յանկարծ նրանց աչքին մի ճրագի աղօտ լոյս երևաց։ Գնացին դէպի ճրագը, և նրանց առջև բացւեց մի լայն քարայատակ, որի չորս կողմից լսւում էին խառնաշփոթ աղաղակներ։ Վեր նայեցին և տեսան, որ մի արհեստական քարայրի մէջ են գտնւում։ Դա շինւած էր ցորենի հորի պէս. վերևից սկսել էին փորել ժայռը, և որքան ցած էին իջել, այնքան լայնացրել էին, և այս կերպով միապաղաղ քարի մէջ շինել էին մի սոսկալի գմբէթաձև ընդարձակ սրահ։

Մեր կալանաւորները մի կողմից ապշած զննում էին անելանելի բանտը, միւս կողմից խլըշած ականջ էին դնում, որ տեսնեն ո՞րտեղից էին գա-

ւիս խառնաշփոթ ձայները։ Հէնց այս միջոցին նըրանց դիմացը երևաց մի սուեր, որ հետզհետէ մօտենալով ու թանձրանալով՝ մարդու նմանութիւն առաւ։ Վաչագանն առաջ գնաց դէպի այդ սուերը և բարձրաձայն կանչեց.

—Ո՞վ ես դու, սատանայ ես, թէ մարդ, մօտերիր մեզ և ասա՝ ո՞րտեղ ենք գտնուում մենք։

Ուրուականը մօտեցաւ և դողդողալով կանգնեց նորեկների առջև։ Դա մի մարդ էր, մեռելի կերպարանքով, աչքերը խոր ընկած, այտերը ցցւած, մազերը թափւած, մի մերկ կմախք, որի բոլոր ոսկորները համբրւում էին։ Այդ կենդանի մեռեալը՝ սրացած ծնօտիքը հազիւ շարժելով՝ հեկեկալով ու կակազելով՝ ասեց.

—Եկէք իմ եռևիցս. ես ձեզ ցոյց կըտամ, թէ ինչ տեղ էք ընկել դուք։

Գնացին մի նեղ անցքով և մտան մի ուրիշ բոյն. այն տեղ տեսան սառը գետնի վրայ վայր թափւած մերկ մարդիկ, որոնք աղեկտուր տնքոցով փչում էին իրանց վերջին շունչը։ Այդտեղից անցան մի ուրիշ որջ, և այնտեղ տեսան կարգով շարւած ահագին կաթսաներ, որոնց մէջ կերակուր էին եփում մի քանի մեռելագոյն մարդիկ։ Վաչագանը մօտեցաւ այդ կաթսաներին, որ տեսնէ ինչ է նրանցում եփւածը, և երբ տեսաւ, քաշմեռելով յետ քաշւեց և ընկերներին չասեց, թէ ինչ էր տեսածը։ Այդտեղից մտան մի աւելի երկար սրահ, և այդտեղ տեսան զանազան արհեստաւորները խառնիխուռն աշխատելիս. մի քանիսը մի-մի բան աղնեգործում, միւսները նրանց կողքին մի-մի բան էին հիւսում, մի քանիսը կար էին անում, միւսները ոսկերչութիւն։ Այսպէս հարիւրաչափ մարդիկ այստեղ աշխատում էին աղօտ լուսի տակ՝ ամենքն էլ մեռելի գոյն առած։

Այս ամենը ցոյց տալուց յետոյ՝ առաջնորդող

մարդը կրկին տարաւ նրանց առաջւայ սրահը և այնտեղ ասեց.

—Այն դիւական ծերունին, որ ձեզ խաբել բերել է, մեզ ամենիս էլ նա է բերել այստեղ։ Թէ քանի ժամանակ է, որ ես այստեղ եմ, ինձ յայտնի չէ, որովհետև այստեղ օր ու գիշեր չըկայ, այլ կայ միայն մի անվերջ խաւար։ Այնքան միայն գիտեմ, որ ինձանից առաջ և ինձ հետ եկող մարդիքը կոտորւել են ամենքն էլ։ Այստեղ բերում են երկու տեսակ մարդիկ՝— արհեստաւոր և անարհեստ։ Արհեստաւորներին աշխատեցնում են մինչև իրանց մահը, իսկ արհեստ չըգիտեցողներին տանում են սպանդանոց, որ ես ձեզ ցոյց չըտրւի, և այնտեղից բերում են այն խոհանոցը, որ դուք տեսաք։ Ահա մի այսպիսի զարհուրելի տեղ է այս տեղը։ Ծերունի դևը մենակ չէ. նա ունի հարիւրաւոր գործակիցներ, որոնք ամենքն էլ քուրմեր են։ Այս դժոխքի վրայ է նրանց բնակարանը։

—Դու այս ասա, հիմա մեզ ինչ են անելու,— հարցրեց Վաչագանը։

—Մի և նոյնը կանեն, ինչ որ միւսներին։ Ով որ ձեզանից արհեստ գիտէ, կապրի մինչև մեռնիլը, իսկ ով որ չըգիտէ, նրան կըտանեն սպանդանոց։ Ես հիմա մեռելատանն եմ, ըստ որում յայտնեցի, որ էլ աշխատելու ուժ չունիմ։ Բայց Աստւած հոգիս չի առնում. երևի ուզում է ինձ լոյս աշխարհի արժանացնել. և, գիտէք, ես հաւատում եմ, որովհետև երազումս ինձ երևաց մի կինարմատ՝ գլխին թագաձև սաղաւարտ, ձեռին երկսայրի սուր, մի հրեղէն ձիու վրայ նստած՝ և ասեց ինձ. «Մի յուսահատւիր, վաղինակ. ես կըգամ շուտով և ձեզ ամենիդ կազատեմ»։ Ես վաղուց մեռած կըլինէի, եթէ այդ հրաշագեղ թագուհին ինձ յոյս տըւած չըլինէր. նրա տըւած յոյսը իմ հոգուս սնունդ է տալիս, և ինչքան թոյլ եմ մարմնով, այնքան ու-

ժեղ եմ հոգւով։ Ա՛խ, իմ Վաչագան, ո՞րտեղ ես, ինչո՞ւ ես մոռացել քո Վաղինակին...

Վաչագանը, որ մինչև այս ժամանակ մի թըմբրած վիճակի մէջ էր, և պատմողի խօսքերը միայն զնգզնգացնում էին նրա ականջի թմբուկը՝ առանց տպաւորւելու մտքի վրայ, վերջին խօսքերից ըսթափւեց իբրև մի խոր քնից, և սկսեց յիշել երազի նըման «թագուհի», «Վաղինակ», «Վաչագան» բառերը։ Ուրեմն սա Վաղինակն է, մտածեց նա։ Այս մտածելով և ուշքի գալով ուզում էր վրան ընկնել և գլուխ, ուզում էր յայտնել, թէ ինքն է Վաչագանը, բայց մէկ էլ չըհաւատալով իր ականջին՝ կրկին հարցրեց, թէ ո՛վ է նա և ինչպէս է ընկել այստեղ։

Վաղինակն իր պատմուքիւնն սկսեց շատ հեռւից և Վաչագանին անծանօթ առարկայից։ Իսկ այդ միջոցին Վաչագանն սկսեց մտածել, որ լաւ չի լինիլ, եթէ ինքը յանկարծ յայտնէ իր ով լինելը, ըստ որում մի այդպիսի յայտնութիւն՝ թէ ուրախութիւն և թէ կսկիծ լինելով՝ կարող էր սրի պէս կտրել նրա կեանքի բարակացած թելը։ Այս պատճառով ընդհատեց նրա պատմուքիւնը՝ ասելով—

—Քո անունը, ինչպէս լսեցի, Վաղինա՞կ է։

—Վաղինակ է, այո՛, Վաղինակ... ես մի ժամանակ...

—Եղբայր Վաղինակ, շատ խօսելը քեզ շատ վնաս է։ Սպասի՛ր մինչև քո երազը կատարւի։ Ես հաւատում եմ քո երազին, և շնորհակալ եմ, որ յայտնեցիր մեզ։ Այսուհետև մենք էլ կապրինք այդ յուսով։ Լաւ կանես, որ քո միւս արհեստակիցներին էլ յայտնես քո երազը։ Ես ինքս երազ մեկնող եմ. հաւատացնում եմ քեզ, որ երազդ պիտի կատարւի տեսածիդ պէս։ Բայց ահա ոտի ձայն է գալիս, դու գնա քո տեղը։

Ժ.

Վաչագանի հետ եկածները թւով վեց հոգի էին։

Հարցրեց նրանց, թէ արդեօք մի որևիցէ արհեստ գիտե՞ն։ Մինն ասեց, որ գիտէ կտաւ գործել, երկրորդը դերձակութիւն գիտէր, երրորդը մետաքսագործ էր, միւս երեքը ոչ մի արհեստ չըգիտէին։

—Վնաս չունի, որ դուք արհեստ չըգիտէք,—ասեց Վաչագանը.—ես կասեմ, որ դուք ամենքդ ինձ արհեստակից էք, իսկ ես շատ լաւ արհեստ գիտեմ։

Ոտնաձայնը արձագանք տալով՝ հետզհետէ մօտեցաւ, և նրանց առջև կանգնեց մի դաժանատեսիլ քուրմ՝ հետն առած մի խումբ զինւած մարդիկ։

—Դո՞ւք էք նոր եկածները,—հարցրեց քուրմը։

—Այո՛, ծառաներդ ենք,—պատասխանեց Վաչագանը։

—Ձեզանից ո՞վ է արհեստ իմանում.

—Մենք ամենքս էլ գիտենք,—ասեց Վաչագանը. գիտենք շատ թանգագին դիպակ գործել։ Մեր գործածածքի մի կշիռը հարիւր կշիռ ոսկի կարժէ։ Մենք մեծ գործարան ունէինք, բայց պատահմամբ կրակ ընկաւ այրեց, և մենք ընկանք պարտքի տակ և խեղճացանք։ Եկանք քաղաք, որ մի գործ գտնենք մեզ համար, հանդիպեցինք մեծ քրմապետին, և նա մեզ բերաւ այստեղ։

—Շատ լաւ. բայց մի՞թէ ճշմարիտ այդչափ թանգ կարժէ ձեր գործածածքը.

—Մեր ասածի մէջ սուտ չըկայ. չէ՞ որ պիտի ստուգէք։

—Իհարկէ, ես շուտով կիմանամ, թէ որքան ճշմարիտ է ձեր ասածը. հիմայ ասացէք, ի՞նչ նիւթեղէն և գործիքներ են հարկաւոր, որ ես բերեմ։

Վաչագանը յայտնեց մի առ մի, թէ ինչ ու ինչ է հարկաւոր։ Մի քանի ժամից յետոյ ամեն ինչ պատրաստ էր։ Քուրմը պատւիրեց, որ երթան արհեստատունը, այնտեղ աշխատեն և նրանց հետ կերակրւին։

—Այնտեղ մեր գործը լաւ չի յաջողւիլ,—ասեց

վաչագանը։—Մեզ հարկաւոր է ջոկ և ընդարձակ տեղ, և այս տեղը ամենից յարմար է։ Մեր գործի նըբութիւնը պահանջում է առատ լոյս. աղօտ լոյսի տակ ոչինչ չենք կարող կատարել։ Իսկ ինչ վերաբերում է մեր կերակուրին, պէտք է գիտենաք, որ մենք մսակեր չենք, սովոր չենք այդ կերակուրին. հէնց որ միս ուտենք, իսկոյն կըմեռնենք, և դուք կըզրկուիք այն մեծ օգուտից, որ մեզանից կարող էք ստանալ։ Ճշմարիտն եմ ասում, որ մեր գործի մի քաշը հարիւր քաշ ոսկի կարժէ...

—Շատ լաւ,—ասեց քուրմը,—ես ձեզ համար կուղարկեմ հաց և բուսեղէն կերակուր. դուք կուտենաք և առատ լոյս. բայց եթէ ձեր գործը այնպէս չըլինի, ինչպէս խոստանում էք, ես ձեզ ամենից սպանդանոց կուղարկեմ, և սպանելուց առաջ՝ ենթարկել կըտամ չարաչար տանջանքների։

—Մեր ասածի մէջ ոչինչ սուտ չըկայ. եթէ ուզում էք մեր խոստացած շահն ստանալ, պէտք է միայն կատարէք մեր ուզածը։

Քուրմը կատարեց իր խոստումը։ Նրանց համար ուղարկում էր սպիտակ հաց, կանաչեղէն, կաթ, մածուն, պանիր և զանազան չոր ու թարմ մրգեր։ Վաղինակն էլ մանակացեց այդ սնունդին. միւսներին էլ նշխարքի պէս բաժանում էին ծածկաբար սպիտակ հացից, որ հաղորդութեան տեղ էր բռնում և կենաց հացի պէս կենդանութիւն տալիս նրանց։ Վաղինակը նոր սնունդի ազդեցութիւնով հետզհետէ կազդուրուեց և կենդանի մարդու կերպարանք առաւ։ Վաչագանն սկսեց իր գործը և իր ընկերներին էլ իրան օգնական շինեց։ Կարճ միջոցում պատրաստեց մի կոր շատ պատուական դիպակ այնպիսի նախշերով, որոնց եթէ ուշադրութեամբ զննէին և իմանային նրանց խորհուրդը, նոյն դժողքի պատմութիւնը պիտի կարդային նրանց մէջ։

Քուրմը եկաւ, տեսաւ պատրաստած դիպակը, և մնաց հիացած։ Վաչագանը ծալելով իր գործն

ինչպէս պէտք էր և յանձնելով քուրմին՝ ասեց.

—Ես առաջ ասեցի, որ մեր գործւածքի մի կըշիռը հարիւր կշիռ ոսկի կարժէ, բայց հիմա հարկաւոր եմ համարում ասել, որ սա իմ ասածի կրկնապատիկը կարժէ, ըստ որում սրա վրայ կան այնպիսի թալիսմաններ, որ հագնողին միշտ զբաղեցնում և ուրախ կըպահեն։ Այս կայ միայն, որ հասարակ մարդիկը սրա գինը չեն իմանալ։ Սրա գինը կիմանայ միայն Անահիտ թագուհին, և բացի նրանից ոչ ոք չի էլ համարձակիլ հագնիլ մի այսպիսի թանգագին գործւածք։

Արծաթամոլ քուրմը աչքերը չորս բաց արաւ, երբ որ իմացաւ դիպակի իսկական արժէքը։ Այս մասին նա խորամանկ քրմապետին ոչինչ չըյայտնեց և մինչև անգամ ցոյց չըտուաւ նրան։ Ուզեց որ թագուհու տեսութեանը միայն ինքն արժանանայ, և նրանից առած աւելի ոսկիքը ինքը վայելի...

ԺԱ.

Անահիտը Վաչագանի բացակայութեան ժամանակ լաւ էր կառավարում երկիրը, և ամենքն էլ գոհ էին, առանց իմանալու, թէ նա է կառավարողը. բայց ինքը սաստիկ մտատանջութեան մէջ էր ընկել. ըստ որում քանի օրից արդէն տասն օր էլ անցել էր, բայց թագաւորը չէր վերադարձել։ Նա գիշերը հանգիստ չուներ. սարսափելի երազներ էր տեսնում և յանկարծ վեր թռչում։ Ամեն բան փոխւել էր նրա աչքումը և ամեն ինչ մի անսովոր յատկութիւն ստացել։ Զանգին անդադար օռնում ու վնգստում էր և թագուհու ոտները ընկնելով աղիողորմ կերպով կլանչում ու նրան աւելի ևս մտատանջութեան մէջ ձգում։ Վաչագանի ձին անընդհատ խրխնջում էր մայրը կորցրած քուռակի պէս և իր ախորժակը կորցնելով օրէցօր նիհարում էր։ Մարի հաւերը կանչում էին աքաղաղի պէս,

իսկ աքաղաղները փոխանակ լուսաբացին կանչելու՝ երեկոյին էին ծկլթում փասիանի ձայնով։ Պարտիզի սոխակները ընդհատել էին իրանց ծլվլոցը, և նրանց տեղ լսւում էր գիշերները բուերի վայնը։ Այլևս չէին քչքչում Թարթառի կոհակները ուրախ-ուրախ թռչկոտելով, այլ վշշ-վշշ, վշշ-վշշ անելով անցնում էին պարսպի տակով տխուր ու տրտում։ Աբլիասիրտ Անահիտը մի անսովոր երկիւղի մէջ էր ընկել և իր իսկ աւերը նրա առջև վիշապի պէս էր ձգւում։ Մի հասարակ թխկոցից, մի սովորական գոչիւնից նա վեր էր թռչում և սարսռում։ Երբեմն ուզում էր կանչել իշխաններին և յայտնել նրանց թագաւորի բացակայութիւնը և անյայտանալը, բայց վախենում էր, թէ մի գուցէ դրա հետևանքը վատ լինի, մի ապստամբութիւն ծագի երկրի մէջ և խռովութիւն ընկնի։

Մէկ առաւօտ էլ՝ սաստիկ սրտնեղած՝ ման էր գալիս պարտիզումը, իր ծառաներից մինը ներս եկաւ և յայտնեց նրան, թէ մի օտար վաճառական է եկել և ասում է, որ մի երևելի բան ունի վաճառելու թագուհուն։ Անահիտի սիրտն սկսեց մի անսովոր կերպով տրոփել։ Հրամայեց՝ որ շուտով ներս բերեն այն մարդուն։

Ներս եկաւ մի դաժան կերպարանքով մարդ, խոր գլուխ տըւաւ թագուհուն և արծաթէ սինուվրայ դրած մի ոսկէ դիպակ դրաւ թագուհու առջև։ Անահիտը վեր առաւ քննեց դիպակը և ուշ չդադարձնելով նախշերի վրայ՝ հարցրեց գինը։

Իր կշռովը երեք հարիւր կշիռ ոսկի կարժէ, ողորմած թագուհի։ Ուզում եմ ասել, որ ինձ վրայ այդքան է նստել միայն գործքն ու նիւթը. իսկ աշխատանքն էլ թողնում եմ քո ողորմութեան կամքին։

—Մի՞թէ այդքան թանգ կարժէ։

—Ողջ լինի թագուհին, դրա մէջ կայ մի այնպիսի զօրութիւն, որ անգնահատելի է։ Դրա վրայ

եղած նկարները հասարակ նախշեր չեն, այլ թալիսմաններ են, իսկ այդ թալիսմանները այն զօրութիւնն ունին, որ դրա հագնողին միշտ զբաղթ, միշտ ուրախ կըպահեն։ Դրա հագնողը կեանքի մէջ տխրութիւն չի տեսնիլ։

—Մի՞թէ այդպէս,—ասեց Անահիտը և սկսեց բաց անիլ դիպակը և ուշի ուշով զննել նրա նկարները, որոնք ոչ թէ թալիսմաններ, այլ ծաղկագրեր էին։ Անահիտը լուռ ու մունջ կարդաց նրանց մէջ հետևեալ խօսքերը.

«Իմ աննման Անահիտ, ես ընկել եմ մի սոսկալի դժոխքի մէջ։ Այս դիպակը բերողը նոյն դժոխքի վերակացուներից մէկն է։ Ինձ մօտ է և վաղինակը։ Դժոխքը գտնւում է Պերոժ քաղաքից դէպի արևելք մի պարսպապատ մեհեանի յատակում։ Եթէ շուտ օգնութեան չըհասնես, մենք կորած ենք յաւիտեան։

«Վաչագան»

Անահիտը մէկ անգամ կարդալով չըբաւականացաւ. երկրորդ և երրորդ անգամ էլ կարդաց, ըստ որում իր աչքերին չէր հաւատում. կարդաց և չորրորդ անգամ. միայն այս անգամ ոչ թէ կարդում էր իսկապէս, այլ մտածում էր, թէ ինչ անելու է։ Աչքը ձգած գրերին՝ երկար մտածելուց յետոյ՝ դարձաւ դէպի վաճառականի հագուստի մէջ ծպտած քուրմը և ուրախ դէմքով ասեց.

—Դու ճշմարիտ ես ասում. քո դիպակի նկարները ուրախացնելու զօրութիւն ունին։ Ես այսօր շատ տխուր էի, բայց այս րոպէիս մի անպատմելի ուրախութիւն եմ զգում։ Իմ կարծիքով այս դիպակը անգնահատելի է։ Եթէ սրա համար իմ թագաւորութեան կէսը պահանջէիր, ես խնայելու չէի։ Բայց գիտե՞ս ինչ կայ. իմ կարծիքով ոչ մի գործ կարող չի իր գործողից աւելի զօրաւոր լինել։ Այսպէ՞ս է թէ ոչ։

—Թագուհին ողջ լինի, քո կարծիքը շատ ճըշ-

մարիա է. արարածը կարող չէ հաւասարիլ արարողին։

—Եթէ դու էլ գիտես որ այդպէս է, պէտք է բերես ինձ մօտ սրա գործողին, որ ես վարձատրեմ նրան նոյնպէս, ինչպէս և քեզ։ Դու էլ լսած կըլինես, որ ես արհեստին մեծ նշանակութիւն եմ տալիս, և պատրաստ եմ ամեն մի լաւ արհեստաւորին նոյնպէս վարձատրել, ինչպէս իմ ամեն մի քաղ զօրականին։

—Ողորմած թագուհի, ես տեսած չեմ դրա գործողին և չեմ ճանաչում։ Ես մի վաճառական մարդ եմ, այս կողմը գնել եմ Հնդկաստանում մի հրէայից, իսկ հրէան գնել էր մի արաբից, արաբն էլ ով գիտէ ուսմից կամ ուր աշխարհից։

—Բայց դու՝ կարծեմ՝ ասեցիր, թէ գործն ու նիւթը այսքան կարժէ, և չասեցիր թէ՝ ես այսքանով եմ գնել. դրանից երևաց, որ դու ինքդ ես գործել տըւել։

—Ողորմած թագուհի, ինձ այդպէս էին ասել Հնդկաստանումը, ես էլ…

—Սպասիր, ուրտեղ է քո Հնդկաստանը. այստեղից մինչև Պերոժ կըլինի։

—Ոչ, ողորմած թագուհի, Պերոժը մեր կշտին է, իսկ Հնդկաստանը երեք-չորս ամսւան ճանապարհ է։

—Բայց գիտես, եթէ ես ուզենամ, կարող եմ քո Հնդկաստանը մինչև Պերոժ մօտեցնել։ Կարող ես ասել ինձ, թէ դու ով ես, ինչ տեղից ես, ինչ կրօնի ես, ինչ ազգից ես, ուրտեղ ես ծնւել, ուրտեղ ես կենում այժմ, ինչ գործի ես ծառայում։

—Ողորմած թագուհի…

—Լռիր, ես քեզ ողորմելու չեմ. քո բերած թալիսմանները ինձ յայտնեցին քո ով լինելդ։ Ծառաներ, բռնեցէք այս մարդուն և ձգեցէք մթին բանտի մէջ։

ԺԲ.

Վաչագանն իր ազատւելու մասին էլ ոչ մի կասկած չունէր։ Կամենալով ընկերների մէջն էլ ազատութեան յոյսը սաստկացնել, դարձաւ դէպի Վաղինակը և ասեց.

—Եղբայր Վաղինակ, մի երազ էլ ես տեսայ բոլորովին քո տեսածի նման։ Ես այնպէս եմ կարծում, թէ մենք այսօր թէ այս գիշեր պիտի ազատւինք։ Բայց գիտե՞ս ինչ կայ, Վաղինակ. մենք եթէ այս խաւարից յանկարծ լոյս աշխարհ դուրս գանք, դրսի լոյսը մեզ համար այնքան սաստիկ կըլինի, որ մենք ոչինչ չենք տեսնիլ, և կարելի է թէ մեր աչքերը ջնասւին էլ։ Այս բանը ես նրա համար եմ ասում, որ երբ դուրս գալու կըլինենք և կըտեսնէք, որ լոյսը ծակծկում է կամ ոչինչ չէք տեսնում, փակեցէք աչքներդ, մինչև քիչ-քիչ սովորէք։ Ես շատ եմ տեսել մթին բանտից դուրս եկած մարդիկ, նրանցից եմ իմանում։

—Երանի թէ դուրս գանք միայն այս սպանդարանից, թէկուզ աչքներս կուրանայ, ջնաս չունի. բայց, վարպետ եղբայր, քո այդ ասածը մի բան ձգեց միտս, որ չեմ կարող չասել։ Մի անգամ ես և թագաւորի որդին որսորդութիւն անելիս՝ իջանք մի աղբիւրի մօտ՝ շատ դադրած ու քրտնած։ Մօտակայ գիւղի աղջկէքը շրջապատել էին աղբիւրը և հերթով լցնում էին իրանց ամանները։ Իշխանս չուր ուզեց. աղջիկներից մինը լցրեց փարչը, որ բերի տայ իրան, մի ուրիշ աղջիկ առաւ նրա ձեռից փարչը և դարտակեց։ Յետոյ ինքն նորից սկսեց լցնել, բայց էլի դարտակեց, և այսպէս նա կրկնեց քսան թէ երեսուն անգամ, սուտ չեմ կարող ասել, լաւ միտս չէ։ Իմ բարկութիւնը սաստիկ եկաւ, բայց իշխանիս շատ հաճելի թւաց աղջկայ արարմունքը, մանաւանդ երբ չուրը բերելուց յետոյ յայտնեց, թէ իր միտքը չար չէր, այլ տեսնելով որ

յոգնած ու քրտնած ենք՝ հարկաւոր համարեց ուշ հասցնել սառը ջուրը, մինչև մենք փոքը ինչ շունչ առնենք և հովանանք։ Հիմա քո ասածն էլ նրա ասածի նման է. և գիտէք արդեօք, գուցէ հէնց այն ջուր տրտող աղջիկն է այժմ մեր թագուհին։ Վաչագանը նրան տեսնելուց յետոյ՝ էլ ուրիշ աղջիկ չուզեց, վճռաբար ասեց. կուզէք՝ նա է, չէք ուզիլ՝ նա է։ Թագաւորը ճարահատած՝ ինձ ուղարկեց նրա հօր մօտ հարսնախօսութեան. բայց աղջիկը չըյօժարեց, թէ՝ ես արհեստ չըգիտեցողին չեմ ուզիլ։ Ես այն ժամանակ մտքումս ծիծաղեցի, բայց էլի իշխանս իմացաւ նրա խելացի միտքը և մի տարբումը սովորեց շատ գեղեցիկ դիպակ գործել՝ բոլորովին քո գործածի պէս։ Իսկ ես, երբ որ ընկայ այս դժոխքի մէջ, նոր իմացայ նրա խօսքի նշանակութիւնը...

—Բայց դու ինձ ա՛յս ասա, եղբայր Վաղինակ, պատճառն ինչ է, որ մենք թագուհուն ենք տեսնում երազներումս, և ոչ թէ թագաւորին։

—Ո՞վ գիտէ. այդ բանը դու ինձանից լաւ կիմանաս, ըստ որում երազի մեկնողը դու ես. և, ներիր ինձ, որ երեսիդ ասեմ, ասածիս մէջ կեղծաւորութիւն չըկայ, դու իմ աչքումս մի իմաստուն մարդ ես երևում. դու որ կարողացար դժոխքի արբանեակներից մարդու կերակուր ստանալ, դու էլի շատ բան կարող ես անել, և ես դեռ զարմանում եմ, որ մի հրաշքով յանկարծ չես չքացնում այս տարտարոսը և մեզ ամենիս փրկութիւն տալիս։ Եթէ Աստուած տայ, որ մենք այս դժոխքից ազատւինք, ես հաւատացած եմ, թագաւորն իսկոյն կըկանչէ քեզ և իր ամենամօտիկ խորհրդակիցը կանէ։

—Ես այդ, իհարկէ, քո շնորհիւ կըլինի. ըստ որում թագաւորին ես ծանօթ չեմ։ Բայց ո՞վ գիտէ, թէ ինքը թագաւորն ինչ վիճակի մէջ է այժմ. գուցէ նա էլ մի ուրիշ դժոխքի մէջ է ընկել և ինձ

նման զարբաբ է գործում։ Բա էլ ո՞ր օրւան համար է ջուլհակ դառել։

—Քո խօսքերը խորհրդաւոր են թւում ինձ... բայց չէ... ինչպէս կարելի է, որ իմ Վաչագանին քո օրն ընկած տեսնեմ, լաւ է, որ ես մեռնիմ այս րոպէիս։

—Իմ խօսքերի մէջ ոչինչ խորհրդաւոր բան չըկայ, եղբայր Վաղինակ. ես այն եմ ասում, ինչ որ սրտինս է։ Իմ կարծիքով՝ թագաւորն էլ մեզ նման մի մահկանացու մարդ է, մեզ նման ամեն փորձութիւնների ենթակայ։ Մենք հիւանդանում ենք, նա էլ է հիւանդանում. մեզ սպանում են, գերի են տանում, նրան էլ են այնպէս անում։ Նա էլ է ջուրն ընկած ժամանակ մեզ նման խեղդւում, կրակն ընկած ժամանակ մեզ պէս այրւում. նրա կերածն էլ է մի փոր հաց, այն էլ գուցէ աւելի դառն...

—Այդ շատ ճշմարիտ ես ասում, վարպետ եղբայր. բայց իմ կարծիքով թագաւորն այնքան խոհեմ պէտք է լինի, որ ինձ նման լոկ հետաքրքրութիւնից շարժւած՝ քրմապետի եանից չերթայ և ընկնի նրա դժոխքի մէջ։

—Այդ մի փորձանք է, եղբայր Վաղինակ։ Մի՞թէ թագաւորը կարող է կարծել, որ սուրբ քըրմապետը մի զարհուրելի դև է. մի՞թէ նա կարող է կարծել, թէ կան այնպիսի մարդիկ, որոնք քաւութեան եղեռնագործութիւնը իրանց համար մի զւարճութիւն են համարում։ Ջէ, Վաղինակ, աշխարհիս երեսին ոչ մի մահկանացու ազատ չէ փորձանքից. այս օրւան բախտաւորը կարող չէ իմանալ, թէ վաղը ինչ անբախտութեան մէջ պիտի ընկնի։ Բայց ուրիշ բան է, եթէ վերահաս վտանգը առջևդ կանգնած՝ երևում է իր իսկական կերպարանքով։ Ապա քը գլխին մարդը՝ երբ որ պատահում է մի վարար գետի, գլխապատառ ներս չի ընկնում, այլ փնտրում է նրա ծանծաղուտը։ Դու ինչ կուզես ասա, բայց

մեր տեսած երազը ցոյց է տալիս, որ թագաւորը նմանապէս ընկած է մի փորձանքի մէջ, և իմ սիրտն ասում է, որ նա կազատուի միայն այն ժամանակ, երբ որ կազատւինք մենք ինքներս։

—Եւ ի հարկէ նա ինքը կըլինի ազատած մեզ իր դիպակործծութեան շնորհիւ։ Իմ սիրտս էլ ասում է, որ այս րոպէիս ես լսում եմ իմ թագաւորի ձայնը. այդ ձայնը հէնց առաջին անգամ լսելիս թափանցել է սրտիս մէջ։ Բայց արդեօք հաւատամ իմ ականջին. ինչ կասես, ասա ինձ կըրակաև։

—Ո՛չ, ո՛չ, մի հաւատար. բայց հաւատա այն ձայնին, որ դրսից կըլսես։ Ականջ դրէք, ահա ձայները են լսւում. կարծես դժոխքի դուռն է դղրդում. երևի փրկիչն արդէն մօտեցել է. իմաց տըւէք ամենքին, որ այստեղ պատրաստ կենան...

ԺԹ.

Անահիտը երբ որ բանտարկեց ծպտած քուրմին, իսկոյն փչել տըւաւ պատերազմական փողերը։ Ահագին փողերի այդ յանկարծական որոտալը յայտնի նշան էր, որ մի մեծ վտանգ է պատահել աշխարհին։ Մի ժամ չանցած՝ բոլոր քաղաքից թափուեցին պալատի առջև և այդտեղ սկսեցին խռնիլ ու ոտտանիլ լճացած հեղեղի պէս։ Ոչ ոք չէր իմանում, թէ ինչ է պատահել. ամենքը շնչասպառ միմեանց էին հարցնում, և ոչ մէկից մի որոշ պատասխան չէր ստացւում։ Յանկարծ պատժգամբի վրայ երևաց Անահիտը՝ ոտից մինչև գլուխ սպառազինուած և դէպի ժողովուրդը դառնալով՝ այսպէս խօսեց.

«Ձեր թագաւորի կեանքը վտանգի մէջ է։ Այս րոպէիս իմացայ, թէ ինչ տեղ է ընկել։ Նա գնացել էր իր երկրի մէջ պըտըտելու, որ ժողովրդի կարիքներն ու հոգսերն աչքովը տեսնի։ Չար մարդ-

կանց է հանդիպել և ընկել է մի տարտարոսի մէջ։ Էլ ուրիշ բան չունեմ յայտնելու ձեզ առ այժմ։ Ժամանակ չըպէտք է կորցնել։ Ով որ սիրում է իր թագաւորին, ուժ համար թանգ է նրա կեանքը, շուտով ձիաւորւի և գայ իմ ետևից։ Մենք պէտք է՝ կէսօր չեղած՝ հասնենք Պերոժ քաղաքը։ Ես արդէն պատրաստ եմ և ձեզ եմ սպասում։ Դէհ, գնացէք և շուտով պատրաստուեցէք»։

Մի ակնթարթի մէջ ցրըւեց ժողովուրդը՝ գոչելով՝ կեցցէ թագաւորը, կեցցէ թագուհին, և մի ժամ չանցած՝ արդէն ամենքը զինուած պատրաստ էին։ Քաջասիրտ օրիորդներն ու տիկիններն էլ երբ որ իմացան, թէ թագուհին պիտի առաջնորդէ զօրքին, նմանապէս զրահաւորւելով՝ շրջապատեցին թագուհուն։

Մի կատարեալ հիացք էր Անահիտը սպարապետի զգեստի մէջ։ Կրակոտ ձիու վրայ նստած, ոսկեզօծ զրահով պատած, մազերը սաղաւարտի մէջ ամփոփած, լայնաշեղբ թուրը կապած, վահանը թիկունքին կախած։ Այս բոլորը նրա արեգնատիպ դէմքի և հրավառ աչքերի հետ մի ահեղ կերպարանք էին տըւել նրան։

Երբ քաղաքացիք դուրս եկան տափարակ դաշտը, Անահիտը դարձրեց ձիու գլուխը, այս ու այն կողմ քշելով՝ հրամաններ արձակեց, և մի քանի րոպէի մէջ կարգաւորելով ամբողջ այրուձին, գոչեց բարձրաձայն՝ «յառաջ» և ինքն առաջ անցնելով՝ ասպանդակեց ձին և մի վայրկեանի մէջ անետևութացաւ։ Հեռուից երևում էր միայն ձիու բարձրացրած թանձր փոշին, որ ամպի պէս մինչև երկինք էր հասնում։ Երկու ժամից յետոյ նա իր հրեղէն ձիով կանգնած էր Պերոժ քաղաքի հրապարակի մէջ մեն մենակ։ Կռապաշտ քաղաքացիք նրան երկնքից իջած մի նոր աստուած համարելով՝ խուռն

բազմութիւնով չոքեցին նրա առջև և գլխները մինչև գետին կորացրին։

—Ո՞ւր է ձեր քաղաքապետը,—գոչեց Անահիտը սպառնալից ձայնով։

Ծունկ չոքածներից մինը վեր կացաւ և դողդողալով ասեց.

—Ծառադ եմ այստեղի քաղաքապետը։

—Դուն ես ուրեմն, որ այնքան անհոգ ես, որ չգիտես թէ ինչ է գործւում քո աստւածների բնակարանում.

—Ծառադ եմ ես ոչինչ չգիտեմ։

—Դու կարելի է թէ չգիտես էլ, թէ ո՞րտեղ է գանւում ձեր տաճարը.

—Ի՞նչպէս չգիտեմ, ծառադ եմ, շատ լաւ գիտեմ։

—Առաջ անցիր ուրեմն։

Կէս ժամ չանցած՝ ամբողջ քաղաքը գլուխ՝ գնում էր Անահիտի ետևից։ Երբ որ մօտեցաւ մեհեանի պարիսպներին, քուրմերը կարծեցին, թէ ուխտաւորների մեծ բազմութիւն է եկողը, շատպով բաց արին դուռը։ Բայց երբ ներս խոնւեց ժողովուրդը, երբ տեսան զրահաւորւած հրաշագեղ աստեղի սպառնալից դէմքը և իրանց վրայ ուշք չդարձնելը, մի անսովոր սարսափի մէջ ընկան։ Անահիտը մի րոպէի մէջ գաւս տարտարոսի դուռը և դառնալով քաղաքապետին՝ հրամայեց.

—Բաց արէք ահա այս դուռը։

Մինչդեռ քաղաքապետի հրամանով մի քանի անձինք պատրաստւում էին կոտրատել դուռը, ծերունի քրմապետը վերահաս վտանգը տեսնելով՝ դուրս եկաւ իր մեհենական զգեստով, որ ժողովրդի վրայ սարսափ ձգէ և յետ մղէ։ Երբ որ իր սպիտակ շուրջառը ձգած, քրմապետական երկճիւղ ու երկայն թագը գլխին դրած և գաւազանը ձեռին՝ դուրս եկաւ ուռած ու փքւած, ժողովուրդը ճանապարհ բաց արաւ և յետ քաշւեց ահ ու դողով։

Նա մօտեցաւ Անահիտին և պատգամախօսի ձայնով աղաղակեց.

—Ինչ ես ուզում, ինչ ես անում, յետ քաշւիր այդ տեղից։

Անահիտը բարկութիւնը հազիւ զսպելով ասեց.

—Ես հրամայում եմ, որ այս դուռը բացւի։

—Ո՛վ է կարող հրամայել այստեղ, բացի ինձանից։ Այս դուռը մեր սրբարանի դուռն է. այստեղ է գանւում մեր նախնեաց փոշին, այստեղ է մեր անշէջ կրակարանը, տեսէք ահա այն ծուխը, որ մինչև երկինք է բարձրանում։ Աստւածների բարկութիւնը մի շարժէք։ Ցրւեցէք, հեռացէք, կորէք. ինչպէս էք համարձակում ձեր պիղծ ոտներով կոխոտել այս սուրբ վայրը։

Քրմապետի ահեղագոչ սպառնալիքը անապաշա ժողովրդի վրայ սարսափ բերաւ. ամենքը կորագլուխ յետ քաշւեցին. բայց նրանց մէջ կային և քրիստոնեաներ, որոնք պինդ կանգնեցին իրանց տեղերը, կասկածելով, որ այդ ծածկարանումը մի սարսափելի գաղտնիք պիտի լինի թաքնւած։ Նրանք միաբերան գոչեցին—

—Բացւի, բացւի այդ տարտարոսի դուռը։

Քրմապետը տեսաւ, որ իր հրամանին ընդդիմացողներ կան, երեսը դարձրեց դէպի մեհեանը և ձեռքերը մեկնելով՝ աղաղակեց.

—Ո՛վ հզօր աստւածներ, ձեր սուրբ տաճարը պղծւում է, օգնութիւն հասցրէք...

Այս ձայնի վրայ, մեհեանի դուռը բացւեց, և նրա միջից դուրս թափւեցին մի խումբ սպառազինւած դաժանատեսիլ մարդիկ։ Սրանք քուրմերն էին, որոնք վերահաս վտանգը տեսնելով՝ անձնապաշտպանութեան էին պատրաստւել։ Քրմապետը հրամայեց նրանց, որ դուռը պահպանեն և ոչ ոքի թոյլ չտան մօտենալ։

Անահիտի համբերութիւնը հատաւ սաստիկ բարկութիւնից։ Դարձրեց ձիու գլուխը և յետ նայ-

ելով՝ տեսաւ որ քաղաքի վրայ ամպի պէս փոշի է բարձրացած. իմացաւ, որ զօրքը մօտեցել է։ Այդ հանգամանքից աւելի ևս սրտապնդուելով՝ ուզեց ինքը մենակ վերջացնել ամեն բան և մի րոպէ առաջ տեսնել իր Վաչագանին։ Ձախ ձեռքն առաւ վահանը և աջով սուրը հանելով՝ դարձաւ դէպի քուրմերը և գոչեց.

Վերջին անգամ հրամայում եմ ձեզ վինաթափ լինել և բանալ այդ դժոխքի դուռը։

Քուրմերը պատրաստուեցին դիմադրելու։ Անահիտի իմաստուն ձին իմացաւ տիրուհու մտադրութիւնը. մի թեթև ասպանդակի հարուած ստանալուն պէս՝ կոխկռտեց քաւթառ քրմապետին և յարձակուեց քուրմերի վրայ։ Կայծակի արագութեամբ երեք գլուխը թոցրեց Անահիտը և իսկոյն յետ մղեց ձին։ Քուրմերը նրան շրջապատեցին և վիրաւորեցին ձին։ Անահիտը պաշտպանողական դիրք բռնեց, բայց ձին իր յարձակմունքը շարունակում էր. նա միանգամից թէ առաջից և թէ ետևից էր յարձակւում և հարուածներ էր, որ տալիս էր աքացիներով։ Քուրմերը կուռում էին ամենայուսահատ և կատաղի կերպով։ Անահիտի կեանքը անխուսափելի վտանգի մէջ էր։ Այդ որ նկատեցին քրիստոնեաները, քուրմերի քամակից յարձակուեցին։ Քուրմերը շփոթուեցին և երեսները դարձրին, որ պաշտպանուին։ Անահիտը՝ օգուտ քաղելով այդ հանգամանքից, կրկին յարձակուեց և էլի մի քանի գլուխ թոցրեց և մի քանիսին ոտնատակ տրաւ։ Կռապաշտները տեսան, որ քրիստոնեաները օգնում են Անահիտին, կարծեցին թէ կռիւը կրօնական է, իսկոյն անցան քուրմերի կողմը և սկսեցին քարէ կարկուտ թափել քրիստոնեաների վրայ։ Այդ միջոցին Անահիտի սաղաւարտը վայր ընկաւ մի քանի հարուածից, որ դիպաւ նրա ծայրին։ Նրա խիտ ու երկայն մազերը փռուեցին և ծածկեցին ամբողջ կազմուածքը ամեն կողմից, բացի

հրացայտ աչքերից։ Նրա այդ տեսքը մի նոր սարսափ ձգեց ամբոխի վրայ, որոնք իրանց քարէ կարկուտը դադարեցրին իսկոյն։ Այդ հանգամանքից էլ օգուտ քաղեց Անահիտը, մի անգամ էլ յարձակուեց քուրմերի վրայ և մի քանիսին մահացու վէրք տալով՝ գետին գլորեց։ Հէնց այդ ժամանակ վրայ հասան զօրքի առաջապահ նիզակաւորները օրիորդների և տիկինների հետ և իրանց թագուհուն յուսահատ կուի մէջ տեսնելով՝ միաձայն աղաղակեցին և յարձակուեցին քուրմերի վրայ։ Մի րոպէ չանցած՝ կենդանի մնացած քուրմերը փախան, ամբոխը յետ քաշուեց, և բաց հրապարակի վրայ մնաց Անահիտը՝ շրջապատուած քաջասիրտ օրիորդներով ու տիկիններով։ Քրիստոնեաներից մինը բերաւ նրա սաղաւարտը, որ ազատել էր ամբոխի ձեռից։ Անահիտն իջաւ ձիուց ողջ, առողջ, կարգաւորեց իր մազերը և սաղաւարտը դրաւ գլխին։ Հրամայեց, որ եկող զօրքը շրջապատէ մեհեանը, որի մէջ պատսպարուել էին բոլոր քուրմերը և ներսից դուռը փակել։ Յետոյ դառնալով դէպի ամբոխը՝ ասեց. «Եկէք այստեղ կարգով կանգնեցէք հանդարտ, որ տեսնէք ինչ կայ ձեր սուրբ քրմապետի սրբարանումը», և հրամայեց դուռը կոտրել։

Մի զարհուրելի տեսարան բացուեց ժողովրդի առջև։ Դժոխային որջից դուրս սողացին բազմաթիւ հոգիք, որոնք նոր գերեզմանից հանած դիակների էին նմանւում։ Շատերը վերջին շնչումն էին և ոտքի վրայ կանգնել չէին կարողանում։ Նրանց ուրախութեան լացն ու կոծը, ճիչն ու աղաղակը մարդու սիրտ էին կտրատում։ Ամենից յետոյ դուրս եկան Վաչագանն ու Վաղինակը, գլխները քաշ գցած։ Թագուհին ճանաչեց Վաչագանին և նշանացի արաւ իր մարգկանցը, որ նրան տանեն իր համար պատրաստուած վրանը։ Վաչագանը գնաց Վաղինակի ձեռքից բռնած՝ որ աչքերը

խփած կոյր աղքատի պէս հետևեց նրան։ Միւս բոլոր դուրս եկողներին հրապարակի վրայ նստեցնելուց յետոյ, Անահիտը հրամայեց զինուորներին, որ ներս գնան և ամեն բան՝ ինչ կայ չկայ՝ դուրս տան։ Զինուորները մտան դժոխքի մէջ և այնտեղից դուրս բերին նոր մեռած մարդկանց դիակներ, նոր կտրած գլուխներ, կթոցներով լիքը մարդկային լեշեր, մարդամսով լիքը կաթսաներ, զանազան արհեստի գործիքներ և պարագաներ...

Կռապաշտները, որ արդէն ամօթահարուած և քաոսած էին՝ այդ ծայրայեղ եղեռնագործութիւնը տեսնելով, էլ չդհամբերեցին, և բարձրաձայն աղաղակեցին.—Մեծ է քրիստոնէից Աստուածը, դըժոխք է մեհեանը, դևեր են կուռքերը, սատանայք են քուրմերը, կուտորենք, ջնջենք, սատկացնենք սրանց...

—Ո՛չ, ո՛չ,—գոչեց Թագուհին,—սպասեցէք, չըմօտենաք տաճարին, ձեռք չըտայք քուրմերին, նըրանց պատժելու իրաւունքն իմն է։ Ձեզ հարկաւոր է նախ և առաջ այս թշուառների հոգսը քաշել։ Եւ սկսեց հարցնել ամեն մէկին առանձին, թէ նա ով է, ինչ տեղացի է։ Մէկն ասում էր՝ իմ անունս Առնակ է, ես Բաբելի որդին եմ։ Այդ անունը բարձրը ձայնով կրկնում էր քաղաքապետը, և ահա մի ծերունի մարդ՝ դողդողալով մօտենում էր և հեկեկալով ասում. «Ո՛ւր է իմ որդիս»։ Երկրորդի մայրըն էր լոյս ընկնում և ուշաթափ ընկնում իր միակուճար որդու վրայ, երրորդի քոյրը, չորրորդի եղբայրը։ Շատ քչերը մնացին անտիրական, այդպիսիներին էլ Թագուհին առաւ իր խնամակալութեան տակ. դրանց թուում էին Վաչագանի արհեստակիցները։

Այդ թշուառներին տէրուէտէր անելուց յետոյ՝ Թագուհին կամեցաւ անձամբ գնալ քուրմերի սպանդարանը։ Քաղաքապետի և մի խումբ զինուորների հետ ներս գնաց և նաւթավառ լուցկիներով

գննեց նրա ամեն մի քունջ ու պուճախը։ Ո՛ր կողմ նայում էր, մարդկային արիւնի հետք էր նշմարում և անհամար ոսկորներ այս ու այն անկիւնում թափած։

Այդ զարհուրելի տարտարոսը կարճ ժամանակում գլուխ բերած բան չէ,—ասեց նա քաղաքապետին.—սրա վրայ շատ մարդիկ պիտի լինին աշխատած, իսկ այդ մարդիկը մի անգամ այստեղ ընկնելուց յետոյ՝ էլ լոյս աշխարհք չեն տեսել։

—Ողորմած Թագուհի, ես մեղաւոր եմ, որ խիստ հսկողութիւն չեմ ունեցել, բայց մի այսպիսի բան իմանալու համար՝ քո իմաստութիւնն ունենալու է։ Ամեն տարի միայն մեր քաղաքից, եթէ քիչն ասեմ՝ հարիւր մարդ է անյայտացել, բայց ես միշտ կարծել եմ, թէ լեռնեցիք են գերի տարել։ Այդ գարշելի քուրմերին մենք ոչ միայն սուրբերի տեղ ենք ընդունել, այլ և կարծել ենք, թէ դրանք շատ ժրաջան և արհեստասէր մարդիկ են, իրանց ձեռքի աշխատանքովն են ապրում, և ոչ ժողովրդի հաշուով ու արիւնով։ Ո՞վ կըկարծէր, թէ այն թանգագին հիւսուածքներն ու գործուածքները, որ դրանք ամենայն օր բերում էին շուկայ վաճառելու, իրանց ձեռքի գործքը չի եղել. ո՛վ կըկարծէր, որ մեր պաշտած քրմապետը մի կերպարանափոխուած դև է եղել և անմեղ մարդկանց արեան ծարաւի...

Վերջապէս դուրս եկան այնտեղից և գնացին դէպի տաճարը։ Բաղխեցին տաճարի դուռը, որ քուրմերը բաց անեն և անձնատուր լինին, բայց ներսից ձայն հանող չեղաւ։ Դուռը կոտրտեցին զինուորները և ներս գնացին, բայց ներսը մարդ չըգտան. վերև նայեցին, և մի նոր տեսարան բացուեց նրանց առջև. բոլոր քուրմերը և քրմապետը կախուել էին առաստաղից և դեռ ճօճւում էին իրանց պաշտած հնդկացի կուռքերի դիմաց։ Երբ որ այդ մասին յայտնեցին Թագուհուն, նա ասաց.

—Այդ մահը շատ թեթև է դրանց համար. բայց

վնաս չունի, թողեք այնպես մնան. միայն թույլ տուէք ժողովրդին, որ ներս գնան և երկրպագութիւն տան իրանց սուրբերին։

Դրսումն ամբոխած և զրգռւած մարդիկը հեղեղի պէս ներս թափւեցին և կատաղի կերպով յարձակւեցին կուռքերի վրայ և ջարդուփշուր արին իրանց աստւածներին։ «Ի՛նչ հեշտ են ջարդւում այս գարշելիները, մինչդեռ մենք կարծում էինք, թէ անհրպելի և անմատչելի են», ասում էին շատերը։ Դուրս տւին բոլոր անօթներն ու սպասները, քարուքանդ արին խորաններն ու ծածկարանները, անթիւ ոսկի և արծաթ գտան, բայց առանց մի բան յափշտակելու և գողանալու՝ ամեն ինչ տարան թափեցին հրապարակի մէջ Թագուհուառջև, իսկ Թագուհին կարգադրեց, որ քուրմերի բոլոր այդ ունեցած-չունեցածը բաժանւին զրժոխքից ազատւածներին։ Երբ որ մեհեանի մէջ էլ ոչինչ չմնաց, ամեն ինչ տակնուվրայ արին՝ իրանց արդար զայրոյթի վերջին մրուրը թափեցին խեղդամահ եղած քուրմերի գլխին։ Ցած բերին զժոխքի արբանեակներին և ամենքին կատր-կատր անելով՝ դուրս նետեցին պարսպից, որ գազաններին լափ դառնան։

Մնացած անելիքը Թագուհին յանձնեց իր հրեշտապետներից մէկին. իսկ ինքը գնաց իր վրանը, ուր նրան անհամբեր սպասում էր Վաչագանը։ Երկու սիրելիները նստեցին իրար կողքի և միմեանց նայելուց չէին կշտանում։ Վաղինակը մօտեցաւ Թագուհուն, համբուրեց նրա ձեռքը և միւս կողքին նստելով՝ սկսեց հեկեկալ մօրը գտած երեխայի պէս։

—Դու ոչ Թէ այսօր ես փրկել մեզ, իմ անհման Թագուհի, այլ շատ օրեր սրանից առաջ, երբ ես տեսայ քեզ երազումս հէնց այդ զգեստի մէջ։

—Դու սխալւում ես, Վաղինակ,—ասեց Վաչագանը.—Թագուհին այն ժամանակը փրկեց մեզ,

երբ որ քեզ ասեց՝ «Ձեր Թագաւորի որդին արհեստ գիտէ»։ Միթէ էր, որ դու էլ մի կուշտ ծիծաղել էիր.

—Ա՛խ, ճշմարիտ է. ինչ ասեմ։ Եւ ես, որ այն ժամանակը շատ անհաւատ էի, միայն հիմա եմ սկսել հին լսածներիս հաւատալ։ Մեսրոպ վարդապետը, որ մեզ քարոզում էր Թէ՝ «Եթէ Քրիստոս զժոխք չիջներ, զժոխքը չէր կործանւիլ», ես նրա այդ ասածի վրայ էլ էի ծիծաղում, բայց հիմա իմ Թագաւորը անձամբ ցոյց տւաւ, որ Մեսրոպը ճշմարիտ էր ասում։

—Հանգստացիր, Վաղինակ, այդ մասին մենք յետոյ շատ կըխօսենք,—ասեց Թագուհին, նոր արդէն զգալով, որ ինքն էլ է սաստիկ յոգնած։

—Ես ինչպէս տեսնում եմ, քեզ նմանապէս հարկաւոր է հանգստանալ, ասեց Վաչագանը Թագուհուն։—Դու հիմա հանգստացիր, մնացածը ես ինքս կըհոգամ։

Թագուհին քաշւեց վրանի միւս բաժինը, ուր նրա համար փափուկ փուռածք էին արել օրիորդները ու տիկինները։ Այդտեղ նա հանեց իր զէնքն ու զրահը և ուղարկեց Վաչագանին, իսկ ինքը փուռածքի վրայ Թինկ տալով՝ ուզեց իբր հանգստանալ, բայց նրա երևակայութիւնն այնպէս զրգռւած էր, նրա սիրտն այնպէս վրդովւած, որ հանգստանալ չէր կարողանում։ Մէկ ուզում էր լիասիրտ ուրախանալ իր սիրելու ազատութիւնովը, բայց մէկ էլ Թւում էր նրան, Թէ դեռ ևս շրջապատւած է կատաղի քուրմերով, և ինքը մերթ յարձակողական և մերթ պաշտպանողական դիրք է բռնում։ Մերթ ուզում էր իր արդար վրէժը յագեցած համարել, յիշելով՝ Թէ ինչպէս էին Թաւալգլոր լինում դաժան քուրմերի գլխները, բայց յանկարծ նրա առջև պատկերանում էին մարդամսով լիքը կաթսաները, և նոր արդէն սկսում էր ամբողջ մարմնով զինահարւիլ և գարշանդիլ ու սարսռիլ... Ահա այս խառնիխուռն տպաւորութիւնները նրանից

շուտ չըհեռացան, իսկ այժմ աւելի չարչարում, քան թէ հանգստութիւն էին տալիս։

Վաչագանը շատ լաւ գիտէր, որ Անահիտը ինչքան որ քաջ էր՝ նոյնքան և փափկասիրտ էր։ Գիտէր որ նա կարող էր վրէժխնդրութեան հոգւով վառուած՝ անխնայ կոտորել իր թշնամիներին, բայց նրա քնքոյշ սիրտը կարող չէր հեշտութեամբ մարսել մի այդպիսի կոշտ գործողութիւն։ Այս պատճառով շտապեց Անահիտից առնել իր զէնքն ու զրահը։ Նա լացւեց, մաքրւեց, փոխեց իր հագուստը, հագաւ զրահը, կապեց արքայական թուրը և դուրս գալով վրանից՝ երեաց զօրքին, որ նրա տեսութեանն սպասում էր անհամբեր։ Հէնց որ երեւաց Վաչագանը և ողջոյն տւաւ, զօրքն ուրախութեան աղաղակ բարձրացրեց։ Թագաւորը յայտնեց նրանց իր շնորհակալութիւնը։ Այդ միջոցին քաղաքապետը եկաւ թագաւորի ոտներն ընկաւ, շնորհաւորեց նրա ազատութիւնը և յայտնեց, որ ճաշ է պատրաստել կանաչ դաշտումը զօրքի համար։ Թագաւորը հրամայեց տւաւ զօրականներին, որ երթան ճաշեն և ուրախութիւն անեն, իսկ ինքը գնաց Անահիտի մօտ, ուր արդէն օրիորդները ու տիկինները ճոխ սեղան էին սարքել և թագաւորի գալուն էին սպասում, որ հացի նստեն։ Այստեղ էր և Վաղինակը՝ փոխած իր հնոտիքը և գեղեցիկ հագուստով զուգւած։ Այդպէս գեղեցիկ և ուրախ ճաշ չէր արած Վաչագանը իր բոլոր կեանքումը։ Այն ուրախութիւնն ու զարճութիւնը, որ անում էին օրիորդները, Վաղինակին էլ մի այնպիսի հոգեկան զմայլմունքի մէջ էին ձգել, որ նա կարծում էր, թէ երանելեաց աշխարհի մէջ է և հրեշտակների հետ է խնդում, ուրախանում։ Անահիտն էլ ազատւեց հոգեմաշ ցնորքներից և մի բաժակ գինուց յետոյ ինքն էր առաջնորդում օրիորդներին ու տիկիններին սրախօսութիւն անելիս։

Այսպէս ուրախ ճաշելուց յետոյ, փողերը նշան

տւին, որ ժամանակ է ճանապարհ ընկնելու դէպի տուն։ Առաջ ընկան թագաւորն ու թագուհին, նրանց կողքին օրիորդներն ու տիկինները, իսկ ետևից բոլոր զինուորները, որոնք միաձայն երգում էին մի ազգային յաղթական երգ։ Երբ որ հասան Պերոժ քաղաքի հրապարակը, բոլոր քաղաքացիք, մեծ ու փոքր, այր ու կին միաբերան աղաղակեցին —

—Կեցցէ թագաւորը, կեցցէ թագուհին, կորչին քուրմերը, կործանւին կռատուններն, քրիստոնեայ, քրիստոնեայ կուզենք լինել։

Թագաւորը նրանց պատասխանեց, որ շուտով կըգայ հայրապետը և նրանց կըմկրտէ։ Եւ յիրաւի երկու օրից յետոյ եկաւ աղւանից Շուփհաղիշէ կաթողիկոսը շատ քահանաներով ու եպիսկոպոսներով և բոլոր Պերոժեցոց տարաւ Կուրի եզերը, ուր մերկացան ամենքը և ապիտակ սաւանով սփածւած մտան գետը՝ փոքր մանուկներին գրկներն առած։ Կաթողիկոսը մկրտութեան համառօտ կարգը կատարեց և ամենքին հրամայեց երեք անգամ ընկղմիլ Կրումը և դուրս գալ։ Այսպէս լուսաւորւեցին Պերոժեցիք քրիստոնէական լուսով։ Բայց մենք դառնանք մեր պատմութեանը։

Վաչագան թագաւորի այս արկածքի լուրը տարածւեց բոլոր քաղաքներում և գիւղերում։ Այդ մասին խօսում էին մինչև օտար երկիրներում էլ և ամենայն տեղ Անահիտի և Վաչագանի գովասանքն էին անում։ Ազգային երգիչները գիւղ գիւղ և քաղաք քաղաք պտըտելով՝ այդ անցքի պատմութիւնն էին անում երգերով։ Ափսոս որ այդ երգերը մեզ չեն հասել. բայց ինչ որ արել են Վաչագանն ու Անահիտը իրանց աշխարհի համար, այդ բանը հէքիաթի ձևով պատմում են մինչև այսօր էլ։ Այդ հէքիաթի գլխաւոր միտքը այն է, որ «թագաւորի կեանքը արհեստն է փրկել»։ Այս լաւ միտք է։ Որ ժողովրդի մէջ որ գտնւում է այսպիսի սըր-

բացած աւանդութիւն, դա ցոյց է տալիս, թէ ուրեմն այն ժողովուրդը մեծ նշանակութիւն է տալիս արհեստներին, աշխատութեանը, որից գլխաւորապէս կախւած է ժողովուրդի բախտաւորութիւնը։ Այդ բախտաւորութիւնը ևս առաւել ապահովանում է, երբ որ երկրի թագաւորն ինքն անձամբ օրինակ է տալիս ժողովրդին և հովանաւոր ու պաշտպան է դառնում արհեստին։

Եւ ճշմարիտ, մեր պապերը, որ շատ աշխատասէր և արհեստասէր էին, այդ անցքից յետոյ ևս առաւել ուշադրութիւն դարձրին արհեստների վրայ։ Ամբողջ աշխարհումը էլ ոչ մի հոգի չէր գտնւում, որ մի որ և իցէ արհեստ չիմանար, և շատ արհեստներ մեր աշխարհում մինչև վերջին կատարելագործութեան հասան։ Աղջկէքը սովորում էին առհասարակ գործւածքները անել. բրդից գործում էին զանազան գորգեր և շալեր, բամբակից՝ կտաւեղէն, մետաքսից՝ նուրբ կերպասներ։ Կար, ձև, հիւսւածք՝ ամենքը գիտէին։ Ամեն երկրագործ ինքն էր շինում իր բոլոր գործիքները, իր գութանն ու սայլը, իր ղէնքն ու զրահը, իր պղնձեղէն ու կաւեղէն ամանները, իր տունն ու կարասիքը։ Ամառը երկիրն էր գործում, ձմեռը իր արհեստը բանեցնում։ Եւ աշխատում էին ոչ թէ ջոկ-ջոկ՝ այլ խմբովին, միասին։ Տեսնելու բան էր, թէ ինչպէս գիւղի բոլոր առոյգ երիտասարդները՝ ահագին կռաններր ձեռքներին՝ զարկ զարկի ետևից կարկուտի պէս թափում էին մի կտոր երկաթի վրայ, որից ուզում էին մի խոփ շինել, կամ կացին, կամ թուր և այլն։ Այսպէս միասին էին հերկում իրանց դաշտերը և միասին հնձում արտերը։

Հոգևորականութիւնն այն ժամանակ մի ձրիակեր դասակարգ չէր։ Բոլոր վանքերը մի-մի գործարան էին, ուր պատրաստում էին ամենիւ մագաղաթ. գրում էին, կազմում էին և, բացի սրանից, իրանց

բոլոր հագուստներն ու կարասիքը իրանց ձեռքովն էին պատրաստում։ Նրանք ասում էին.

«Ուսումն ու արհեստը պէտք է այնպէս հիւսւած լինին միասին, ինչպէս Վաչագան թագաւորի գիպակը իր խորհրդաւոր թալիսմաններով»։

Կարող էք ուրեմն երևակայել, թէ ինչ կըլինէր մի ժողովուրդ այնպիսի հոգևորականների օրով, մանաւանդ այնպիսի մի թագաւորի, ինչպէս Վաչագանն էր, որ ժողովրդի հարազատ զաւակն էր, նրա հայրն ու եղբայրը։ Ինչ կըլինէր Անահիտի պէս մի թագուհու օրով, որ երկրի համար դառաւ հարազատ և անուշիչ մայր, և ահա ինչ էր ասում ժողովուրդը Անահիտի մասին.

«Նա մեր գետերը ծածկեց լաստերով ու կա-
«մուրջներով, մեր ծովերն ու լճերը՝ նաւերով ու
«նաւակներով. Նա մեր դաշտերը ոռոգեց ջրանց-
«քներով և առուներով, մեր քաղաքներն ու գիւ-
«ղերը՝ սառն աղբիւրներով։ Նա մեր սայլերին հարթ
«ճանապարհներ տրւաւ, մեր գութաններին՝ ընդ-
«դարձակ երկիր. Նա կործանեց դժոխքը և մեր
«աշխարհը շինեց մի եդեմական դրախտ։ Կեցցէ
«Անահիտը, կեցցէ յաւիտեան»։

ՎԵՐՋԱԲԱՆ

Ամեն աշխարհ, ամեն երկիր,
Եթէ ունի հարազատ մայր,
Նա կրծադկի դրախտի պէս,
Նա չի լինիլ անբախտ, թշուառ։
Ամեն հոգի, ամեն անհատ,
Եթէ ունի արհեստ, ուսում,
Նա չի լինիլ տնանկ, աղքատ
Վտանգալից մեր աշխարհում։
Արհեստն է, որ աղբիւրի պէս
Միշտ բղխում է, միշտ ծլծլում,
Թէպէտ և մերթ նըւազում է,
Բայց քնաւին չի ցամաքում։
Մեր հայրենի սուրբ երկրումը,
Ուր եղեմն էր աննահական,
Այժմ դժոխք է սոսկալի,
Այց ու հառաչ գեհենական։
Զըկայ մեր մէջ ոչ վաչագան,
Ոչ Անահիտ մի խմաստուն,
Որ կործանեն այդ դժոխքը
Եւ տան հային բարօրութիւն։
Միակ հնար մեզ մնում է՝
Սովրիլ արհեստ, սովրիլ ուսում.
Սրանք են այն թալիսմանը,
Որ տարտարոս է կործանում։

ՎԵՐՋ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀԱՅԿ—ССРА
им. А. Мясникяна

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ

	էջ
Հրաւէր	3
Ջանասէր մանուկը	3
Ժրաջան տղայ. Ռ. Գատ.	4
Հրաշալի խոտ	5
Նամուս ու ղէյրաթ. Յ. Յակ.	5
Հայրը և որդիքը. Թարգ. Յ. Ա.	6
Կարդա. Ա. Ծատուրեան	7
Գայլը և թոռնիկը. Թարգմ.	8
Մանկանը. Ս. Շահազիզ	9
Մեծն ու փոքրը	9
Եղբայրասիրութիւն Սա. Նազարեանց	10
Երկրի մշակները. Ա. Ծատ.	11
Բարեխղճութիւն. Գարեգին քահ. Ղուկասեան.	12
Անլոյս խաւարը. Յով. Յով.	13
Վեհանձնութիւն. Մայրենի խօսք	13
Քամին և արեը. Գար. Ք. Ղուկասեան	15
Կանաչ տերևով. Յ. Յակոբ.	16
Ագահութիւն. Գար. քահ. Ղուկասեան	17
Բաժանութիւն. Կռիլովից.	18
Մայրասէր որդի. Յ. Ա.	19
Կեանքը սիրոյ մէջ է. Մուշեղ Մամիկոնեան	19
Մանուկին. Զաւագ-բէգ Բալուգեան	20
Արցունք. Թարգ. Ալ. Ծատ.	21
Մանուկին. Կ. Կրասիլնիկ.	24
Ուսումնածարաւ մանուկը. Եղիշէ ա. ք. Փեղամեան	25
Անգրագէտ. Թարգ. Յով. Յովհաննիսեան	29
Կայրը և կաթը. Լ. Տօլստոյից	31
Կոյրերի կուրը. Խ. Աբովեանից	31
Հարստութիւն. Գար. Ք. Ղուկասեան	33
Արուեստի աղօթքը. Ղ. Ա.	33
Ուշկալ ծառայ. Գար. Ք. Ղուկասեան	35
Էշ և Սոխակ. Կռիլովից. Ղ. Ա.	35
Կիրակուան ու վարժապետը. Ղ. Ա.	37
Անձկաս հագուստ. Ղ. Ա.	39
Երկու խոփ. Գար. Ք. Ղուկասեան	39
Դու քնզ հաւատա. Լևոն Մանուէլեան	40
Անբախտ Նազիկը Ն. Զ.	41

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ

կենդանիների կեանքից

	էջ
Մեր Դուրսունը. Ղ. Ա.	46
Ծուղն ու եզը. Խ. Աբովեանից	55
Էշը Եւրոպայում և Կովկասում. Կ. Մ. Շահնազար	57
Էշն ու գիւղացին Կռիլովից	65
Վանայ կատուն. Վ. Փափազ.	66
Առիւծն ու մոծակը. Խ. Աբովեանից	68
Սոխակ. Բազմավէպից	70
Սոխակները. Կռիլովից. Ղ. Ա.	70
Հաւատարիմ շունը	72
Արծիւն ու հաւը. Թարգ. Գ. Ք. Ղուկասեան	74
Արծիւն ու ճիճուն. Ա. Ծատուրեան	75
Արծիւն ու կաղնին. Յովհաննէս Թումանեան	76
Ճնճղուկ. Տուրգենևից	77
Թռչուն, Բարկաս	78
Աղաւնիները. Տուրգենևից. Րաֆֆի	79
Նենգ ագռաւ. Ս. Քամալ.	81
Միծեռնակների վրէժը. Թարգ. Յ. Ա.	85
Թռչնիկները Հիւգօից. Րաֆֆի	85
Թութակն ու սոխակը. Գար. Ք. Ղուկասեան	86
Գերի թութակը Րաֆֆի.	86
Թուխկան. Բարկաս	87
Անբախտ վաճառականներ. Յովհան. Թումանեան	88
Անճոռնի բադիկը. Անդերսէնից. Ղ. Ա.	93

ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆ

Տարբեր չորս եղանակները

Աշունք. Ղ. Ա. . . . 107
Ջը հնձատ արտ. . . . 109
Մերճեցան. Ղ. Ա. . . . 109
Մերճեցան. Ա. Ծատ. . 110
Այգեքաղ. Ղ. Ա. . . . 112
Աշուն Ռ. Պատկանեան . 116
Նաւասարդ 117
Աշնան տերևները. Կ. Մ. Շահ. 119
Ձմեռ. Ղ. Ա. 120
Գնա ցուրտ ձմեռ. Ալ. Ծատ. 121
Ձիւն. Գաժ.-Քաթ. . . 122
Ձը գիտեմ ինչու. Գ.-Քաթ. 122
Ձմեռը Երևանայ պիւղեղում. Ա. Աբովեան . . 122
Ձմեռն է. Ղ. Ա. . . . 125
Աղքատ կին. Մ.Ք. Նալբանդեան . . . 128
Փշուր մը խաց. Ա. Ա.Հարոն. 130
Ողորմած եղէք. Ա. Ծատ. 136
Իմ պանարամը. Կ. Մելիք-Շահնազար. . . 138
Տարեմուտ. Շիրակեցի 144
Հոնի կորիզը. Ղ. Ա. . 146
Զրօրհնէք. պատմական . 148
Գարուն. Ղ. Ա. . . . 151
Հրաւէր գարնան. Գ.-Քաթ. 152
Ինպիը գարնան. Գ.-Ք. 153
Մանիշակ. Գ.-Ք. . . . 153
Տունը կաթում է. Ղ. Ա. . 153
Խոզարածի բինա. Ղ. Ա. . 155
Բնութեան կենդանանալը. Պերճ Պռօշեանց. . . 155
Գարնան գալուստը. Յ. Ղազարեան. 158
Առաւօտ. Դ. Սրուանձտեան 159
Լուսադէմին 161
Մի պատկեր գարնանային կեանքից. Կ. Մ.-Շ. 161
Հովիւ. Ս. Շահազիզ . . . 164
Մի օր գիւղում. Կ. Մ.-Շ. 164
Գիւղի ժամը. Յով. Յովհան. 168
Մեծ պաս. Ղ. Ա. 169
Օրօրոցի երգ. Գ.-Ք. . . 170
Ծաղկազարդ. Ղ. Ա. . . 171
Զատիկ. Ղ. Ա. 173
Զատկի երգը. Գ. Ք. . . 174
Հայը Յովսէփ և մանուկ Յիսուս. Ղ. Ա. 175
Ամառ. Ղ. Ա. 177
Ամառ. 181
Երաշտ. Պ. Պռօշեան . . 182
Անձրևի կաթիլ. Ալ. Ծատուրեան. 184
Օտարի օգնութիւնը. Թ. Յ. Ա. 184
Հունձը 185
Պարտիզպան. Ղ. Ա. . . 186
Սար գնալը. Գաբրիէլ Յովհաննեան (բժիշկ) . 187
Լալար սարը. Ս. Միրաք. 189
Գուգարքի սարերը. Յ. Թ. 193
Կարկուտ. Կ. Մ. Շահնազ. 194
Այ սև ամպեր. Ալ. Ծատուրեան 197
Վարդավառ. Ուտիացի . 197

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍՆ

Հէքիաթներ և զրոյցներ

Օձամանուկ և Արևահատ. Ղ. Ա. 200
Լոյս և մութ աշխարհներ. Ղ. Ա. 214
Արևամանուկ 227
Սասունցի Դաւթի քաջագործութիւնը. Յովհաննէս Թումանեան . . 244
Երկու հսկայ. Դէորգ Ատաւածատրեան 254
Ամիրան. Յարութիւն Թումանեան 262

ՅԱԽԵԼԻԱԾ

ԱՆԱՀԻՏ Ղ. Ա. 268

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես	տող	սխալ	ուղիղ
27	1	զանևուզ	զանևուզ
46	3	կինսագրակին	կինսագրական
86	8	խանգարեմ	խնդրեմ
121	ներ. 3	սիրաուննչ	սիրաշունչ
127	16	նւաճել	նւաճեւել
130	*)		
157	19	գառնուկնեին	գառնուկներին
158	ներ. 9	Ա.ցաւ	Անցաւ
164	2	ողբերակ	ողբերգակ
„	„	աքբիւբի	աղբիւրի
178	ներ. 6	իրանց	իրար
187	„ 9	կեկեր	կեղեր
198	5	Քրիստոս	Քրիստոսի
202	ներ. 4	մօհնում	մօտենում
206	16	խնդրում	խնդում
215	18	բարձրացած	բարձրացրած
225	8	մի	իմ
„	17	արևգակն	Արեգակն
„	18	ամաչում։	ամաչում,
232	ներ. 6	Մայրամ	Մայրմա
239	18	արքէ	արեք
240	20	խօսքով	խօսքս
305	ներ. 6	Հևևից	Հեռից
306	13	տաճար	տաճարը
„	ներ. 7	վտանգը	վտանգը
313	9	Սևբօպը	Մեսրոպը
314	6	թշնամիննևրին	թշնամիներին
317	2	պատրաստում	պատրաստում
„	8	ժողովուրդի	ժողովուրդ

*) 10-րդ տողից յետոյ գետեղել այս խօսքերը՝ —օգի մէջ։ Ագռաւներն ու աներես ճնճղուկներն անդամ այսօր, սովորականին հակառակ, ձիչ ու աղմուկով չէին—

Խնդրում ենք ուղղել այս սխալները գիրքը գործածելուց առաջ։

ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆ

Տարբեր տոմս եղանակներու

Աշունք. Ղ. Ա.
Զը հնձատ աբա
Սերմնացան. Ղ.
Սերմնացան. Ա.
Այգեքաղ. Ղ. Ա
Աշուն Ռ. Պատ
Նաւասարդ .
Աշնան տերևնե
Շահ . . .
Ձմեռ. Ղ. Ա. .
Գնա ցուրտ ձմե
Ձիւն. Գաժ.-Բա
Զը գիտեմ ինչու
Ձմեռը երևանա
բուժ. Ա. Ա.բո
Ձմեռն է. Ղ. Ա.
Աղքատ կին. Մ
բանպետն .
Փշուր մը խաչ. Ն
Ողորմած եղէք
Իմ պանապամբ.
Շահնազար.
Տարեմուտ. Շիլ
Հոնի կորիզը.
Զբօսնէք. պատ
Գարուն. Ղ. Ա.
Հրաւէր գարնան
Խնդիր գարնան
Մանիշակ. Գ.-Վ
Տունը կաթուած
Խոզաբաժէ բին
Բնութեան կեն
Պերճ Պօղոս

Օձամանուկ և Ն
Ղ. Ա. . .
Լոյս և մութ ա
Ղ. Ա. . .
Արևամանուկ .
Սասունցի Դաւ

ԱՆԱՀԻՏ Ղ. Ա.

2013 3214

ՀՀ Ազգային գրադարան
NL0060712